


ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



Ե. Հ. ՆԱԶԱՐԱՆ

ՀԱՅ - ԱՐԱԲԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ
(Սիրիա և Լիբանան)
1945—1970 թթ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Կյանքի բոլոր բնագավառներում հայ ժողովրդի արձանագրած աննախընթաց առաջխաղացքի և ազգահավաքման գործում ձեռք բերված վերընթացի պայմաններում, երբ լուրջ ու ծանրակշիռ գործեր են ձեռնարկվում մեր անցած ուղին համապարփակ և գիտականորեն բարձր ընդգրկմամբ պատկերելու համար, օրըստօրե անհետաձգելի է դառնում նորագույն պատմության կարևոր էջերից մեկի՝ պատմական դժբախտ ճակատագրի բերումով ի սփյուռս աշխարհի ցրված գաղթօջախների կյանքի պարզաբանման անհրաժեշտությունը:

Այդ անհրաժեշտության բավարարումն, անկասկած, կապված է յուրահատուկ դժվարությունների հետ, քանի որ հայրենի հողից հեռու հայության քանակով թե որակով պատկառելի բեկորների կյանքը, հատկապես այդ կյանքի համար խիստ բնորոշ քաղաքական ու մշակութային եռուն գործունեությունը, անընդհատ այս կամ այն կերպ առնչվել ու առնչվում է տարբեր ժողովուրդների ազգային շարժումների և ազգային տարբեր կուլտուրաների հետ: Հասկանալի է, ուրեմն, թե ինչքան կարևոր է կանխօրոք հետազոտված ունենալ հայկական հոծ գաղթօջախներ հյուրընկալող ժողովուրդների և հայերի քաղաքական ու մշակութային կապերի պատմությունը՝ համապարփակ շարադրելու համար մեր նոր սփյուռքի պատմությունը, որն իր հերթին առաջնային նախահումքերից է լինելու հայ ժողովրդի համընդհանուր պատմության:

Այդ տեսակետից դժվար է գերազնահատել վաղնջական ժանոթությամբ իրար զոդված երկու ժողովուրդների՝ հայերի և արաբների մշակութային նոր կապերի հետազոտման նշանակությունը։

Արաբական երկրներում, հատկապես Սիրիայում և Լիբանանում բնակություն հաստատված բազմաթուր հայերի մշակութային գործունեությունը, միախառնվելով արաբների կուլտուրական շարժման հետ, ոչ միայն մեր ազգային մշակույթը նորանոր երանգներով դրասանգելու հնարավորություն է ձեռք բերում, այլև լուրջ նպաստ է մատուցում Սիրիայի և Լիբանանի մշակութային վերելքին։ Եվ ուրեմն հայ-արաբական կապերի հետազոտումը անհրաժեշտ ատաղձը կհայթայթի նաև սիրիական ու լիբանանյան նորագույն պատմության հոգևոր նվաճումների էջի ուսումնասիրմանը։

Առանձին ընդգծել է պետք այն հանգամանքը, որ մշակութային առնչությունների զարգացման և երկու ժողովուրդների կուլտուրական փոխազդեցության օրինաչափությունների բացահայտումը կծառայի Սիրիայում և Լիբանանում արաբների ու հայերի փոխըմբռնման ուժեղացմանը, նախադրյալներ կստեղծի արաբ և հայ աշխատավորների հակամպերիալիստական համատեղ պայքարի զորացման։

Համաշխարհային հետադիմությունը միշտ էլ փորձել է, և հատկապես մեր օրերում, վիժեցնել տարբեր ժողովուրդների միջև փոխըմբռնման ու համագործակցության ամրապնդումը, տարբեր ազգի ու կրոնի աշխատավորների միջև եղբայրական շփումների և համատեղ գործողությունների աշխուժացումը։

Արևմտաեվրոպական բուրժուական մի շարք հեղինակներ՝ Պ. Ռոնդոն, է. Մակկալումը, Շաբլը-Ռուն, Զ. Անտոնիուսը, Հ. Քոնը, Ս. Լոնգրիգը, Ու. Լաբլորը և ուրիշներ, մերձավորարևելյան հարցերը քննարկելիս, պատշաճը հատուցելով հանդերձ հայ նորաբնակների կարևոր մասնակցությանը Սիրիայի և Լիբանանի զարգացման գործին, որպես կանոն հայերին և արաբներին փոխկապակցության մեջ են տեսել միայն ու միայն համայնքային «տարածայնությունների և բախումների» պահերին¹։ Այդ տեսակետը

¹ Տե՛ս հավապե՛ս՝ P. Rondot, Les Chrétiens d'Orient, Paris, n. d. pp. 188, 232; S. H. Longrigg, Syria and Lebanon under French Mandate, London, 1958, pp. 80, 86, 159—164; E. Maccalum, The Nationalist Crusade in Syria, N. Y., 1928, p. 130; G. Antonius, The Arab Awakening, N. Y., 1939, p. 378.

որոշակի արտացոլում է գտել նաև մի շարք արար բուրժուական հեղինակների՝ Ա. Հաուրանիի, Ի. Հինգիի, Մ. Ալ-Սաֆարշալանիի և այլոց երկերում²։

Արաբ և հայ բուրժուական որոշ հեղինակներ էլ, ի վիճակի չլինելով ուրանալ հայ-արաբական մշակութային կապերի սերտացման փաստը, այն շարամտորեն գնահատել են որպես արաբահայ գաղթօջախների ձուլման արհավիրքը արագացնող ազդակ։ Այդ տեսակետն է զարգացրել, ի շարս այլոց, Ժորժ Հադդադը, ընդգծելով, որ մինչև առաջին աշխարհամարտը արաբական երկրներ ապաստանած հայերը «իրենց ազգային դիմագիծը կորցնելու և ձուլվելու վրա են» միայն ու միայն «երկրի լեզուն սովորած լինելու հետևանքով»³։ Լիբանանահայ լրագրող Ն. Փաթանյանի կարծիքով, արաբական լեզվին, մշակույթին ու ֆոնկլորին... լավապես ծանոթանալու պարագային, առաջին հերթին մեր ժողովրդին մտավորական դասակարգն է, որ կուժանա, կայլասերի»⁴։

Այս բոլորը վկայում է ոչ միայն հարցի բարդության, այլև այն բազմակողմանիորեն ուսումնասիրելու և հայ-արաբական մշակութային կապերի պատմությունը շարադրելու անհրաժեշտության մասին, մի բան, որը մինչև այժմ չի արվել ինչպես մեզանում, այնպես էլ արտասահմանում։

Ընդունելով հանդերձ, որ ցարդ մշակութային նոր կապերին թեկուզ և թուլցիկ անդրադարձող ոչ մի աշխատություն լույս չի տեսել և որ առ այսօր հիմնականում արաբական ազգային-ազատագրական շարժումների կամ արաբահայ գաղթօջախների հարցերն են եղել մեր հետազոտողների տեսադաշտում, պետք է նշել հետևյալը. հրապարակված աշխատությունները թեև գրեթե լիովին շրջանցել են մշակութային կապերը, սակայն զգալի չափով հող են նախապատրաստել դրանց հետազոտման համար, քանի որ արժարժեք են կուտուրական առնչությունները հրահանգավորող մի շարք նախադրյալներ։

² A. Hourani, Syria and Lebanon, New York, 1946, p. 188. إحسان هندی، كفاح الشعب العربي السوري، ١٩٠٨ — ١٩٤٨، دمشق، ١٩٦٢، ص ١٣٨؛ معي الدين السفر جلائی، تاریخ الثورة السورية، دمشق، ١٩٦١، ص ١٢٠

³ G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 15.

⁴ Ն. Փաթանյան, Մշակույթ և քաղաքականություն՝ գաղութահայությունը իր տաղհապին մեջ, «Սփյուռք», Թեյրուք, 18.7.1959:

Լ. Խուրշուդյանը, օրինակ, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների մերօրյա վարքն ու դեմքը ռացիալատող իր աշխատության⁵ էջերում բյուրեղացրել է հայկական ինչպես դեմոկրատական, այնպես էլ հետադեմ շրջանների վերաբերմունքը ընդհանրապես ազգային-ազատագրական և մասնավորապես արաբ ժողովուրդների հակաիմպերիալիստական շարժումների նկատմամբ: Իր հերթին Հ. Սիմոնյանը, սփյուռքահայության սոցիալ-քաղաքական պայքարի ուղիները գծելիս⁶, անհրաժեշտ ուշադրություն է դարձրել արաբ ժողովուրդների ազատագրական և հակաիմպերիալիստական ոգորումներին արաբահայ գաղթօջախների մասնակցության փաստերի վրա: Այդ փաստերը միշտ էլ հետաքրքրել են արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները մասնագիտորեն հետազոտող Ն. Հովհաննիսյանին⁷, որն, ի տարբերություն սովետական մյուս արաբագետների, կարևոր տեղ է հատկացրել այդ շարժումներին ազգային փոքրամասնությունների, և առաջին հերթին, հայ ժողովրդի տարագիր բնկորների եռանդաշատ մասնակցությանը: Մշակութային կապերի մեղ հետաքրքրող նախադրյալին առնչվում է նաև Հ. Թոփուզյանի մենագրությունը⁸, որը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին հայերի մասնակցության մի շարք փաստերի շարադրումն ունի որպես հիմնական առաջադրանք:

Հիշատակել է պետք նույնպես Ս. Գասպարյանի⁹ ընդհանրապես հայ գաղթօջախներին և Լ. Տեր-Մկրտչյանի¹⁰ մասնավորապես արաբահայ համայնքներին նվիրված տեղեկագրական աշխատությունները: Պատշաճ տեղ հատկացնելով լիբանանահայ և սիրիահայ համայնքների ազգային-մշակութային կյանքի, արաբական ազգային-ազատագրական շարժումներին նրանց մասնակցության և

⁵ Լ. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964:

⁶ Հ. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968:

⁷ Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1968), Երևան, 1967: Նույնի՝ Образование независимой Сирийской республики (1939—1946 гг.), М., 1968:

⁸ Հ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին, Երևան, 1968:

⁹ Ս. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962:

¹⁰ Л. Х. Тер-Мкртчян, Армяне в странах Арабского Востока на современном этапе, М., 1965:

մայր հայրենիքի հետ մշակութային կապերի պատկերմանը, այդ հեղինակները ակնարկել են նաև հայերի և արաբների կուլտուրական շփումների մի շարք փաստեր:

Որոշակի հոդ է նախապատրաստվել նաև գրական կապերի հետազոտման համար: Այս բնագավառում հիշարժան երախտիք ունի առաջին հերթին Ա. Արշարունին, որին և պարտական ենք հայ-արաբական գրական նոր առնչությունները պարբերացման ենթարկելու առաջին փորձը¹¹: Զգալի գործ է կատարել նաև Կ. Դալ-լաքյանը¹²: Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունը շարադրելիս նա, ըստ արժանվույն գնահատելով կոմունիստական հրապարակախոսության աշխատանքը արաբական ազատագրական պայքարի ջատագովման ուղղությամբ, կանգ է առել նաև «Մեր նշանաբանն է Հառաջ»-ի և հատկապես նրա գրական հավելվածի էջերում արաբական գրականությունը հայերին ծանոթացնելու փորձերի վրա: Իր հերթին Մ. Բաբլոյանը, լիբանանահայ գրական մամուլին նվիրված իր հետազոտություններում¹³, լոկ հպանցիկ կերպով է արտացոլել «Անի» և «Նոր ուղի» պարբերականների արաբական գրականության նվիրված էջերը, քանի որ այդ հանդեսներում սոսկ թուղթիկ կերպով են շոշափվել արաբական դպրության հարցերը:

Դժվար չէ կռահել, որ բուն իսկ հայ-արաբական մշակութային նոր կապերի պատմության հոդը, որի վրա ոտք ենք դնելու հաջորդ էջերում, հիմնականում լերկ ու անմշակ է մնացել ցարդ¹⁴:

Սիրիայի և Լիբանանի բնական, պատմա-քաղաքական և տրնտեսական պայմանների հանգիստություններն ու կապերը պատճառ

¹¹ А. Аршаруни, К вопросу об армяно-арабских литературных связях, «Известия АН Арм. ССР», Общ. науки, 1960, № 5—6.

¹² Կ. Դալլաքյան, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964:

¹³ Մ. Բաբլոյան, Սփյուռքահայ մամուլի պատմությունից, «Անի», Երևան, 1965: Նույնի՝ «Նոր ուղի» պարբերագիրքը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1966, № 1:

¹⁴ Պետք է հիշատակել, որ Արաբական Արևելքի, երկրների հետ բարեկամության և մշակութային կապի սովետական ընկերության հայկական բաժանմունքի արևիվում պահպանվում են զգալի քանակությամբ նյութեր, որոնք կարևոր և շատ արժեքավոր աղբյուր են հայ-արաբական մշակութային փոխառնությունները հետազոտելու համար, հատկապես Սովետական Հայաստանի մշակութային կապերը Սիրիայի և Լիբանանի հետ ուսումնասիրելու համար:

են դարձել, որ սիրիահայ և լիբանանահայ գաղթօջախները, ընդհուպ մինչև հիսունական տասնամյակի վերջերը, ընկալվել են որպես միասնական գաղթօջախ: Այդ ընկալմանը նպաստել են նաև այլ՝ ներհայկական գործոններ. սիրիահայերի և լիբանանահայերի սովոր մեծամասնության կիլիկեցի լինելն ու հոգևոր-համայնքային հողի վրա Անթիլիասի (Մեծի տանն Կիլիկիո) կաթողիկոսության ենթարկվելը, միևնույն ազգային կուսակցությունների, մշակութային, մարզական, բարեսիրական և այլ կազմակերպությունների հավասարաչափ գործունեությունը թե՛ մեկ և թե՛ մյուս գաղթօջախում. և այլն:

Այդ բոլորն, անշուշտ, հաշվի ենք առել Սիրիան և Լիբանանը միասնաբար ընդգրկելիս: Երկու երկրները համաժամանակյա ընդգրկելու համար, սակայն, մենք ունեցել ենք սիրիահայ և լիբանանահայ գաղթօջախների միասնությունը հրամանագրող ավելի անմիջական մի հանգամանք. այն, որ երկու երկրներում հայ-արաբական մշակութային նոր կապերը միևնույն նախադրյալների հրահանգով են ապրել սաղմնավորման դժվարին վերիվայրումների երկու տասնամյակ, համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին հիմնականում միևնույն հասարակական կլիմայի ներգործությամբ են հարթել իրենց զարգացման հունը և հետպատերազմյան տարիներին, ընդհուպ մինչև մեր օրերը, վերելք են ապրել որպես մշակ ունենալով միևնույն փաղանգը հայ մտավորականների, որոնց շրջանում սիրիահայի ու լիբանանահայի տարբերակում գոյություն չունի և որոնք (ինչպես իրենց դաստիարակությամբ, այնպես էլ գործունեությամբ) առնչվում են սիրիա-լիբանանյան միևնույն դեմոկրատական միջավայրի հետ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հայ-արաբական մշակութային նոր կապերը և հատկապես մերօրյա գրական առնչությունները պատկերելիս մեզ համար ուղենիշ ենք դարձրել Վ. Ի. Լենինի հայտնի տեսությունը ազգային երկու կուլտուրաների առկայության և գրականության պարտիականության մասին: Մեզ մեծապես օգնել են Վ. Ի. Լենինի մտքերն այն մասին, որ կատարելապես սնանկ են բուրժուազիայի գաղափարախոսների պնդումները «միասնական հոսանքի» գոյության և տվյալ ժողովրդի ազգային կուլտուրայի ներսում դասակարգային ձգտումների բախման բացակայության վերաբերյալ, որով և հավասարության նշան է դրվում տվյալ ժողովրդի կուլտուրայի առաջադեմ և հետադեմ բաղադրատարրերի միջև: Լենինյան դրույթներն օգնել են մեզ ճիշտ

կողմնորոշվելու հայ-արաբական մշակութային նոր կապերի հետ աղերսվող մի շարք բարդ ու հակասական երևույթների մեջ, սահմանադատելու հայկական և արաբական մշակութի առաջադեմ և հետադեմ հոսանքները ու ցույց տալու նրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը հայ-արաբական մշակութային կապերի զարգացման նկատմամբ:

* * *

Դեռ վաղ անցյալում արաբա-հայկական փոխադարձաբար հարգալիր շփումների մասին խոսող մատենագրական շատ փաստեր և խիստ ուշագրավ ավանդություններ են ի հայտ եկել հայկական շրջանակներում: Շապուհ Բագրատունուն վերագրվող աշխատության էջերում, օրինակ, տրված է արաբների ասպնջականությունը խորհրդանշող Հաթեմի պատմության հայկական հրաշալի կրկնօրինակը՝ Գրիգոր-Դերենի նովելը, որը հայ և արաբ ժողովուրդների հնադարյան բարեկամության մասին վկայություն բերող հմայիչ հիշատակարան է: Մեր ժողովուրդը պահպանել է և մի գողտրիկ լեզուն. «Հռոմ» նվաճողների դեմ մարտի դուրս եկած Հովհան Օձնեցուն Բաղդադի խալիֆայի ռազմական օգնության մասին: Հայերի և արաբների հնամյա դաշինքի ու մերձավորության մասին հորինված միջնադարյան ավանդությունների այդ վերապրուկը հավաստում է, որ յուրաքանչյուր արաբ, պատահելով որևէ քնած հայի, պարտավոր էր կանգնել և իր հանդերձի փեշով արեգակի ճառագայթների դեմ ստվեր արձակել հայի վրա, մինչև նա կզարթներ»¹⁵:

Մեր մատենագրության էջերում արաբների, իսկ արար պատմիչների ու աշխարհագիրների երկերում հայերի մասին հանդիպող մեծածավալ նյութը լավագույն փաստն է երկու ժողովուրդների պատմամշակութային հնադարյան շփումների աշխուժության: Փոքր չի եղել թիվը ծագմամբ հայ պետական ու մշակութային գործիչների, որոնք հնում իրենց մասնակցությունն են բերել արաբական կուլտուրայի ծաղկմանը: Փոխադարձաբար, և հոգ չէ թե ժլատորեն, պատմությունը հուշում է արաբ անանուն մտավորականների մասին, որոնք Դվինում ու Անիում, Հռոմկլայում և այլուր իրենց լուսման են ներդրել հայկական դպրության վերելքի գործում:

¹⁵ Քաջբեռնի, Ճանապարհորդական նկատողությունը, «Փորձ», Թիֆլիս, 1888, № 4, էջ 85:

Մշակութային փոխադարձ ծանոթության և անընդմեջ շփումների մասին են վկայում նաև բաղմատասնյակ թարգմանությունները, որ հայերը կատարել են արաբական գիտական ու գեղարվեստական գրականությունից, ինչպես նաև արաբների ուշադիր հակումը դեպի հայ մտքի արգասիքները:

Հայ-արաբական մշակութային բազմադարյան շփումները պատմական տարրեր ժամանակաշրջաններում, նայած քաղաքական հանգամանքներին, մերթ ուժեղացել և մերթ թուլացել են: Մեր խնդրի մեջ շի մտնում այստեղ կանգ առնել այդ ելեչների վրա: Ցանկանում ենք միայն նշել, որ հայ և արաբ ժողովուրդների պատմության հեռավոր խորքերում ձևավորված մշակութային առնչությունները սկսեցին նոր շունչ ստանալ մեր դարի քսանական թվականներից, երբ հայրենիքից բրտորեն տեղահանված հայերի ստվար բեկորներով կազմակերպվեցին արաբահայ գաղթօջախները, և իրենց զարգացման բարձրակետին հասան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միայն:

Ձեռնամուխ լինելով Սիրիայում և Լիբանանում հայ-արաբական մշակութային նոր կապերին նվիրված սույն աշխատության շարադրմանը, մեր առջև խնդիր ենք դրել թուղիկ մի ակնարկով բացահայտել կապերի զարգացման քաղաքական ու տնտեսական նախադրյալները, հանգամանորեն լուսաբանել գրական առնչությունները, ծանրանալով հատկապես սիրիահայ և Լիբանանահայ գրականության էջերում արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի արտացոլման փաստերի վրա և, վերջապես, ցույց տալ հայերի և արաբների կապը մշակույթի ու գիտության տարրեր բնագավառներում:

Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակում Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ Սովետական Միության նոր թափ ստացած մշակութային կապերին ուշագրավ մասնակցություն է բերում Սովետական Հայաստանը, սերտ հարաբերություններ պահպանելով արաբական երկրների, առաջին հերթին հայաշատ Սիրիայի և Լիբանանի հետ, առանձին մի գլխում ուրվագծել ենք նաև այդ երկրների հետ Սովետական Հայաստանի մշակութային կապերի անցած ուղին:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Լ Ո Ւ Ն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1

Քսանական թվականների սկզբին շուրջ 200 հազար հայ նորաբնակների տեղաբաշխումը Սիրիայում և Լիբանանում, հայ-արաբական մշակութային նոր կապերի սաղմնավորման համար կենսական նախադրյալ հանդիսացավ, մանավանդ որ հայ ժողովրդի և մասնավորապես նրա առաջավոր մշակույթի համար միշտ էլ խորթ է եղել ազգային մեկուսացումը:

Հայ-արաբական մշակութային կապերը, սակայն, միանգամից չթեկնաբանեցին զարգացման ուղին: Սկզբնական շրջանում արաբների և հայ տարագիրների շփման կետերը համեմատաբար սակավաթիվ ու աղքատ էին, ուստի և մշակութային առնչությունների ոլորտը այնպես բազմաբնույթ ու բազմաբովանդակ չէր, ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին: Եվ դա իր պատճառներն ուներ:

Գաղթօջախների կազմավորման օրերին, հայության շրջանում բնազդական դառնալու շափ սրված լոկ մի տազնապ էր գերիշխում՝ «իբր առժամանակյա բնակիչ աշխատիլ իր և իրեններուն օրապահիկը հայթայթել»¹, այլ խոսքով՝ լոկ սեփական գոյությունը պահպանել: Պաղովթներու մեջ մենք ունինք միայն մեր գոյության պահպանության և նյութական հառաջդիմության խնդիրը՝ ճշտորոշում էր բեյրութահայ մի լրագրող²:

Անհատական ներամիտիության մղող այդ տազնապին զուգորդվում էր նաև հավաքական «ինքնամիտիումի և մեկուսացման

¹ «Արև», Կահիրե, 23.5.1925:

² Հ. Գեղունի, Սուրիահայ կյանքն, «Արև», 22.10.1926:

տարերային ձգտումը³, որը հոգեբանական տեսակետից հասկանալի բնագավառն էր օտար (ու շատերի համար համակրոնության խաբուսիկ ճանապարհով թուրքականի հետ նույնացվող)⁴ միջավայրում հայութունից առավելագույնը պահպանելու համար:

Մյուս կողմից, պատերազմից տնտեսապես գրեթե իսպառ հյուծված և իր ազատասիրական ակնկալությունների մեջ խաբված արաբ ժողովրդի պայքարը գաղութային կարգերի դեմ և պարբերաբար բարձրացող տրտունջը եկվորների հասցեին, Սիրիայում և Լիբանանում առաջ էին բերել տազնապալի մի մթնոլորտ, որը տարագիր հայերին մղում էր շրջանցելու արաբների հետ երկարատև համակեցության ամեն մի հեռանկար և հայրենիքից ժամանակավորապես հեռու բնակության համար երազելու ավելի խաղաղ երկնակամարներ, նախընտրաբար քրիստոնյա ազգաբնակչությամբ և թուրքական ճիրանից հնարավորին չափ հեռու միջավայր, հիմնականում Լատինական Ամերիկա, մասամբ Ֆրանսիա, ԱՄՆ և այլուր⁵:

Այս հարցում սակավ ներգործուն չէին նաև մի շարք այլ հանգամանքներ: Կիլիկյան դեռևս թարմ փորձից խրատված, հայ տարագիրները Սիրիայում և Լիբանանում իրենց տիրապետությունը հաստատած ֆրանսիական մանդատային իշխանություններին⁶ չէին վստահում, ուղղակի երկնչելով, որ եթե ոչ ամբողջ Սիրիան, ապա առնվազն երկրի հյուսիսային շրջանները ի վերջո կզիջվեն քեմա-

³ «Մեր նշանաբանն է Հոռաշ», *Բեյրութ*, 17.10.1965:

⁴ Մինչև XX դարասկիզբը եվրոպական հեղինակների մոտ «թուրք» անվան ներքո համախառնվում էին օսմանյան կայսրության բոլոր իսլամները, անկախ իրենց ազգային պատկանելությունից, իսկ «արաբ» անվանումը վերապահվում էր անապատի քոչվոր ցեղախմբերին: Դժվար է մեղադրել, որեմն, մերազնյա զորժիչներին, երբ թյուրմբռնմամբ չեն տարբերակել թուրքերին և իսլամ արաբներին ու վերջիններին էլ համարել են «թուրքեր» (տե՛ս, օրինակ՝ Մ. Տամատյանի արխիվի նյութերը, «Զարթոնք», *Բեյրութ*, 16.1.1953): Հստ «Հուլիսներ» (7.5.1925) թղթակցի, Հալեպի առաջնորդ Արտավազդ Սյուրմեյանի պատվին կազմակերպված մի հանդիսության ներկա են եղել «ֆրանսացի, թուրք և այլ պաշտոնական բարձրաստիճան անձնավորություններ», որոնցից «թուրքերը» հասկանալիորեն... արաբներ են:

⁵ Արտազադթի նախապատրաստությունների մասին տե՛ս «Սուրիական մամուլ», Հալեպ, 15.4, 27.5 և 23.8.1923, «Հուլիսներ», Կահիրե, 15.9.1925:

⁶ 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում տեղի ունեցած կոնֆերանսում Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը Ազգերի լիգայի կողմից տրվեց Ֆրանսիային:

լականներին և յաթաղանի գործունեության նոր ասպարեզ կրաց-
վի: «Ո՞վ կրնա հաստատել, որ Ֆրանսա միշտ պետք է մնա Սու-
րիո մեջ, Թուրքիա հոն այլևս պիտի շմտնե և տեղացի ժողովուրդն
ալ, իր զսպված ատելություններուն լեզու տված ատեն, մեղավորը
անմեղեն պետք է տարբերե», — խուճապահարում էր «Հուսաբերը»⁷:

Այս բոլորը առաջ էր բերում արաբական միշավայրից հեռա-
նալու ձգտում:

Այդ ձգտումից անկախ, հայ նորաբնակները, թեկուզ դեռ տե-
ղում նստած, իրականում անջրպետված էին արաբական միշա-
վայրից, հիմնական զանգվածով համակենտրոնացված լինելով
իրենց ուրույն քաղաքամասերում⁸, սկզբնական շրջանում ապրելով
սոցիալ-տնտեսական ինքնուրույն ու ներփակ կյանքով⁹:

Մյուս կողմից հայ նորաբնակների, վերջին հաշվով Սիրիայի
և Լիբանանի համար խիստ բարեբար նախաձեռնող ոգին ու եռան-
դաշատ ճիգը, որոնք ավելի ուշ և ավելի բարենպաստ պայմաննե-
րում արաբ ազգային գործիչների միահամուռ դրվատանքին էին
արժանանալու, առաջին երկու տասնամյակներում չէին կարող
բնիկների կողմից բարեհաճ աչքով դիտվել: Եվ դա ոչ միայն այն
պատճառով, որ ֆրանսիական իշխանությունները տեսանելի չա-
փերով հովանավորում էին հայ գործարար շրջաններին, վերջին-
ներիս որպես մենաշնորհ մատուցելով Պաղեստինի, Անդրհորդա-
նանի ու մինչև իսկ Հիջազի հետ առևտուրի մի շարք ճյուղեր¹⁰, Կար
և նույնքան հիշարժան մի այլ հանգամանք: Գաղութային վարչա-
պետական, ինչպես և ֆրանսիական կապիտալին ուղղակի ենթա-
կա մի շարք մեծ հիմնարկներ (ծխախոտագործական, երկաթուղա-
յին և այլն) հաճույքով նախապատվություն էին տալիս հայերի
ավելի բարձրորակ, այլ պարագաների բերմամբ ավելի էժան աշ-

⁷ «Հուսաբեր», 27.11.1923:

⁸ P. Birot et J. Dresh, La Méditerranée et le Moyen Orient, t. II, Pa-
ris 1956, p. 328.

⁹ Հալեպի ավելի քան 2000 փայտաշեն և քարաշեն տներից բաղկացած և
15000 բնակչություն ունեցող «Ռամի քեմփը», օրինակ, իր շուկաներով, եկե-
ղեցիներով, դպրոցներով, վարչական մարմիններով ու պաշտոնյաներով և այլ
երևույթներով հայկական մեծ գյուղաքաղաքի մը պատրանքը կուտա այցելուին»
(տե՛ս, «Արև», 24.8.1925): Պարագան նույնն էր Դամասկոսի և Բեյրութի հայ
գաղթականներում:

¹⁰ Ն. Յազուպյան, Հանուն երջանկության, Կա՛իրե, 1960, էջ 88—90 և 96—
101:

խատուծին¹¹, Պետք է ավելացնել և այն, որ հայ առևտրականներն ու արհեստավորները, սպասարկման ոլորտի և ազատ ասպարեզների աշխատողները զգալիորեն սահմանափակում էին տեղացիների հաճախորդների շրջանակը: Եվ իրավացի էր անշուշտ քսանական թվականներին Տրիպոլիում ապրող և աշխատող Ե. Օտյանը, հրք դրում էր. «Բուն տեղացի տարրը հաշտ աչքով չի դիտեր մեր այստեղ արմատանալը: Ամեն հայ, որ գործ մը կսկսի, ըլլա արհեստավոր, ըլլա խանութպան, անախորժ ու վնասակար մրցակից մը կնկատվի տեղացիներուն կողմի: Իրողությունն այն է, որ հայերը իրավցնե վնասակար մրցակիցներ են»¹²:

Եթե մատնանշելու լինենք նաև արաբների և հայերի, ինչպես հասարակ մարդկանց, այնպես էլ հատկապես ղեկավար գործիչների շփումներն ու իրարհասկացողությունը դժվարացնող լեզվական պատվարը, ապա դժվար չի լինի պատկերացնել այն ապակողմնորոշումը, որին մատնվել էին ինչպես արաբները, այնպես էլ հայերը:

Արաբների ապակողմնորոշման վրա կանգ առնելով և շրջափակվելով լիբանանյան սահմաններում, ասենք, օրինակ, որ իսլամ արաբների համար հայերի ներկայութունը պարզապես տհաճ էր, որովհետև նորաբնակները ավելացնում էին քրիստոնյաների թիվը և դրանով իսկ ամրապնդում մարոնիաների հենարանը¹³, Բանը նրանում էր, որ ֆրանսիական իշխանությունների առաջին միջոցառումներից մեկն էր եղել պատմական Լեոնալիբանանին վերամիավորել ժովափնյա Լիբանանը (Բեյրութ, Տրիպոլի, Սայդա և Սուր քաղաքներով) ու Անդրլիբանանը (Բեկաայի դաշտավայրով) և ստեղծել Մեծ Լիբանանի պետութունը, գոհունակութուն պատճառելով մարոնիտներին: Վերջիններիս, սակայն, մտահոգում էր նորաստեղծ պետության մեջ իսլամ ազգաբնակչության տոկոսային ակնառու հավելումը: Եվ ճիշտ ատոր համար ալ,—վկայում է Մ. Նաթանյանը,—Կիլիկիո պարպումով այդ կողմերը խուժող հայերու Լիբանանի մեջ հասաատվիլը քաջալերվեցավ մարոնի շրջանակներեն և անոնց պատրիարքեն, որպեսզի, այգու, նոր

¹¹ «Սուրիահայ մամուլ», 17.5.1923, SN, Plan d'Etablissement des Refugies Arméniens, Genève, 1927, pp. 73—74; „Syria“, Revue d'Art et d'Archéologie, tome IX, fasc. 3, Paris, 1928, p. 173.

¹² Ե. Օտյան, Սուրիահայ կյանք, «Արև», 9.10.1924:

¹³ L. M. T. Meo, Lebanon. Improbable Nation, Bloomington, 1965, p. 58.

կարգադրությամբ ավելացած իսլամներու համեմատությամբ քրիստոնյա տարրը ևս ավելնա»¹⁴։ Արաբագետ Գ. Մըսրլյանի հետ տեսակցության ժամանակ. Կահիրեի «ալ-Ահրամ» թերթի գլխավոր խմբագիր մարոնիտ Դաուդ Բարակատը իր հերթին չէր թաքցրնում, որ «քրիստոնյա սուրիացիներու համար այլապես օգտակար է հայ գաղթականությունը, որուն ներկայությունը քրիստոնյա տարրին թվական գերակայությունը կապահովե լիբանանի մեջ»¹⁵։

Այս ապակողմնորոշման պայմաններում արաբներին հայերից էլ ավելի խրտնեցնելու և կողմերի միջև անջրպետը խորացնելու գործում իրենց լուծման էին ներդնում հատկապես նորաբնակների ֆրանսիացի «բարեկամները»։ Հ. Մատեյանը, վերլուծելով այն ազդակները, որոնք գաղթօշախների կազմավորման օրերին «Մանր մթնոլորտ» էին առաջացրել հայ-արաբական փոխհարաբերություններում, գրել է. «Դժբախտաբար իրողություն է նաև այն, որ 1922 թ., պաշտոնապես իմպերիալիստական Ֆրանսայի հովանավորության տակ կատարված հայերու զանգվածային գաղթը դեպի Սուրիա և Լիբանան, արաբներու մոտ ստեղծած էր հասկանալի կասկածանք։ Մյուս կողմ, ֆրանսացիները ամեն միջոցի կդիմեին արաբներուն տալու համար այն տպավորությունը, որ նորեկ հայերը իրենց «պաշտպանյալներն» էին և թե անոնք միևնույն ատեն կրնային օգտագործվիլ արաբներու ազգային-ազատագրական շարժման դեմ»¹⁶։

Արաբական բավականին լայն շրջանակներ, չմբռնելով տարբեր համայնքներին միմյանց դեմ լարելու ֆրանսիական իմպերիալիզմի քաղաքականության էությունը, Սիրիային ու Լիբանանին սպառնացող հիմնական վտանգը սխալ կերպով համարում էին... «Հայկական վտանգը»¹⁷։

¹⁴ Մ. Նարեկյան, Մեծն Լիբանանի կազմության հակոտնյա պատճառները, «Արև», 1.9.1925։

¹⁵ «Հուսարեր», 30.4.1926։

¹⁶ Հ. Մատեյան, Հայ քաղաքական մտքի կազմավորումն ու հասունությունը և կոմունիստներու դերը արաբական Արևելքի մեջ, «Մեր նշանաբանն է «Հատաչ», 4.1.1959։

¹⁷ «La Syrie», 14.1.1930։ Արաբների ապակողմնորոշման խորության մասին բավականաչափ վկայություն կարող է լինել այն, որ թերթի այդ համարում լրագրող Լոնթինը որպես «սխրագործություն» է ներկայացնում 1924 թ. իր թափառումները հայկական գաղթականների փողոցներում...

Սիրիայի և Լիբանանի բնիկների ապակողմնորոշման պայմաններում ակնհայտ դեր էին խաղում նաև թուրքական գործակալները, որոնք իրենց ծառայագրված տեղական մամուլի միջոցով երկու երկրների քաղաքական ու տնտեսական դժվարությունների աղբյուրը հայերի ներկայության փաստի շուրջ էին բեկնացնում¹⁸, և նույնիսկ արաբական ազգային դիմագիծը վտանգված էին հայտարարում: Ճեթե աչք փակենք, ապա շատ շուտով Սիրիա և Լիբանան անունները պիտի վերանան և փոխարինվեն Հայաստանով,—դրում էր Դամասկոսի թերթերից մեկը¹⁹:

Հայ-արաբական փոխհարաբերությունները քսանական թվականների կեսերից քիչ վերիվայրումների շենթարկվեցին նաև դաշնակ վտարանդիների մեղքով:

Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման և ուժեղացման պայմաններում, արևմտահայ գաղթականության վիճակի բարվոքման և հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը լայն արձագանք գտան սփյուռքով մեկ, հասնելով նաև արաբահայ գաղթօջախներին և առաջ բերելով աստիճանական հոգեփոխություն: «Հիմա նոր փափաք մը, նոր զարթնում մը կա հայ ժողովուրդին մեջ՝ գաղթելու և հաստատվելու ընտանյոք մայրենի երկիր, Հայաստան»,—գրում էին Դամասկոսից²⁰:

Մյուս կողմից, գաղթօջախների ընդհանուր վարքագծի վրա ազդող մտավորականության և գործարար մարդկանց շրջանում, հակառակ գաղութարարների ակնկալության, հետզհետե խորանում էր երկփեղկումը ֆրանսիական և արաբական կողմերի միջև²¹: Բանը նրանում էր, որ որոշ գործիչների մոտ նախանշվող քիչ թե շատ դեմոկրատական հակումները, հայ գաղթականության աստիճանական հոգեփոխության պայմաններում, սպառնում էին ծավալվող «հայաստանասիրության» կրակով գոլորշիացնել մտավորականության լայն խավերի զգացական հիմքերից բխող ֆրանսիա-

¹⁸ Տե՛ս հատկապես՝ «Արև», 6.2.1924, 19.7.1926, 10.8.1926 և այլ համարներ:

¹⁹ ۱۹۲۵ / ۲۰ / ۲۳ ، «فتی العرب» ،

²⁰ «Արև», 2.1.1924: 1924 թ. օգոստոսին արաբկիրցի 25 արհեստավորների Բաղդադի և Թեհրանի վրայով Երևան մեկնումը՝ Սիրիայից հայրենադարձության առաջին ակտն էր (տե՛ս «Արև», 14.8.1924):

²¹ Հայ գաղթօջախների երկփեղկման շուրջ նյութեր տե՛ս «Սուրիական մամուլ», 13.2.1925, «Արև», 24.6.1924 և 9.9.1924:

սիրությունը, որը կիլիկյան աղետից պատրանաթափվելով անշափ թուլացել էր: Այնուհետև նույնքան երերուն էին և ձևավորվող հայ գործարար շրջանները՝ ինչպես մինչև պատերազմը տեղում գործող, այնպես էլ տեղահանության օրերին իրենց հարստությունից բեկորներով Սիրիա և Լիբանան եկած հայ տնայնագործական «արդյունաբերողներն» ու առևտրականները, որոնք չէին կարող աչքաթող անել տեղական պայմանները, չերկնչել շնչահեղձության այն նոպայից, որը կարող էր ի վերջո առաջանալ տեղական պայմանների ու տրամադրությունների հետ հանգուցակապերի բացակայությունից:

Նվայսպես, այն ժամանակ, երբ մթնոլորտը աստիճանաբար շիկանում էր իր տիրապետությունը ամրապնդել ջանացող գաղութային իշխանության և իր ազգային անկախության հետամտող արաբ ժողովրդի փոխհարաբերություններում, հետզհետե ակներև էր դառնում հայությանը առաջնորդող շրջանների երկփեղկումը ֆրանսիական և արաբական կողմերի միջև: Հայ համայնքի ղեկավար շրջաններում ավելի ու ավելի էին աշխատում առնվազն հավասարակշռել իրենց «երախտապարտությունը» մի կողմից «Սուրիո հյուրընկալ փեբրուն վրա՝ արաբ ցեղին ասպնջականության» և մյուս կողմից «մանտաթեռ ֆրանսիական կառավարության ազնըվության, հոգածության և գուրգուրանքին» միջև²²:

Գաղութարարներին, սակայն, ձեռք չէր տալիս այդպիսի «հավասարակշռությունը», մանավանդ որ այն սպառնում էր խախտվել ոչ իրենց օգտին և ներգործությամբ հայ աշխատավորական խավերի, որոնց շրջանում արմատավորվել սկսած կոմունիստական և առաջադեմ մյուս խմբակները կարող էին հետզհետե ազդեցության գոտի շահել: Անհրաժեշտ էր, ուրեմն, հայության շըրջանում որոնել մի ուժ, որը նվիրվածությամբ ծառայեր իմպերիալիզմին: Այդ ուժը դաշնակցությունը եղավ, որը, դիմելով մատնությունների ու նույնիսկ ոճիրների, Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական գերագույն կոմիսարի անմիջական հովանավորությամբ և նրա զորական ուժի բացահայտ օժանդակությամբ, 1926 թ. ի վերջո ձեռք բերեց ազգային իշխանությունների մենատիրությունը²³: Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների ազգային-ազատագրա-

²² Մ. Ահեմյան, Մ. Սիսեոյան, Ե. Ոսկերիչյան, Սուրիահայ տարեցույց, Ա տարի, 1924, Առաջարանը:

²³ Տե՛ս «Սուրիական մամուլ», 27 և 31.1.1924, 20.3.1924 և 15.4.1924, «Արև», 2.3.1925, 27.2.1926 և 1.3.1926:

կան շարժման բոլոր հանգրվաններում բացորոշապես դիրքորոշվելով գաղութարարների կողքին, դաշնակ վտարանդիները ծանր հարված հասցրին հայ-արաբական փոխհարաբերությունների բարվոք զարգացմանը:

Հայկական «Սպարտակ» կազմակերպության (1923 թ.) և լիբանանյան «Ժողովրդական կուսակցության» (1924 թ.) շարքերում գործող դեմոկրատների միավորումով 1924 թ. հոկտեմբերին ստեղծված Սիրիայի կոմունիստական կուսակցությունը ծննդյան իսկ օրից մի կողմից շանաց հայ գաղթօջախներին որպես հավաքականություն սահմանազատել դաշնակների արկածախնդրություններից ու դիրքորոշել արաբական ազգային դատի պաշտպանության ճակատում, մյուս կողմից եռանդ շխնայեց արաբ ժողովրդի լայն խավերին հասցնելու հայ աշխատավորների եղբայրական զգացմունքների հավաստիքը:

Տվյալ ժամանակաշրջանում հայ դեմոկրատների համագործակցությունը արաբ դեմոկրատների հետ՝ օբյեկտիվորեն հայ-արաբական փոխհարաբերությունների ճանապարհին սոսկ նախաքայլ լինելով հանդերձ, որակապես նախանշեց հայ նորաբնակների ճիշտ կողմնորոշման սկիզբը: Հայ դեմոկրատների առաջնային երախտիքը պետք է համարել այն, որ նրանք դժվարին ջանադրությամբ աշխատեցին նորաբնակների գիտակցության մեջ արմատավորել այն առողջ սերմը, որ հայ գաղթօջախների ապահով ու բարգավաճ վաղվա հեռանկարը արաբ և հայ աշխատավորների բարեկամության ու համագործակցության հետ է առնչվում միայն:

Այդ առողջ սերմը, սակայն, չէր կարող առատ հունձք խոստանալ այնքան ժամանակ, քանի դեռ հայ դեմոկրատները չէին ստացել մի կողմից հայկական ազգային հակադաշնակ կուսակցությունների նվազագույն աջակցությունը, իսկ մյուս կողմից տակավին չունեին ուժեղ հենարան, հանձին արաբական առաջադեմ աշխատավորական կազմակերպությունների՝ արաբ ժողովրդական մեծ զանգվածին հասցնելու համար հայ գաղթօջախների հարազատ խոհերն ու զգացմունքները:

Իրավիճակը աստիճանական հեղաշրջման ենթարկվել սկսեց երեսնական թվականների երկրորդ կեսին միայն:

Այդ ուղղությամբ առաջին քայլն արվեց 1936-ի հունիսին, երբ Հալեպում և Դամասկոսում հայ կոմունիստները, հնչակյաններն ու ռամկավարները ստեղծեցին «Սիրիահայ ժողովրդական ճակա-

տրա²⁴, նույն տարվա հուլիսի 19-ին հրապարակված ժրագրային հայտարարության մեջ, ընդգծելուց հետո, որ գաղութային վարչակարգի պայմաններում «ստնտեսապես հյուսիսյան հենակա, քաղաքական ու մշակութային մարզերում մեջ բրտորեն ճնշված Սուրիո մեջ» և «դաշնակցության արկածախնդրական քաղաքականության» հետևանքով խռովահույզ ազգային կյանքի պայմաններում՝ հայությանը չի կարող «ունենալ լուսավոր ապագայի ոչ մեկ հեռանկար», ճակատը նշում էր. «Ժողովրդական ճակատը միակ կարելիությունն է արաբ ժողովրդի հետ նոր ապրելակերպ մը ստեղծելու և սուրիահայ ժողովրդի բարօրությունը ապահովելու համար»²⁵, Շեշտեղով, որ «Սուրիո կատարյալ ազատագրումն ու առաջադիմական ձգտումները միմիայն հրճվանք կենթարկեն հայ ժողովրդի գիտակից զանգվածներուն», ճակատը իր հիմնական առաջադրանքներից մեկն էր համարում «գործնականապես փաստել մեր տեղացի եղբայրներուն, թե հայ ժողովուրդը այս երկրի անկախության դեմ ոչ մեկ ձգտում ունի պաշտպանելիք, թե պատրաստ է հայ մշակույթի կողքին զարգացնելու արաբ լեզվի ու մշակույթի ուսուցումը մեր կրթական հաստատություններեն ներս, թե հայ բանվորն ու աշխատավորը միմիայն երկրի ընդհանուր շահերուն նվիրված, իրենց արաբ եղբայրներուն հետ ձեռք-ձեռքի, հավաքաբար երկրի հառաջադիմության ու աշխատավորության շահերու պաշտպանության համար գործակցելու պատրաստ են»²⁶,

2

Հայ-արաբական փոխհարաբերությունները, բառիս բուն իմաստով, շրջադարձ ապրեցին համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, հիմնականում 1941 թ. հունիսից սկսած, երբ Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, ընդհատակից դուրս գալով և թվականորեն ու կազմակերպորեն նկատելի ուժ դարձած՝ ազատ գործունեության լայն ասպարեզ իջավ, և երբ արաբ ու հայ քաղաքական առաջադեմ գործիչների, դեմոկրատ մտավորականների և հասարակ աշխատավորների

²⁴ ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ (այսուհետև՝ ԳԱ ԱԻ արխիվ), ֆ. 5, գ. 1, վ. 5: Այս առումով ճշգրտման կարիք ունի Լ. Խուրշուդյանի այն պնդումը (տե՛ս նշվ. աշխ., էջ 33), որ «սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնական ճակատը սկսել է կազմավորվել 1943 թվականից»:

²⁵ ԳԱ ԱԻ արխիվ, ֆ. 5, գ. 1, վ. 5:

²⁶ Նույն տեղում:

շփումներն ու համագործակցությունը սկսեցին հաճախակի և էլ ավելի նպատակասլաց դառնալ «հակաֆաշիստ լիգաների», «Սովետական Միության բարեկամների ընկերությունների» և «Հայաստանի պաշտպանության լիգաների» շրջանակներում:

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը անհերքելիորեն հանդիսացավ այն շարժիչ ուժը, որ լիովին արժեքավորեց և գործարկման դրեց հայ և արաբ ժողովուրդների բարեկամական, այդ թվում հատկապես մշակութային կապերի զարգացման հիմնական նախադրյալները՝ բազմադարյան պատմա-մշակութային շփումների առկայության փաստը, հայ հոծ գաղթօջախների ներկայությունը արաբական երկրներում, արաբ և հայ աշխատավորների համատեղ կյանքն ու աշխատանքը, համանման ճակատագիրն ու խնդիրները: Եվ իրավացի էր անշուշտ ևս. Բեկդաշը, երբ Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական կուսակցությունը անվանում էր «հայ և արաբ, իսլամ և քրիստոնյա ժողովուրդներու եղբայրության և միության» դպրոց²⁷:

Սիրիայի և Լիբանանի դեմոկրատական կազմակերպությունների կողմից անդադրում կիրառված հայ-արաբական կապերի սերտացման և խորացման քաղաքականության կենսագործումը առաջին հերթին անխզելիորեն առնչվում է կոմունիստ ղեկավարներ Խալեդ Բեկդաշի, Ֆարժալլա Հելուի և Նիկոլա Շաուիի, քաղաքական ու մշակութային գործիչներ Անտուան Թապետի և Ժորժ Հաննայի՝ «Հայ և արաբ բարեկամության այդ ուսուցիչների» անվան հետ: Լիբանանահայ մամուլը դիպուկ է բնութագրել նրանց, գրելով, որ հայերին նրանք սովորեցրին «սիրել արաբ ժողովուրդը, լիբանանցի ըլլա ան թե սուրիացի կամ իրաքցի, սիրել արաբ ժողովրդի դատը, ճանչնալ անոր հոգեկան խռովքներն ու բաղձանքները, սակայն նախ իրենք սիրեցին հայ ժողովուրդը, ծանոթացան անոր պատմության զանազան դրվագներուն, ծանոթացան անոր մեծություններուն ու նաև տկարություններուն, բայց սիրեցին հայը որպես մարտնչող ժողովուրդ, և հայը սիրելով՝ արաբը սիրել սորվեցուցին մեզի»²⁸:

Դեռ երկրորդ աշխարհամարտի տարիներին, քաղաքական պայքարների թոհուրոհի մեջ անգամ կոմկուսի ղեկավար գործիչ-

²⁷ «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 3.3.1943:

²⁸ Ս. Սիրեկ, Հայ և արաբ բարեկամության ուսուցիչը, «Մեր նշանաբանն է Հառաչ», 1.7.1962:

ները աչքաթող չեն արել արար և հայ դեմոկրատ մտավորականներին միմյանց մերձեցնելու անհրաժեշտությունը: Լիբանանահայ մամուլը արձանագրել է, օրինակ, որ 1943 թ. մարտին սիրիահայ առաջադեմ մշակութային գործիչները Խ. Բեկդաշի նախաձեռնությամբ են սկսել անմիջականորեն շփվել արաբ գործիչների, լրագրողների, դասախոսների և մյուսների հետ²⁰:

Պատերազմի տարիներին Հակաֆաշիստ լիգայի և հետպատերազմյան առաջին տարիներին Խաղաղության պաշտպանության սիրիական և հատկապես լիբանանյան կազմակերպություններն են, որ դեմոկրատ ղեկավարների կողմից վերածվեցին հայ-արաբական մտավոր շփումների ժամադրավայրի:

1939 թ. հիմնադրված «Ֆաշիզմի դեմ պայքարի լիգան» առանձնապես աշխուժացավ Սովետական Միության վրա հիտլերական նենգ նախահարձակումից հետո: 1941 թ. դեկտեմբերին նա սկսեց հրատարակել «Աթ-Թարիկ» ամսագիրը, որի խմբագրատնությունն ստանձնեց անվանի գրող Օմար Ֆախուրին: «Լիգայի» շուրջ խմբված արար և հայ գործիչներն էին, որ Օ. Ֆախուրիի գլխավորությամբ 1941 թ. հիմնադրեցին «Սովետական Միության բարեկամների ընկերությունը» և «Հայաստանի պաշտպանության լիգան» (այլ անվամբ «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը»), որոնք վերածվեցին հայ-արաբական բարեկամության դպրոցների:

Այդ ընկերությունների շրջանակներում առանձնապես բեղուն գործունեություն ունեցան Ա. Թապետր և Ժ. Հաննան, որոնց ծառայությունները հայ-արաբական կապերի զարգացման բնագավառում անգնահատելի են:

Խոսելով երկրորդ աշխարհամարտի տարիներին և նրանից հետո հայ-արաբական հարաբերություններում տեղի ունեցած բեկման ու նրա պատճառների մասին, անհրաժեշտ է առանձնահատուկ կերպով ընդգծել Սովետական Միության, այդ թվում և Սովետական Հայաստանի գոյության փաստը և նրանց հեղինակության բարձրացումը տվյալ ժամանակաշրջանում:

Արդարև, արաբ մտավորականության առաջավոր թևի հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հետ հաղորդվելու և ուրեմն հայ գաղթօջախների հետ կուլտուրական առնչությունները զարգացնելու խորացող ձգտումը շատ բանով է աղերսվում Սովետա-

²⁰ «Ժողովուրդի ձայն», 13.3.1943:

կան Հայաստանի կենսունակ գոյության փաստի հետ: Արաբ ժողովրդի և առաջին հերթին նրա առաջավոր մտավորականության շրջանում հայ գաղթօջախների բարոյական կշռի աննախընթաց չափով բարձրացման գործում արձանագրենք թեկուզ ֆաշիստական Գերմանիայի ջախջախման հերոսապատումի էջերում հայ ժողովրդի զավակների սխրանքների առկայությունը: «Սովետական Միությունը խարսխաբար» գրքի անվանի հեղինակ Օմար Ֆախուրին, օրինակ, Հայաստանի խորհրդայնացման տարեդարձի տոնակատարություններին արաբների մասնակցությունը բնականոն է գտել հենց այն պատճառով, որ «եթե խոսվի բռնության ու բարբարոսության դեմ մղված ազատագրական պատերազմի մասին, սովետ ժողովուրդներու առաջին շարքին վրա պիտի հիշվի նաև անունը հայ ժողովրդի, որ իր լայն բաժինը բերավ այս պայքարին»³⁰: Եվ արդյո՞ք մեկնաբանության կարիք ունի իր ժողովրդի ազատամարտի ճանապարհին զոհված քաղաքական ականավոր գործիչ Ֆարժալլա Հելուի հայտարարությունը. «Սովետ Հայաստանի նկատմամբ մեր սրտերուն մեջ կա նույն սերը, ինչ որ կա Սուրիս և Լիբանանի հանդեպ, որովհետև այդ ազատ ու անկախ Հայաստանի մեջ կտեսնենք բոլոր փոքր ժողովուրդներուն ազատության և անկախության խորհուրդը: Բոլոր գիտակից արաբները Հայաստանի մեջ կտեսնեն իրենց ժպտուն ապագան»³¹:

Այսպիսով, ստեղծված օբյեկտիվ նոր պայմանների և արաբական ու հայկական դեմոկրատական կազմակերպությունների և առաջավոր մտավորականության աշխատանքի շնորհիվ, արաբների և հայերի ապակողմնորոշումը միմյանց նկատմամբ աստիճանաբար սկսեց չքանալ և տեղի տվեց փոխադարձ վստահության ու համագործակցության: Արաբ ժողովուրդը հանձին հայ գաղթօջախների ապահովեց հուսալի մի դաշնակից, որը, հակառակ բոլոր մեքենայություններին, այնուհետև իր հիմնական զանգվածով ակտիվ մասնակցություն ունեցավ սիրիա-լիբանանյան ազգային պայքարի կարևոր բոլոր հանգրվաններում (անկախության հռչակման, օտար զորքերի դուրս բերման. և այլն) ցանկալի հաղթանակը ձեռք բերելու գործում: Ինչ վերաբերում է հայ ժողովրդի տարագիր զավակներին, ապա նոր մթնոլորտում նրանք սկսեցին լիաթոք շնչել՝ առաջին հերթին թոթափելով Եղեռնի քստմենելի օրերից հետո

³⁰ «Ժողովուրդի ձայն», 29.11.1944:

³¹ Նույն տեղում, 7.7.1942:

ավելի քան երկու տասնամյակ իրենց հոգում նստած «զգուշավորությունը, շրջահայեցությունն» ու դոյապահպանման սեեռուն մտահոգությունը և հնարավորություն ձեռք բերելով «ինքնամփոփումի ու մեկուսացման տարերային ձգտումից» ձերբազատվելու³²։

Մնում էր, որ հայ նորահաս սերունդը, լավապես տիրապետելով արաբերեն լեզվին ու խորացնելով արաբական պատմության ու կուլտուրայի իմացության իր աստիճանաչափը, հավաքաբար ընգառաշ գնար սիրիա-լիբանանյան ազգային մշակույթի առաջընթաց շարժմանը։

3

Հայ նորաբնականները առաջին իսկ օրից հոգ տարան իրենց ազգային կրթարանների ստեղծման գործին։ Շուտով դպրոցներ բացվեցին Սիրիայի և Լիբանանի այն բոլոր բնակավայրերում, որտեղ հայերի քիչ թե շատ սովոր խմբեր էին հաստատվել։ Քսանական թվականների սկզբին տարբեր հարանվանությունների պատկանող կամ հայրենակցական տարրեր միությունների կողմից ղեկավարվող 50 ուսումնական հաստատություններ, այդ թվում և մի քանի երկրորդական դպրոցներ էին արդեն գործում Հալեպում, Բեյրութում, Դամասկոսում, Տրիպոլիում, Հոմսում, Զահլեում և այլուր։

Հայ ազգային դպրոցի հիմնական առաջադրանքն, անշուշտ, մայրենի լեզվի ուսուցումն էր, մանավանդ որ աշակերտները հիմնականում թուրքախոս կիլիկիահայերի երեխաներն էին³³։ Մայրենի լեզվից հետո նախապատվությունը տրվում էր ֆրանսերենին։ Այսպես, Հալեպի ազգային ուսումնական խորհուրդը 1925 թ. հայ դպրոցների համար պատրաստում էր կրթական ծրագրի մի նախագիծ, որ նախատեսում էր բարձր դասարաններում հիմնականում «ֆրանսերեն լեզվին ուժ տալ»³⁴։ Ազգային դպրոցների վարչական գործառնությունների համար ևս օգտագործվող լեզուները հայերենն ու ֆրանսերենն էին³⁵։

Նորաբնակության սկզբնական շրջանում մի շարք օբյեկտիվ պատճառներ չէին կարող շարգելակել հայերի շրջանում արաբե-

³² «Մեր նշանաբանն է հառաջ», 17.10.1965։

³³ «Արև», 14.7.1925։ «Տղաքը, ընդհանրապես կիլիկեցի, թրքախոս ծնողքներու կապականին և հայերեն խոսիլը կսորվին վարժարանին մեջ»,—1924 թ. Տրիպոլիից գրում էր Ե. Օսլանը (տե՛ս «Արև», 18.7.1924)։

³⁴ «Արև», 16.9.1925։

³⁵ «Սուրիական մամուլ», 18.8.1923։

րեն լեզվի մասսայականացման գործը: Այդ պատճառներից կարելի է հիշատակել նորարարակաների ու մանավանդ երեց սերնդի՝ բացառապես նվազագույն ապահովություն ձեռք բերելու ձգտումը, որի բավարարման համար «շուկայական» արաբերենի տարրական իմացությունից ավելին անհրաժեշտ չէր և հաճախ նույնիսկ թուրքերենն էլ գործը գլուխ էր բերում, հայկական նորաբաց դպրոցների անկազմակերպ վիճակը, մանավանդ արաբագետ հայ և առավել ևս հայագետ արար մանկավարժական կադրերի բացակայությունը³⁶, կիրիկիահայ մտավորականության իր հետ ֆրանսիագիտության բերած լինելը և ֆրանսիական մանդատի պայմաններում նրան կապված մնալը՝ և այլն³⁷:

Քիչ ներգործություն չի ունեցել և այն հանգամանքը, որ ատիճանաբար ձևավորվող ազգային մարմինները, իրենց համար առաջնային նպատակ դարձնելով Եղեռնից փրկված բեկորների հոգում ազգային զգացմունքների շեշտավորումը, նոր ու բարյացակամ արաբական միջավայրում ազգապահպանման գործը հեշտացնելու և պատմական բնօրրան վերադարձի երազանքը աշխուժացնելու մտահոգությամբ, ամեն կերպ աշխատել են հայկական դրպրոցները դարձնել էապես «ազգային» և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել սոսկ հայերեն լեզվի ուսուցման վրա, ելնելով մանավանդ այն իրողությունից, որ Սիրիայում և Լիբանանում հաստատված հայերը ճնշիչ մեծամասնությամբ թուրքախոս կիրիկեցիներ էին:

Ազգային մարմինների բարեմիտ այդ ձգտումը, սակայն, արաբերեն լեզվի նկատմամբ ֆրանսիական գաղութարարների քաղաքականության պայմաններում, ծայրահեղ կենսագործում էր գտել հայ հետադեմ մտավորականության կողմից:

Առաջին հերթին պահպանելու համար անջրպետը արաբների և ազգային փոքրամասնությունների միջև³⁸ (վերջիններիս շրջանում արաբերենի իմացությունը սահմանափակելով) և վերջին հաշվով արաբական ազգային մշակույթի զարգացումը խափանելու մտոք (տեղական լեզվի սեղմումների ճանապարհով), գաղութային իշխանությունները իրենց տիրապետության առաջին իսկ օրից պետական-պաշտոնական լեզու հռչակված ֆրանսերենը պարտավորիչ դարձ-

³⁶ «Արարատ», 10.7.1949:

³⁷ «Նիքատ», 7.4.1933, «Սուրիա», 9.3.1953:

³⁸ «Հառաջ», Բեյրութ, 17.10.1965:

րեցին նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթության սիստեմում: Դերագույն կոմիսարի կրթական խորհրդատու Շըվալիյը չի թաքցրել, որ հենց 1918 թ. հոկտեմբերի հատուկ հրամանագրով կարգադրել է բոլոր դպրոցներում թուրքերենի փոխարեն 30 դասաժամերից 8—14 ժամը, համաձայն տեղական հնարավորություններին, տրամադրել ֆրանսերեն լեզվին, քանի որ 1919 թ. ավարտական քննությունների ժամանակ հիմնական լեզուն ֆրանսերենն էր լինելու, իսկ արաբերենը դառնալու էր անգլերենին, իտալերենին, հունարենին և հայերենին համահավասարեցված «օժանդակ լեզու»³⁹: Դադութարարները իրենց միջոցառումը փորձել են արդարացնել այն պատճառաբանությամբ, որ իբր ժողովուրդը խոսում է զբաղվելով շունեցող «արաբա-սիրիական բարբառով» և ուրեմն չի հասկանում գրական արաբերենը...⁴⁰:

Քսանական թվականների կեսերից սկսած հայկական շրջանակներում հետզհետե հասունանում է արաբերեն լեզուն ազգային դրություններում ուսուցանելու գաղափարը: Լիբանանում, որտեղ մինչ այդ հայկական կրթարաններում ավանդվում էին միայն հայերեն և ֆրանսերեն լեզուները⁴¹, ուսումնական խորհուրդները առաջինը որոշեցին արաբերեն լեզվի ուսուցումը պարտավորիչ դարձնել: Արաբական մամուլում գոհունակությամբ էր արձանագրվում, որ «Բեյրութի հայկական բոլոր դպրոցները միասնաբար որոշել են իրենց ծրագրերում ընդգրկել արաբերենի ուսուցումը, որպեսզի հայ երեխաները տիրապետեն հայրենիքի լեզվին»⁴²: Սակայն Սիրիայում դրությունը շարունակում էր նույնը մնալ: Եվ «Սուրիական մամուլը» «Սորվինք տեղական լեզուն» խորագրված առաջնորդողում քննադատում էր այն, որ Սիրիայի հայ վարժարաններում «արաբերենին չէ տրված այն տեղը, որին իրավունք ունեն և որը կպահանջե մեր շահն իսկ»⁴³:

Փաստորեն մինչև Սիրիայի և Լիբանանի անկախության հռչակումը հայկական դպրոցներում արաբերենի ուսուցումը ընդհանուր առմամբ եղել է անհամապատասխան և «ձևական բնույթ» է կրել⁴⁴:

³⁹ M. Chevalley, L'Enseignement en Syrie pendant la période d'organisation (1919—1921), «La Syrie et le Liban en 1921», Paris, 1921, p. 106.

⁴⁰ Ж. Велерс, Крестьяне Сирии и Ливана, М., 1952, стр. 198.

⁴¹ «Սուրիական մամուլ», 8.3.1925:

⁴² ١٩٢٥ / ٢ / ٢٧ 'حلب' 'التقدم'.

⁴³ «Սուրիական մամուլ», 8.3.1925:

⁴⁴ «Նաիրի», Բեյրութ, 13.10.1963:

1943 թ. հոկտեմբերին, Լիբանանի վարչապետ Ռիադ Սուլճի խորհրդարանին ներկայացնելով իր ազգային կառավարության ծրագիրը, խիստ քննադատության ենթարկեց գաղութարարների պարտագրած Սահմանադրության այն հոդվածը, որ ֆրանսերենն ու արաբերենը հայտարարում էր համահավասար պետական լեզու և որ փաստորեն կիրառվում էր հօգուտ ֆրանսերենի։ Վարչապետը հայտարարեց, որ իր կառավարությունը վճռել է արաբերենը դարձնել երկրի պետական պաշտոնական միակ լեզուն, առանց սպասելու, որ Սահմանադրությունը համապատասխան վերանայման ենթարկվի։ Ծրագրի խնդիրների ջախջախիչ մեծամասնության հավանության արժանացած այդ հայտարարության հաջորդ օրն իսկ պետական բոլոր սպասարկություններին հրահանգվեց «գրավոր հաղորդագրություններն ու գործառնությունները կատարել արաբերեն լեզվով, որ երկրի պաշտոնական լեզուն է»⁴⁵։

Արաբերեն լեզվի՝ սկզբում Լիբանանում և այնուհետև Սիրիայում, պետական պաշտոնական լեզու հռչակվելը ոչ միայն կարևոր անկյունաքարն էր երկու երկրների մշակութային կյանքում, այլև լայն հորիզոն էր բաց անում հայկական դպրոցներում արաբերեն լեզվի ուսուցման և արաբագետ հայ երիտասարդ մտավորականություն պատրաստելու հնարավորությունների առաջ։

Արաբերեն լեզուն պաշտոնականացնելու առաջին իսկ օրից հայկական դպրոցը չէր կարող չդիտվել որպես արաբական լեզուն, պատմությունն ու մշակույթը հայերին ծանոթացնելու և այդ ճանապարհով էլ հայ-արաբական աղգային-լեզվական դժվարանցանքի պատվարը հաղթահարելու միջոց։ Հատկապես հայկական դեմոկրատական շրջանները արաբերեն լեզվի տիրապետման մեջ էին տեսնում «հայության բարձրացման և բարգավաճման ուղին», հայ մտավորականության «փայլուն հեռանկարներուն» երաշխիքը⁴⁶, իսկ արաբ քաղաքական գործիչները գիտակցում էին այդ ասպարեզում հայ գաղթօջախներին լայն աջակցություն ցույց տալու անհրաժեշտությունը։ Ֆ. Հելուն իր ճառերից մեկում հայ վարժարաններին պետական աջակցությունը հայտարարում էր առաջնային գործ⁴⁷։ Լիբանանի հանրապետության նախագահ Բեշարա էլ-հուրին ելույթ ունենալով Անթիլիասի կաթողիկոսարանում շեշտում էր,

⁴⁵ «Ժողովուրդի ձայն», 10 և 14.10.1943։

⁴⁶ Նույն տեղում, 10.10.1943։

⁴⁷ Նույն տեղում, 29.8.1943։

որ «հայերը պետք է ավելի սերտորեն կապվին իրանանի հետ», և այդ կապակցությամբ խոստանում էր «արաբներն լեզվի ուսուցման մնայուն ուսուցիչներ տալ» հայկական դպրոցներին⁴⁸։ Իր հերթին վարչապետ Ռիադ Սուլհը իրանանահայ առաջադեմ լրագրողներին ընդունելով, հայ դպրոցներին ավելի մեծ ուշադրություն ընծայելու և ավելի մեծ թվով դասատուներ տրամադրելու երաշխիք էր տալիս⁴⁹։

Նորանկախ իրանանի ազգային առաջին կառավարությունը անհասպաղ միջոցներ է ձեռնարկել՝ հայ համայնքին տրված խոստումները իրականություն դարձնելու համար, կրթական-մշակութային նպատակներով օգտագործելու կոչված կարևոր մի գումար տրամադրելով⁵⁰ և առաջնային ծրագրերի շարքում նախատեսելով «արաբական լեզվի ուսուցումը ընդհանրացնել հայ վարժարաններու մեջ՝ պետության կողմից վճարված ուսուցիչներու թվի ավելացման միջոցով»⁵¹։

Համանման ճիգ է գործ դրվել և սիրիական կառավարության կողմից, որ բացի արաբներն լեզվի դասատուներից, նաև նյութական զգալի նպաստ է հատկացրել հայկական դպրոցներին⁵²։

Հակառակ այդ բոլորին, արաբներին տիրապետելն ընթացել է դանդաղ և երկար ժամանակ հայերի շրջանում արաբներն իմացությունը դուրս չի եկել տարրականի սահմաններից։

Սիրիայում հիսունական տասնամյակի երկրորդ կեսից, իսկ իրանանում վաթսունական թվականների սկզբից հայ մտավորականության լայն շրջաններին սկսել է մտահոգել այն իրողությունը, որ հայկական դպրոցներում արաբներն ուսուցման աննախանձելի վիճակի հետևանքով բարձրագույն ուսման հետամտող բազմահարյուր հայ երիտասարդներ արտագաղթում են Արևմտյան Եվրոպա և Միացյալ Նահանգներ, որտեղ նրանք «կորչում են» ոչ միայն արաբահայության, այլև ընդհանրապես հայության համար։

«Մեր նշանաբանն է հառաջ» շարաթաթերթը մի անգամ չէ, որ անդրադարձել է տագնապալի այդ իրադրության, ընդգծելով, որ

⁴⁸ Նույն տեղում, 23.10.1943։

⁴⁹ Նույն տեղում, 4.11.1943։

⁵⁰ Նույն տեղում, 12.12.1943։

⁵¹ Նույն տեղում, 23.12.1944։ Նախարարության ընդհանուր քննիչ Մ. Իսկենդերյանի հավաստումով, իրանանյան կառավարությունը հայկական «ոչ մեկ դպրոցի խնդրագիրը չէ մերժած» և միայն 1945—1948 թթ. 28 նոր ուսուցիչ է գործուղել հայկական վարժարանները (տե՛ս «Զարթոնք», 18.1.1948)։

⁵² «Սուրիա», Հալեպ, 24.3.1944։

հայ երիտասարդության համար ապլասերման և ուժացումի վտանգը կուգա Արևմուտքեն» և որ այն կանխելու համար «հայ վարժարաններու պարտականությունն է մեր ուսանողներուն սորվեցնել արաբերեն լեզուն և սեր հառաջացնել արաբական մշակութին հանդեպ»⁵³, քանի որ արաբերենին տիրապետելով միայն հայ երիտասարդը հնարավորություն ձեռք կբերի Արևմուտքից հրաժարվելու և տեղական համալսարաններ հաճախելու⁵⁴:

Արաբերենի ուսուցման ասպարեզում բեկում մտցնելու ուղղությամբ հայ մտավորականության ջանքերին իրենց անմիջական մասնակցությունն են բերել սիրիական և լիբանանյան կրթական իշխանությունները: Բավական է ասել, որ միայն լիբանանում, «մեկնելով հայկական և համալիրանանյան շահերեն», կրթական նախարարությունը հայկական դպրոցների համար 1960 թ. պաշտոնի է կոչել «հավելյալ» 200 ուսուցիչներ⁵⁵, իսկ արաբ մտավորականությունը (ինչպես նախկինում) իր կամավոր, օժանդակությունն է բերել հայ երիտասարդությանը արաբերեն լեզուն ուսուցանելու գործին:

Հայ և արաբ առաջավոր շրջանների ջանքերի ցանկալի պտուղները չեն ուշացել: 1963 թ. առաջին անգամ լինելով լիբանանահայ 30 դպրոցներ զանգվածային մասնակցություն են բերել պետական քննություններին և արձանագրել ակնառու առաջադիմություն: Բավական է ասել, որ Սահակ-Մեսրոպյան, Հովակիմյան-Մանուկյան, Դարուհի Հակոբյան և նոր բարձրագույն դպրոցներից պետական դիպլոմի հավակնորդ հայ պատանիների և աղջիկների հոծ խմբի 90—100 տոկոսը գերազանց քննություն է բռնել:

Այդ հաջողությունները հիմք են տվել հայկական դեմոկրատական մամուլին գոհունակությամբ արձանագրելու, որ «արդեն ուղին բացված է քանի մը տարիս ի վեր. այս ձևով լիբանանահայությունը պիտի ունենա արաբագետ երիտասարդությունը մը»⁵⁶ և որ «այժմ արաբերենի ուսուցումը սկսած է գրավել իր արդար տեղը մեր կրթական ծրագիրներուն մեջ»⁵⁷:

⁵³ Ա. Վարդանյան, *Խոհեր դպրոցական տարեմուտին առթիվ*, «Մեր նշանաբանն է հառաջ», 10.9.1961:

⁵⁴ Պ. Հակոբյան, *Ուսումնական և ազգային հրատապ հարց մը*, «Մեր նշանաբանն է հառաջ», 25.3.1962:

⁵⁵ «Մեր նշանաբանն է հառաջ», 29.9.1963:

⁵⁶ Ժ. Թուրգոմյան, *Կրթական տարեշրջանին հաշվեկշիռը*, «Մեր նշանաբանն է հառաջ», 7.7.1963:

⁵⁷ Ժ. Թուրգոմյան, *Դրական և բացասական երևույթներ*, «Մեր նշանաբանն է հառաջ», 29.9.1963:

Լերաբերեն լեզվի աստիճանական մասսայականացումը հայ դադթօջախների ներսում և հատկապես հայ մտավորականության նոր սերնդի շրջանում, երկու ժողովուրդների մշակութային կապերի հանգուցման ու ամրապնդման հիմնական նախադրյալներից մեկը հանդիսացավ:

4

Սիրիայի և Լիբանանի հայությունը, նույնիսկ 1946—1948 թթ. հայրենադարձությունից հետո, բավականին ստվար թիվ էր կազմում⁵⁸:

Հայությունը, սակայն, պատկանելի տեղ էր գրավում ոչ միայն իր թվով: Չկա կյանքի մի բնագավառ, որտեղ հայերը ցուցաբերած չլինեն իրենց տաղանդն ու ընդունակությունները:

Հսկայական բանակ են կազմում հայ բանվորները, արհեստավորները, հողամշակները: Նրանց ստեղծած բարիքները, արդյունաբերած ապրանքները, մեկը մյուսի ետևից բարձրացրած շենքերը դարձել են Սիրիայի և Լիբանանի հարստությունն ու հպարտանքը: Հայ կոշկակարները, դերձակները, կահույքագործները, ժամագործները, ոսկերիչները, լուսանկարիչները⁵⁹, կաշեգործները, շինարարները, ավտովերանորոգողները, տեքստիլագործները և մյուսները հռչակված են որպես հմուտ, ձեռներեց, աշխատասեր ու պարկեշտ մասնագետներ: Լիբանանյան գրող Սաիդ Աքլը Բեյրութի հեռուստատեսությամբ իր ունեցած ելույթում նշել է. «Մենք հոս, Լիբանանի մեջ, երախտապարտ ենք հայերու հանդեպ, որոնք մեզի սորվեցուցին աշխատիլ»⁶⁰: Սիրիացի պատմաբան Ա. Հուրանին իր հերթին գեռ երկու տասնամյակ առաջ ընդգծել է, որ «հայերը աչքի են ընկնում հատկապես առևտրի և ար-

⁵⁸ Ս. Գասպարյանը (նշվ. աշխ., էջ 109) և Լ. Խուրջուդյանը (նշվ. աշխ., էջ 21) սիրիահայերի և Լիբանանահայերի թիվը ցույց են տալիս շուրջ 270000, իսկ «Հայրենիքի ձայնը» (4.12.1966) 330000: Բոլոր դեպքերում հայերը Սիրիայում քրդերից հետո, իսկ Լիբանանում հույներից հետո հետպատերազմյան առաջին տարիներին կազմել են ազգային ամենակարևոր փոքրամասնությունը (տե՛ս Современная Сирия, М., 1958, стр. 11—15; R. Furon, Le Proche Orient, Paris, 1957, pp. 31 et 42):

⁵⁹ Միայն Բեյրութում 1958 թ. սեփական խանութ ունեին ավելի քան 70 հայ ժամագործներ, 100-ից ավելի հայ ոսկերիչներ և 50 հայ լուսանկարիչներ («Միփյուտը», 1958 ապրիլի 4, 11 և 20):

⁶⁰ «Միփյուտը», 18.1.1964:

դյունաբերության ճյուղերում և բազմաթիվ արհեստների բնագավառում»⁶¹։

Իրոք, հայերի ձեռքում են կենտրոնացված Սիրիայի և Լիբանանի արդյունաբերության մի շարք ճյուղեր։ Հիսունական թվականների վերջին Լիբանանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18 տոկոսը, մանր արհեստավորական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ մեծաքանակ ներմուծումներ կատարող տներ 10 տոկոսը հայերին էին պատկանում։ Լիբանանի ազգային խոշոր արդյունաբերության մեջ ներդրված 375 միլիոն լիբանանյան լիրայի ավելի քան մեկ երրորդը հայ արդյունաբերական բուրժուազիայի սեփականությունն էր⁶²։ Զգալի թիվ են կազմում նաև այն հայերը, որոնք զբաղվում են մեծածախ և փոքրածախ առևտրով, լումայափոխությամբ և բանկային ու բորսային գործարքներով։ «Մենք կսիրենք հայերը,—հայտարարել է Սիրիայի հանրապետության նախագահ Շ. Քուվաթլին,—որովհետև մեր երկրին մեջ ձարտարավետը և այլ արհեստներ առաջացուցին և ամեն գնով կաշխատին մեր վերելքին համար»⁶³։

Ավելի ակնառու է եղել հայերի տեղը ազատ ասպարեզների բնագավառում։ Միայն Բեյրութում 1958 թ. տվյալներով նախագծային ինքնուրույն գրասենյակ են ունեցել 70 հայ ճարտարապետներ, հարյուրից ավելի ճարտարագետներ, տասնյակ իրավաբաններ⁶⁴։ 1946 թ. Հալեպ քաղաքի հայ բժիշկների թիվը ավելի քան 40 է եղել⁶⁵, իսկ 1959 թ. Լիբանանում հաշվառման են ենթարկվել հայ 68 բժիշկներ, 84 ատամնաբույժներ, 35 դեղագործներ և 200 հիվանդապահներ⁶⁶։ Նույնքան զգալի է եղել հայերի դերը լրագրության ասպարեզում, այդ թվում նաև ֆրանսերեն լեզվով սեփական թերթեր և հանդեսներ հրատարակելու գործում։

Լիբանանի և Սիրիայի խորհրդարաններում հայերը մշտապես ունեցել են իրենց ներկայացուցիչները, իսկ լիբանանյան կառավարության կազմում՝ նախարարներ։ Հայ գաղթօջախները երկու երկրներին տվել են պետական բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնատարներ, դիվանագետներ⁶⁷ ու մանավանդ՝ ազգային պաշտ-

⁶¹ A. Hourani, Minorities in the Arab world, London, 1947, p. 77.

⁶² Ն. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 26—27։

⁶³ «Այդ», 13.10.1957։

⁶⁴ «Սփյուռք», 4.5.1958։

⁶⁵ «Ազգարար», 5.10.1946։

⁶⁶ «Արևելք», 2.1.1960։

⁶⁷ Տե՛ս «Այդ», 13.8.1954 և 8.1.1955։

պանության ճակատի երեւի գործիչներ: Հետպատերազմյան ժամանակաշրջանում միայն Սիրիայում երեք հայեր՝ Ա. Գարամանուկյանը, Հ. Մալոյանը և Ա. Քիլեճյանը հասել են գեներալի աստիճանի, տարբեր ժամանակներում ծառայելով որպես սպայակույտի անդամ, հրետանային ուժերի ընդհանուր հրամանատար, զինվորական կառավարիչ, ռազմական ատյանի անդամ, ոստիկան զորաց ընդհանուր հրամանատար, զինվորական կցորդ և այլն⁶⁸: Սիրիական ու լիբանանյան բանակներում ծառայել են նաև բազմատասնյակ հայ սպաներ և զգալի թվով հայ զինվորներ, որոնց մասին լիբանանի ազգային պաշտպանության ընդհանուր վարիչ Մ. Թաքիեդդինը չի վարանել նշելու: «Ծս անուահման վստահություն ունիմ մեր հայ զաղութին վրա: Մեր լավագույն սպաները, մեր լավագույն զինվորները հայեր են: Ոչ մեկ դավաճան չգտնվեցավ իրենց մեջ»⁶⁹:

Այստեղ ավելացնենք, որ երբեմնի գաղթականներից շատերը, «արաբական հայրենիքին մատուցած ծառայությանը համար» արժանացել են սիրիական և լիբանանյան բարձրագույն շքանշանների:

Հայ ժողովրդի վայելած վարկի ու կշռի մասին կարող են պերճախոս կերպով վկայել հետևյալ փաստերը: Սիրիայում 1956 թ. ցուցատախտակներից օտար լեզուներով արձանագրությունները չնշելու հրամանագիրը շտաբածվեց հայերեն ցուցատախտակների վրա⁷⁰, իսկ լիբանանում 1963 թ. մայրաքաղաքի փողոցները վերամկրտելու կապակցությամբ հայաշատ շրջանների բազմաթիվ փողոցներ կոչվեցին Նրեան, Արաքս, Արարատ, Հայք, Հայաստան, Անի, Մասիս, Կիլիկիա, Անդրանիկ, Րաֆֆի, Վարդան, Սիամանթո, Վարուժան, Ս. Նշան և Արամ Խաչատրյան, իսկ մի մեծ պողոտա՝ Արմենիա անունով⁷¹:

Սիրիական պետական գործիչ Ռ. Քեխիան ասել է. «Հայ տարրը եղած է մեր ամենասիրելի փոքրամասնությունը, որը իր ազատամտությամբ, աշխատասիրությամբ և ուշիմությամբ՝ մեծ ծա-

⁶⁸ Սիրիայի և լիբանանի բանակներում ծառայած հայ բարձրաստիճան սպաների մասին նյութեր տե՛ս «Արարատ», 20.11.1946 և 20.12.1946, «Զարթոնք», 25.12.1958, «Այգ», 12.6.1955, 8.1.1956, 1.8.1956 և 26.4.1958, «Սփյուռք», 11.4.1958:

⁶⁹ «Ազդակ», 18.4.1956:

⁷⁰ Նույն տեղում, 17.2.1956:

⁷¹ «Սփյուռք», 6.2.1963:

ռալություններ մատուցած է Սիրիային»⁷²։ «Հայերը շատ օգտակար տարր են այս երկիրներուն մեջ՝ իրենց աշխատասիրութեամբ և մանավանդ իրենց մասնագիտութիւններով»,—լրացրել է Ն. Կուտսին⁷³։ «Հայ ժողովուրդը իր ճիգերով, աշխատանքով, նարւարդութեամբ և նվիրումով շնորհիւ մեր երկիրը, աշակցելով Սուրիո առաջադիմութեան և բարգաւաճումին»,—հաստատել է Աբդել Ռահման Փալալին⁷⁴։ Լիբանանյան մշակույթի հայտնի գործիչ Ռ. Աբիլլաման իր հերթին հայտարարել է. «Մենք ոչ միայն գոհ ենք հայերից, այլև ուրախ ենք, որ այդպիսի մի կենսունակ ու ստեղծագործ տարր լծված է հավատարմորեն ու անվերապահորեն Լիբանանի ժողովրդավար հայրենիքի բարգաւաճումին ու բարօրութեան։ Այս շարքաշ ու շինարար ժողովուրդը օրհնութիւն է որեւէ երկրի համար»⁷⁵։

Նախապատեւածման շրջանի հետ համեմատած՝ հլուրնկալ երկու երկրների կյանքի բոլոր բնագավառներում հայ գաղթօջախների տեղի ու դերի այսպիսի վերելքի պայմաններում, արաբ ժողովրդի և նրա առաջընթացի հուսալի թեւակու հայ ժողովրդի հաշտ ու համերաշխ գոյակցութեան հողի վրա չէին կարող չսաղմնամորվել և հետզհետե չընձյուղել հայ-արաբական մշակութային կապերը։

ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

1

Սուլթանական բռնատիրութեան դարավոր լուծը ոչ միայն խափանել է Օսմանյան կայսրութեան ժողովուրդների մշակութային բնականոն զարգացումը¹, այլև արգելակել նրանց փոխադարձ

⁷² «Արարատ», 6.11.1946։

⁷³ «Զարթոնք», 11.11.1949։

⁷⁴ «Ազդակ», 19.12.1957։

⁷⁵ Նույն տեղում, 2.2.1951։

¹ Հանրահայտ են արաբ հեղինակ Շարանիի (1493—1565) թեւակու խոսքերն այն մասին, որ 1517 թվից, երբ Սելիմ Ա. Ահեղի զորքերը նվաճեցին Եգիպտոսը, արաբական աշխարհում «գիտութիւնը մարդկանց սրտից վերացաւ» (տե՛ս عبدالوهاب الشعراني، كتاب لاثنوار اقدسنية في بيان آداب العبودية، مصر، ١٢٧٧، ص ٣٩)։

շփումները. երկու հարևան ժողովուրդներ՝ արաբներն ու հայերը մի քանի հարյուրամյակ հնարավորություն չեն ունեցել մոտիկից հաղորդակցվելու միմյանց մշակութային նվաճումներին:

Միայն 19-րդ դարի երկրորդ կեսից, հեթաթային Արևելքի նկատմամբ Արևմուտքում հարաճող հետաքրքրության ազդեցության ներքո, Արաբիայի և արաբացու մասին հարյուրավոր հոդվածներ են լույս ընծայվել գաղթօջախներում հրատարակվող հայկական պարբերական մամուլում:

Դարավերջին և քսաներորդ դարասկզբին, հայ պատմաբանասիրության աստիճանական վերելքի պայմաններում, ավելի ու ավելի են ուշադրություն գրավել հայ-արաբական պատմական և մատենագրական առնչությունները:

Եվ սակայն արաբական գեղարվեստական գրականության ամենափայլուն էջերն անգամ դուրս են մնացել հայ մտքի սշակների տեսադաշտից, բացառություն են կազմել միայն որպես թերթոն Զմյուռնիայի «Արփի Արարատյանի» ընթերցողներին մատուցված «Հազար ու մեկ գիշեր» հեթաթաշարը և «Բազմավեպի» ու «Հյուսիսփայլի» հատուկենտ էջեր զբաղեցրած Անթարի վիպերգը:

Ափսոսալով, որ հայ ընթերցողին գրեթե ոչինչ հայտնի չէ արաբական դպրությունից, և արաբական բարոյալիր հեթաթների թարգմանության ձեռնարկելով, Ռ. Պատկանյանը դեռ անցյալ դարի վերջին նշել է. «Ոչ մի ազգի հանձար այն կետ ստեղծագործության և երևակայության վերամբարձ ձախելու չի հասած, որքան արևելցիներ»²։ Արաբական գրականության, որպես «արաբացու վառ երևակայությունը իր բանաստեղծական և գեղարվեստական սքանչելի գույներով» դրսևորող դպրության, շատ բարձր գնահատական է տվել Րաֆֆին³, իսկ այդ գրականությունը ճանաչելու ասպարեզում մեր իրականության մեջ տիրող անբնականոն վիճակն ակնարկելով, Դ. Վարուժանը ընդգծել է. «Ուղղաբերձ բազուկներով մեր Եվրոպա՝ աղաղակելը շատ լավ, բայց քիչ մըն ալ մեզ և մեր դրացիները հարկ է ճանչնանք»⁴:

Դժբախտաբար փաստ է, որ նույնիսկ բազմաբյուր հայերի արաբական երկրներում հաստատվելուց հետո էլ, ամբողջ երեք տասնամյակ, մինչև հիսունական թվականները, արաբերեն լեզ-

² Ա. Արշաունի, Հանդիպումներ անցյալի հետ, Երևան, 1969, էջ 18:

³ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 72:

⁴ Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 63:

վին գիտակ հայ մտավորականների սակավաթվությունն ու արաբական մշակույթի մասին փոքրաթիվ այդ «արաբագետների» պատկերացումների մակերեսայնությունը զգալապես դժվարացրել են արաբական դպրության նկատմամբ զաղթօջախների հետաքրքրության թեկուզ տարրական բավարարումը:

Տակավին 1930 թ., Հալեպի «Եփրատը», արաբական գրականությունից հայացումներ կատարել առաջադրելով, ընդգծում էր. «Հակառակ անոր, որ դարավոր անցյալ մը մեզ կկասյե արաբ ազնիվ ազգին հետ, շենք ճանշնար անոր ստեղծագործ տաղանդը գրականության և գեղարվեստի այլ մարզերուն մեջ: Եվ փոխադարձաբար: Մանոթության այս խեղճությունը գուցե անցյալին մեջ իր տրամաբանական պատճառներն ունեն: Բայց այսօր ներելի չէ, որ նմանօրինակ զանցառության մեջ գտնվինք»⁵:

Քսան տարի անց, ափսոսալով, որ «բառին բովանդակ իմաստով դժբախտաբար հայ արաբագիտություն մը չենք ունեցած» և որ «տարօրինակ մտայնությամբ մը երբեք չենք մտահոգված մշակույթի պատմությամբը այն ժողովուրդին, որուն հետ հաճախակի շփումներ ունեցած ենք», լիբանանահայ լրագրող Հ. Պարսումյանը հարկ էր համարում կոչ անել. «Գեթ այսօր լավ ճանշանք Արաբը իր ամբողջական գիծերուն մեջ»⁶:

Քառասնական թվականների վերջերից, արաբական գրավոր մշակույթին հաղորդվելու առաջին փորձերը հայ մտավորականությունն սկսել է Աբու Ալայով: Եվ դա հասկանալի է: Զէ՞ որ ալ-Մաարին հայ ժողովրդի համար սրտամոտ անուն էր վաղուց՝ շնորհիվ Ա. Իսահակյանի հանրահռչակ պոեմի: Եվ սակայն Աբու Ալայի կյանքին ու ստեղծագործության նվիրված ավելի քան մեկ տասնյակ արաբագիտական այդ թոթովանքները մերթ եվրոպական աղբյուրներից բանահավաքումներ էին՝, մերթ՝ Իսահակյանի պոեմին շաղկապվող մտորումներ⁷, քիչ անգամ միայն շրջապատի և

⁵ «Եփրատ» Հալեպ, 10.9.1930:

⁶ Հ. Պարսումյան Արաբագիտությունը հայ գրականության մեջ, «Զարթոնք», 9.4.1950:

⁷ Ա. Լեյլանի, «Ապու Ալա էլ Մաարին», «Ազգակ շաբաթօրյակ», 1944 թ. 1—11 (նույնը և «Նմուշներ Ապու Ալայի մասին ժողովրդական զրույցներից» տե՛ս «Համազգային տարեգիրք», 1952, էջ 103—118): Գ. Ասբառնյան, էպուկ Ալա էլ Մաարին, «Սփյուռք», 11.11.1961, էջ 9:

⁸ Ե. Տարոնյան, Աբու Ալա ալ-Մաարին հայ գրականության մեջ, «Le Jour», 8 և 15.9.1951 (նույնը համառոտված տե՛ս՝ «Ազգարար» № 203): Բ. Եղիայան, Աբու Ալայի տան առջև, «Ազգարար» № 33—35:

ժամանակի հետ արար փիլիսոփայի մտքի և հոգու կապերը ինքնուրույն բացահայտելու փորձեր⁹։ Արու Ալայով հայ գրականությունը հարստացնելու առավել ուշագրավ և երախտալի փորձը կատարել է իրանահայ գրող և թարգմանիչ Ջ. Միրզոյանը, որի սումնասիրությունը լույս է տեսել լիբանանահայ մամուլում¹⁰։ Միրզոյանը առաջինն է, որ Արու Ալայի «Լուղումիատից» տասնյակ ու տասնյակ բառատողեր բարձրարվեստ թարգմանությամբ (հոգ չէ թե պարսկերենից) լույս է ընծայել Մեսրոպյան լեզվով։

Ջի կարելի չափսոսալ, որ Արու Ալայի մասին լույս տեսած համարյա բոլոր հոդվածներում անխուսափելիորեն արձանագրվել է անունը Ա. Իսահակյանի, սակայն ոչ ոք ցարդ նվազագույն փորձն էլ չի կատարել «Արու Ալա Մահարի» պոեմի ստեղծագործական հենքում արար հեղինակի փիլիսոփայական հայացքների «հումքի» աստիճանաշարը որոշելու Եդ. Տարոնյանը, Հ. Պարսումյանը, Ա. Տոնոյանը, Ա. Լեյլանին և ուրիշներ, առանց որևէ փաստարկի, արար հեղինակի (և միայն նրա) խոհերի ուղղակի արձագանքն են տեսել հայ բանաստեղծի մտորումներում, մինչ Հ. Քերիկյանը և ալլը այդ արձագանքի աղբյուրը Մարութ վերցնելով վերագրել են Շոպենհաուերին և մանավանդ նիցշեին¹¹։

Մտարուց հետո, արաբական գրականության ոսկեդարյան մատյանից ուրիշ մի քանի հսկաներ էլ են հայ ընթերցողներին ծանոթացվել սիրիահայ և լիբանանահայ գրական մամուլում։

1962 թ. Իրաքի մայրաքաղաքում հանդիսավորապես նշվեց Բաղդադի հիմնադրման 1200-ամյակը և արար մեծ փիլիսոփա ալ-Քինդիի մահվան 1100-ամյակը։ Հորեկյանական հանդիսություններին մասնակցեցին ոչ միայն արաբ, այլև օտարերկրյա արևելագետներ, որոնց թվում և սովետական մի պատվիրակություն։ Ալդ առիթով, սովետահայ արաբագետ Ս. Շիրոյանը լիբանանահայ մամուլում ստորագրեց ալ-Քինդիին նվիրված մի լուրջ հետազոտություն¹², շեշտելով որ նրա «հանճարեղ գործերը առաջադիմական

⁹ Մ. Քիրյաճյան, Ապու Ալա էլ Մարի, «Ժողովուրդի ձայն», 31.7.1947 և «Զարթոնք», 28.11.1947 (արտատպություն «Հայաստանի կոչնակից»)։ Հ. Ավագյան, Արար հանճարեղ բանաստեղծ և իմաստասեր Ապու էլ Ալա էլ Մարի», «Մեր նշանաբանն է հոռաջ» 4.8.1957։

¹⁰ Ջ. Միրզոյան, Արու Ալա էլ Մարի՝ արաբ քերթողության Օմար Խայամը, «Բաղին», 1964 № 5—7։

¹¹ Տե՛ս «Վերածնունդ», № 299։ «Համազգայինի տարեգիրք» Բելյուս, 1952, էջ 116։ «Ազդակ», Բելյուս, 10.11.1957, և այլն։

¹² Ս. Շիրոյան, Արևելքի մեծ համայնագետը՝ ալ-Քինդի, «Մեր նշանաբանն է հոռաջ», 16.12.1962, էջ 6։

հոտանքի մը ծնունդ տվին Մնրձավոր ու Միջին Արևելքի փիլիսոփայության պատմության մեջ: Եթե սովետահայ արևելագետը իր հոգևածին որպես եզրակացություն ընդգծել է ալ-Քինդիի արիստոտելյան իմաստասիրության յուրացման հետ նաև նրա կողմից մեծ աթենացու առաջադեմ գաղափարների զարգացումը, ապա Գ. Ասթարձյանը նույն հեղինակին նվիրված իր մակերեսային հետազոտության մեջ, չակերտելով ալ-Քինդիի արաբ գերազանց փիլիսոփա լինելը, հիմնական շեշտը դրել է միայն ու միայն հելլենական փիլիսոփայությունից նրա կրած «ուժեղ ազդեցության» վրա: Պետք է ընդգծել, որ Ասթարձյանի հետազոտությունների հավաքական ու մակերեսային ոճը բնորոշ է նաև նրա մյուս հոգևածներին՝ 12-րդ դարի անդալուզյան արաբ իմաստասեր Իբն Ռյուշդի, «հավերժական բանաստեղծ» Մուտանաբբիի և այլոց մասին¹³:

11-րդ դարի արաբ փիլիսոփա ալ-Ղազալիից մի հատված (սփորանքի ազատողը), Իսպանիայում 10-րդ դարում ծաղկած «մավրիտանական» գրականությունից տաղեր՝ Մոկտար Բեն Թաբթից և Օսման Խալիֆայից, մի շարք արաբական ժողովրդական հեքիաթներ և բարոյալիր պատմություններ (Այսպես էր ժամանակին», «Արևելյան հյուրասիրություն», «Խալիֆան և աղքատ Յագուլը», «Խալիֆը և նրա մտերիմը», «Հարուն ալ-Ռաշիդ և Օմար»), իսլամական կրոնի հետ առնչվող մի շարք նյութեր (Մոհամմեդ մարգարեի կյանքն ու գործը», «Մավլետ էն-Նապի» և այլն), արաբական միջնադարյան կյանքից մի շարք դրվագներ՝ քաղված Մ. Սիբրինիի «Արաբական մանրագեյեր» գրքից և այլ աղբյուրներից. ահա գրեթե այն ամենը, ինչ արաբական գրականության հին շրջանի հետ կապված լույս է տեսել Սիրիայի և Լիբանանի հայկական մամուլում¹⁴:

¹³ Գ. Ասթարձյան, Քինդի՝ արաբ «գերազանց փիլիսոփան», «Սփյուռք» 13.2.1963, էջ 10: Իսկ Ռյուշդի, «Սփյուռք», 1965 թ. 29, 30, 31: Իսկ Ռյուշդի Արիստոտելյան վարդապետության մեկնաբան, «Սփյուռք» 1965, թ. 34, 35: Էյ-Մուֆեհհայի՝ հավերժական բանաստեղծը, «Բագին», 1963, թ. 8, էջ 68—76: (Մուտանաբբիի մասին երկու ընդարձակ հոգևածներ է ստորագրել լրագրող Տ. Թոսպաթը, «Աղդակ շաբաթօրյակի» 4-րդ և 7-րդ համարներում, «Արաբ բանաստեղծության վարպետը» և «Կինեռու ակամա բանաստեղծը» խորագրերի տակ, սակայն մենք այստեղ հարկ չենք համարում կանգ առնել այդ հոգևածների վերլուծման վրա:

¹⁴ Տե՛ս «Գեպի երկիր», 1945, թ. 2: «Ազդակ», 24.4.1951: «Արևելք» 5 և 7.10.1957, 13.8.1958, 5.3.1959: «Զարթոնք» 14.7.1950, 9, 16, 25 և 26.10.1958: 3-ից 13.7.1958: «Սփյուռք» 15 և 27.7.1961, 19.9.1964: «Ամենուն տարեգիրքը», 1956. էջ 78:

Հին շրջանի արար գրողների կյանքի և ընդհանրապես միջնադարում արաբական կենցաղի մասին «Պրիսմակ» «Զարթոնք» և «Արարատ» թերթերում տասնյակ էջեր է ստորագրել լրագրող Հ. Պարսումյանը¹⁵։ Ոչ հեղինակը և ոչ էլ մամուլը ծանոթագրություններում չեն նշել, թե այդ «գեղեցիկ և հետաքրքրական պատմվածքները» («Մի մեռցնեք բանաստեղծությունը», «Արաբը կսիրե արդարությունը և դրամը», «Հարուն էլ-Ռաշիդ և Աբու Նովվաս» և այլն) ինքնուրույն շարադրա՞նք են, թե բաղվածք-թարգմանություն։ Նույնը պետք է ասել նաև Մարտիրոս Տեր-Ստեփանյանի արաբական թեմատիկայով պատմությունների մասին¹⁶ («Բարիք ըրե, ծովը նետե», «Ճաստմ էլ Ճապպարի էջը», «Ավազակ դերվիշը և ժողովրդանվեր թագավորը» և այլն)։ Մեղ թվում է, որ ավելի շուտ արաբերենից փոխադրություններ են դրանք, և թեպետ գիտական կամ գեղարվեստական որևէ արժեք չեն ներկայացնում, այնուամենայնիվ օգնել են հայ ընթերցողին դրական պատկերացում կազմելու արաբների մի շարք բաբոյա-կամային արժանիքների մասին։

Ինչպես երևում է այս բոլորից, զգալի աշխատանք է կատարվել արաբական դպրության ոսկեդարից գեթ մի քանի դեմքեր և որոշ դրվագներ հայ ընթերցողներին ծանոթացնելու ուղղությամբ։ Թեև ավելի համեստ չափերով, սակայն որոշ բան արվել է նաև արաբական գրականության վերածննդի (19-րդ դարի երկրորդ կեսից սկսած) ներկայացուցիչներին հայկական մամուլի էջերում մատուցելու ասպարեզում։

Արաբական ազգային զարթոնքի շարժման առաջատար դեմքերից էր Ջեմալեդդին ալ-Աֆղանին։ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների իրավունքների պաշտպանության համագումարի որոշմամբ 1953 թ. դեկտեմբերին Լիբանանում ալ-Աֆղանիի մահվան 60-ամյակը հանդիսավորությամբ նշելու կապակցությամբ, Ա. Դարյանը նրա կյանքին, գրական-իմաստասիրական և մանավանդ ազատասիրական գործունեությանը նվիրել է ընդարձակ մի ուսումնասիրություն¹⁷։

¹⁵ Տե՛ս հատկապես՝ «Զարթոնք», 1, 8, 15, 22 և 29.2.1948, մարտի 14, ապրիլի 10, մայիսի 22, օգոստոսի 23 և այլ համարներ։

¹⁶ Տե՛ս «Զարթոնք», 8, 20 և 21.10.1950, 1.11.1950։

¹⁷ Ա. Դարյան, Ջեմալեդդին էլ Աֆղանի, «Ժողովածու գրականության և արվեստի», 1954, № 17, էջ 3—8։

Հայ գրականագիտությունն անդրադարձել է նաև Մոհամմեդ Ուալի Ուդդին Եգենին, արաբական նոր գրականության սակավադեպ այն մշակներից մեկին, որ արևմտահայության դժբախտ ձակատագրին դանթեական շնչով էջեր է հատկացրել իր գործերում. երախտաշատ աշխատանք է կատարել անշուշտ Բ. Զանոյանը, Եգենի կյանքն ու գործը մատչելի դարձնելով սփյուռքահայ ընթերցողներին¹⁸։

Եթե Եգենի կյանքի նպատակն ու ստեղծագործությունների հիմնական բովանդակությունը եղել են պայքարը թուրքական բռնատիրության դեմ, ապա մինչև Օսմանյան կայսրության քաղաքում՝ բանաստեղծ Ահմեդ Շեքին հանդես է եկել Կարմիր սուլթանի լորձնաշուրթն դովերգությամբ։ Լիբանանահայ մամուլում նրան նվիրված հոդվածները¹⁹, վեր հանելով հանդերձ նրա արվեստի նրբությունը, չեն մոռացել ընդգծել Շեքիի կյանքի ու գործի հետադեմ պահերը։

Քսաներորդ դարասկզբին, մանավանդ երկրորդ և երրորդ տասնամյակներում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում և Իրաքում ծնունդ առած արաբական նոր գրականությունը հայ ընթերցողներին մատուցելու գործում, հայ մտավորականությունը իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է այն գրողների վրա, որոնց կյանքն ու ստեղծագործությունը տեղայնանում են Լևանտի սահմաններում։

Հայ ժողովրդի հետ սերտ կապերի մեջ էր Ամին ալ-Ռիհանին, որը հայկական դատին ի նպաստ բազում ելույթներ է ունեցել։ 1954 թ. նրա «Դուք բանաստեղծներ» հատորի լույս ընծայման քսանամյակի և Բեյրութում վերահրատարակվելու կապակցությամբ, «Մշակույթ» հանդեսը, հաշվի առնելով այդ գրքի դերը արաբական ոեալիզմի կազմավորման գործում, թարգմանել է «Տասնհինգ խորհուրդ բանաստեղծներուն» էջը²⁰։ 1965 թ. Լիբանանում ալ-Ռիհանիի մահվան 25-ամյակը համազգային շուքով նշելու նպատակով «Ռիհանիի շաբաթի» կազմակերպումից օգտվելով,

¹⁸ Բ. Զանոյան. Մոհամմեդ Ուալի Ուտտին Եգեն, «Բազին», 1962, № 4, էջ 58։

¹⁹ Գ. Մալոյան, Ահմեդ Շեքի, «Արարատ» 5.5.1952։ Գ. Ասրաբյան, Ահմեդ Շեքի՝ իշխաններու բանաստեղծը և բանաստեղծներու իշխանը, «Բազին», 1964, № 2, էջ 60—71։

²⁰ «Մշակույթ», 1954 սեպտեմբեր, էջ 31—32 (արտատպությունը տե՛ս «էջեր գրականության և արվեստի», 1965 դեկտեմբեր էջ 11—12)։

լիբանանահայ առաջադեմ մամուլը հանգամանորեն անդրադարձել է նրա կյանքին և ստեղծագործություններին²¹։

Միխայիլ Նայիմեն, որ 1906—1911 թթ. Ռուսաստանում իր ուսումնառության ժամանակ որոշ ժանոթություն է ձեռք բերել հայ ժողովրդի մասին, 1956 և 1962 թթ. Սովետական Միություն այցելելով և առանց երևանում լինելու համոզվել է, որ «սրամիտ, աշխատունակ, թեքների և արվեստներու հետամուտ, փառավոր այլ դժնդակ անցյալով» հայ ժողովուրդը ձեռք է բերել օփառավոր ներկա²²։ Հենց այդ պատճառով էլ նա առանձին հաճությամբ է սկսել արտահայտվել լիբանանահայերի մասին և շատագուցակ նրանց առավել աշխույժ մասնակցությունը երկրի տնտեսական ու մշակութային կյանքին։ Նա հայ մտավորականներից շարունակ տեղեկություններ է խնդրել հայ դրականության մասին, գոհունակությամբ ծանոթացել Ա. Իսահակյանի, Վ. Թեքեյանի, Հ. Շիրազի և այլոց քերթողության հետ²³, դրվատել Սովետական Հայաստանի պայծառ իրականությունը և նույնիսկ նրա խորհրդայնացման քառասնամյակի առիթով հանդես է եկել ջերմ ողջույնով²⁴։ Ուստի պատահական չէ, որ Նայիմեն, համաշխարհային ճանաչում գտած իր գործերով հյուրընկալվել է լիբանանահայ գրական մամուլում²⁵, իսկ Բ. Զանոյանը հրատարակել է նրա կյանքն ու գործունեությունը բնութագրող հոդվածներ²⁶։

Սփյուռքահայության ուշադրությունից չի վրիպել նաև դասական դարձած բանաստեղծ Ախթալ ալ-Սադիրը (Բեշարա Աբդալլա էլ-Խուրի)։ 1961 թ. երբ ամբողջ լիբանանում նշվում էր նրա գրական գործունեության հիանամյակը, հայությունը Ա. Դարյանի և Գ.

²¹ «Հառաջ», 17 և 24.10.1965։ Արժե նշել, որ 1950 թ. մարտին, ալ-Ռիհանիի «Սիրային նամակներ» հրատարակության առթիվ, Հ. Թեքեյանը մի նամակ-հոգնած է ուղարկել ղրդդի եղբորը՝ Ալրեր ալ-Ռիհանիին, որը այն տրամադրել է Բելրուֆի ամերիկյան համալսարանի «ալ-Քուլլիե» հանդեսին (տե՛ս «Սուրիա» 18.10.1950)։

²² «Մեր նշանաբանն է հառաջ», 26.9.1959։

²³ Նույն տեղում։

²⁴ «Մեր նշանաբանն է հառաջ», 4.12.1960։

²⁵ Մ. Նայիմեն, Սրտերուն օճառը, թրգ. Բ. Զանոյան, «Սփյուռք», 16.5.1959, էջ 5։ Թափառաշրջիկի մը հուշերը, թրգ. Լ. Վարդան, «Արարատ գրական», 1958, № 1, 25—29։ Հանդիպումը, թրգ. Ս. Աշճյան (հեղինակի հանձնարարությամբ), «Ազդակ», 24.10—2.12.1958։

²⁶ Բ. Զանոյան, Միխայիլ Նայիմի, «Սփյուռք» 16.5.1959, էջ 4 և «Բազին», 1964, № 10, էջ 32—33։

Մուլտանի գրչով իր հարգանքի խոսքն ասաց գրողի մասին, որի ամբողջ կյանքն ու գործը նվիրաբերված են եղել օսմանյան և ֆրանսիական բռնատիրությունների դեմ համառ ու անզիջում պայքարին և որը բնակվելով Բուրջ Համուդի հայաշատ շրջանում, հաճախ է ացել հայկական կրթարանները, ոգևորել հայ մանկավարժներին և նրանց սաներին²:

Լիբանանյան գրականության գագաթներից Մարուն Աբբուդը, ընդհուպ մինչև իր կյանքի վերջին տարիները, հնարավորություն չի ունեցել շփվելու հայ մտավորականության հետ, սակայն իր բազմամյա մանկավարժական աշխատանքի ընթացքում կրթել է շատ հայ ուսանողներին՝ համարելով նրանց «միշտ օրինակելի տարրեր, ընդոթին հատկություններով և համառ աշխատանքով», ծանոթացել է Լիբանանում նոր բույն շինած գաղթական հայերի հետ և նրանց միջոցով էլ ճանաչել հայ ժողովրդին, որին բնութագրել է որպես «շատ աշխատունակ և պարկեշտ ժողովուրդ մը»²⁸: Արաբական մամուլից Սովետական Հայաստանի վերելքի և հայ ժողովրդի՝ սոցիալիզմի օրոք ձեռք բերած հաջողությունների մասին հաղորդումներ կարդալով, նա խոստովանել է. «Հայ ժողովրդի ձեռք բերած հաջողությունները զիս չեն զարմացներ երբեք, որովհետև հայ աշխատասեր ժողովուրդը միշտ գտնված է հառաջապահ դիրքերում վրա՝ մարդկային կյանքի բոլոր մարզերում մեջ»²⁹: «Իբրև արաբ գրող, ատել է նա,— ես ցավ կզգամ որ առիթ չեմ ունեցած հայերեն սովորելու», որովհետև հայ դրականության մասին միայն «որոշ գաղափար» կազմելով (եվրոպական լեզուներով կատարված թարգմանությունների շնորհիվ) այն գտել է որպես «արժեքավոր գրականություն մը»³⁰: Եվ պատկերավորելով իր վիճակը, այն նմանեցրել է իրենից մի քանի դար առաջ հալածական սիրահարված արաբ բանաստեղծ Բահադդին Զուհեյրի վիճակին, որ հայերեն լեզուն չիմանալու հետևանքով մեծ ողբերգություն է ապրել³¹, Աբ-

² Ա. Դարյան. Լիբանանցի քնարաշունչ բանաստեղծ Ախթալ ալ-Սադիր, «Հառաջ գրական», 2.6.1961, էջ 2: Գ. Մալոյան, Պարա խուրի, «Արարատ գրական», 1962, № 3—4, էջ 157—159: Ալ-Սադիրի քերթվածներից «Երևողի պալատը» և «Աղոթքը» Ա. Դարյանի թարգմանությամբ տե՛ս «Մեր նշանաբանն է հառաջ» 11.6.1961, էջ 6 և «Հառաջ գրական», 2.6.1961, էջ 2:

²⁸ «Հառաջ գրական», 12.7.1963:

²⁹ Նույն տեղում:

³⁰ «Հառաջ գրական», 12.7.1963, էջ 6:

³¹ Մ. Աբբուդ, Հայաստանի քառասնամյակը, «Մեր նշանաբանն է հառաջ», 11.12.1960, էջ 3:

բուգի կենդանության օրոք, դժբախտաբար, լիբանանահայ գրական մամուլը բավարարվել է հակիրճ մի կենսագրականով և նրա գործերից աննշան հատվածների թարգմանությամբ³², ուրախառիթ բացառություն համարելով Ա. Դարյանի բովանդակալից մի հետադոտությունը³³:

Լիբանանցի բանաստեղծ Սաիդ Աքլը դեռ երեսնական թվականներին անձամբ ծանոթանալով Վահան Թեքեյանի և Միքայել Կյուրճյանի ու նրանց միջոցով՝ հայ գրականության հետ, ընդգծել է. «Ոչ մեկ անգամ կրնաք հանդիպիլ հայ հանճարի մը՝ առանց զգալու հմայքը հայկական քաղաքակրթության, որ հոյակապ քաղաքակրթություն մըն է, մանավանդ մարդկային»³⁴: Թեքեյանի հետ հանդիպումը և նրա գործերի ֆրանսերեն թարգմանությունների ընթերցումը այնքան խոր տպավորություն են թողել երիտասարդ Աքլի վրա, որ հայ քերթողի հետ կապը աստիճանաբար վերածվել է գկապի իմ և ժողովուրդի մը միշտ, իմ և պատմության միջև», ինչպես խոստովանել է նա հետագայում, ավելացնելով, որ հայերին նայում է «որպես շառավիղները ազնիվ և ընտիր մի ժողովուրդի, որի արժանիքներն են տեղծագործությունը, աշխատունակությունն ու բարությունը: Հայերը այժմյան լիբանանյան ժողովուրդը կազմավորող ամենաթանկագին տարրերից մեկն են հանդիսանում»³⁵:

«Լուսավոր աչքերով», «զորավոր ժողովուրդ» հայության պատմական ճակատագիրը միշտ հուզել է բանաստեղծին: Նա խորամուխ է եղել հայ ժողովուրդի պատմության ուսումնասիրության մեջ, ճանաչել է հայ ժողովուրդի զավակների հնամյա փառքը, «արվեստի և մշակույթի քաղաք Անին՝ որ կռվեցավ Արևելքի Փարիզը», մեծ Նղեունը՝ «ամենամեծ անարդարությունը պատմության մեջ»³⁶: Նա ճանաչել է և գաղութահայությունը ու չի վարանել գրելու. «Ամեննն նախանձելին այն է, որ այս ժողովուրդը, ուր որ ալ երթա՝ անդադար կաշխատի, կավելցնե աշխարհի բարիքները, կավելցնե աշխարհի լույսը»³⁷:

³² Մ. Աքբուզ, Մեծախոսիկը, «Մեր նշանաբանն է հառաչ», 11.8.1957, էջ 9: Երեկվան և այսօրվան ուսումնարանները, «Արարատ գրական», 1959, № 3—4—5, էջ 149—154:

³³ «Մեր նշանաբանն է հառաչ», 4.12.1980:

³⁴ «Սփյուռք», 18.1.1964:

³⁵ «الصيد» 1970, 1971, 1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1991, 1992, 1993, 1994, 1995, 1996, 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023, 2024, 2025, 2026, 2027, 2028, 2029, 2030, 2031, 2032, 2033, 2034, 2035, 2036, 2037, 2038, 2039, 2040, 2041, 2042, 2043, 2044, 2045, 2046, 2047, 2048, 2049, 2050, 2051, 2052, 2053, 2054, 2055, 2056, 2057, 2058, 2059, 2060, 2061, 2062, 2063, 2064, 2065, 2066, 2067, 2068, 2069, 2070, 2071, 2072, 2073, 2074, 2075, 2076, 2077, 2078, 2079, 2080, 2081, 2082, 2083, 2084, 2085, 2086, 2087, 2088, 2089, 2090, 2091, 2092, 2093, 2094, 2095, 2096, 2097, 2098, 2099, 2100, 2101, 2102, 2103, 2104, 2105, 2106, 2107, 2108, 2109, 2110, 2111, 2112, 2113, 2114, 2115, 2116, 2117, 2118, 2119, 2120, 2121, 2122, 2123, 2124, 2125, 2126, 2127, 2128, 2129, 2130, 2131, 2132, 2133, 2134, 2135, 2136, 2137, 2138, 2139, 2140, 2141, 2142, 2143, 2144, 2145, 2146, 2147, 2148, 2149, 2150, 2151, 2152, 2153, 2154, 2155, 2156, 2157, 2158, 2159, 2160, 2161, 2162, 2163, 2164, 2165, 2166, 2167, 2168, 2169, 2170, 2171, 2172, 2173, 2174, 2175, 2176, 2177, 2178, 2179, 2180, 2181, 2182, 2183, 2184, 2185, 2186, 2187, 2188, 2189, 2190, 2191, 2192, 2193, 2194, 2195, 2196, 2197, 2198, 2199, 2200, 2201, 2202, 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2209, 2210, 2211, 2212, 2213, 2214, 2215, 2216, 2217, 2218, 2219, 2220, 2221, 2222, 2223, 2224, 2225, 2226, 2227, 2228, 2229, 2230, 2231, 2232, 2233, 2234, 2235, 2236, 2237, 2238, 2239, 2240, 2241, 2242, 2243, 2244, 2245, 2246, 2247, 2248, 2249, 2250, 2251, 2252, 2253, 2254, 2255, 2256, 2257, 2258, 2259, 2260, 2261, 2262, 2263, 2264, 2265, 2266, 2267, 2268, 2269, 2270, 2271, 2272, 2273, 2274, 2275, 2276, 2277, 2278, 2279, 2280, 2281, 2282, 2283, 2284, 2285, 2286, 2287, 2288, 2289, 2290, 2291, 2292, 2293, 2294, 2295, 2296, 2297, 2298, 2299, 2300, 2301, 2302, 2303, 2304, 2305, 2306, 2307, 2308, 2309, 2310, 2311, 2312, 2313, 2314, 2315, 2316, 2317, 2318, 2319, 2320, 2321, 2322, 2323, 2324, 2325, 2326, 2327, 2328, 2329, 2330, 2331, 2332, 2333, 2334, 2335, 2336, 2337, 2338, 2339, 2340, 2341, 2342, 2343, 2344, 2345, 2346, 2347, 2348, 2349, 2350, 2351, 2352, 2353, 2354, 2355, 2356, 2357, 2358, 2359, 2360, 2361, 2362, 2363, 2364, 2365, 2366, 2367, 2368, 2369, 2370, 2371, 2372, 2373, 2374, 2375, 2376, 2377, 2378, 2379, 2380, 2381, 2382, 2383, 2384, 2385, 2386, 2387, 2388, 2389, 2390, 2391, 2392, 2393, 2394, 2395, 2396, 2397, 2398, 2399, 2400, 2401, 2402, 2403, 2404, 2405, 2406, 2407, 2408, 2409, 2410, 2411, 2412, 2413, 2414, 2415, 2416, 2417, 2418, 2419, 2420, 2421, 2422, 2423, 2424, 2425, 2426, 2427, 2428, 2429, 2430, 2431, 2432, 2433, 2434, 2435, 2436, 2437, 2438, 2439, 2440, 2441, 2442, 2443, 2444, 2445, 2446, 2447, 2448, 2449, 2450, 2451, 2452, 2453, 2454, 2455, 2456, 2457, 2458, 2459, 2460, 2461, 2462, 2463, 2464, 2465, 2466, 2467, 2468, 2469, 2470, 2471, 2472, 2473, 2474, 2475, 2476, 2477, 2478, 2479, 2480, 2481, 2482, 2483, 2484, 2485, 2486, 2487, 2488, 2489, 2490, 2491, 2492, 2493, 2494, 2495, 2496, 2497, 2498, 2499, 2500, 2501, 2502, 2503, 2504, 2505, 2506, 2507, 2508, 2509, 2510, 2511, 2512, 2513, 2514, 2515, 2516, 2517, 2518, 2519, 2520, 2521, 2522, 2523, 2524, 2525, 2526, 2527, 2528, 2529, 2530, 2531, 2532, 2533, 2534, 2535, 2536, 2537, 2538, 2539, 2540, 2541, 2542, 2543, 2544, 2545, 2546, 2547, 2548, 2549, 2550, 2551, 2552, 2553, 2554, 2555, 2556, 2557, 2558, 2559, 2560, 2561, 2562, 2563, 2564, 2565, 2566, 2567, 2568, 2569, 2570, 2571, 2572, 2573, 2574, 2575, 2576, 2577, 2578, 2579, 2580, 2581, 2582, 2583, 2584, 2585, 2586, 2587, 2588, 2589, 2590, 2591, 2592, 2593, 2594, 2595, 2596, 2597, 2598, 2599, 2600, 2601, 2602, 2603, 2604, 2605, 2606, 2607, 2608, 2609, 2610, 2611, 2612, 2613, 2614, 2615, 2616, 2617, 2618, 2619, 2620, 2621, 2622, 2623, 2624, 2625, 2626, 2627, 2628, 2629, 2630, 2631, 2632, 2633, 2634, 2635, 2636, 2637, 2638, 2639, 2640, 2641, 2642, 2643, 2644, 2645, 2646, 2647, 2648, 2649, 2650, 2651, 2652, 2653, 2654, 2655, 2656, 2657, 2658, 2659, 2660, 2661, 2662, 2663, 2664, 2665, 2666, 2667, 2668, 2669, 2670, 2671, 2672, 2673, 2674, 2675, 2676, 2677, 2678, 2679, 2680, 2681, 2682, 2683, 2684, 2685, 2686, 2687, 2688, 2689, 2690, 2691, 2692, 2693, 2694, 2695, 2696, 2697, 2698, 2699, 2700, 2701, 2702, 2703, 2704, 2705, 2706, 2707, 2708, 2709, 2710, 2711, 2712, 2713, 2714, 2715, 2716, 2717, 2718, 2719, 2720, 2721, 2722, 2723, 2724, 2725, 2726, 2727, 2728, 2729, 2730, 2731, 2732, 2733, 2734, 2735, 2736, 2737, 2738, 2739, 2740, 2741, 2742, 2743, 2744, 2745, 2746, 2747, 2748, 2749, 2750, 2751, 2752, 2753, 2754, 2755, 2756, 2757, 2758, 2759, 2760, 2761, 2762, 2763, 2764, 2765, 2766, 2767, 2768, 2769, 2770, 2771, 2772, 2773, 2774, 2775, 2776, 2777, 2778, 2779, 2780, 2781, 2782, 2783, 2784, 2785, 2786, 2787, 2788, 2789, 2790, 2791, 2792, 2793, 2794, 2795, 2796, 2797, 2798, 2799, 2800, 2801, 2802, 2803, 2804, 2805, 2806, 2807, 2808, 2809, 2810, 2811, 2812, 2813, 2814, 2815, 2816, 2817, 2818, 2819, 2820, 2821, 2822, 2823, 2824, 2825, 2826, 2827, 2828, 2829, 2830, 2831, 2832, 2833, 2834, 2835, 2836, 2837, 2838, 2839, 2840, 2841, 2842, 2843, 2844, 2845, 2846, 2847, 2848, 2849, 2850, 2851, 2852, 2853, 2854, 2855, 2856, 2857, 2858, 2859, 2860, 2861, 2862, 2863, 2864, 2865, 2866, 2867, 2868, 2869, 2870, 2871, 2872, 2873, 2874, 2875, 2876, 2877, 2878, 2879, 2880, 2881, 2882, 2883, 2884, 2885, 2886, 2887, 2888, 2889, 2890, 2891, 2892, 2893, 2894, 2895, 2896, 2897, 2898, 2899, 2900, 2901, 2902, 2903, 2904, 2905, 2906, 2907, 2908, 2909, 2910, 2911, 2912, 2913, 2914, 2915, 2916, 2917, 2918, 2919, 2920, 2921, 2922, 2923, 2924, 2925, 2926, 2927, 2928, 2929, 2930, 2931, 2932, 2933, 2934, 2935, 2936, 2937, 2938, 2939, 2940, 2941, 2942, 2943, 2944, 2945, 2946, 2947, 2948, 2949, 2950, 2951, 2952, 2953, 2954, 2955, 2956, 2957, 2958, 2959, 2960, 2961, 2962, 2963, 2964, 2965, 2966, 2967, 2968, 2969, 2970, 2971, 2972, 2973, 2974, 2975, 2976, 2977, 2978, 2979, 2980, 2981, 2982, 2983, 2984, 2985, 2986, 2987, 2988, 2989, 2990, 2991, 2992, 2993, 2994, 2995, 2996, 2997, 2998, 2999, 3000, 3001, 3002, 3003, 3004, 3005, 3006, 3007, 3008, 3009, 3010, 3011, 3012, 3013, 3014, 3015, 3016, 3017, 3018, 3019, 3020, 3021, 3022, 3023, 3024, 3025, 3026, 3027, 3028, 3029, 3030, 3031, 3032, 3033, 3034, 3035, 3036, 3037, 3038, 3039, 3040, 3041, 3042, 3043, 3044, 3045, 3046, 3047, 3048, 3049, 3050, 3051, 3052, 3053, 3054, 3055, 3056, 3057, 3058, 3059, 3060, 3061, 3062, 3063, 3064, 3065, 3066, 3067, 3068, 3069, 3070, 3071, 3072, 3073, 3074, 3075, 3076, 3077, 3078, 3079, 3080, 3081, 3082, 3083, 3084, 3085, 3086, 3087, 3088, 3089, 3090, 3091, 3092, 3093, 3094, 3095, 3096, 3097, 3098, 3099, 3100, 3101, 3102, 3103, 3104, 3105, 3106, 3107, 3108, 3109, 3110, 3111, 3112, 3113, 3114, 3115, 3116, 3117, 3118, 3119, 3120, 3121, 3122, 3123, 3124, 3125, 3126, 3127, 3128, 3129, 3130, 3131, 3132, 3133, 3134, 3135, 3136, 3137, 3138, 3139, 3140, 3141, 3142, 3143, 3144, 3145, 3146, 3147, 3148, 3149, 3150, 3151, 3152, 3153, 3154, 3155, 3156, 3157, 3158, 3159, 3160, 3161, 3162, 3163, 3164, 3165, 3166, 3167, 3168, 3169, 3170, 3171, 3172, 3173, 3174, 3175, 3176, 3177, 3178, 3179, 3180, 3181, 3182, 3183, 3184, 3185, 3186, 3187, 3188, 3189, 3190, 3191, 3192, 3193, 3194, 3195, 3196, 3197, 3198, 3199, 3200, 3201, 3202, 3203, 3204, 3205, 3206, 3207, 3208, 3209, 3210, 3211, 3212, 3213, 3214, 3215, 3216, 3217, 3218, 3219, 3220, 3221, 3222, 3223, 3224, 3225, 3226, 3227, 3228, 3229, 3230, 3231, 3232, 3233, 3234, 3235, 3236, 3237, 3238, 3239, 3240, 3241, 3242, 3243, 3244, 3245, 3246, 3247, 3248, 3249, 3250, 3251, 3252, 3253, 3254, 3255, 3256, 3257, 3258, 3259, 3260, 3261, 3262, 3263, 3264, 3265, 3266, 3267, 3268, 3269, 3270, 3271, 3272, 3273, 3274, 3275, 3276, 3277, 3278, 3279, 3280, 3281, 3282, 3283, 3284, 3285, 3286, 3287, 3288, 3289, 3290, 3291, 3292, 3293, 3294, 3295, 3296, 3297, 3298, 3299, 3300, 3301, 3302, 3303, 3304, 3305, 3306, 3307, 3308, 3309, 3310, 3311, 3312, 3313, 3314, 3315, 3316, 3317, 3318, 3319, 3320, 3321, 3322, 3323, 3324, 3325, 3326, 3327, 3328, 3329, 3330, 3331, 3332, 3333, 3334, 3335, 3336, 3337, 3338, 3339, 3340, 3341, 3342, 3343, 3344, 3345, 3346, 3347, 3348, 3349, 3350, 3351, 3352, 3353, 3354, 3355, 3356, 3357, 3358, 3359, 3360, 3361, 3362, 3363, 3364, 3365, 3366, 3367, 3368, 3369, 3370, 3371, 3372, 3373, 3374, 3375, 3376, 3377, 3378, 3379, 3380, 3381, 3382, 3383, 3384, 3385, 3386, 3387, 3388, 3389, 3390, 3391, 3392, 3393, 3394, 3395, 3396, 3397, 3398, 3399, 3400, 3401, 3402, 3403, 3404, 3405, 3406, 3407, 3408, 3409, 3410, 3411, 3412, 3413, 3414, 3415, 3416, 3417, 3418, 3419, 3420, 3421, 3422, 3423, 3424, 3425, 3426, 3427, 3428, 3429, 3430, 3431, 3432, 3433, 3434, 3435, 3436, 3437, 3438, 3439, 3440, 3441, 3442, 3443, 3444, 3445, 3446, 3447, 3448, 3449, 3450, 3451, 3452, 3453, 3454, 3455, 3456, 3457, 3458, 3459, 3460, 3461, 3462, 3463, 3464, 3465, 3466, 3467, 3468, 3469, 3470, 3471, 3472, 3473, 3474, 3475, 3476, 3477, 3478, 3479, 3480, 3481, 3482, 3483, 3484, 3485, 3486, 3487, 3488, 3489, 3490, 3491, 3492, 3493, 3494, 3495, 3496, 3497, 3498, 3499, 3500, 3501, 3502, 3503, 3504, 3505, 3506, 3507, 3508, 3509, 3510, 3511, 3512, 3513, 3514, 3515, 3516, 3517, 3518, 3519, 3520, 3521, 3522, 3523, 3524, 3525, 3526, 3527, 3528, 3529, 3530, 3531, 3532, 3533, 3534, 3535, 3536, 3537, 3538, 3539, 3540, 3541, 3542, 3543, 3544, 3545, 3546, 3547, 3548, 3549, 3550, 3551, 3552, 3553, 3554, 3555, 3556, 3557, 3558, 3559, 3560, 3561, 3562, 3563, 3564, 3565, 3566, 3567, 3568, 3569, 3570, 3571, 3572, 3573, 3574, 3575, 3576, 3577, 3578, 3579, 3580, 3581, 3582, 3583, 3584, 3585, 3586, 3587, 3588, 3589, 3590, 3591, 3592, 3593, 3594, 3595, 3596, 3597, 3598, 3599, 3600, 3601, 3602, 3603, 3604, 3605, 3606, 3607, 3608, 3609, 3610, 3611, 3612, 3613, 3614, 3615, 3616, 3617, 3618, 3619, 3620, 3621, 3622, 3623, 3624, 3625, 3626, 3627, 3628, 3629, 3630, 3631, 3632, 3633, 3634, 3635, 3636, 3637, 3638, 3639, 3640, 3641, 3642, 3643, 3644, 3645, 3646, 3647, 3648, 3649, 3650, 3651, 3652, 3653, 3654, 3655, 3656, 3657, 3658, 3659, 3660, 3661, 3662, 3663, 3664, 3665, 3666, 3667, 3668, 3669, 3670, 3671, 3672, 3673, 3674, 3675, 3676, 3677, 3678, 3679, 3680, 3681, 3682, 3683, 3684, 3685, 3686, 3687, 3688, 3689, 3690, 3691, 3692, 3693, 3694, 3695, 3696, 3697, 3698, 3699, 3700, 3701, 3702, 3703, 3704, 3705, 3706, 3707, 3708, 3709, 3710, 3711, 3712, 3713, 3714, 3715, 3716, 3717, 3718, 3719, 3720, 3721, 3722, 3723, 3724, 3725, 3726, 3727, 3728, 3729, 3730, 3731, 3732, 3733, 3734, 3735, 3736, 3737, 3738, 3739, 3740, 3741, 3742, 3743, 3744, 3745, 3746, 3747, 3748, 3749, 3750, 3751, 3752, 3753, 3754, 3755, 3756, 3757, 3758, 3759, 3760, 3761, 3762, 3763, 3764, 3765, 3766, 3767, 3768, 3769, 3770, 3771, 3772, 3773, 3774, 3775, 3776, 3777, 3778, 3779, 3780, 3781, 3782, 3783, 3784, 3

Սաիդ Աքլը չի զլացել իր հովանավորությունը և հայկական մշակութային միջոցառումներին՝ իր ամբողջ հեղինակությունն ի գործ դնելով հայկական տարբեր գեղարվեստական ձեռնարկների հաջողության համար և ակտիվորեն մասնակցելով հայ գրականության գոհարները արաբ ընթերցողին ներկայացնելու գործին³⁸։

Դժբախտաբար Սաիդ Աքլի քերթողությունը համեմատաբար քիչ է ներկայացվել հայ գրասեր երիտասարդության, որը, անվանի գրող Միքայել Կյուրճյանի թարգմանությամբ ընթերցել է հատկապես «Անոնք կսիրեմ» տաղը³⁹։

Մեր դարի առաջին քառորդի արաբ գրողների սերնդից հայ գրական մամուլի ուշադրության կենտրոնում անհամեմատ շատ է մնացել Զիրան Խալիլ Զիրանը, քանի որ նրա գործերի մեծ մասը հեղինակված լինելով անգլերենով՝ մատչելի է եղել հայ գրողներին։ Համաստեղը առաջինն է, որ Բ. Յանկի և Մ. Նայիմի անգլերեն գրքերի հետևողությամբ «Համազգայինի տարեգրքում» կենսագրել է Զիրանին⁴⁰, որը մահվան 25-ամյակի կապակցությամբ անստորագիր մի հոդվածով ծանոթացվել է նաև «Ամենուն տարեգրքի» ընթերցողներին՝ որպես «Լիբանանի հանճարը և լիբանանցիներու անփոխարինելի պարծանքը»⁴¹։ Ուշադրության են արժանացել անգամ նրա հետ կապված լիբանանյան վայրերը⁴² և բազում էջեր են թարգմանվել նրա «Մարգարեն», «Խենթը», «Արցունք և ժպիտ», «Թափառականը» և այլ գործերից⁴³։ Ոթն ազգայնական մտավորականությունը նախապատվություն է տվել Զիրանի սիմվոլիստական ու միստիկ ստեղծագործություններին, ապա լիբա-

³⁸ «Մեր նշանաբանն է հառաջ», 31.5.1964։

³⁹ Տես «Սփյուռք», 28.10.1961 և 18.1.1964։

⁴⁰ «Համազգայինի տարեգիրք», 1952, էջ 119—120 (արտատպությունը տե՛ս «Արևելք», Հալեպ, 2.6.1962)։

⁴¹ «Ամենուն տարեգիրքը», 1956, էջ 129—132։ Դարձյալ անստորագիր և բավականին առարկայական մի հետազոտություն էլ տեղ է գտել «Բազինում» (1964 № 8 և 9)։

⁴² Տե՛ս հատկապես՝ Ա. Դաբրիեյան, Պզտիկ Լիբանանի մեծ զավակը, «Նաիրի» 10.3.1957, էջ 4։ Գ. Աստաբեյան, Այց մը մայրիկներու անտառը, «Սփյուռք», 19.10.1963, էջ 7։ Բեյրութի հայ երիտասարդների ընկերակցությունը հաճախ է կազմակերպել հարգանքի այց Զիրանի շիրմին (տե՛ս «Զարթոնք», 30.9.1947 և 10.10.1950)։

⁴³ Զիրանից այդ թարգմանությունները տե՛ս «Համազգայինի տարեգիրք» 1952, էջ 121—129։ «Ամենուն տարեգիրքը», 1956, էջ 79—87 և 132։ «Արևելք», 30.9.1958։ «Սփյուռք», 19.7.1962։

նանահայ գրական առաջադեմ մամուլը իր հայացքը սկսեցել է նրա հանճարեղ «ընդվզող հոգիների»՝ անիրավության և անարդարության, կղերի և ֆեոդալականության դեմ նրա անողոք մեղադրանքի վրա, նրա ազատասիրական, տերերի և ճորտերի, շահագործողների և շահագործվողների հակամարտությունը ընդգծող գործերի վրա⁴⁴, որոնց դեմ դաշնակցեցին թուրքական իշխանությունները և լիբանանյան կղերա-ավատապետական հետադիմությունը՝ Զիրբանի գործերով խարույկահանդես սարքելով:

Զիրբանի անձի և գործի նկատմամբ հայ մտավորականության հետաքրքրության տրամաբանական գագաթնակետը եղավ 1966 թ. Միսակ Վարժապետյանի «Ճպրան հալիլ Ճպրան» մենագրության լույս ընծայումը⁴⁵: Հատորը բովանդակում է հեղինակի «Երկու խոսքը», Պ. Զեմայելի «Առաջաբանը», Ծ. Տերտերյանի «Ճպրան հալիլ Ճպրան» ակնարկը, նամակներ հրատարակից, Յ. Ռահմեից, Մ. Նալիմեից և Հ. Թորոսյանից, կենսագրական գծեր, «Մարգարեի» ամբողջական տաղաչափյալ թարգմանությունը, հատվածներ անգլերեն և արաբերեն հետևյալ գործերից.— «Խենթը», «Սուրհանդակը», «Ավազ և փրփուր», «Հիսուս որդի մարդո», «Երկրային աստվածներ», «Թափառականը», «Մարգարեին պարտեզը», «Արձակ քրթվածներ», «Ըմբոստ հոգիներ», «Արցունք մը և ժպիտ մը», «Մարգագետնի հավերժահարսեր», «Գանձարան Ճպրանի»:

Գրքի հրապարակումը պերճախոս վկայություն էր այն մասին, որ հայ-արաբական գրական կապերը հետպատերազմյան ժամանակաշրջանում անցնելով վերելքի հիշարժան ուղի, արդեն իսկ թևակոխել էին այնպիսի մի շրջան, որ հնարավոր էր այլևս ձեռնարկել պատասխանատու քայլի և արաբ առանձին աշխարհահրճակ գրողների կյանքին ու գործին նվիրված հետազոտությունները միացնելով նրանց գրական վատակի հիմնական մասի բարձրորակ թարգմանությանը, լույս ընծայել առանձին հատորներով:

Հալ և արաբ ժողովուրդների գրական կապերի զարգացման գործում կարևոր մի նշանակետ. այսպես են գնահատել գիրքը հայ և արաբ բոլոր այն մտավորականները, որոնք մասնակցություն են բերել նրա լույս ընծայմանը: Իր առաջաբանում քաղաքական

⁴⁴ Զիրբանի հատկապես «Մենք և դուք» և «Ես կսիրեմ բանվորը» էջերի թարգմանությունը տե՛ս «Ժողովածու գրականության և արվեստի», 1956 թ. ապրիլ, էջ 38—41:

⁴⁵ Ս. Հ. Վարժապետյան, Ճպրան հալիլ Ճպրան (կյանքն ու գործը), Բեյրութ, 1966:

գործիչ Պ. Զեմայելը ընդգծել է. «Կրնամ անոր մեջ տեսնել լիբանանյան և հայկական մշակույթներուն սերտացումը»։ Զիբրանի մասին իր ակնարկում բանաստեղծ Ս. Տերտերյանը ևս գիրքը գնահատել է «իբրև կամուրջ և փաստ արաբ և հայ ժողովրդի իրար-ճանաչման և գնահատման»։ Գրող Մ. Նայիմեն, իր հիացմունքը հայտնելով «Մարգարեն» տաղաչափյալ թարգմանության մեջ ներկայացնելու ճիգի նկատմամբ (որը ցարդ ոչ մի լեզվով չէր փորձվել), շեշտել է. «Ժպրան լուկ Լիբանանի չի պատկաներ, հապա՜ համայն աշխարհի։ Ու կարծեք նախախնամական կարգադրության մը դուք հայերդ ալ, որ բախտի միկնույն ճակատագրով աշխարհացրիվ եղած եք լիբանանցիներու հանգույն, կարդաք ժպրանը հայոց լեզվով»⁴⁶։

Եթե այս բոլորին ավելացնենք «Համազգայինի տարեգրքում» արաբական դպրության մի շարք դեմքերի (ալ-Ցազիլի, է. Իսհակ, ալ-Ռիհանի, Քուրդ-Ալի, Թահա Հուսեյն, ալ-Մանֆալուդի և այլք) կենսագրմանը նվիրված բաժինը⁴⁷, ապա մոտավորապես ամբողջացած կլինենք այն պատկերը, որ սիրիահայ ու լիբանանահայ մամուլը հետպատերազմյան ժամանակաշրջանում ուրվագրեցել է արաբական գրականության նոր շրջանի էջը ներկայացնելու համար։

Այստեղ անհրաժեշտ է շեշտել այն հանգամանքը, որ արաբական մտքի արգասիքները սփյուռքահայությանը ծանոթացնելու ասպարեզում առաջին և հետագա ավելի հաճախադեպ քայլերը արել է հայ դեմոկրատ մտավորականությունը՝ օգտագործելով առաջադեմ հրատարակություններ «Ժողովուրդի ձայնը», «Նոր ուղին», «Մշակույթը», «Անին» ու մյուսները, մինչ ազգայնական մամուլը հարաբերաբար ուշ և զգալիորեն ավելի սակավադեպ է հակվել արաբական դպրության վրա։

Սակայն հարկ է նաև ընդգծել, որ եթե դեմոկրատ մտավորականությունը բացի արաբական դպրության այս կամ այն էջը մատուցելու գրական մտահոգություններից անբաժանելիորեն հետապնդել է նաև արաբ ժողովրդի «հետամնացության» ռեակցիոն քարոզին հակադրվելու միտումը, ապա հետադեմ մամուլը, իր հայացքը բեկեռելով անցյալի սակավաթիվ գրական մեծությունների վրա, երբեմն լռելյայն և երբեմն պարզաբառ՝ նրանց բացառիկության մասին հուշելու է հետամտել։ Ավելին, մի անգամ չէ, որ

⁴⁶ Ս. Վալեդեպտյան, ժպրան Խալիլ ժպրան, էջ Ը, ԺԴ և ԺԵ։

⁴⁷ «Համազգայինի տարեգիրք», 1952, էջ 129—170։

դաշնակցական մամուլը, իր ընթերցողների շրջանում արմատավորելու համար «վրանաբնակ» արաբներին հայ տարրի մատուցած «քաղաքակրթիչ» դերը, «բացառիկ» այդ գաղաթյուններին զարմանահրաշ աճարարությունը առնչել է հայ իրականության հետ: Բավական է ասել, որ Բեյրութի «Ազդակ» թերթի աշխատակիցը, հարց տալով թե «ո՞վ էր Ճպրան՝ Լիբանանի մեծանուն գրագետը», ինքն էլ անձամբ պատասխանել է. «Կըսվի թե Ճպրան ծագումով հայ էր»⁴³:

Արաբական դրականությանն անդադառնալու հարցում հայ մտավորականության երկու հակառակ բեկոններում դիրքորոշված լինելը ավելի ակնբախ է դառնում մերօրյա գրական երևույթների հողի վրա: Արդարև, դեմոկրատ գործիչների կողմից արաբական նորագույն գրականությանը բնորոշ առաջավոր դիմագծի տարփողումը հիմնականում ծառայեցվել է արաբների հակամպերիալիստական պայքարի հարազատ արտացոլմանը՝ հայ գաղթօջախներում այդ պայքարի նկատմամբ հասկացողություն ու համակրանք նվաճելու համար, մինչդեռ հետադեմ գրական մամուլը տարբեր միջոցներով դրսևորել է նոր ու առաջավոր արաբական դպրությունը լրիվ չափով անտեսելու ձգտում: Թարգմանիչ Ա. Տոնոյանը, օրինակ, իր հոդվածաշարքում⁴⁴ արաբական հին գրականությունը ֆեոդալացնելով, կատարել է ժամանակագրական խախտում: 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի գրական վերածնունդը մի կերպ ուրվագծելուց հետո փոխանակ կանգ առնելու հաջորդ հանգըրվանի՝ մերօրյա գրական երևույթների վրա, նա խոսել է ավելի վաղ երևույթի՝ գրական անկման մասին և իր հետազոտությունը արաբական դպրության անփայլ շրջանով փակել՝ ձգտելով մոլորեցնել անգիտակ ընթերցողներին: Նույն մտահոգությամբ դաշնակցական մամուլը ամբողջ հիսունական թվականներին կամավորապես կուրանալով և անգիտանալով ալ-Շարկաուիին և ալ-Խամիսիին, ալ-Բայաթիին և ալ-Ջավահիրիին, իր ընթերցողներին մատուցել է միայն անունով «արաբական» մի գրականություն, որպես «ծանոթ դեմքեր» ներկայացնելով անհայտ Ժ. Ֆախուրիի, Ճ. Հատտատի և ուրիշների ներանձնական-սեռական դատարկաբանությունները⁴⁵:

⁴³ «Ազդակ», 13.8.1949:

⁴⁴ «Արևելք», 28.4, 4.9, 11, 12, 29.10.1957:

⁴⁵ Տե՛ս հատկապես՝ «Արևելքի» 1958 թ. հուլիսի 6, օգոստոսի 16, սեպտեմբեր 16—19 և այլ համարներում «Ծրիտասարգ մը պատուհանին դիմաց», «Ընկերս կսիրես» և ուրիշ պատմվածքները:

Հիսունական տասնամյակում, արաբ ժողովրդի հակամարտության արաբական պայքարի վերելքի ժամանակաշրջանում, Բեյրութում և Հալեպում հրապարակ իջած գրական առաջավոր մամուլի կեցվածքը չէր կարող տրամագծորեն հակառակ չլինել հետադիմական ուժերի դիրքորոշմանը, քանի որ նրա հիմնական առաջադրանքներից մեկը արաբական նորագույն գրականության լավագույն էջերը հայ ընթերցողներին ծանոթացնելն էր:

Հալեպի դեմոկրատական «Երկիր» հանդեսը հենց առաջին համարի առաջնորդողում ընդգծելով, որ «ներկայիս արաբական գրականությունը կապի աննախընթաց աճ մը», առաջադրել է «հայ ընթերցողը տեղյակ պահել» նրա «հառաջընթացին, արձագանք հանդիսանալով անոր բոլոր նվաճումներուն և տալով ամեն ինչ, որ մարդկային, վեհ ու գեղեցիկ է այդ գրականության մեջ»⁵¹։ Բեյրութի «Մեր նշանաբանն է հառաջը» ևս իր առաջնորդողում շեշտել է. «Հայ ժողովրդին լավագույնս ծանայելու խոր համոզմունքով մենք մեր կարելիս պիտի ընենք, որպեսզի հալ հասարակությունը ավելի լավ ճանչնա Լիբանանը, Սուրիան և արաբական մյուս քույր երկրները, ծանոթանա այդ երկրներու ժողովուրդներու հարուստ մշակույթին, հոգեպես ավելի հաղորդակից դառնա անոնց հետ»⁵²։

Առաջինը, որ տևապես մնացել է հայ դեմոկրատ մտավորականության ուշադրության կենտրոնում, Օմար Ֆախուրին է։ Եվ ոչ պատահաբար։ Արաբական Արևելքում հաստատ կանգնելով համաշխարհային հետադիմության դեմ առաջադեմ մարդկության պայքարի դիրքերում, Ֆախուրին առաջինն էլ իսպառ քանդել է արաբական գրականության և արաբ ժողովրդի միջև ստեղծված արհեստական թմբերը, գրականության միակ աղբյուրն ու նպատակը հռչակել տառապող և իր արդար վաղվա համար պայքարող ժողովուրդը ու դրանով իսկ արաբական գրականության առաջ բացել նոր ուղիներ⁵³։ Ժամանակակից արաբ գրողներից առաջինն է եղել Ֆախուրին, որ «փողոսկրյա աշտարակից» դուրս գալով կանգնել է հասարակական կյանքի ամենագործուն կրակակետերում, կրթությունը քարոզել իր նոր դավանանքը և իր ետևից տարել երիտասարդ գրողների մի ամբողջ փաղանգ, որի անվան հետ է

⁵¹ «Երկիր», գեկտեմբեր, 1956, էջ 1:

⁵² «Մեր նշանաբանն է հառաջ», 6.1.1957:

⁵³ «من تراث عمر فاخوري»، بيروت 1964 «Sb'a նրա երկերից հատկապես»

կապված արաբական իրապաշտ գրականության ծնունդն ու զար-
դացումը և որի ամենակարկառուն դեմքերը (շարունակելով Ֆա-
խուրիի ավանդները նաև այդ ասպարեզում) եղել են հայ-արաբա-
կան մտավոր-մշակութային կապերի սերտացման աշխատավոր-
ներ:

Ֆախուրին խոր հետաքրքրություն է ցուցաբերել հայ գրակա-
նության նկատմամբ և աշխատել է կանոնավորաբար ժանոթանալ
հատկապես՝ սովետահայ գրողների ստեղծագործությունների հետ,
մտադրություն ունենալով թարգմանությունների միշտցով հայ մըտ-
քի արգասիքները ներկայացնել արաբ ժողովրդին⁵⁴: Եվ եթե վաղա-
ժամ մահը արգելք է եղել նրա նպատակների իրականացմանը,
ապա հայ առաջադեմ գրողները չեն թերացել բնավ Ֆախուրիի
ստեղծագործությունները՝ ինչպես մի շարք հետադոտություններ⁵⁵
(որոնք հիմնականում արձակագիր Ա. Դարյանի ստորագրությունն
են կրել), այնպես էլ նրա հրաշալի արձակից կատարված թարգ-
մանություններով⁵⁶: հայ աշխատավորներին, ընթերցասեր հասա-
րակությանը լայնորեն ներկայացնելու գործում:

Հիսունական թվականներին, «Մշակույթ» («Ժողովածու» կամ
«Գիրք գրականության և արվեստի»), «Հառաջ գրական», «Արա-
րատ գրական» և «Երկիր» հանդեսների էջերում արաբական մեր-
օրյա գրականությունը հայերին ծանոթացնելու ուղղությամբ
Ա. Դարյանի և մյուսների աշխատանքներին թևարկություն են բե-
րել մի քանի առաջադեմ մտավորականներ՝ Պ. Մինասյանը, Ն.
Նազարյանը, Գ. Մոլոյանը, Գ. Գառլանը (Օհան), Հ. Մարտիրոսյա-
նը և ուրիշներ: Ելնելով Արաբական Արևելքում սրված հակաիմ-

⁵⁴ «Ժողովրդի ձայն», 17.2.1943 և 27.4.1947:

⁵⁵ Տե՛ս «Ժողովածու գրականության և արվեստի», 1952, № 10, էջ 73—76:
«Գիրք գրականության և արվեստի», 1956 ապրիլ, էջ 3—10: «Էջեր գրականու-
թյան և արվեստի», 1966 հոկտեմբեր, էջ 3—5: Լիբանանահայ մամուլը («Ժողո-
վրդի ձայն», «Նոր ուղի», «Անի», «Հառաջ գրական» և այլն) օգտագործել է նաև
Խ. Բեկդաշի, Ռ. Խուրիի, Ռ. Շահալի, Ֆ. Բուադանիի, Ռ. Արիլլամայի, Հ. Մրուեի
և Մ. Ֆարուխի հոդվածներն ու ելույթները Ֆախուրիի մասին:

⁵⁶ Հատված «Մեռած Հաննան» վեպից, «Մեր նշանաբանն է հառաջ» 27.4.
1958, էջ 6: էջեր «Գրադետր ջուկային մեջ» հատորից, «Նոր ուղի», 1946, № 2,
էջ 47—48 և «Գիրք գրականության և արվեստի» 1956 ապրիլ, էջ 12—16: Հատ-
ված «Սովետական Միությունը անկյունաքար» աշխատությունից, «Ժողովածու
գրականության և արվեստի» 1953, № 13, էջ 145: Ֆաշիզմից հետո իմպերիա-
լիզմը չափախելու մասին «Մյուս վտանգը» հոդվածը, «Մեր նշանաբանն է հա-
ռաջ» 3.5.1959 և այլն:

պերիալիստական համաժողովրդական պայքարի առանձնահատուկ պահանջներից, նրանց ուշադրությունը գրեթե չի սեփական արարածին գրողների կյանքի և ստեղծագործական ուղու բացահայտման վրա, այլ խոսքով, նրանք հիմնականում շեն աշխատել լուծել զուտ գրականագիտական առաջադրանքներ:

Հայ դեմոկրատ մտավորականների աշխատանքային «ոճը» պայմանավորված էր նրանով, որ սանձարձակ իմպերիալիզմի դեմ Արաբական Արևելքում մղվող պայքարի հաղթական ավարտի համար նրանք հիմնական նախապայմաններից մեկն են համարել մյուս ազգային փոքրամասնությունների շարքում հայ գաղթականների գործուն մասնակցությունը արաբ ժողովրդի մարտերին: Այդ միասնությունը ամրապնդելու նպատակով նրանք անհրաժեշտ են համարել բացահայտել այն իրողությունը, որ իմպերիալիստական անհոգի կողոպուտի հետևանք են հյուրընկալ երկրների տնտեսական հետամնացությունն ու ծայրահեղ թշվառությունը, որ ալդ կողոպուտը վերջին հաշվով նաև հայ աշխատավորական լայն զանգվածների կենսապայմանների անտանելիության հիմնական պատճառներից մեկն է: Այդ նպատակին հասնելու համար, նրանք իրենց ստեղծագործություններում ուշադրությունը սեփական իմպերիալիզմի գիշատիչ էությունը և դրանից բխող ռազմամոլությունը բնութագրելու վրա: Համոզված լինելով, սակայն, որ ինչքան էլ ոգով առողջ, այնուամենայնիվ գեղարվեստական մակարդակով դեռ վտիտ իրենց գործերը⁵⁷ բավարար չեն կարևոր առաջադրանքը կենսագործելու, նրանք իրենց առաջ խնդիր են դրել հիմնավորապես և խիստ նպատակասլաց կերպով օգտագործել նաև արաբ առաջավոր գրողների լավագույն ստեղծագործությունները:

Հայտնի է, որ երկրորդ աշխարհամարտից հետո, ազգային-ազատագրական շարժումների հզոր վերելքի տարիներին հասակ առավ արաբ գրողների մի սերունդ, որին վիճակված էր նոր, հանուն ազգային անկախության ու դեմոկրատիայի, հանուն խաղաղության ու սոցիալական վերափոխումների մղվող պայքարի շնչով օծուն մի էջ բացել արաբական գրականության մեջ: Իմպերիալիզմի դեմ պայքարի գեղարվեստականորեն դրսևորման էջն էր ալդ: Հենց ալդ էջի վրա էլ իրենց ուշադրությունը մինչև վերջ սեփական

⁵⁷ «Երկիր» (դեկտեմբեր, 1956 թ., էջ 49, 1958, Ա. հտ., էջ 32—33). «Արարտ դրական» (1958, X 2, էջ 16—18) և մյուս հանդեսներում, տե՛ս «ատգապես» Ա. Նաճարյանի, Խ. Արաբյանի, Ս. Լեռնականի և այլոց մի շարք պատմագրական երկեր:

պահեցին Սիրիայի և Լիբանանի հայ դեմոկրատ գրողները: Սիրիայից Շաուկի Բաղդադին, Սաիդ Հորանին, Լիան Դեյրանին, Հաննա Մինան և Մուրադ Սիբահին, Եգիպտոսից Աբդուլ Ռահման ալ-Շարկաուին, Աբդուլ Ռահման ալ-Խամիսին, Սալահ Ջաուզատոր, Յուսեֆ Իդրիսը, Մոհամմեդ Սըդկին և 'Լալի Շուկրին, Լիբանանից Մոհամմեդ Դակրուբը, Ռաիֆ Խուրին և Միշել Սլեյմանը. Ալժիրից Մոհամմեդ Դիբը, Իրաքից Աբդել Ուհաբ ալ-Բայաթին և Մոհամմեդ Մահդի ալ-Ջավահիրին. ահա ոչ ամբողջական շարքը արաբ այն առաջավոր գրողների, որոնց գեղարվեստական բարձրարժեք վաստակից թարգմանություններ են կատարել Սիրիայի և Լիբանանի առաջադեմ հայ գրողները, հավատարիմ մնալով իրենց առաջադրանքին:

Ալ-Շարկաուին իրավամբ հայ քննադատության կողմից դիտվել է որպես «ամենեն գիտակիցներեն և ամենեն տաղանդավորներեն մեկը» իր սերնդի, և նրա երկհատոր «Հողը» վեպն էլ համարվել է արաբական նորագույն գրականության «ամենեն ցայտուն արտահայտություններեն մեկը»⁵⁸, վեպը, որից «Երկիր» և «Արարատ գրական» հանդեսները հատվածներ են ներկայացրել իրենց ընթերցողներին⁵⁹, պատմում է եգիպտական գյուղի մթին առօրյայում արաբների պայքարի մասին՝ ընդդեմ իմպերիալիզմի և նրա հովանավորյալ տեղական իշխանությունների, հանուն հողի ու ջրի, ազատ ու երջանիկ կյանքի: Գյուղական հակամարտ ուժերի բեկնացման և հատկապես ֆեյլահների զարթոնքի ուղին ավելի պարզորոշ տրված է նույն հեղինակի «Սպասավոր Խանտաուին» և «Աղավնիներու ամառնային որսորդությունը» պատմվածքներում, որոնք «Հառաջ գրականի» անանուն թարգմանիչը խնամքով հայացրել է⁶⁰:

Արաբ գյուղացու սոցիալական վիճակի ահավոր վիճը պատկերելու մտահոգությամբ է, որ Ն. Նազարյանը թարգմանել է Մոհամմեդ Սըդկիի «Էջը»⁶¹, իսկ Պ. Մինասյանը՝ Ֆաթեհ Մուհարրեսի «Անանուխի ցողուններ»⁶² նովելները: Յուսեֆ Իդրիսի

⁵⁸ Հ. Մարտիրոսյան, Ապտուլ Ռահման ալ-Շարկաուի, «Երկիր», ղեկտեմբեր 1956 թ., էջ 13—16:

⁵⁹ Տե՛ս «Երկիր», ղեկտեմբեր 1956., էջ 17—18 և «Արարատ գրական», 1958, № 5—6—7, էջ 66 (վերջինս, թեև աղբյուրը չի հիշված, արտատպություն է «Սովետական գրականություն» ամսագրի 1958 թ. 8-ից):

⁶⁰ «Հառաջ գրական», 4.7.1959 և 12.6.1964:

⁶¹ «Երկիր», 1958 Դ. հտ.:

⁶² «Հառաջ գրական», 30.4.1963:

«Վասն ապրուստի»⁶³, Շաքիր հոսբակի «Գիշերին մեջ»⁶⁴, Արդու Ռահման էլ-համիսի «Փոքրիկ սպասուհին»⁶⁵, էմին Յուսեֆ Ղուրարի «Յնորած գողը» և այլ պատմվածքները մեր առաջ բացում են արաբ քաղաքաբնակ ազգաբնակչության կյանքի դժոխային պայմանները կապիտալիզմի օրոք և մերկացնում ազնիվ մարդկանց անխուսափելի կործանման դատապարտող անհոգի հասարակարգը:

Ինչպես գյուղական ֆելլահների, այնպես էլ քաղաքաբնակ աշխատավորության կյանքի ուղին ի վերջո հանգում է իր տագնապալի ծայրակետին, որտեղ այլևս անխուսափելի է պոռթկումը, պայթարը իմպերիալիզմի և նրա կամակատար տեղական տղրուկների դեմ: Այդ անխուսափելիությունը ընդգծելու, աստիճանաբար Արաբական Արևելքում խորացող դասակարգային և ազգային պայքարում հայ աշխատավորների մասնակցությունը աշխուժացնելու նպատակով է, որ արաբագետ հայ մտավորականությունը դիմել է Իբրահիմ Աբդուլ Հալիմի «Մանկության օրեր» վիպակին, Մոհամմեզ Քամալ Աբդուլ Հալիմի «Պատեր», ալ-Շարկաուիի «Պայքարի երկիրը», Իբրահիմ Ուարդանիի «Վաղը», ալ-համիսիի «Արյունոտ շապիկը», Ղալի Շուքրիի «Երբ պիտի վերադառնա» պատմվածքներին, Սաֆեյայի «Քսանմեկ փետրվար» և Մուստաֆա Ջեբի Ալիի «Նամակը» վավերագրական պատկերներին, Սաիդ Հորանիի «Կարմիր դեմքեր» և «Ըմբոստի մը օրագրեն», Մուրադ Սիբաիի «Առաջին կայծը», Մաուհեբ Քալալիի «Հերոսը», «Մոհամմեզ Դակրուբի «Ամենագեղեցիկ աղոթքը» և «Մինչև առավոտ», Բեդի Հակկիի «Թախծոտ հողը» նովելներին և այլ բազում արձակ հատընտիր էջերին⁶⁶:

Հայ առաջադեմ մտավորականության հատուկ ուշադրությանն է արժանացել նաև արաբական հեղափոխական քերթողությունը: Լիբանանահայ և սիրիահայ գրողները թարգմանություններ են կատարել իրաքցի Աբդել Ուահաբ ալ-Բայաթիից (Գարուն և մանուկ-

⁶³ «Երկիր», 1958, Բ. հտ., թրգ. Ն. Նազարյան:

⁶⁴ «Հառաջ գրական», 30.11.1962, թրգ. Պ. Մինասյան:

⁶⁵ «Մեր նշանաբանն է հառաջ» 2.6.1963, թրգ. Պ. Մինասյան:

⁶⁶ Տե՛ս «Ժողովածու» 1951, № 5 և 1953 հոկտեմբեր, «Մշակույթ», 1955 ապրիլ և 1956 հոկտեմբեր, «Գիրք գրականության և արվեստի», 1956 հուլիս, «Երկիր», 1957 մայիս և 1958 Ա. հտ., «Արարատ գրական» 1958, № 4, 1959, № 8, 9, 10, 1964, № 7 և 1965, № 10, «Մեր նշանաբանն է հառաջ» 18.8.1957 և 14.12.1958, «Հառաջ գրական» 8.3.1963:

ներ», «հոսք իմ զավակիս») և Մոհամմեդ Մահդի ալ-Ջավահիրիից (հատված «Ստալինգրադ» պոեմից, «Վաղվա աշխարհի համար», «Վերքը զոհերուն»), լիրանանցի Ռաֆի հուրիից (սվարդին հարցուցեք»), սիրիացիներ Շաուկի Բադադիից («Ռաժա Հասան», «Երբ կտեսնեմ»), Ահմեդ Սլեյման Ահմեդից («Երգ նվիրված ընկերներին»), Սալեհ Ջաուդադից, Նեբիհե Հադադից, Ահմեդ Ֆեհմիից, Լուեյ Դերվիշից և մյուսներից⁶⁷։

2

Սիրիահայ և լիբանանահայ գրողները, որպես հայ ժողովրդի տարագրյալ բեկորների հույզերի, խոհերի և ապրումների արտահայտիչներ, չէին կարող հեռու մնալ այն հիմնական հարցերից, որոնց արժարժումը ընդհանրական երևույթ էր ամբողջ սփյուռքահայ դրականության մեջ։ Մեծ եղեռնը՝ իր հետևանքների աննկարագրելի ահավորությամբ հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա, ընադուրկ բազմաբյուր հայ գաղթականների կյանքը՝ առաջին շրջանում դժոխայնորեն նոր ու տարբեր պայմաններում, անապատի արհավիրքներից փրկված պատանիների ալյասերումը օտար ոստանների մթնշաղում։ ահա այն հիմնական թեմաները, որոնք սկսված էին սփյուռքահայ բոլոր գրողների ստեղծագործական տեսադաշտում։

Բայց եթե և՛ եղեռնի, և՛ սփյուռքի նոր պայմաններում հայոց մնացորդաց ձուլման պրոցեսի, և՛ ընդհանրապես բնօրրանից հեռու հայ աշխատավորի սոսկական պայմանների նկարագրության հարցում Սիրիայի և Լիբանանի հայ գրողների թեմատիկան համընկնում էր ֆրանսահայ, ամերիկահայ և մյուս գրողների թեմատիկայի հետ, ապա առաջինների և վերջինների դրականությունն ուներ և որոշ առանձնահատուկ տարբերություն։ Այդ այն էր, որ անցյալ ողբերգության պատումը նույն համապարփակ մթին ու ճնշիչ մթնոլորտով չէր տարվում և նոր կյանքն էլ նույնքան անհեռանկարայնորեն չէր ուրվագծվում Արաբական Արևելքում, ինչպես արևմտյան Եվրոպայում կամ Ամերիկայում։

Սիրիահայ և լիբանանահայ արձակի համար բնորոշ այդ առանձնահատկությունը, որ հետագայում բարենպաստ հող գտավ

⁶⁷ Տե՛ս հատկապես՝ «Ժողովածու» 1953 թ 13 և 1953 հոկտեմբեր, «Մշակույթ» 1954 նոյեմբեր, «Գիրք գրականության և արվեստի» 1956 ապրիլ և հոկտեմբեր, «Երկիր» 1957 մայիս և դեկտեմբեր, «Արարատ գրական» 1958 թ 2 և թ 5—6—7, «Մեր նշանաբանն է հառաչ», 7.7.1957, 8.2.1959 և 17.3.1963, «Հառաչ գրական», 8.3.1963։

աճելու և նոր որակ դառնալու, ինչպես նախապատերազմյան զույգ տասնամյակներում, այնպես էլ երկրորդ աշխարհամարտին հաջորդող առաջին տարիներին, իր սկզբնաղբյուրն ունեւ տեղահանության օրերին սիրիական անապատի արաբ քոչվոր ցեղախմբերի և զինադադարից հետո Սիրիայի և Լիբանանի քաղաքաբնակ արաբ զանգվածների՝ հայ գաղթականների նկատմամբ ջերմ ու եղբայրական վերաբերմունքի մեջ:

Որպես բնորոշ օրինակ կարելի է հիշատակել սիրիահայ տաղանդավոր արձակագիր Սմբատ Փանոսյանի «Որ մրրկավ էին զատված» վեպը⁶⁸: Գլխավոր հերոսը՝ Տիգրանակերտի ջարդից մազապուրծ ազատված պատանի Մուրադը, ապաստան է գտնում սիրիական անապատաբնակ արաբների մոտ: Բեդվինների ցեղախմբի պետը՝ շեյխ Խալաֆը և նրա մարդիկ սիրում են Մուրադին իր ազնւրկության, վեհագության և խիզախության համար: Հայ պատանին դառնում է ցեղապետի աջ բազուկը և նրա մարդկանց առաջնորդում թուրք ժանդարմների հետ բախումների ժամանակ, փրկում տարագիր հայ կանանց ու երեխաների: Հետագայում Մուրադն ու մյուս հայերը բաժանվում են բեդվիններից և գալիս Հալեպ, որտեղից էլ Մուրադի որդին հայրենադարձվում է:

Ինչպես իրավամբ նշվել է քննադատության կողմից⁶⁹, Ս. Փանոսյանի վեպում նկատելի է սխեմատիզմ, հատկապես վերջնագծում: Սակայն կարևորն այս դեպքում ոչ այնքան գործի գրական բազմապիսի արժանիքները ինչ-որ չափով մթագնող ստվերներն են, որքան այն, որ վեպը սիրիահայ և լիբանանահայ արձակի վերևում շեշտված առանձնահատկության խոսու զրսևորումն է: Եվ այդ առանձնահատկությունը հասկանալիորեն հենվում է վեպում արժարժված հիմնական հարցի՝ հայ մնացորդաց ճակատագրի բարեհաջող լուծման զույգ հենարաններից առաջինի վրա, արաբ ժողովրդի ազնիվ ասպնջականության, ավելի ճիշտ կլիներ ասել՝ հայ և արաբ ժողովուրդների բարեկամության ու դաշինքի

⁶⁸ II. Փանոսյան, Որ մրրկավ էին զատված (վեպ), «Անի» ամսագրի 1950—1952 թթ. համարներում և ապա առանձին հատորով՝ մատենաշար «Անի» № 5, Բեյրութ, 1953: Ժամանակագրականորեն Ս. Փանոսյանին կանխել է, անշուշտ, Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, ստորագրելով մի շարք պատմվածքներ՝ «Անապատի ծաղիկը», «Շեյխին աղշիկը» և այլն (տե՛ս «Զարթոնք», 24.6.1951, 18.11.1951 և այլ համարներ), որոնք տեղահանության տարիներին հեղինակի՝ անաատում անցկացրած կյանքի հուշագրությունն են:

⁶⁹ Մ. Բաբլոյան, նշվ. աշխ., էջ 76—82:

վրա, մայր հայրենիքում համախմբվելը լինելով երկրորդ փրկարար հենարանը:

Արդարև, հայերի և արաբների բարեկամության սրտառուլ դրվագներ քիչ չեն Փանոսյանի վեպում, իսկ երկու ժողովուրդների ճակատադրակցությունը և ընդհանուր թշնամու՝ թուրք ջարդարարների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունը, բազում էջերում են վեր հանված: Եվ ինչպիսի՜ արդարամտությամբ է հեղինակը արժանին հատուցում անապատաբնակ արաբների բարոյական ու կամային վեհությանը:

Բանն, անշուշտ, ոչ միայն նրանում էր, որ արաբ ժողովրդական զանգվածները, մի շարք դեպքերում նույնիսկ հակառակ թուրքական գործակալություններից հրահրվող կրոնական «մոլեռանդության», մարդկային վերաբերմունք ցուցաբերեցին հայ գաղթականական իրարահաջորդ հոսանքների նկատմամբ, այլև ի տարբերություն արևմտավրոպական և անդրատլանտյան երկրներում հայ աշխատավորների համար ստեղծված անտանելի պայմանների, Սիրիայում և Լիբանանում հայ հասարակ մարդկանց համար ստեղծվեցին որոշակի առանձնահատկություն ունեցող պայմաններ: Այդ պայմանները բխում էին այն իրողությունից, որ ֆրանսիական մանդատի անմիջական հետևանքով՝ օտար կապիտալի անողորմ գերակայության և անսահմանափակ շահագործողական պայմաններում, իր իսկ շուկայում թեաքեկ արաբ միջին ու մանր բուրժուազիան և իր իսկ հայրենիքում թերարժեք «ենթաբտնվոր» արաբ աշխատավորը հանձին հայ գաղթականի տեսնում էին իրենց ճակատագրակից եղբորը⁷⁰:

Այդ առանձնահատկությունը ևս չէր կարող տարբերակիչ ինչ-որ երանգ չլինել սիրիահայ և լիբանանահայ գրականության օրգանիզմում, ինչքան էլ այն անբաժան մասը լինեի սփյուռքահայ գրականության ավելի մեծ օրգանիզմի:

Այս տեսակետից պարզորոշ է, օրինակ, Միհրան Տեր-Ստեփանյանի պատմվածքներից մեկը⁷¹, որի թեման սիրիական ժողո-

⁷⁰ Մեր հաստատումը, անշուշտ, ոչ մի կապ չունի գոհիկ այն ընդհանրացման հետ, որին հասել են լիբանանահայ որոշ լրագրողներ և հատկապես «Այգի» խմբագիրը, ըստ որի հայ աշխատավորները երբեք պատճառ չեն ունեցած գանգատվելու լիբանանցի գործատերերեն, որոնք իրենց հայրական զգացումներով հայտնի են ... (տե՛ս «Այգ», 20.5.1959):

⁷¹ Մ. Տեր-Ստեփանյան, Փախ-փախը՝ մահվան առջեմ, «Անի», 1947, № 3, էջ 126:

վրդի պայքարն է իր ազգային գերիշխանության, տնտեսական անկախության և վերելքի համար, պայքար, որի շրջանակներում արաբների և հայերի միջև սցենդի, կրոնքի, ավանգուստիաներու և նախապաշարումներու ստեղծած խտրությանց բոլոր պատվարները կփլչեն, կքանդվեն մեկ անգամեն: Այս տեսակետից պարզորոշ է նաև Հայկ Գույումջյանի «Մղձավանջ» պատմվածքը⁷², որտեղ հիմնական մոտիվը բողոքն է ու ըմբոստացումը արաբական երկրներում տիրող կարգերի դեմ և որտեղ հայ հերոսը իր անձնական դժբախտության պրիզմայով կարողանում է ըմբռնել արաբների համընդհանուր դժբախտությունը, գիտակցել բոլոր արաբների ընկերային պայմանների անարդարացիությունը:

Պետք է նշել, որ և՛ եղեռնի դժոխային տարիների, և՛ գաղթականության առաջին ժամանակաշրջանի պատկերման ասպարեզում սփյուռքահայ ընդհանուր գրականությունից նրա սիրիահայ և լիբանանահայ թեև տարբերակող առանձնահատկությունը հաստատելի էր միայն ու միայն դեմոկրատ գրողների երկերում: Այս, ինչպես, և բոլոր մնացյալ հարցերում, հետագեմ գրողների գործերը, սփյուռքի ամբողջ տարածքում, մթագնված էին միևնույն եղերամայրական լացակումածությամբ, միատեսակ հոռետեսությամբ, կյանքի ընդհանրական անհեռանկարայնությամբ: Անգամ այն դեպքում, երբ այդ գրողները՝ հայրենադարձության առաջացրած խանդավառ ալիքին հարկադրաբար հարկատու, գաղութահայության ճակատագրի բարեդեպ լուծումը հայրենիք վերադարձի մեջ էին տեսնում, ոչ միայն չէին ընդունում հայ և արաբ ժողովուրդների բարեկամության և հայրենադարձության իրար լրացնելու և իրարով ամբողջացվելու հանգամանքը, այլև դրանք հարկադրում էին իրար և Մերձավոր Արևելքից հայրենադարձության անհրաժեշտությունը հիմնավորում հայերի նկատմամբ արաբների ցնորածին ինչ-որ թշնամանքով⁷³:

Մերձավորարևելյան հայ առաջադեմ գրական գործիչների համար հայ-արաբական բարեկամությունը ոչ միայն սփյուռքահայության փրկության ի խնդիր մղվող պայքարի հաղթական ավար-

⁷² Հ. Գույումջյան, Մղձավանջ, «Անի», 1949, № 3, էջ 134:

⁷³ Որպես բնորոշ օրինակ կարելի է հիշատակել իբրև «ապրումներ» ներկայացրած «Գաղթականային տղեկը» պատմվածքը (տե՛ս «Դեպի երկիր», 1946, ապրիլ, էջ 184), ըստ որի «թշնամի» արաբների բերանում «էրմեն» (հայ) անունն անգամ «արհամարհանք» է պարունակում և հայ որբեայրուն մղում հայրենադարձվելու...

տի նախապայմաններից մեկը եղավ, այլև հիսունական թվականների սկզբից այն թեմակոնից ղարգացման մի նոր փուլ, որը կապված էր ընդհանրապես արաբական աշխարհում և մասնավորապես Սիրիայում ու Լիբանանում ստեղծված ներքաղաքական իրադրություն հետ:

Բանը նրանում էր, որ հիսունական թվականներին բրիտանական և ամերիկյան իմպերիալիստները սկսեցին ուժեղացնել Սիրիան և Լիբանանը ևս իրենց ռազմա-ստրատեգիական ծրագրերի մեջ ներթաշնու փորձերը, միաժամանակ սաստկացնելով տեղական արդյունաբերության և հետևաբար աշխատավոր զանգվածների կենսապայմանների համար հեղձուցիչ իրենց գրոհը:

Իր շարանենգ դիտավորությունների իրականացումը հեշտացնելու մտքը, իմպերիալիզմը Սիրիայում և Լիբանանում խթանել էր նաև իր «հոգևոր գործակալությունների» աշխուժությունը: Վերջիններս, հանդես բերելով լկտի կոսմոպոլիտիզմ, մշակութային բոլոր ասպարեզներում ժամանակավրեպ էին հռչակում ազգային ոգին և ժողովրդական պայքարի հերոսական ավանդույթները, ու գովերգում՝ արևմտյան (հատկապես ամերիկյան) կենցաղն ու մշակույթը, դրանք վարագործելով «արդիականի» ծխածածկույթով⁷⁴:

Իմպերիալիզմի տեղական ծառաների ծանր հրետանու աշխատանքը զգալի էր առավելապես գրականության ճակատում: Ասսակաֆա ալ-ուաթանիա» ամսագիրը «Վտանգի մեջ է մեր մշակույթը» պերճախոս խորագիրը կրող առաջնորդող հոդվածում ընդգծում էր, որ «ամերիկյան մշակութային ներթափանցման» միջոցով լիբանանյան գրականությունն ու գրողներին այլասերելու եռանդագին աշխատանք է տարվում որոշ շրջանակների կողմից, գլխավորությամբ «ֆրանկլինյան հաստատություն»⁷⁵, որին ավելի ուշ օգնության հասավ «Մշակութային ազատության միջազգային կազմակերպությունը»՝ Լիբանանում հիմնադրելով հատուկ մասնաճյուղ և լույս ընծայելով «Հիուար» ամսագիրը⁷⁶:

Արաբ առաջադեմ մտավորականությունը անհաշտ և անդադրում կռիվ հայտարարեց ամերիկյան իմպերիալիզմի տեղական

⁷⁴ Դամասկոսի «Սալամ» թերթի առաջնորդողից (մեջբերումն ըստ «Գրականության և արվեստի ժողովածուի», 1951, № 7, էջ 98):

⁷⁵ «الثقافة الوطنية» بيروت ١٩٥٨، العدد ١٥، ص ٢

⁷⁶ «Հառաջ գրական», 1963 հունվար, էջ 9:

քարոզիչների ստվարացող և աշխուժացող խմբի դեմ: Դամասկոսում և Բեյրութում իրար հետևից հրապարակ իջան բազմաթիվ գրական-գեղարվեստական հանդեսներ, որոնք «Աթ-Քարիկ» ամսագրի հետ ձեռնամուխ հղան գրական նոր սերունդը և նրա հետ արաբ հասարակայնության լայն խավերը ախտավոր շնչից հեռու պահելու գործին:

Անբնականոն կլինեք, եթե միևնույն իրադրությունը՝ համանման ճակատներով և համակերպ պայքարով գոյություն չունենար արաբ ժողովրդի ոգորումներին անքակտելիորեն շաղկապված հայ գաղթօջախների մշակութային կյանքի անդաստանում:

Իրոք, իմպերիալիզմի աշխուժացող «հոգևոր գործակալությունների» ճակատում իր ուրույն տեղով ու դերով աչքի էր զարնում դաշնակ մտավորականությունը: Ֆրանսիական մանդատի վերացումից հետո Սիրիայում և Լիբանանում որոշապես զրկված լինելով իրենց սանձարձակությունը հովանավորող թևերից, դաշնակ գործիչները չէին կարող անշուշտ արաբական ազգային ճեղատումների դեմ դուրս գալու բացահայտ քարոզ կարգալ հայերին, և ուրեմն պիտի ջանային հակաիմպերիալիստական պայքարում առնվազն «չեզոքություն» պարտազրել արաբահայ գաղթօջախներին: «Հայը ինքն իր համար»... ահա մի հանկերգ, որը դաշնակ մտավորականությունը փորձում էր որպես ազգային դավանանք փաթաթել հայ աշխատավորության վզին:

Հայ հետադեմ մշակութային գործիչները, օգտվելով հայ-արաբական մշակութային կապերի դեռ սաղմնային վիճակից, իրենց հույսը դնելով հայ աշխատավորության որոշակի շրջաններում տակավին առկա նախապաշարմունքների վրա, նրանց արաբ ժողովրդային զանգվածներից կտրելու և դեպի ամերիկյան իմպերիալիզմը կողմնորոշելու միտումով իդեալականացնում էին համաշխարհային հետադիմության միջնաբերդը: «Ամերիկյան ամենեն հեռավոր տեղն է աշխարհի և ամենեն լավը. հոն տասը արև կծագի, հարյուր արև, հազար արև: Ամերիկայի աստղերը խոշոր կլլլան, նոր կլլլան, փայլուն կլլլան: Լուսինն ալ, ծաղիկներն ալ, ամեն ինչ»,—առանց ծիծաղելիությունից երկնչելու արձանագրում էր դաշնակ մի գրող⁷⁷: Արժե՞ արդյոք այդպիսի Ամերիկայի դեմ դիրքորոշվել,—հայերին հարց էին հուշում ուրիշներ,—հանուն, օրի-

⁷⁷ Ե. Պալանյան, Հոգը, Բեյրութ, 1952, էջ 8:

նակ, «անբաղաճակիրթ» Եգիպտոսի և ոչ պակաս «անբաղաճակիրթ» արաբների, որոնք ուրիշի «ավելցուկով ազատ ու երջանիկ» ապրելով հանդերձ, փոխանակ «մեզ երախտապարտ լինելու, շեն սիրեր մեղ»⁷⁶։

Իմպերիալիզմի գովերգու դաշնակ մտավորականության՝ հայերին ապակողմնորոշել և ի հարկին արաբների ազգային ձգտումների դեմ դուրս բերել ջանացող մեքենայությունների դեմ եռանդուն մարտի նկատման մի խումբ հայ դեմոկրատ մտավորականներ, «Նոր ուղի» և «Անի» հանդեսներում իրենց գրական մկրտությանը ստանալուց և «Մշակույթ» գրական-հասարակական պարբերականում արաբական աշխարհում իմպերիալիզմի դեմ նախապատրաստվող վճռական մարտերին հայ աշխատավորներին գորակոչելուց հետո, Լիբանանում «Գրական շրջանակ» և «Նոր սերունդ», իսկ Հալեպում «Ազգային մշակութային» միությունների շուրջ խմբված՝ նրանք միասնականորեն հրապարակ նետեցին «Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթը (իր գրական բաժնով, որ այնուհետև առանձնացավ որպես «Հառաջ գրական»), «Երկիր» և «Արարատ գրական» հանդեսները (1956 դեկտեմբեր—1957 հունվար)։

Նոր օրգաններում հայ դեմոկրատ մտավորականությունը իր աշխատանքը հիմնականում կենտրոնացրեց սփյուռքահայ պայմանների համար բացարձակապես նոր ուղղություններով։ Իմպերիալիզմի գիշատիչ էություն բացահայտում, նրա դեմ արաբ ժողովրդի պայքարի ջատագովում և հաղթանակի նկատմամբ հավատք, մանավանդ սիրիահայ ու լիբանանահայ աշխատավորական զանգվածներին՝ այդ պայքարում ավելի ու ավելի ակտիվորեն ներգրավելու ձգտում և արաբ ու հայ հետադիմության դեմ համատեղ ու համերաշխ ելույթների անհրաժեշտության հիմնավորում, ահա մի քանիսը այն նշանակալից պահերից, որոնցով բնորոշվում է հիսունական թվականներին հայ դեմոկրատ մտավորականության ստեղծագործական որոնումների հիմնական ուղղությունը։

Հայ առաջադեմ մտավորականությունը, առաջին հերթին հայ դեմոկրատ գրողները, ի հակադրություն հետադիմության «Հայրենիքն իր համար» ախտաժեռ դավանանքի, հպարտորեն հնչեցրին իրենց նոր ու առողջ կարգախոսը. «Մենք բոլորս»⁷⁷։ Իսկ այդ՝

⁷⁶ Մ. Պետկերյան, Լիբանանյան լեռան տունս, «Հայրենիք», 1958, հունիս։
Ռ. Տեր-Մինասյան, Արաբական աշխարհին մեղ, «Արևելք», 28 և 30.7.1959։

⁷⁷ Ա. Դաբյան, Մենք բոլորս, մատենաշար «Ծարժում», 1950, № 1, էջ 11։

կյանքի բեռան տակ թառամող արաբուհին և նրա ճակատագրակից հայ պարմանուհին, մի պատառ շոր հացի միևնույն մորմոքով տվյալու հայ և արաբ աշխատավորները, ուսման ծարավ, ընչազուրկ ծնողներից սերված լինելու պատճառով լուսավորության բարիքներից զրկվող հայ և արաբ պատանիներն էին⁸⁰։

Հայ դեմոկրատ մտավորականության եռանդուն աշխատանքի շնորհիվ, Արաբական Արևելքում հակաիմպերիալիստական պայքարի վերելքի ժամանակաշրջանում, շտեմնված չափերով շեշտվեց Սիրիայում և Լիբանանում ապրող քառորդ միլիոն հայության՝ այդ պայքարին մասնակցություն բերելու վճռականությունը։ Պարզ է, որ այդ հողի վրա էլ այս ժամանակահատվածում չէր կարող անօրինակ աշխուժություն չապրել հայ-արաբական միասնությունը՝ ընդդեմ արաբ ժողովուրդները ստրկացնելու գործում ազգային այլ փոքրամասնությունների շարքում հայերին ևս օգտագործել ցնորող օտար ուժերի և նրանց տեղական կամակատարների։

Սիրիայի և Լիբանանի հայ գաղթօջախների համար, բառիս իսկական առումով, աննախընթաց հայ-արաբական միասնությունը ունեցավ ազգային-քաղաքական խոշոր նշանակություն, մի բան, որը մասամբ լուսաբանվել է մամուլում և առանձին աշխատություններում։ Այդ միասնությունը, սակայն, խոշոր նշանակություն ունեցավ նաև հայ-արաբական մտավոր-մշակութային կապերի հունավորման համար, հենց այդ պահից էլ ակնառու դարձնելով Սովետական Հայաստանի սոցիալիստական մշակույթի բարերար ազդեցության ներքո ծաղկող սիրիահայ և լիբանանահայ մշակույթի դեմոկրատական թևի և տեղական-արաբական մշակույթի դեմոկրատական տարրերի փոխադարձ կապն ու փոխներգործությունը։ Եվ այդ միասնության կռման գործում առաջնային դեր ունեցավ Սիրիայի և Լիբանանի հայ առաջադեմ մտավորականությունը, առաջին հերթին գրական առաջավոր նոր սերունդը, որ իր առաջնորդողի առաքելության ամբողջ իմաստը տեսավ հայ աշխատավոր զանգվածները ավելի գործունե կերպով դեպի արաբների հակաիմպերիալիստական պայքարի ոլորտը ներքաշելու մեջ։

Արաբների հակաիմպերիալիստական պայքարին հայ գաղթօջախների մասնակցության աշխուժացման ուղղությամբ հայ մտա-

⁸⁰ Տե՛ս հատկապես՝ Ա. Դաբլյանի «Շարժավարները» և «Սկիզբ մը», Ս. Ազատյանի «Էվերեսթ... պուզա» և այլ պատմվածքները, հիմնականում մատենաշար «Շարժում», 1951, № 3 և № 6, 1952, № 10 և այլ համարներում։

վորականության ամենօրյա աշխատանքը չէր կարող չշեղտավորել հետպատերազմյան մերձավոր արևելյան հայ գրականության ուշագրավ երևույթներից մեկը։ Այդ՝ արաբների հակաիմպերիալիստական պայքարի և այդ պայքարի արաբ հերոսների թափանցումն էր սիրիահայ և լիբանանահայ գրողների արձակ գործերի մեջ։

Արաբ ընդադուրկ աշխատավորության դժոխային կենսապայմանների առաջին ակոսները բացեց լրագրող Պարզև Պարսումյանը, «Պրիսմակ» շաբաթաթերթում, «Զարթոնք» և «Արարատ» օրաթերթերում տպագրելով տասնյակ պատմվածքներ։ Բնորոշ է, օրինակ, «Հողին զինը» պատմվածքը⁸¹, որի հերոսը՝ քայքայված գյուղացի Նաիմը, քաղաքում տքնում է գիշեր ու ցերեկ, վաշխառուներից իր հողակտորը փրկագնելու հույսով, սակայն քաղաքի անբարոյացնող մթնոլորտում կորցնում է իր կնոջն էլ։

Պարսումյանի բացած ակոսը որակապես խորացրեց Ա. Դարյանը, գրելով հայ և արաբ բանվորների դասակարգային եղբայրությունը և ճակատագրակցությունը, հայ և արաբ ուսանող երիտասարդության կյանքի դժվարությունների համամասնությունը շեղտող մի շարք պատմվածքներ («Շարժավարները», «Սկիզբ մը» և այլն)։ Նրան հետևեց Ս. Վահագնը, իր արձակում («Շատերեն մեկը», «Հատուցում», «Հացի և վարդի համար», «Հասարակ պատմություն» և այլն) բարձրացնելով աշխատանքային տանելի պայմանների, մարդկային կյանքի ու խաղաղ գոյության համար իրենց կռվում հայ և արաբ բանվորների դաշինքի անհրաժեշտության հարցը։ Հ. Գանգրունին («Անկարելի երազ»), Ս. Գարաճյանը («Անմար սեր») և ուրիշներ իրենց ուշադրությունը սեռեցին հայ և արաբ երիտասարդների ազատ սիրո ճանապարհին ազգային պատվարների խորտակիչ հանգամանքի վրա։ Առավել ուշագրավ հաջողությամբ երևույթը խորացրեց Գ. Սևանը, որ իր «Գիշերապահը», «Մոտեն հեքիաթ», «Հալիմ էլ Մըսրի», «Բարի լույս, Սիեման» և ուրիշ պատմվածքներում միայն ու միայն արաբ պարզ մարդկանց դժվարին առօրյան, գիտակցական աստիճանական զարթոնքը, պայքարն ու անկումները դարձրեց իր արձակի թեման։

1955 թ. վերջին Հորդանանի հուզումների, 1956 թ. անգլիական զորքերը Եգիպտոսից ամբողջապես հեռացնելու պայքարի, Սուեզի ջրանցքի ազգայնացման և Եգիպտոսի վրա 1956 թ. աշնանը իմպերիալիստական նախահարձակման պայմաններում

⁸¹ «Զարթոնք», 18, 21 և 22.3.1951։

արաբ ժողովուրդների և իմպերիալիզմի ձակատ-ձակատի վճռական գոտեմարտի սկսումով, արաբ մարտնչող հեղափոխականի կերպարը Սիրիայի և Լիբանանի հայկական արձակում դարձավ առանցքային կերպար: Այդպիսի հեղափոխականներ էին Հորդանանում զոհված հերոսուհի Ռաթա Հասանը, Դամասկոսում նահատակված Ռուշդիան, Լիբանանում պատենշի վրա ընկած Յասիմ Աբու Հայդարը և ամերիկյան ինտերվենտների դեմ կռվող Սելիմը, անգլո-ֆրանսիական նախահարձակների դեմ Պորտ-Սաիդում մարտնչող Ռաշիդը և ուրիշներ⁸²:

«Պոռթկումներու, կյանքին և գրականության այլազան մարզերուն մեջ գիտակցական պոռթկումներու շրջան մըն է, որ կապրինք,—գրել է Գ. Սևանը այդ ուշագրավ երևույթն ակնարկելով:—Եվ այս բոլորը որպէս արդյունք ստեղծված նորագուն ժամանակներու պահանջին: Կաճի գիտակցական մակարդակը ժողովուրդներուն և հաջողութենէ հաջողութիւն կընթանա արաբական ազգային դատը: Կարիք կա նոր խոսքի: Երգի ու գրականության: Կարիք կա, ավելին՝ պահանջք կա: Եվ այս այսպէս է մեզի՝ հայերու համար ալ: Կապրինք արաբական երկիրներուն մեջ, ըլլալով հարազատ քաղաքացիները արաբական երկիրներուն, շենք կընար շաղկապիլ և նույն պահանջքը շղթալ մենք ևս»⁸³:

Գիտակցական այդ պոռթկման, նոր պահանջքին որպէս պատասխան, Սիրիայի և Լիբանանի առաջադեմ հայ գրողները արաբ աշխարհի համար բախտորոշ ամեն մի իրադրության ժամանակ ունեցան իրենց խոսքը:

1956 թ. աշնանը անգլո-ֆրանսիական իմպերիալիստները և նրանց կամակատար իսրայելյան ռազմամուկները նենգ նախահարձակման ենթարկեցին Եգիպտոսը: Եգիպտացի ժողովուրդը զենի ձեռին հերոսաբար պաշտպանեց իր հայրենի հողը: Ամբողջ առաջադեմ մարդկությունը ոտքի կանգնեց՝ թիկունք տալու համար արաբների խաղաղ կյանքի ու աշխատանքի իրավունքին: Եգիպտական ժողովրդի հակաիմպերիալիստական արյունահեղ պայքարին իրենց միասնությունը հայտնող լիբանանահայ և սիրիահայ աշ-

⁸² Տե՛ս հատկապէս՝ Գ. Սևանի (երբեմն Լ. Գ. Զանգու կեղծանունով) «Ռաթա Հասան», «Անունը գրեք Հըբրէի» և «Հասարակաց թշնամին», Հ. Գաեգուրունիի «Ռուշտիա», Խ. Արապյանի «Այրվող բոլոր Սայիտի մեջ» և այլ պատմվածքները («Գիրք գրականության և արվեստի», 1956, ապրիլ: «Երկիր», 1957, մայիս: «Արաբատ գրական», 1958, № 3: «Մեր նշանաբանն է հառաչ», 27.7.1958 և 10.8.1958):

⁸³ «Մեր նշանաբանն է հառաչ», 13.1.1957:

խատավորների խոհերի ու տրամադրությունների լավագույն թարգմանը հանդիսացան առաջադեմ երիտասարդ գրողները, չվարանելով իրենց օրգաններում անհաշտ պայքարի, ի հարկին՝ զինված պայքարի հրավեր կարդալ հայ գաղթօջախներին: Նրանք իրենց խոսքը անգլո-ֆրանսիական «մահվան գիշեր» բերող նախահարձակներին ուղղելով գրում էին, որ Սիրիան ու Եգիպտոսը, ամբողջ Արաբական Արևելքը, դադարել են հյուրընկալ հող լինելուց և դարձել հարազատ հայրենի աշխարհ, հայրենի հարազատ տուն, որի համար նրանք պատրաստ են ահեղ կռվի դուրս գալ օտար ներխուժողների դեմ և փորել նրանց գերեզմանը⁸⁴: Դեռ իր գրական նախաքայլերն առնող Մ. Ադամյանը Բելրուժից ձայնակցելով հալեոլցի իր գրչնոր՝ Ժ. Հաճյանին, իմպերիալիզմի դեմ մարտնչող «արաբական աշխարհին» վստահեցնում էր. «Պատրաստ զինվորդ եմ այսօր և բազուկդ շինարար»⁸⁵: Ն. Շահենը, իր «ատելության խոսքը» ուղղելով խաղաղության երդվյալ թշնամիներին, դրվատում էր հայ ժողովրդի խաղաղասիրությունն ու կենսասիրությունը, բայց և միաժամանակ ընդգծում ոչ մի զիջում չանելու նրա վճռականությունը՝ իմպերիալիստների նկատմամբ: Գ. Ադարյանը արաբ քերթողուհի Ռաժա Աբդելռասուլին ուղղած իր նամակ-քերթվածում հավաստիացնում էր, որ «խորշակին դեմ խելագար» հայը կանգնած է իր եղբոր՝ ազատասեր արարի կողքին⁸⁶:

Եգիպտոսի ժողովրդի մարտը՝ արաբական երկրների հակա-իմպերիալիստական պայքարի առաջին հաղթական հանգրվանն էր լուկ: 1957 թ. ամերիկյան իմպերիալիզմը սկսեց թուրքական և իսրայելյան նախահարձակում նախապատրաստել Սիրիայի դեմ: Երիտասարդ դեմոկրատ բանաստեղծները, իբրև հարազատ հայրենիքին սպառնացող վտանգի՝ ոտքի կանգնեցին և այդ սպառնալիքի դեմ: Իմպերիալիստների նախահարձակումը վիժեցնելու գործում արաբ ժողովուրդների (և նրանց հետ հայ գաղթօջախների) միասնությունը՝ որպես «Արևելքի արթուն պահակ» ողջունում էր Մ. Մոմճյանը: Մ. Գուլազճյանը շեշտում էր, որ հայ ժողովրդի սիրիահայ բեկորները, «Հարազատ մայրական երգիք» դարձած Սիրիայի «վառ արևի համար» պատրաստ են իրենց «կյանքն իսկ

⁸⁴ Ժ. Հաճյան, Հերոսական, «Երկիր», 1956, դեկտեմբեր, էջ 29:

⁸⁵ Մ. Ադամյան, Արաբական աշխարհին, «Արարատ գրական», 1957, № 7, էջ 26: Ն. Շահեն, Խոսք ատելության, «Երկիր», 1956, դեկտեմբեր, էջ 57: Գ. Ադարյան, Նամակ, «Գիրք գրականության և արվեստի», 1956, հոկտեմբեր, էջ 31—32:

անտրտունջ տալու»։ Սիրիահայերի այդ վերաբերմունքն էր դրվատում Թ. Թորանյանը, գրելով. «ամերիկյան և թուրքական դավադիրների դեմ ձիվ ժողովուրդ, ելար և դուն, Հունանն ինչպես ֆաշիզմի դեմ», միաժամանակ շեշտելով, որ «Եփրատը հին Հայաստանի՝ եթե երեկ զովացնել չկրցավ» Սիրիան, ապա «այսօր ծաղկուն զեփյուռը նոր Հայաստանի» կարող է խառնվել սիրիական ամպրոպին՝ խորտակելու համար «արևմտյան կայսերապաշտներն հելուզակ»⁸⁶։ Սիրիահայ տաղանդավոր գրող Սմբատ Փանոսյանը, «Սուրիան դյուրավ կլլվելիք պատառ չէ» խորագրով մարտական հոդվածում, դրվատելով սիրիահայ աշխատավորների բազմահազարանոց բանակի մասնակցությունը երկրի պաշտպանությանը, հաստատ հավատք էր հայտնում, որ «արևմտյան գաղթապետությունը կրկեսային ցուլի անգոր և հուսահատական մոնշյուններով չի կրնար վախ ազդել այլևս Միջին Արևելքի ազատագրված ժողովուրդներուն։ Եվ օր մը, մոտալուտ օր մը անոր վտանգավոր եղջյուրները պիտի ջախջախվին ազատատենչ ժողովուրդներու հերոսական պարիսպներուն առջև»⁸⁷։

Իմպերիալիզմը ոչ միայն խայտառակ պարտություն կրեց Ծգիպտոսի և Սիրիայի պարիսպների առաջ, այլ նաև Իրաքում, որտեղ արար ազատասեր ժողովրդի կոհակացած ատելությունը և բազմամյա պայքարը Նուրի Սաիդի պրոիմպերիալիստական խմբակի դեմ, 1958 թ. հուլիսին հաղթանակով պսակվեցին։ Իմպերիալիզմի արաբական շղթայից մի օղակ ևս պոկվեց։ Սիրիայի և Լիբանանի հայ դեմոկրատ բանաստեղծները հրճվանքով ողջունեցին «անցյալի կապանքները խորտակող» և «գահավեժ անկումներու ուղիեն» դեպի «արաբական աշխարհի մայրական գիրկը» Իրաքի վերադարձը։ Նրանց հրճվանքը անխառն ուրախությունն էր Սիրիայի և Լիբանանի հայ աշխատավորության, որ արաբ ժողովրդի հետ այնքան երկար էր սպասել դարձի օրվան, «ինչպես մայրը իր զավակին», հետևելով իրաքցի հայրենասերների մաքառումներին, հպարտանալով նրանց հաղթանակներով և նույնիսկ արտասվելով, երբ նրանց «զարկին խուժե խուժ»։ Բանաստեղծ

⁸⁶ Մ. Մամեյան, Ողջունք, «Արարատ գրական», 1958, № 2, էջ 19։ Մ. Գուլազեյան, Սուրիա, «Երկիր», 1957, դեկտեմբեր, էջ 30։ Բ. Թորանյան, Երկու պատկեր, «Մեր նշանաբանն է հառաչ», 22.12.1957։ Նույնի՝ Սուրիա, «Ժողովածու գրականության և արվեստի», 1952, № 10, էջ 36—37։

⁸⁷ Ս. Փանոսյան, Սուրիան դյուրավ կլլվելիք պատառ չէ, «Մեր նշանաբանն է հառաչ», 15.12.1957։

Գ. Աղդարյանը՝ «Իրաքը հին, նոր է այսօր, կենսանորոգ ու հզոր, Արաբական Արևելքի տղան է հրաշյա», երգում էր խնդությամբ: Նրան ձայնակցում էր Մոմջյանը, ողջունելով «ահեղ երկունքից» հետո Իրաքի «խավար» հորիզոնում ազատության արշալույսի ջինջ շողերը⁸⁸:

Նվաճա, ժողովրդական ընդվզումի ահարկու ալիքից սահմըկած, իրենց վերջին հենակետներից մեկը փրկելու մտահոգությամբ, 1958 թ. գաղութակալ արնոտ գայլերը վար կնետն իրենց դիմակները: Յանքիները Պեյրուսի են: Լիբանանի ժողովուրդը զեն ի ձեռին ոտի կանգնեց, պատերազմի վառողին կապված պատուլյգին առջև հրախաղի ելած» անդրօվկիանյան ներխուժողների դեմ: Լիբանանցի արաբների կողքին կովեցին և հայ աշխատավորները: Սիրիայում ևս հայերը սկսեցին զինվել, օգնության ձեռք երկարելու համար մայրիների երկրի իրենց հարազատներին⁸⁹:

«Պիտի հաղթենք»—հավատքով ու վճռականությամբ լի այս խոսքերը երկաթյա կարգախոսի նման հոսեցին հայ դեմոկրատ բանաստեղծների գրչից: «Պիտի հաղթենք» երգեց Գ. Աղդարյանը: Իր «սրտով ու երգով» ժողովրդի հաղթանակը զրվատեց Մ. Մոմջյանը: Լիբանանում յանկիների դեմ կռվող հայ մարտիկներին խանդավառորեն գովերգեց Թ. Թորանյանը՝ նրանց «Հայաստանի սահմանապահ» անվանելով: «Մահ բռնակալներուն» լողունգով «հայ և արաբ ժողովուրդներուն պայքարը, միասնական կռիվը հաղթանակի կառաջնորդե ժողովուրդը», գրեց Հ. Գանդրունին⁹⁰:

Հայ առաջադեմ գրողների՝ արաբական երկրների կյանքի ճակատագրական յուրաքանչյուր երևույթի հետ անմիջական կապը ցույց տալու համար, բավական է հիշել, որ 1959 թ. Սիրիայում հետադիմության աշխուժացման և դեմոկրատական ուժերի դեմ

⁸⁸ Ն. Շահեն, Կողջունեմ դարձդ Իրաք, «Երկիր», 1958, Գ հատոր, էջ 9—10: Գ. Աղդարյան, Իրաքյան ջեփոր, «Մեր նշանաբանն է հառաջ», 3.8.1958, էջ 4: Մ. Մոմջյան, Իրաքի հանրապետություն, «Արարատ գրական», 1958, № 8—10, էջ 44:

⁸⁹ Գ. Գառլան, Շարքերեն հզոր խաղաղության ուժերուն, «Երկիր», 1958, Գ հատոր:

⁹⁰ Գ. Աղդարյան, Պիտի հաղթենք, «Մեր նշանաբանն է հառաջ», 22.6.1958: Մ. Մոմջյան, Երգ մարի ու պայքարի, «Արարատ գրական», 1958, № 5—7, էջ 47: Թ. Թորանյան, Դուք զինվորներ հայրենի, «Երկիր», 1958, Գ հատոր, էջ 6: Հ. Գանդրունի, Բռնակալին մահը, «Արարատ գրական», 1959, Գ հատոր, էջ 6:

գործված բռնամիջոցների կապակցությամբ, միայն «Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթերում լույս են տեսել տասնյակ քերթվածներ⁹¹։

Արաբ ժողովուրդների հակամպերիալիստական պայքարի վերելքի ժամանակաշրջանում, հայ հետադեմ գրողների ստեղծագործություններում ևս, որպես անօրինակ երևույթ, թափանցեց «արաբական» թեմատիկան և հորինվեցին արաբական երկրներին նվիրված ոտանավորներ, արաբ հերոսներով ու նույնիսկ արաբների զինված պայքարը «արտացոլող» պատմվածքներ ու վիպակներ։

Եթե հետադեմ բանաստեղծների շափածոները, գրված՝ արաբական երկրների համար մահու և կենաց մարտերի օրերին ու նվիրված լիբանանին կամ Իրաքին, բնորոշվում էին բացարձակ անտարբերությամբ, ներհայեցողական անիմաստ վերացականությամբ⁹², ապա հետադեմ արձակագիրների համար արաբական թեմատիկան հետապնդում էր կա՛մ իրենց ազգային սնապարծությունը արաբ հերոսների միջոցով գովերգելու և կա՛մ արաբական ազգային-ազատագրական պայքարը ծաղրանկարի վերածելու միտում։ Բավական է ասել, որ Պ. Գուլիելյանը «Խաղամուլ» արաբ հերոսին իր որդիներին հայացած տեսնելու երազանք է վերագրել, Ա. Ֆրանկուլյանը որպես հերոս ընտրելով իսլամ մի հոգևորականի՝ նրա բերանով ձաղկել է «անապատային բարձրով» արաբների «թուլությունը» և գովերգել հայերի «քաղաքակրթիչ» դերը, Գ. Միքայելյանը կախաղան բարձրացող արաբ հեղափոխականին զրդշումի խոսքեր և քրիստոնեական քարոզներ է արտասանել տվել, իսկ Մ. Էպլիդաթյանը 1962 թ. Ալժիրի ներքաղաքական իրադրու-

⁹¹ Նահատակված մարտիկներ Մ. Ֆալիունիի և Ս. Դրուրիի հիշատակին էին նվիրված Թ. Թորանյանի «Կռվի կանչ» (22.2.1959) և Ս. Արմենի «Երեկ ընկեր մրտարին» (4.7.1959), բանտարկված բանաստեղծ Բաղդադիին էին ձոնված Հ. Սարգիսյանի «Զեն կրնար բանտել» (29.3.1959), Պ. Վահրամյանի «Խոսք դահիճներուն» (26.9.1959) և Թ. Թորանյանի «Խոսք բանաստեղծին» (15.3.1959) գործերը, սիրիական ֆաշիստների ոճիրների դեմ էին ուղղված Ն. Շահենի «Օ՜ դեմոկրատիա» (1.3.1959), Արտավազի «Ֆաշական քամին» (5.9.1959), Ժ. Հաճյանի «Գարնանային պատգամ» (17.5.1959), Գ. Գառլանի «Ազատություն իմ սուկեծամ» (1.3.1959) բանաստեղծությունները և շատ ուրիշ գործեր։

⁹² Տե՛ս հատկապես՝ «Սփյուռք», 4.4.1958 և «Արեւիկ», 16.8.1958։

թյունը պատկերելով՝ օսասական ֆաշիստների ուժերների հեղինակ է դարձրել... սրար հայրենասերներին⁹³։

Ինչ խոսք, որ օրինաչափ էր այդ բոլորը։ Արաբ ժողովուրդներին հակաիմպերիալիստական պայքարի վերելքի ժամանակաշրջանում, դաշնակցությունը անձնուրաց նվիրվածությամբ վարձակալված լինելով աղդային-աղատադրական շարժման թշնամիներից, կարող էր արդյոք չարտացոլել իր իսկ կազմակերպության ապրումներն ու հույզերը, կարող էր դաշնակ գրողը ծառայել այն առողջ ու առաջադեմ գրականության ձևակառուում, որ իր բոլոր նյարդերով կապված էր կյանքին և արտացոլում էր այդ կյանքը, որ իսկապես ու լիովին պատկերում էր սիրիահայ ու լիբանանահայ աշխատավորների առօրյան և արձագանքում նրանց հուզող բոլոր հարցերին։ Հասկանալի է որ, ոչ։

Եվ եթե գրչի դեմոկրատ աշխատավորների համար պարզ էր, որ իրենց դրականությունը կգնա դեպի վերացականություն, անանցանելի անշրպես կստեղծվի իրենց և հայ աշխատավոր զանգվածների միջև հենց որ իրենք մոռանան, որ հայկական գաղթօջախները ապրում են տվյալ ու որոշ մի երկրում և շահագրգռված են այդ երկրի ամբողջ ժողովրդին հետաքրքրող կենսական հարցերով, որ իրենց ազգային անուրանալի առանձնահատկությունների կողքին՝ հայ զանգվածներն ունեն և հասարակաց ապրումներ ու սերտ կապեր իրենց հետ ապրող ու աշխատող արաբ զանգվածների հետ, ապա հետադեմ գրողների համար կենսականը հիմնականում իմպերիալիզմի նյութական բարիքների աղբյուրներից չկտրվելն էր։

Եվ մինչդեռ կյանքի հետ անխզելիորեն կապված ու կյանքն արտացոլող, իսկապես նոր ու առաջավոր, կենսունակ ու կենսահորդ մի դրականություն էին ստեղծում Գ. Ադգարյանը, Գ. Սևանը, Ա. Դարյանը, Ս. Փանոսյանը, Ս. Վահագնը, Հ. Գանգրունին և բազմաթիվ ուրիշներ, իրենց «Պատենշին վրա», «Սև ծովը նույնն է միշտ», «Մեր հացը» և այլ ժողովածուներով՝ կյանքի ու պայքարի հորձանուտից քաղելով իրենց թեման և հերոսներին, իրենց տեսադաշտում հավասարապես ընկալելով աշխատավոր, մարտնչող

⁹³ Պ. Գալսեղյան, *Խաղամուր*, «Սփյուռք», 13.10.1962, էջ 8։ Ա. Ֆրանկուլյան, *Իմամ Ապգու Ռահման Սելիմ էլ Եհյայի քարոզը*, «Սփյուռք», 9 և 16.7.1960, էջ 6։ Գ. Միքայելյան, *Վախճանը, «Նայիրի»*, 8.9.1957, էջ 8։ Մ. Էլլիդարյան, *Ալեքերիա 1962, «Բաղին»*, 1963, № 3, էջ 28—32։

հային և արաբին, ապա հետագայում գրողները իրենց անգործության ու ձախողանքի դառնությունից շտապում էին դառնալ տերտեր-քենադատներ: Մովսեսը հակակոմունիստ Գ. Միքայելյանը հայ գրականության համար «մասսայական ռեալիզմի» աղետ էր կանխագուշակում «արաբ բեռնակիրներու և աղքատավաճառներու» աշխարհը թափանցելուն մեջ⁹⁴, ոմն Զավեն վարդապետ, պատկառանքով խոնարհվելով «ազնիվ հեղինակ տիկին» Միքայելյանի առաջ, ավաղում էր, որ նրա որոշ գործերի հերոսները «հայ չեն» և ողբագին խորհուրդ էր տալիս «պարտվողական հողերանությունը աշխարհաքաղաքացի ըլլալու չափ նահանջի» չհասցնել և գործ չունենալ «Հաթեմի ու Նալիլի և այլոց հուզիչ պատմությունը, հոգեկան տազնապները, անոնց ընկերային ճնշվածությունը և կառավարությունը տապալելու հանդգնությունը» պատկերելուն հետ⁹⁵, իսկ Ն. Փաթանյանը պարտք էր համարում զգուշացնել, որ «օտարաբույր ատաղձը իր տարտամությամբ կրնա գրագետը ձախողանքի միայն առաջնորդել»⁹⁶:

Ինչ խոսք, սակայն, որ արաբ ժողովուրդները հակաիմպերիալիստական իրենց պայքարում կարևոր հաղթանակներ արձանագրեցին և Սիրիայի ու Լիբանանի հայկական գաղթօջախները իրենց համեստ բաժինն ունեցան այդ հաղթանակների ձեռքբերման գործում:

Եվ ինչ խոսք նաև, որ Սիրիայի ու Լիբանանի հայ գաղթօջախների քաղաքացիական արի ու առողջ կեցվածքը ամրապնդելու ձգտող և ընդհակառակն այդ կեցվածքը հօգուտ իմպերիալիզմի քայքայելու հետամտող գրական զույգ հոսանքներից հաղթանակը օրինաչափորեն վիճակվեց առաջինին՝ հայ դեմոկրատ գրական գործիչներին, որոնք հարազատորեն արտացոլելով Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի մեջ ներգրավված հայ աշխատավորության ձգտումներն ու երազանքները, իրենց արաբ գրչեղբայրների հետ սերտ համագործակցությամբ և վերջիններիս գրական գինանոցի լավագույն տարրերի օգտագործումով, արդարացրեցին հայերի նկատմամբ արաբ ժողովուրդների տածած խոր վստահությունը և ամրապնդեցին հայկական և արաբական մշակույթների առողջ թևերի կապն ու գաշինքը:

⁹⁴ Գ. Պ. Միքայելյան. Վաստակավոր բանաստեղծը, «Սփյուռք», 13.7.1963, էջ 7:

⁹⁵ «Նալիլի», 19.1.1958:

⁹⁶ «Սփյուռք», 18.7.1959:

Մեր գրապահոցներում առկա աղբյուրների սակավաթվութունը դժբախտաբար հնարավորություն չի տալիս հանգամանորեն կանգ առնելու հետպատերազմյան ժամանակաշրջանում սիրիական ու լիբանանյան գրողների գեղարվեստական գործերում հայերին նվիրված էջերի վրա: «Վերջին տարիներին,— գրել է հարցի դիտակ պրոֆ. Ա. Արշարունին,— արաբական գեղարվեստական դրականության մեջ երևան են եկել ստեղծագործություններ, ուր արված են հայերի և նրանց մասնակցության մասին երկրի հասարակական կյանքին»⁹⁷:

Մեզ ծանոթ լայնակտավ գործերից առաջինը, որի գլխավոր հերոսներից մեկը հայ է, լիբանանցի գրող Ֆարժալլա Հայթի գլուխգործոցը հանդիսացող «Հողին զավակները» եռագրության երկրորդ հատորն է («Մենության թույնը»): Տարաբախտաբար, վիպաշարի այդ մասը հորինելիս, Հայթը իր երբեմնի առողջ հայացքներից և կեցվածքից հրաժարված, մխրճվել էր «սեռային ճահճներու և կրոնամոլ միստիցիզմի մեջ»,—ինչպես իրավամբ նշվել է հայ մամուլում,— և իր հերոսներին, այդ թվում և Հայկազումյանին, կարծես թե կերտել է ոչ թե որպես մարդ, այլ որպես հրեշ⁹⁸:

Ի հակադրություն Ֆ. Հայթի⁹⁹, բանաստեղծ Լուիս Ռիզկը իր «Արա Գեղեցիկ» պատմա-գրամատիկական պոեմում¹⁰⁰, որը ձևաված է հայ-արաբական մշակութային կապերի երախտավորներ ժորժ Ֆախուրիին և Սաիդ Աքլին, հայ ժողովրդի զավակների հայրենասիրության և պատվախնդրության գովերգն է հյուսել բարձրարվեստ քերթողությամբ:

Պետք է ասել, որ մեր տրամադրության տակ գտնվող սակավաթիվ մյուս արձակ և չափածո ստեղծագործություններում արաբ գրողները գնացել են ոչ թե Հայթի, այլ Ռիզկի ճանապարհով՝ բացահայտելով հայերի նկատմամբ իրենց իսկապես ջերմ ու եղբայրական զգացումները:

⁹⁷ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, № 5—6:

⁹⁸ Ն. Թովալյան, Ֆարժալլա Հայթ և հայր, «Այգ», 30.1.1955:

⁹⁹ «Մենության թույնը» փաստը պատճառ չի դարձել, որ լիբանանահայ առաջադեմ մամուլը պատշաճ ուշադրություն չդարձնի Ֆարժալլա Հայթի դրականության լավագույն էջերի վրա: Այսպես, օրինակ, «Ժողովածու» հանդեսը «Աստծու գուտորը» հատորից թարգմանելով իր ընթերցողներին ներկայացրել է լիբանանի Տեր-Թոդիկյան դպրոցին նվիրված նրա մանկության հուշերը (տե՛ս Ֆ. Հայթ, Փախուստ, «Ժողովածու» գրականության և արվեստի», 1950, № 1, էջ 1—7):

¹⁰⁰ لويس رزق، ارا الجميل، سوريا، ١٩٦٧، ص ٢٥٦

խժղժությունները, Ծփրատի՝ արաբ ժողովրդի անունից դատապարտել է հայերի դեմ գործված ցեղասպանությունը, իր ձեռքն է մեկնել Արաքսին՝ հայ ժողովրդին, որի երակը չի ցամաքել, քանի որ այսօր էլ Արագածի կատարին շողում է կարմիր աստղը և լուսավորում բոլոր ղրկյալների մանապարհը։ Նույն ոգով է գրված նաև բանաստեղծի «Վերք Հայաստանի» քերթվածը»¹⁰⁵։ Նվիրված՝ «Թուրքական հետագիմության կողմից հայ ժողովրդի եղեռնի հիսնամյա հուշատոնին»։

Նթի հիշատակելու լինենք նաև Սուլեյման Իսայի «Արաս՝ հաշատրյանին» ձոնված բանաստեղծությունը¹⁰⁶, ինչպես նաև գրող և թարգմանիչ Նիզար Խալիլի հայերեն լեզվով գրված «Ողջունը»¹⁰⁷, ապա կունենանք Հայաստանի գրապահոցներում առկա մամուլում մեր գտած այն ամբողջ գեղարվեստական նյութը, որ հայերի մասին արաբներն ստեղծագործել են։ Հասկանալի է, որ այդ «ամբողջը» շատ է հեռու ամբողջական լինելուց, այնուամենայնիվ որոշ պատկերացում է տալիս այն մասին, որ աստիճանաբար արաբական գեղարվեստական գրականության մեջ ի հայտ են գալիս հայ ժողովրդին, նրա պատմական նախնիներին և նրա հայրենիքի վերածննդին նվիրված էջեր։

3

Արաբական վերածննդի ռահվիրաներից՝ «Եգիպտոսի Մուլիհ-որը» հուշակված բանաստեղծ և երգիծաբան Աբու Նադարը 1886 թ. Փարիզի հայ ուսանողների մի հավաքույթում ելույթ ունենալով, «Փառավոր դուցազուններու, անզուգական հանճարներու և վհանձըն մարդոց» մայր Հայաստանին ողջուն հղելով, «ակնածանքով ու պատկառանքով» խոնարհվել է պատմահայր Խորենացու «հավիտենական փառքի» առաջ և հիացմունք հայտնել իր ժամանակակից հայ գրողների հայրենասիրության, պերճախոսության և խորամտության նկատմամբ¹⁰⁸։ Արաբ հուշակավոր բանաստեղծներից Խալիլ Մուտրանը ևս հիացմունքով է խոսել «հայ հանճարի» մասին և «Արևելքի բանաստեղծության գոհարը» հայկականն է

¹⁰⁵ میثال سليمان، جراح أرمينيا، التذاع، ۱۰/۴/۱۹۶۵

¹⁰⁶ «Հայրենիքի ձայն», 27.4.1966, էջ 4:

¹⁰⁷ Նույն տեղում, 22.5.1966:

¹⁰⁸ «Սովետական Հայաստան», 1958, № 10: «Արևելք», 30.12.1958: «Նայիրի», 8.2.1959:

համարել: Միջնադարյան անգղիական տաղերգու Նահապետ Քուչակի մասին նա մի անգամ չէ ասել, որ «Արևելքի ոչ մեկ բանաստեղծություն չունի այն զուսպ զգաստությունը, պայծառությունը, և բառերի ժուժկալությունը, որքան հայկականը»¹⁰⁹:

Եվ սակայն արար մտավորականության ծանոթությունը հայ մտքի հետ կատարվել է եվրոպական լեզուներով թարգմանությունների օգնությամբ: Բանաստեղծ Սաիգ Աքլը, որ իր պատանի հասակից հետաքրքրություն է ցուցաբերել հայ գրականության նկատմամբ, իր անձնական բարեկամ Վահան Թեքեյանի ստեղծագործությունների հետ ծանոթացել է «Ռոնսարի լեզվով» և համոզվել, որ այդ «երազի մարդը՝ դասական, հոյակապ» մի բանաստեղծ է, որի մեծությունը հնարավոր է գտել համեմատելու արար հանձարեղ գրող Ջիրրան Խալիլ Ջիրրանի մեծության հետ և որից «Անունդ» քերթվածը թարգմանելով դեռ երեսնական թվականներին լույս է ընծայել լիբանանյան գրական մամուլում¹¹⁰: Սիրիացի բանաստեղծ Ալի Քանաանը Դամասկոսի համալսարանում իր դասախոսներից Համալյանի մասին պատմել է. «Նրա հետ մեր կապերը անմիջական, ընկերական էին: Համալյանը պատճառ դարձավ, որ հետաքրքրվեմ հայ գրականությամբ: Մեր ձեռքի տակ արաբերեն նյութեր չկային, և նա ինձ բերում էր Ամերիկայում անգլերենով հրատարակվող «Արարատ» պարբերականը»¹¹¹:

Արաբերեն լեզվով թարգմանությունների անգոյության իսկ պատճառով, արար ժողովրդական լայն զանգվածների համար հայ գրականության գանձարանը մնում էր տառացիորեն անհայտ մի կալված, և, ինչպես նշել է թարգմանիչ Նիզար Խալիլին, անգամ արար մտավորականության լայն խավերը երբեք չէին պատկերացնում, որ «հայ գրականությունը այսքան հարուստ է»¹¹²:

1940 թ. Հալեպում Բ. Չաթոյանի և Խ. ալ-Ասադիի նախաձեռնությամբ առաջին լուրջ քայլն արվեց հայ գրականությունը արաբներին ծանոթացնելու ուղղությամբ:

Եղեռնի որբերից, արար բեղվիների կողմից թուրքական յաթաղանից փրկված Բ. Չաթոյանը, մայրենի լեզվի նման տիրապետելով արաբերենին, քիչ քրտինք չի ներդրել հայ-արաբական դրա-

¹⁰⁹ «Արևելք», 5.2.1957: «Ազգակ», 27.2.1957:

¹¹⁰ Տե՛ս «Սփյուռք», 18.1.1964:

¹¹¹ «Գրական թերթ», 25.7.1969:

¹¹² «Հայրենիքի ձայն», 15.5.1966:

կան կապերը վերստին հանգուցելու գործում: Նա հեղինակել է մի շարք արարքներն դասագրքեր և հայ գրականությունից փոխադրություններով պատրաստել արարքներն մի ծաղկաբաղ¹¹³: որի մասին բանաստեղծ Օմար Աբու Ռիշեն հիացմունքով է արտահայտվել ու խոստացել հրատարակության դեպքում հայկական դպրության մասին իր մտորումները որպես առաջաբան թղթին հանձնել¹¹⁴: Խայրեդդին ալ-Ասադին՝ հալեպահայ մշակութային կյանքի հետ սերտորեն կապված և սովետահայ գրականության հետ առնչվող բոլոր միջոցառումների խանդավառ մասնակից¹¹⁵ ժերունդարդ բանաստեղծի հետ համագործակցաբար, Չաթույանը երախտաշատ գործ է կատարել՝ հոդ չէ թե ազատ, սակայն խնամված ու ամբողջական¹¹⁶ թարգմանությամբ լույս ընծայելով Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը, «Աբու Ալայի վերացումը» խորագրով¹¹⁷:

Իսահակյանի պոեմը, որ մինչ այդ թարգմանվել էր արդեն տասնյակ լեզուներով, վերջապես ոչ միայն ներկայացվում էր նաև իր լիրիկական հերոսի արենակիցներին, այլև նրանց քաղցր նախաճաշակն էր տալիս հայ նոր գրականության:

Ալ-Ասադին, հրատարակության առաջաբանում համառոտակի կենսագրելով հայ բանաստեղծին, ծանրանում էր պոեմի արժանիքների վրա: Նա իրավամբ նշում էր, որ դեպի արևը գնացող մեծ միստիկի անապատային երթի նկարագրությունները այնքան ներբազեղ են և ստեղծվել են այնպիսի վարպետությամբ, որին երբեք չեն հասել արաբական գրականության մեջ: Նա իր գնահատականը եզրափակում էր նշելով, որ «Աբու-Լալա Մահարի» պոեմով Իսահակյան բանաստեղծը որպես հավերժական պարզ և մի նոր էջ է գրել Արևելքի գրականության ոսկեմատյանում, ճիշտ այնպես՝ ինչպես իրենից առաջ Խայամն իր քառյակներով, Սաադին իր «Գյուլիստանով», «Կալիլա և Դիմնայի» հեղինակն ու «Զոհերի» Տազորը, ավելացնելով նաև, որ նշված բոլոր ստեղծագործությունները արվեստի տեսակետից զիջում են Իսահակյանի երկին¹¹⁸:

¹¹³ Մադկաբադից ցարդ միայն Սիամանթոյի «Խեղդամահը» պոեմն է լույս տեսել «الأيدي» հանդեսի 1954 թ. № 4-ում:

¹¹⁴ «Նայիրի», 22.9.1963:

¹¹⁵ Ս. Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են, Երևան, 1964, էջ 170:

¹¹⁶ Թարգմանիչները զեղչել են միայն պոեմի նախաբանը և կցել ժանրագրություններ:

¹¹⁷ «مروج ابى العلاء» وضعه فى الارمنية اويديك اسباقيان، نقله الى العربية الاسدى، خيرالدين ويارسيغ تششوتيان، حنب، ١٩٤٠.

¹¹⁸ «مروج ابى العلاء» ص ٤

«Աբու Ալալի վերացումը» պոեմի, արաբական շրջաններում գտած ջերմ ընդունելությունը պարզելու տեսակետից պերճախոս է այն փաստը, որ թարգմանությունը միաժամանակ արաբական ռադիոկայանների գրական հաղորդումների առանցքում է մնացել միաժամանակ: Պոեմի և նրա թարգմանության մասին բարձր գնահատական է տվել Ֆ. Բուստանին, Բեյրութի «Ալ-Մաքշուֆ» գրական հանդեսում: Սիրիացի բանաստեղծ, բանասեր և քննադատ Մուհամմեդ ալ-Բըզմին Դամասկոսի արաբական Ակադեմիայի պաշտոնաթերթում լույս է ընծայել ընդարձակ մի գրախոսական, նշելով, որ Իսահակյանի պոեմի «արաբերեն թարգմանությունը մի նպաստ է, արժանի արձանագրվելու այն օգուտների շարքին, որ տալիս են մեր գրագետները արաբական մշակույթին և արաբականությանը»: Ալ-Բըզմին ոչ միայն բարձր գնահատական է տվել թարգմանությանը, այլև նույն ինքն Վարպետի գործին, վերջինս գտնելով «այնքան հարազատ» մարեցու ոգուն, որ «ընթերցողի մոտ հակում է առաջանում ենթադրելու, որ Աբու Ալալի մտածումներն են գրված իր իսկ բառերով»¹¹⁹:

Աբու Ալան, որպես հայ ժողովրդի սիրելի Վարպետի լավագույն ստեղծագործություններից մեկի լիրիկական հերոսը, վաղուց է մտել հայ ժողովրդին սրտամոտ անունների համաստեղության մեջ: Միաժամանակ սակայն, հայ մեծ քերթողը արդեն քառորդ դար իր ամենապատվալուր տեղն է գրավել արաբ ժողովրդին հարազատ օտար գրողների շարքում և դարձել է հայ-արաբական մտավոր-մշակութային կապերը շեշտավորող ախուն:

Աբու Ալալի մահվան 900-ամյակի օրերին Մոսկվայում տեղի ունեցած հանդիսություններին, որոնց մասնակցել են արաբ գրողներ՝ սիրիացի Ուադադ Սակակինին, իրաքցի Մուհամմեդ Շարաբան, սուդանցի Մուստաֆա Իդրիսը և սովետական արաբագետ Սուրեն Շիրոյանը, Իսահակյանի պոեմը և նրա ուրիշ գործեր հայտարարում գրավել են կարևոր տեղ¹²⁰:

Իսահակյանի մահը խոր հուզում առաջացրեց Սիրիայի և Լիբանանի ոչ միայն հայերի, այլև արաբների շրջանում: Սիրիացի գրող և հրապարակագիր Մաուահեբ Քալալին, Հայաստանի գրողների միության վարչության անունով ուղարկեց «Մաարիի երկրեն

¹¹⁹ «المجمع العلمي العربي» العدد ٧ - ٨، ١٩٤٤ (թարգմանությունը տե՛ս «Դեպի երկիր», 1945, հոկտեմբեր, էջ 139):

¹²⁰ «Մեր նշանաբանն է հառաչ», 5.5.1957, էջ 6:

ծաղիկ մը՝ վարպետին շիրիմին վրա» գրվելու համար, ցավակցական իր հեռագրով շեշտելով, որ «բանաստեղծ Ա. Իսահակյան չէ մեռած, ան պիտի ապրի գիտակցությանը մեջ հառաչադեմ մարդկության, որ պիտի հավերժացնե իր հիշատակը, որպես գրական աշխարհի աննկուն մարտիկը, որպես երգիչը սիրո և խաղաղության»¹²¹,

Հայ ժողովրդի և հայ գրականության համար Իսահակյանի մահվամբ արձանագրված կորստի կարևորությունը ընդգծվել է ՌԱՍ-սակաֆա ալ-ուսթանիյա» ամսագրում լույս տեսած «Բանաստեղծը որին կորցրեց հայ ժողովուրդը» հոդվածում¹²², որտեղ մեծ քնարերգուի կյանքի ու գործի հայրենասիրական ամբողջ պաթոսը վեր է հանվել արժանի ուշադրությանը:

Վարպետի մահվան առիթով հայ-արաբական սզո համատեղ հանդիսություններ են տեղի ունեցել Սիրիայում և Լիբանանում: Բանաստեղծ Ալ-Ասադին, հարկադրված լինելով Դամասկոսում ներկա լինել արաբ գրողների համագումարին, գրող Քամել Ջաբրի միջոցով Հալեպում կազմակերպված սգատոնին ուղարկել է մի ուղերձ, որի մեջ բանաստեղծական երևակայության թևերով զրուցելով հանգուցյալ Վարպետի հետ, փայփայել է այն միտքը, որ Սիրիայում արաբ և հայ ժողովուրդների ողջագուրումը խորհրդանշող «երկու գրականությունների գրկախառնումը» տեղի ունենա արաբ և հայ մտավորականների նախաձեռնությամբ¹²³: Բեյրութում կայացած սգատոնին նախագահելով, Լիբանանի տեղեկատվության նախարար Ֆերիդ Կոդման հիացմունքով է արտահայտվել Իսահակյանի գործերի մասին՝ ընդգծելով, որ նա «միջազգային շափանիշով» մի գրող էր¹²⁴:

1960 թ. Բեյրութի սովետական մշակութային կենտրոնի աշխատակիցներից Լիբանանցի գրասեր Նիկոլա Թաուիլը, որ հայոց լեզվի հետ ծանոթացել էր իր հայուհի կնոջ միջոցով, արաբերենի թարգմանեց և հրատարակեց Վ. Անանյանի «Որսորդական պատմվածքներից» մի շարք՝ «Սպիտակ առաջնորդը» խորագրով¹²⁵:

¹²¹ «Մեր նշանաբանն է հառաչ», 17.11.1957, էջ 4:

¹²² «الثقافة الوطنية», العدد 11, 1957:

¹²³ «Մեր նշանաբանն է հառաչ», 29.12.1957, էջ 7:

¹²⁴ «Սփյուռք», 27.4.1958, էջ 17: «Մեր նշանաբանն է հառաչ», 4.5.1958, էջ 6:

¹²⁵ فاختانغ انانيان، انقاد الابيض، ترجمة نقولا طويل، بيروت:

Թարգմանիչը, սովետահայ գրողին հակիրճ կենսագրելուց հետո, արար ընթերցողներին է ներկայացրել «Սպիտակ առաջնորդը», «Խուստուսի սարի արջերը», «Մեր մրգերի հմայքը», «Զամբարը», «Պատիժ», «Հետապնդում», «Մահից հզորը» և այլ թվով 13 պատմվածքներ¹²⁶։

Ն. Թաուլիի թարգմանությունը անխուսափելի դրսևորումն էր հայ-արարական մտավոր-մշակութային կապերի հիսունական ամբողջ տասնամյակում արձանագրած հասունացման, և ուրեմն նախաքայլը անպայմանորեն շարունակելի մի պրոցեսի։ Բայց ոչ միայն այդ։ Վ. Անանյանի պատմվածքների արարքերն հատորի լույս ընծայումը միաժամանակ առաջին պատահությունն էր արար ընթերցողների համար ծանոթանալու սովետական բազմազգ գրականություն մինչ այդ անծանոթ մնացած կենսունակ մի ճյուղի՝ սովետահայ գրականության հետ¹²⁷։

Ն. Թաուլիը, հետագայում շարունակելով իր սկսած երախտաշատ գործը և խորացնելով իր ծանոթությունը հայ (հատկապես սովետահայ) գրականության հետ, թարգմանել է Հ. Թումանյանից, Շիրվանզադեից, Արագուց, Մ. Արմենից, Հ. Քոչարից և ուրիշներից մի շարք էջեր և ծրագրել է կազմել «Հայ գրականության ծաղկաքաղ» արարքերն լեզվով¹²⁸։

Հայ գրականության լավագույն էջերը արարներին ծանոթացնելու գործում մեծ երախտիք ունի Հալեպից Նիզար Խալիլին, որ հայոց լեզուն սովորել է ինքնաշխատությամբ։ Քառասնական թվականների սկզբին Հալեպի Զավարյան դպրոցում արարքերն լեզվի դասատու նշանակվելով և տեսնելով, որ ուսումնական խորհրդի կողմից «ձեռնարկ» համարվող արարքերն ուսուցման ասպարե-

¹²⁶ Պետք է ավստոսալ, որ Թաուլիը, շատ ազատ շտիրապետելով հայերենին, հիմնականում թարգմանել է Անանյանի այն պատմվածքները, որոնք Մոնկվայում լույս են տեսել Ֆրանսերեն («Oeuvres et Opinions» և այլ հանդեսներում), առանց հաշվի առնելու հեղինակի հետագա վերամշակումները։ Այսպես, «Սպիտակ առաջնորդի» վաղ խմբագրության ֆրանսերեն թարգմանությունն է հիմք վերցվել, անտեսելով «Լեռնային կածաններով» հատորի համար կատարված վերամշակումը։ Այն բոլոր դեպքերում, երբ թարգմանիչը տքնությամբ հակվել է հայերեն բնագրի վրա (ինչպիսին է «Մահից հզորը» պատմվածքի պարագան), ապա ստացվել է Անանյանի լեզվին ու ոճին համահունչ արարքերն բնագիր։

¹²⁷ 1970 / 11 / 7 «الاخبار» Երոտ

¹²⁸ Մեր նշանաբանն է հառաչ, 6.12.1964, «Սովետական Հայաստան» 9.1.1965։

դում հայ պատանիների անտարբերությունը բխում է դասատուի հետ հաղորդվելու դժվարությունից, հալիլին որոշել է նախ հայերեն սովորել և ապա արաբերեն սովորեցնել¹²⁹։ «Հայ լեզվի միջոցով,—ասել է նա հետագայում,—իմ առջև բացվեցավ հայ ժողովրդի հոգևոր մշակույթի հարուստ գանձարանը, հայ ժով գրականությունը։ Երբեք չէի կարծեր, որ հայ գրականությունը այսքան հարուստ է։ Սկսա ավելի ու ավելի խորանալ հայ լեզվի ուսումնասիրության մեջ, սկսա նույնիսկ գրաբար լեզվով կարդալ հայ հին գրականությունը։ Եվ այսպես, ճանչցա հայ բաբի, խաղաղասեր, և տաղանդավոր ժողովուրդը, որոն բազմաթիվ բեկորները մեծ եղեռնին հետո ապաստան գտան արաբական երկրներում մեջ և մինչև այսօր բարեկամաբար կապրին արաբ ժողովրդի կողքին»¹³⁰։

Ն. հալիլին սիրիական նոր գրականության ծանոթ դեմքերից է։ Նրա ստեղծագործական վաստակը բաղկացած է բանաստեղծություններից, պատմվածքներից և երգիծական էջերից¹³¹։ Նրա արձակը և հատկապես երգիծանքը կրել են հայ գրողների և առանձնապես Հ. Պաբոնյանի բարերար ազդեցությունը։ «Օսման աղայի արկածները Արուստի կղզում» վիպակում, օրինակ, ակնբախ է Մուրիհի մի շարք կատակերգությունների և հատկապես Պաբոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» ազդեցությունը, մի բան, որ հեղինակը խոստովանել է իր աշխատության առաջաբանում¹³²։

Հայ և արաբ ժողովուրդների գրական կապերը աշխուժացնելու առաքելությանը զինվորագրված Ն. հալիլին սկսել է արաբական գրականությունից պատմվածքներ թարգմանել հայերենի։ Նա Հալիլի «Արևելք» օրաթերթում և «Երկիր» հանդեսում պարբերաբար հանդես է եկել նաև արաբ գրողների մասին ինքնուրույն հոդվածներով։

Սկզբնական շրջանի նրա աշխատանքի հետաքրքիր կողմն այն է, որ հայ ընթերցողների մոտ արաբական գրականության նկատմամբ հետաքրքրությունը խորացնելու մտահոգությամբ, նա իր ուշադրությունը կենտրոնացրել է այն գրողների վրա, որոնց

¹²⁹ «Նայիրի», 13.10.1963, էջ 8։ «Սովետական Հայաստան», 1964, № 7, էջ 34—35։

¹³⁰ «Հայրենիքի ձայն», 15.5.1966։

¹³¹ «Արարատ գրական», 15.6.1954, էջ 10։ «Երկիր», 1959, Ա հտ., էջ 31։

¹³² «نزار الغليل، مغامرات عثمان، آغا في حاضرة أرواد، حنب، ص ٥٤»

կլանքն ու գործը այս կամ այն կերպ առնչվում են հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ¹³³,

Համոզված լինելով, որ «մշակութային կապը տարբեր ժողովուրդները մոտեցնող ամենակարևոր ազդակներն են մեկն է» և քաջալերված իր սկսած գործի դրական արդյունքներից, հալիլին ձեռնարկել է հայ դրականությունը արաբներին ծանոթացնելու աշխատանքին, 1956 թ. հրատարակության հանձնելով Գր. Զոհրապի «Երջանիկ մահը» նովելը¹³⁴, Արաբ մտավորականության շրջանում Զոհրապի գործի թարգմանության առաջ բերած բուռն հետաքրքրությունը հալիլին մղել է մեկը մյուսի ետևից լույս ընծայելու Բաֆ-ֆուց և Հ. Թումանյանից մի շարք պատմվածքներ ու հեքիաթներ, ինչպես նաև Ալ. Շիրվանզադեի «Նամուսի» հապավումը¹³⁵:

հալիլին 1961 թ. թարգմանում է Հ. Շիրազի «Սիամանթո և հջեզարե» պոեմը, սկզբում արձակ, և լույս ընծայում լիբանանյան «Ալ վուրուտ» շաբաթաթերթի նույն տարվա համարներում, իսկ 1962 թ. վերամշակելով հրատարակում առանձին գրքով, «Սիամանթոյի և հջեզարեի սիրո պատմությունը» խորագրով¹³⁶:

Ինչպես ամեն մի երախայրիք, հալիլի առաջին թարգմանությունը ևս ունի որոշ թերություններ: Գործի ձեռնարկելիս թարգմանիչը գիտակցել է, որ իրեն համար «դժվար է տալ պոետի վարպետության ամբողջ ուժը»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով մանավանդ թարգմանության տաղաչափման գործում Շիրազի ժողովրդական բառ ու բանին դավաճանելու վտանգը, մի շարք, տեղերում պոեմին տվել է արձակ բանաստեղծության և նույնիսկ արձակի երանգ¹³⁷:

Հ. Շիրազի սիրավեպի ընտրությունը ամենևին էլ պատահական չի եղել: հալիլին, իր առաջաբանում հեղինակի կենսագրություն-

¹³³ Տե՛ս Ն. հալիլի «Ապտուրահման Քաուաքիպի» («Արևիկ», 2.12.1959) և «Հաֆեզ Իպրահիմ» («Երկիր», 1959, Ա հատոր, էջ 32—34) հոդվածները:

¹³⁴ ١٩٥٦/٧/١٩ «الوطن» 'حلب'.

¹³⁵ «Արարատ գրական» 15.6.1964, էջ 10—11:

¹³⁶ «اوهانس شيراز، حكاية حب سيامنتو و خجزاره، ترجمة نزار خليلي، بيروت».

¹³⁷ հալիլին, կատարելագործելով իր թարգմանությունը և վերացնելով «Սեմանթո» հրատարակչատան կամայական «սրբագրումները», պոեմը նախապատրաստել է երկրորդ հրատարակության («Հայրենիքի ձայն», 15.5.1966), որը լույս է տեսել Հալեպում 1967 թ., թարգմանչի «Եվ եղև լույս» խորագրով կրող առաջաբանով (որը տե՛ս «Սովետական Հայաստան», 21.6.1967: «Հայրենիքի ձայն», 21.6.1967: «Գրական թերթ», 28.7.1967):

ներ շարագրելիս և նրա գրական գործունեությունը ուրվագծելիս, առաջին հերթին շատ բարձր գնահատական է տվել սովետահայ բանաստեղծի՝ կերպարներ և կոնֆլիկտներ ստեղծելու արվեստին, շմոռանալով շեշտել, որ ժամանակն է այլևս արաբ ընթերցողների սեղանին դնելու ոչ միայն արևմտաեվրոպական աշխարհաճանաչ ստեղծագործությունները, այլև արևելյան բարեկամ ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի գրական գոհարները, որոնց հեղինակները՝ հատկապես իրենց աշխարհազգացողությամբ, Արեւիկայի դավակ» են¹³⁸։

Բայց ոչ միայն այդ, հալիլին իրավամբ ընդգծել է նաև, որ «Սիրամանթո և Խընդարե» պոեմի թարգմանությունը ճանաչողականից բացի ունի և այլ նշանակություն։ Պոեմի հերոսների կյանքն ու կենցաղը, նրանում պատկերվող բարքերը այնքան մոտ են ու հարագատ արաբներին, որ գործը նրանց համար ունի և դաստիարակչական կարևոր նշանակություն։ Խալիլի կարծիքով, իր կողմից արաբ զրասեր հասարակայնության մատուցվող պոեմի առանձնահատուկ արժեքը կայանում է նրանում, որ այն «կենդանի պատկերն է մեր հասարակության համար էլ բնորոշ այն բուռն պայքարի, որը գնում է ավատապետների և ֆելլահների, անարդարության և ազատության, սիրո և ատելության միջև, դասակարգային շահերի ուստայնում արգելափակված բռնակալ հոր և իր ազատ ու մաքուր սիրո պսակման ձգտող դստեր միջև»¹³⁹։

Շիրազի սիրավեպի թարգմանությունը խիստ նպաստավոր ընդունելություն է գտել արաբ ընթերցողների լայն շրջաններում և օգնել է ավելի ամբողջական պատկերացում կազմելու սովետահայ գրականության մասին։ Արաբ քերթող Աբբաս Մեհդի Ղզեմի կարծիքով, այն հիմք է տալիս համոզվելու, որ «հայկական քնարերգությունը հասած է գազաթնակետի մը և կգերադասե իր պատկերավոր իրապաշտությամբ արևմտյան քնարերգությունը... որովհետև ընթերցողը կկլանվի և կապրի զգացումներու և մտածումներու աշխարհին մեջ ու այս բոլորը Շիրազին պես, Շիրազին հետ»¹⁴⁰։

¹³⁸ اوھانس شیراز، حذبة حب سیامتو و خجہ زاده، ص ۷ - ۸

¹³⁹ Նույն տեղում, էջ 7: Խալիլին «Սիրամանթո և Խընդարեից» հետո ձեռնամուխ է եղել Շիրազի «Բիրիական» պոեմի թարգմանությանը (տե՛ս «Սովետական Հայաստան», 21.6.1967)։

¹⁴⁰ Ապպաս Մեհմի Ղզեմ, Վկայություն մը Շիրազի սիրավեպի մասին. «Սփյուռք», 31.12.1961, էջ 37 (նույն տեղում տե՛ս նաև հոդվածի արաբերենը՝

وقفه على كتاب حكاية حب للشاعر الازمني شیراز

Պոեմի հեղինակը՝ Հ. Շիրազ, լավագույնս բյուրեղացրել է արար թարգմանչի գործի նկատմամբ հայ ժողովրդի գնահատականը, ն. հալիլի «Ոսկե գրիչը» անվանելով «կամուրջ հայ և արաբ ժողովուրդների միջև»¹⁴¹:

1963 թ. նիզար հալիլին արաբ ընթերցողների սեղանին դրեց արդեն կատարյալ մի գործ՝ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» հանճարեղ երկի թարգմանությունը, Ալ. Սարուխանի ծաղրանկարներով ճոխացված շքեղ տպագրությամբ¹⁴²: Իր նոր աշխատանքում թարգմանիչը հնարավորություն է ունեցել դրսևորելու երկու լեզուներին էլ լավապես տիրապետելու իր արժանիքը, գրական ճաշակն ու նրբամտությունը, Պարոնյանի սրաբանությունները արաբական համարժեքներով փոխարինելու հմտությունը: Հակառակ այս բոլորին, հալիլին, որի համար ինքնաբավականությունը երբեք բնորոշ չի եղել, իր թարգմանությունը վստահել է այնպիսի մի հեղինակավոր արաբագետի և տաղանդավոր գրողի խմբագրման, ինչպիսին հալիլ Հինդաուին է, որին էլ ձեռնված է գիրքը: Իսահակյանի թարգմանիչ Բ. Չաթոյանի վկայությամբ, հալիլի թարգմանությունը «լավագույնն է, որ ցարդ ունեցած ըլլանք»¹⁴³:

Թարգմանին իր առաջարանում շեշտելով, որ «այս հին գիրքը չի հնացել», առանձնապես կանգ է առել հայ մեծ երգիծաբանի՝ օսմանյան բռնատիրական կարգերի և հայ հետադիմության դեմ աներկյուղ և աննահանջ պայքարի փաստի վրա: Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչու հալիլին Պարոնյանի գործի թարգմանությունը ևս, ինչպես Շիրազի սիրավեպին, ճանաչողական արժեքի հետ տվել է և դաստիարակչական կարևոր նշանակություն, գտնելով, որ հայ հեղինակի՝ իր ժամանակակիցների հոռի բարքերը հեղաշրջելու ձգտումը կարող է վարակիչ լինել և սիրիական արաբ ժողովրդի համար, որպեսզի ձերբազատվի օտար տիրապետողներից «ժառանգություն» մնացած ծիծաղելի և ապանքի ռարքերից:

«Մեծապատիվ մուրացկանները»,—գրել է հալիլին,—իրենց թեմայով մի ժողովրդի, մի տեղի և մի ժամանակի համար բնորոշ

¹⁴¹ «Սփյուռք», 8.3.1962, էջ 1:

¹⁴² هاكوب باروتيان، المتسولون الشرفاء، ترجمة نزار الغزيلي، مراجعة خليل الهنداوى، حلب.

¹⁴³ «հալիլի», 13.10.1963:

լեն, նրանց հերոսներին կարելի է հանդիպել ամեն տեղ և ամեն ժամանակ, միայն անունները փոխելով»¹⁴⁴,

Կարելի է ասել, որ «Մեծապատիվ մուրացկանների» արաբներեն թարգմանությունը եղել է կարևոր մի սահմանանիշ հայ-արաբական դրական կապերի աշխուժացման ճանապարհին, որովհետև այն՝ արար մտավորականությանը համոզել է այն բանում, որ հայ դրականությունը չհետադուստված մի գանձատուն է, որտեղ յուրաքանչյուրը կարող է հայտնադործումներ կատարել: Բավական է ասել, որ Բեյրութի «Ալ-Հայաթ», Դամասկոսի «Ալ-Մաարիֆ» և շատ ուրիշ թերթերի գրական քննադատները համաձայն են եղել դրականագետ Սալահ Մունաջջադի հետ պնդելու, որ Հակոբ Պարոնյանը «հանճարեղ երգիծաբան մըն է», և նրա գործը «կրնա մրցիլ միջազգային հռչակ վայելող որևէ հեղինակի ստեղծագործության հետ»¹⁴⁵,

Պարոնյանի ստեղծագործության թարգմանությունը արաբներենի՝ որակական սահմանանիշ հանդիսանալով հանդերձ հայ-արաբական դրական կապերի զարգացման կորագծում, մնում էր սակայն անհատական նախաձեռնության արգասիք: Սահմանաշիջ դեպի հայ-արաբական մտավոր-մշակութային առնչությունների շեշտավորման նոր փուլի անցումը ազդարարող գործ եղավ սիրո և եղբայրության երգիչ Սայաթ-Նովայի տաղերի լույս ընծայումը արաբերեն լեզվով:

Նվ իրոք, խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ՝ 1963 թ. Սայաթ-Նովայի 250-ամյակը նշելու կապակցությամբ, Լիբանանի հայ և արաբ դեմոկրատ մտավորականությունը՝ «Հառաջ դրականի» գրողներն ու «Աթ-թարիկ» հանդեսի խմբագրությունը, պրոֆ. Մ. Հասրաթյանն ու Ս. Աքլը, Ա. Դարյանն ու Ռ. Խուրին, Մ. Սլեյմանը և մյուսները միասնաբար գործի լծվեցին հայ մտքի ամենափառավոր հաղթանակներից մեկի հետ արաբներին հաղորդակցելու համար:

«Գրական հառաջ» ու «Աթ-թարիկը» գրեթե միաժամանակ բացահայտեցին այդ համագործակցությունը, առաջինն իր հոկ-

بارونمان، «مجتسولون الشرفاء» ص ٦ ١٤٤

¹⁴⁵ «Սփյուռք», 31.12.1964: Մամուլը հավաստում է (տե՛ս «Արարատ գրական», 15.6.1964: «Հայրենիքի ձայն», 15.5.1966), որ Խալիլին թարգմանել է նաև Գ. Սունդուկյանի «Պեպո» և Ե. Օտյանի «Զաբլըլը Արթին աղա» պիեսները, Գր. Զոհրապից 12 նովելներ և Գ. Սևունցի «Թեհրան» վեպը, որոնք անտիպ են մնում ցարդ:

տեմբեր-նոյեմբեր միացյալ համարում լույս ընծայելով «Իդրար ու ամագ շունեցող յարի ձեռնեմեն», «Մե իոսք ունիմ իլթիմազով», «Ձեռքը չի կանա խմի» տաղիկների արաբերեն թարգմանությունը¹⁴⁶, իսկ երկրորդը՝ Մ. Հասրաթյանի ընդարձակ մի ուսումնասիրության հետ, «Ուստի կուգաս» տաղի թարգմանությունը¹⁴⁷։ Ավելի ուշ, սակայն արտակարգորեն շքեղ (Սայաթ-Նովայի անվան հետ կապված մատյանների մեջ ամենաշքեղը հավանաբար) հրատարակության, 1965 թ. Գրական Շրջանակի նախաձեռնությամբ և բանաստեղծ Ս. Աբլի առաջաբանով լույս տեսավ Սայաթ-Նովայի արաբերեն տաղարանը, որի թարգմանությունը հիմնականում կատարել էին արձակագիր Ա. Դարյանը, գրող Ռ. Խուրին և բանաստեղծ Մ. Սլեյմանը համագործակցաբար¹⁴⁸։

Հատընտիրն ամփոփում էր 12 հայերեն, 6 աղբյուրներն և 6 վրացերեն տաղեր, Վ. Բրյուսովի և Հ. Թումանյանի ասույթները Սայաթ-Նովայի մասին, ինչպես նաև ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանի ընդարձակ ուսումնասիրությունը, որը նախկինում երկու անգամ լույս էր տեսել «Աթ-թարիկ» հանդեսում¹⁴⁹։ Իր սեղմ, բայց բովանդակալից առաջաբանում, Ս. Աբլը հանուն արաբ մտավորականության ջերմ տողերով, ողջունել է քերթողությունը խոսքի և երգի կախարդ սիրերգակի, «որի երգերը հացն էին մեծատունին ու աղքատին հավասարապես»։

Արաբերեն հատընտիրը արաբական մշակութային շրջաններում աննախընթաց արձագանք գտավ։ «Ալ-Ջարիդայի» տնօրեն Ռիադ Հոնեյնը թերթի գրական հավելվածում գրում էր, որ հայ քնարերգության «մեծ ծաղկաստանի» ղզլիխ բույրերից՝ Սայաթ-Նովայի «տաղերից բարձրանում են սիրո բոցեր, որոնք ցնցում են իրենց անկեղծությամբ և վարպետությամբ, որոնց մեջ ղզում են ժողովրդի շունչը՝ ըմբոստությունը ընդդեմ անարդարության, պաշտպանությունը անիրավածների, տառապալի պայմաններից ծնված ցավատանջ ճիշեր, և այդ բոլորը՝ հենց սրտի կաղապարում ձուլված, մաքուր ու քնքուշ մարդկայնությամբ օծուն»¹⁵⁰։ Գրականագետ Սալահ Մունաջջադը շատ բարձր գնահատական տալով Սա-

¹⁴⁶ «Գրական հառաչ», 5.12.1963, էջ 6—7։

¹⁴⁷ «الطريق», بيروت ١٩٦٣، العدد ٩، ص ٥٠.

¹⁴⁸ قصائد سيايات زوفا، بيروت ١٩٦٥.

¹⁴⁹ «الطريق», بيروت ١٩٦٣، العدد ٩، ص ١٠.

¹⁵⁰ «الجريدة», بيروت ١٩٦٥/٦/٢٠.

յաթ-նովայի տաղերին, իր հիացմունքն էր հայտնում ի տես նրա «արևելյան, պիտի ասեի արաբական ոգուն»¹⁵¹, «Ան-նահար» օրաթերթի դրական հավելվածը մի ամբողջ էջ էր տրամադրել հայ երգչին, հատընտիրից արտատպել նրա տաղերից հինգը և էդմոն Սաաբի գրչով պատկերավորությամբ նշել. «Մի քանի օր առաջ Բեյրութ ժամանեց անդրկովկասյան մի ձայն, որի տերը հայ է առանց յան-ի, որի տարիքը երեք դարից քառորդ է պակաս, լեզուն՝ հայերեն է, վրացերեն և ադրբեջաներեն, իսկ անունը՝ Սա-յաթ-նովա»¹⁵², Գրող Մոհամմեդ Ալտանին, «Թանկագին հուլզերի բանաստեղծը» խորագրի ներքո նշում էր. «Սալաթ-նովան հենց սկզբից եղել է համայնասեր բանաստեղծ, որովհետև նույն զորությամբ, հանճարի միևնույն ուժգնությամբ երգել է անդրկովկասյան երեք ժողովուրդների լեզուներով: Իր տաղերը, իրականում մշտապես ուղղված են մարդուն, բոլոր մարդկանց: Նրա ներշնչող և նրբագեղ տաղերը մեղի մատնացույց են անում մի մեծ բանաստեղծի, և սրտազեղ, աշխատասեր, ճաշակի և տաղանդի տեր մի ժողովրդի՝ հայ ժողովրդին»¹⁵³:

Հայ-արաբական դրական կապերի զարգացման նոր աստիճանաչափը դրսևորվեց մանավանդ հայ ժողովրդի հանճարեղ զավակի՝ Հ. Թումանյանի հարյուրամյա հոբելյանի առթիվ:

Բեյրութի «Աս-Սակաֆա ալ-ուաթանիա» ամսագրում և «Ալ-Ախբար» շաբաթաթերթում Ն. Թաուիլը ռուսերենից արաբերենի թարգմանեց «Ոսկու կարասը» և «Ձախորդ Փանոսը»¹⁵⁴, խմբագրական ծանոթագրությամբ ընդգծելով, որ «Սովետական Միությանում և ամբողջ աշխարհում մեծ շուքով նշվելու է հանճարեղ բանաստեղծի հոբելյանը»: «Աթ-թարիկ» հանդեսում 1970 թ. լույս ընծայվեց «Անուշի» թարգմանությունը Մ. Դակրուբի մի հոդվածի ուղեկցությամբ, որտեղ զուգահեռ էր անցկացվում «հայ ժողովրդի սովորությունների և ավանդությունների հանրագիտարան» պոեմի և արաբական «Լեյլա ու Մեջնունի» միջև¹⁵⁵:

¹⁵¹ 1970 / 6 / 2. «الحياة» بیروت.

¹⁵² 1970 / 6 / 2. «النهار» بیروت.

¹⁵³ 1970 / 7 / 4. «الاخبار» بیروت.

¹⁵⁴ «ثقافة الوطنية» العدد 19, 1979 و «الخبز» 1979 / 9 / 28. Տե՛ս 1971 թ. սկզբներին Ն. Թաուիլը հրապարակ հանեց Թումանյանի պատմվածքների և հեքիաթների մի առանձին ժողովածու՝ Մ. Նալիմեի առաջաբանով (տե՛ս «Դրական թերթ», 19.11.1971):

¹⁵⁵ 1970. «الطريق» العدد 1.

Սակայն այն, ինչ Հալեպում թարգմանիչ նիզար խալիլին և նրա հայ բարեկամները կատարեցին, վեր էր ամեն ակնկալությունից: Արդարև, 1968—1969 թթ. մեկը մյուսի ետևից գեղատիպ ու նկարազարդ առանձին գրքույկներով արաբերեն հրապարակ հանվեցին «Քաշ Նազարը», «Մի կաթիլ մեղրը», «Սասունցի Դավիթը», «Անուշը», «Ոսկու կարասը», «Գառնիկ ախպերը», «Գիքորը», «Զախորդ Փանոսը», «Շունն ու կատուն» և «Զախ-Զախ թագավորը»¹⁵⁶:

1970—1971 թթ. արաբ ընթերցողների սեղանին առանձին գրքերով դրվեցին նաև Դ. Վարուժանի «Հացին երգը»¹⁵⁷, Ա. Իսահակյանի «Երգեր ու վերքերը»¹⁵⁸ և Ե. Օտյանի «Ընկեր Փանջունին»¹⁵⁹, որոնցում բնագրի թարգմանության հետ առաջին լուրջ փորձերն արվեցին բնութագրելու հայ գրողների կյանքի և ստեղծագործության ուղին¹⁶⁰:

Հայ գրականությունը արաբներին ծանոթացնելու գործում զգալի ավանդ է ներդրել լիբանանահայ հայտնի լրագրող Հ. Աղբաշյանը: Նա հայ գրականության նվաճումները կանոնավորաբար մատուցել է արաբ մշակութային գործիչներին և հայ դպրության հետ կապված հարցերի գծով եղել է հատկապես Օ. Ֆախուրիի մշտական խորհրդատուն: Նա գրականագիտական լուրջ հոդվածներով հանդես է եկել արաբական գրական մամուլում, ինչպես, օրինակ, «Իսահակյան՝ բանաստեղծը որին կորցրեց հայ գրականությունը», «Մեսրոպ Մաշտոց՝ հայկական այբուբենի ստեղծիչը», «Ռուբեն Զարդարյան» և այլն¹⁶¹: Հ. Աղբաշյանը միաժամանակ կարևոր աշխատանք է կատարել արաբական գրականությունը հայերին ծանոթացնելու ուղղությամբ, ինչպես թարգմանությունների, այնպես էլ բովանդակալից հետազոտությունների միջոցով: Նրա

156 «اوهانس تومانيان»، «قطرة عسل»، «جرة الذهب»، «الآخ الجدوى»، 1979-1978 حلب - أنوش، «دافيد الصاموني»، «ناظور، شجاعة»، و «أحنج - حلب 1978-1979»

157 Հալեպ, 1970 թ., թարգմանիչ՝ Ն. Նազարյան:

158 Հալեպ, 1971 թ., թարգմանիչ՝ Մ. Պետրոսյան:

159 Բեյրութ, 1970 թ., «Ան-Նահաթ» հրատարակչություն:

160 Արաբներն այս թարգմանությունների շարքում թյուրիմացություն պետք է համարել հետադեմ քաղաքական գործիչ Արամ Սահակյանի (Լութեր) շնորհադուրկ «Մահվան պես զորավոր» մեկոդրաման, որ հեղինակի իսկ պատվերով ու ծախսով 1949 թ. Ժ. Քազրազյանի կողմից արաբերենի է վերածվել և հրատարակվել:

161 «الطريق»، العدد 11-12 / 1971 و «الثقافة الوطنية»، العدد 11-12 / 1971-1970

գրչին են պատկանում Ֆախուրիի մասին հայ գրական հանդեսներում լույս տեսած առաջին հատալից հոդվածները, «Արաբական ազգային-ազատագրական շարժման զարթոնքը» մենագրությունը, մի շարք ուսումնասիրություններ արաբական վերածնունդի շարժման, արաբական մամուլի պատմության, արաբական պատմվածքում պատերազմի թեմայի, իբն Թուֆեյլ ալ-Անդալուզիի և այլոց մասին, ինչպես նաև բազում թարգմանություններ Ֆախուրիից, Աբբուդից, Նայիմից, Թուֆեյլ Անուդից և ուրիշներից:

Եվ սակայն Հ. Ազբաշյանի առավել հիշարժան արժանիքը հայ դրականության մի շարք արժեքավոր էջեր արաբ ընթերցողների սեղանին դնելու մեջ է կայանում: Առաջինը նա է, որ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» ծանոթացրել է արաբ գրասերներին՝ թարգմանելով գրքի առաջին դրուխը և լույս ընծայելով «Աս-Սակաֆա ալ-Ութանիա» հանդեսում: Նրա թարգմանությամբ են արաբները ընթերցել նաև Բ. Զարդարյանի «Մարդը չէր մեռնել» հեքիաթը, Ա. Իսահակյանի «Հորս արորը», Հ. Թումանյանի «Քաջ Նադարը», Ե. Զարենցի «Բալլադ Լենինի», մուժիկի ու մի զույգ կոշիկի մասին» և այլ գործեր¹⁶²:

Հայ գրականությունը արաբներին ծանոթացնելու բնագավառում հիշարժան աշխատանք է կատարել նաև «Հայկական մշակույթի և գրականության պատմություն» արաբերեն հատորի հեղինակ Գ. Ասթարճյանը: Հակառակ իրաքում հեղինակված և լույս ընծայված լինելուն (տպ. Մուսուլ, 1954 թ.), այդ աշխատությունը մեզ համար հետաքրքրական է առաջին հերթին այն պատճառով, որ Ասթարճյանը հիսունական տասնամյակի երկրորդ կեսից տեղափոխվել է Լիբանան և այնտեղ ևս իր մասնակցությունն է բերել հայ-արաբական մշակութային կապերի զարգացմանը, արժանալիով Դամասկոսի արաբական լեզվաբանական կաճառի գլխավոր քարտուղար Զաաֆար ալ-Հասանիի դրվատանքին¹⁶³: Նրա թարգմանությամբ, իրոք, «Աս-Սակաֆա», «Ալ-Հիքմա», «Ալ-Ադիբ» և «Ան-Նասիր» հանդեսներում լույս են տեսել Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի և Մ. Զարիֆյանի մի շարք քերթվածներ¹⁶⁴, նրա գրքից վերցված հատվածով է Ս. Մունաշչադը «Ալ-Հայաթի» ընթերցողներին ծանոթացրել Զ. Եսայանի «Դերվիշի» հետ¹⁶⁵:

¹⁶² «الثقافة الوطنية» العدد ٤ - ١٩٥٨، العدد ٢ - ٩ - ١٩٥٩، «الطريق» العدد ١١ - ١٩٥٩، «النداء» ١٩٦٢ / ٤ / ٢٩

¹⁶³ «Ափյուղը», 15.3.1962:

¹⁶⁴ Նույն տեղում, 6.2.1963:

¹⁶⁵ Նույն տեղում, 31.12.1964:

Գ. Ասթարճյանի հիմնական երախտիքը, սակայն, այն է, որ առաջին փորձն է կատարել ծավալուն մի գրքով հայ մշակույթի և գրականության պատմությունը արաբ ընթերցողի սեղանին դնելու¹⁶⁶։ Ժիշտ է, աշխատությունը մատնում է հեղինակի ակնհայտ անձեռնհասությունը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի պատմությունը գիտական քիչ թե շատ տանելի մակարդակով, չափի զգացումով և անկողմնակալ բարեխղճությամբ շարադրելու ասպարեզում, այնուամենայնիվ չի կարելի չընդգծել այն հանգամանքը, որ առաջին անգամ լինելով Մաշտոցի և Սահակ Պարթևի, Կողբացու, Խորենացու, Կորյունի, Ծղիշեի, Շիրակացու, Նարեկացու, Շնորհալու, Ֆրիկի, Քուչակի, Հերացու, Գոշի, Այգեկցու և դեռ բազմատասնյակ հայ ուրիշ մշակութային ու գրական հին ու նոր գործիչների անունն ու գործը Ասթարճյանի կողմից են մատուցվել արաբ գրասեր հասարակայնությանը։ Գրքի մեկ այլ արժանիքը կայանում է նրանում, որ մեր միջնադարյան տաղերգուների և հատկապես նոր դրականության տասնյակ երևելի դեմքերի արձակ և չափածո գործերից տողացի թարգմանություններով նա արաբ ընթերցողներին նախաճաշակն է տվել հայ դպրության հարուստ գանձարանի։

Հայկական դպրոցների արաբերենի դասատու Հուսեյն Զերբեզի և երիտասարդ գրասեր Ա. Տոնոյանի համագործակցությանն ենք պարտական հայ գրողներից մի շարք բանաստեղծությունների և պատմվածքների թարգմանությունը արաբերենի։ Նրանք հրատարակել են Դ. Վարուժանի «Դիակին սայլը» և «Ցանը», ինչպես նաև Հ. Թումանյանի «Գիբորը», երկու հայ գրողների կենսագրական գծերի հետ։ Մամուլը նրանց անվան հետ է կապում նաև Սիամանթոյի «Խեղդամահ», «Պարը» և «Ըս երգելով կուզեմ մեռնել», Պ. Դուբյանի «Իմ մահը» և «Տրտունջ», Հ. Թումանյանի «Ճախարակ», «Հին օրհնություն» և «Տրտմության սաղմոսներ», Ա. Իսահակյանի «Պանդուխտ որդին», «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Թագավոր» և «Կտակ», Դ. Վարուժանի «Առկայծ ճրագ», «Ջարդը» (հատված) և «Լույսը» քերթվածների թարգմանությունը¹⁶⁷։

Հայկական դպրությունից արաբերենի առանձին թարգմանություններ են կատարել նաև Խալիլ Հինդաուին և Ալի Բադդուրը՝ հայ

Կ. Լ. استارجيان، تاريخ الثقافة والادب الارمني (من القرن 166
الخامس إلى أواخر الربع الأول للقرن العشرين)، الموصل 1954

167 Տե՛ս «Այգ», 9.10.1956 և 29.4.1957, «Արևիկ», 3.5.1957:

դորժակիցների օժանդակությամբ, իսկ հայերից Արսինե Դարյանը, Ն. Նազարյանը, Ս. Բալուլյանը և ուրիշներ¹⁸⁸։

* * *

Իրկրորդ աշխարհամարտի տարիներին աճի նախնական հուն գտնելով՝ հետպատերազմյան ժամանակաշրջանում ուշագրավ վերելք ապրեցին հայ և արաբ ժողովուրդների ոչ միայն գրական կապերը։

Իրենց տնտեսական բարօրության, իրենց ազատ կյանքի համար հայ և արաբ աշխատավորների համատեղ պայքարով, այդ պայքարը գլխավորող արաբական և հայկական առավոր կազմակերպությունների և առաջադեմ մտավորականության անդուլ ջանքերով ամրապնդված հայ-արաբական բարեկամության ակունքներից ծնվում և զարգանում էին նաև արվեստի, գիտության ու այլ բնագավառների հայ-արաբական առնչությունները։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1

Ֆրանսիական մանդատի ժամանակահատվածն, անշուշտ, արաբական ազգային մշակույթի զարգացումը խափանել ջանացող բոլոր արգելակներով հանդերձ, Սիրիայի և Լիբանանի համար այնքան մթին չեղավ, որքան օսմանյան տիրապետության շրջանը։

Սակայն երկու երկրները մշակութային զարգացման ճանապարհին լուրջ քայլեր կարողացան առնել միայն ազգային անկախություն նվաճելուց հետո, հատկապես հետպատերազմյան երկրորդ տասնամյակից սկսած։

Սիրիայի և Լիբանանի ազգային դեմքը բարեզարդող մշակութային այդ առաջընթացին արաբների հետ իրենց բաժինը բերեցին նաև պատմական ճակատագրի բերումով Լևանտը իրենց երկրորդ հայրենիք դարձրած մի շարք փոքրամասնություններ, որոնց առաջին շարքերում անուրանալիորեն կանգնել էին հայ ժողովրդի սիրիա-լիբանանյան բեկորները։

¹⁸⁸ Տե՛ս «Արարատ գրական», 15.6.1954: «Մեր նշանաբանն է՝ հառաչ», 6.8.1961: «Նայիրի», 5.2.1961 ևն։

«Հայերը հանճարեղ ժողովուրդ մըն են: Չենք կրնար անտեսել մեր հայ եղբայրները մանավանդ իրաւանի վերածնունդի գործին մեջ ու գլխավորաբար արվեստի մարզին ներս»,—հայտարարել է լիբանանյան կուլտուրական շատ ու շատ միջոցառումների կազմակերպիչ Ժան Սքաֆը¹: «Հայերու իրաւան հաստատումը միայն բարիք եղած է մեզի համար, եղած է ներդրում և հարստացում: ...Հայերը նախ և առաջ արվեստի, մշակույթի անշահելի սերն է որ բերին իրենց հետ»,—իւր հերթին վկայել է անվանի գրող Սաիդ Աբլը²:

Պիտի խոստովանել, սակայն, որ նմանօրինակ հայտարարութիւններն ավելի շատ են առնչվում լիբանանահայութեան, քան թե սիրիահայութեան հետ: Եւ ոչ միայն հայտարարութիւնները: Արվեստի և գիտութեան մի շարք ասպարեզներում հայ-արաբական կապերը (ավելի ճիշտ կլինէր ասել՝ Սիրիայի և իրաւանի մշակութային վերելքին հայերի մասնակցութիւնը) պատկերելու համար տարբեր աղբյուրներից փաստեր քաղհանելիս ստացվող նյութը իր հիմնական ծանրութեամբ հակվում է Բեյրութի նժարի վրա, համեմատութեան ոչ մի եզր չթողնելով սիրիական, տվյալ դեպքում՝ Հալեպի նժարի հակման հետ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ գլխավոր պատճառը լիբանանահայութեան հիմնական զանգվածի՝ մշակութային իր եռուզեռով համբավված մայրաքաղաք Բեյրութում կենտրոնացված լինելն է, այն դեպքում, երբ սիրիահայութեան մեծագույն մասը բնակութիւն է հաստատել ոչ թե մայրաքաղաք Դամասկոսում, այլ զավառակենտրոն Հալեպում, որ Բեյրութի հայկական օջախում անընդմեջ լույս տեսած բազմաւուն և ծանրորակ մամուլը պահպանել է հայ-արաբական շփումների մասին վկայութիւնների կուլտեր, մինչդեռ Սիրիայում կարճատե ու կիսակաղ իրենց գոյութիւնը քարշ տվող հայկական մի քանի թերթեր նույնիսկ իրենց անմիջական շրջապատի հարազատ արձագանքը չեն բերել:

Այդ բոլորն, անշուշտ, չի դադարում ճշմարտութիւն լինելուց, բայց և միաժամանակ ճշմարտութեան հիմնական մասը չէ բնավ:

Ճշմարտութիւնը լրիւ բացահայտելուն կօգնի սիրիահայութեան և լիբանանահայութեան (հայ ժողովրդի թվականորեն գրեթե հավասար այդ երկու բեկորների³)՝ ազդային-քաղաքական, պատ-

¹ «Այգ», 19.7.1956:

² «Հայրենիքի ձայն», 12.11.1969:

³ Նկատի ունենք հետպատերազմյան առաջին տարիների թվաքանակը:

մա-աշխարհագրական և սոցիալ-տնտեսական համանման դիմագիծ ունեցող երկու երկրների մշակութային վերելքի գործում ունեցած մասնակցությանը զուգորդումը և քանակական ու մանավանդ որակական տարբերության բացահայտումը: Այդ ձևով ձեռք կբերվի հավելյալ մի հնարավորություն, ընդգծելու համար հայ ժողովրդի՝ ի սփյուռս աշխարհի ցրված զավակների կյանքի ու գործունեության բնորոշ մի կողմը. հայ գաղթօջախները իրենց ապաստան տված օտար ժողովուրդների հետ մշակութային սերտ աղերսներ են կնքել և նրանց ազգային մշակույթի զարգացման գործում իրենց ոսկեփայլ լուծման են ներդրել այն դեպքում միայն, երբ իրենց չեն ղլացվել հնարավորությունները՝ իրենց իսկ ազգային մշակույթը կատարյալ ազատության պայմաններում պահպանելու և զարգացնելու համար:

Այդ տեսակետից, իրոք, որ խիստ բնութագրական է Սիրիայի պարագան:

Հետպատերազմյան առաջին տարիների խաղաղ ու առաջընթաց խոստացող մթնոլորտը Սիրիայում 1949—1954 թթ. և 1958 թվից հետո միառժամանակ խաթարվեց քաղաքական վերիվայրումների հետևանքով, երբ ասպարեզից հեռացան հայ ժողովրդի պատմական անցյալին և նրա տարագիր զավակների խոհերին ու տրամադրություններին քաջատեղյակ պետական ու քաղաքական գործիչները և իմպերիալիստական շրջանների հետ կապված կամ ծայրահեղ ազգայնամոլ սպայական խմբավորումների արկածախնդիր գործունեությամբ սիրիահայության համար սկսվեց անհանգիստ և անորոշ մի ժամանակաշրջան:

Հայ համայնքի դեմ առաջին անարարյացակամ քայլերն արվեցին դեռ 1949 թ., Հուլիսի Զաիմի ռազմական հեղաշրջումից հետո, երբ խափանվեց հայկական առաջադեմ կազմակերպությունների գործունեությունը, փակվեցին մի շարք շրջանների հայկական դպրոցները, արգելվեց հայերեն թերթերի և մյուս հրատարակությունների լույս ընծայումը⁴:

Բռնատիրական աթոռը խլող Ագիբ Շիշակլիի օրերին խորացավ սիրիահայության տագնապար: 1951 թ. հրամանագրված այնպիսի մի «անմեղ» միջոցառում, ինչպիսին վաճառատների և արհեստանոցների ցուցատախտակներից հայերեն արձանագրությունների վերացումն էր⁵, որպես առաջիկա ավելի խիստ ու լուրջ տրն-

⁴ «Սուրիա», 28.4.1950:

⁵ «Մեր նշանաբանն է հառաչ», 25.7.1959:

տեսական ճնշումների հուշարար, այնքան խորը խուճապի մատ-
նեց հալ գործարար շրջաններին, որ նրանք հետամուտ եղան իրենց
դրամագլուխների շահարկման կամ իրենց շնորհների կիրառման
համար ասպարեզ որոնել լիբանանյան շատ ավելի ապահով ու
ձեռնտու հրապարակում:

Այս դեպքում, սակայն, կարևորը սիրիական բռնակալների
միջոցառումների՝ սիրիահայ մշակութային կյանքի վրա ունեցած
անխուսափելի անդրադարձն է, որի մասին ամերիկահայ դեմոկ-
րատ գրող Ա. Անդրեսայանը, մերձավորարևելյան շրջապատույտից
իր տպավորությունները ամփոփելով, դառնությամբ արձանագրել
է. «Նախորդ բռնատիրական վարչությանց ճնշումներն ու հալա-
ծանքները բնականորեն քայքայիչ ազդեցություն գործեցին հալե-
պահայ մտավորական դասին վրա: Սուրիո մեջ ստեղծված ահա-
բեկիչ մթնոլորտը հարկադրեց հայրենասեր մտավորականներին,
որ հեռանան երկրեն կամ ամփոփվին սահմանափակ շրջադժե մը
ներս»⁶:

Հիսունական տասնամյակի կեսերին հանրապետական վարչա-
կարգի վերահաստատումը որոշ անդորրություն և ապահովություն
բերեց սիրիահայությանը: Նույնիսկ 1956 թ., երբ արաբական եր-
կրոնների գործերին իմպերիալիզմի լկտի միջամտությունը հետա-
դեմ շրջաններին օգնում էր օտարառայաց կրքեր բորբոքելու ժողո-
վրդի խավարամիտ շրջաններում և վերջիններիս հուզումների
թափը արձագանք էր գտնում մինչև անգամ կառավարող բուրժուա-
կան վերնախավերում, հայերի նկատմամբ վերստին կիրառման
դրված բարյացակամությունը չխախտվեց:

Ծգիպտոսի դեմ եռյակ նախահարձակման, սիրիական սահ-
մաններում թուրք-իսրայելյան սպառնալիքի, լիբանան և Հորդա-
նան անգլո-ամերիկյան ներխուժման և իրաքյան հեղափոխությու-
նը ճնշելու փորձերի, մի խոսքով իմպերիալիզմի դեմ արար ժո-
ղովուրդների պայքարի աննախադեպ սրման պայմաններում
(1956—1958 թթ. և այնուհետև) դաշնակ ղեկավարների բացա-
հայտ պրո-իմպերիալիստական դիրքորոշումը⁷ երկնառաք զենք

⁶ Ա. Անդրեսայան, *Տպավորություններ Մերձավոր Արևելքի հալ գաղութներին*,
«Զարթոնք», 10.10.1954:

⁷ Տե՛ս Ա. Խուշուպյան, նշվ. աշխ., էջ 151—184: Զ. Սիմոնյան, նշվ. աշխ.,
էջ 259—321: Ջ. Կիլախոյան և Զ. Հալոբյան, *Դաշնակները իմպերիալիզմի գոր-
ծակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում*, Երևան, 1960: Ա. Քաղևոյան,
Դամասկոսյան դատավարության հետքերով, Երևան, 1968:

դարձավ արաբ ծայրահեղ ազգայնամոլ և ընդհանրապես հետադեմ շրջանների ձեռքին՝ Սիրիայում աստիճանաբար նորից հարձակման անցնելու համար հայ համայնքի իրավունքների և ազատ դործունեության դեմ, հարձակում, որը ուժեղանալու էր Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) կազմավորումից և միառժամանակ Սիրիայում բացահայտ հակադեմոկրատական քաղաքականության նվիրագործումից հետո:

Տակավին 1958 թ., Եգիպտոսի ու Սիրիայի միավորումից ու ԱՄՀ-ի ստեղծումից անմիջապես հետո, Սիրիան իր տնտեսական կցորդը դարձնելու միջոցառումներից մեկի՝ չորս միլիոն եգիպտական ֆելլահներ Սիրիայում բնակեցնելու ծրագրի իրագործմանը հող նախապատրաստելու համար, եգիպտական բուրժուազիան սիրիացիներին այն միտքն էր ներշնչում, որ «հատկապես Հալեպի և Հասիեի կուսակալությունների հյուսիսում ոչ-արաբ ազգային փոքրամասնությունների՝ իսլամ քրդերի և թուրքմենների ու քրիստոնյա հայերի առկայությունը... այդ քայլը հրամայական անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն տնտեսական, այլև ռազմաստրատեգիական տեսակետից, ...որպես ազգային անվտանգության ստրատեգիական միջոցառում»⁸:

Հենց այդ ժամանակաշրջանում է, որ ԱՄՀ-ի սիրիական նահանգում նախաձեռնվեցին հակահայկական լուրջ բռնամիջոցներ: Առաջին հերթին հայերի առաջ փակվեցին պետական ու զինվորական ծառայության դռները⁹, նույնիսկ բանակից անժամանակ հանգըստյան կոչվեցին Պաղեստինի պատերազմի հերոսներից գեներալ Ա. Գարամանուկյանը, գեներալ Հ. Մալոյանը, հայազգի մյուս բարձրաստիճան սպաները: Այնուհետև խստագույն արգելքի ենթարկվեց հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմություն առարկան, իսկ շաբաթական 45 դասաժամերի 33—38-ը պարտադրվեց արաբերենի դասավանդման, 7—12-ը միայն թուլատրվելով մայրենի և օտար լեզուների ու կրոնի ուսուցման¹⁰: Եվ վերջապես արգելվեցին ինչպես արտահայտչամիջոցով, այնպես էլ ոգով կամ բովանդակությամբ ազգային բոլոր ձեռնարկները (ասմունք, երգ ու երաժշտություն, թատրոն և այլն), հատկապես հրատարակությունները:

⁸ R. A. U., Histoire-Faits-Chiffres, Damas, 1958, p. 41.

⁹ «Մեր նշանաբանն է հառաչ», 19.4.1959:

¹⁰ Նույն տեղում, 25.7.1959:

Խսաամիջոցները այնքան խորացան, որ հայկական բոլոր կազմակերպությունները հարկադրվեցին հրապարակայնորեն հրաժարվել իրենց ազգային անուններից և արաբական մկրտություն ընդունել: «Վահան Թեքեյան մշակութային միությունը», օրինակ, պաշտոնապես դարձավ «Արու Լալա ալ Մաարի— Վահան Թեքեյան մշակութային միություն»: Ահա թե հայ հասարակության հասցեագրված նրա միջոցառումներից մեկի հայտագիրը ինչպիսի տեսք էր ստանում պետական տեսչության կարգադրությամբ.— բացման խոսք՝ նախ արաբերեն և ապա հայերեն, զեկուցումներ՝ երկուսը արաբերեն և մեկը միայն հայերեն, ասմունք՝ երկուսը արաբերեն և մեկը հայերեն, խմբերգ՝ մեկը հայկական և երկուսը արաբական, ըստ որում վերջինները («Լա Իլլահ»— «Չկա այլ աստված բացի բարձրալից» և «Ալլահ ակբար»—«Աստված ամենաբարձրյալն է») իսլամական-կրոնական բովանդակությամբ¹¹:

Դժբախտաբար Արաբական Միացյալ Հանրապետության կազմալուծումից և նրա հակադեմոկրատական միջոցառումների վերացումից հետո էլ սիրիահայ ազգային կյանքի վրա արաբ հետադեմ և ազգայնամոլ տարրերի հարձակումը չդադարեց: Ընդհակառակն, ազգային դպրոցների վրա գործադրվող ճնշումը նույնիսկ աստիճանաբար ուժեղացվեց: Սիրիահայ դեմոկրատ գործիչ Տ. Ակինյանը փսոսանքով է նշել, որ 1967—68 ուսումնական տարում սիրիական կառավարությունը, ի հավելումն նախորդ սահմանափակումների, էլ ավելի է կրճատել հայոց լեզվին թողնված դասագրքերը, և «պետական տնօրեններ» գործուղելով՝ լրիվ վերացրել է հայկական դպրոցների ներքին ինքնավարության վերջին մնացուկը¹²:

Այս պայմաններում դժվար չէ պատկերացնել, թե ինչո՞ւ լիբանանահայությունից քանակապես ստվար սիրիահայությունը երկու տասնամյակում գրեթե կիսովին նվազեց¹³, թե ինչո՞ւ մանավանդ ազգային-մշակութային նվաճումների աստիճանաչափով անհամեմատ ցածր մնաց լիբանանահայությունից և հետևաբար աննշան մասնակցություն բերեց սիրիա-արաբական ազգային կոլտուրայի զարգացման գործին:

¹¹ «Սուրիա», 9.12.1959:

¹² «Արաբառ», 16 և 17.9.1968:

¹³ «Արաբառի» վկայությամբ (26.8.1967) Վերկայիս Հալեպի շրջանին մեջ ապրող մեր հայրենակիցներուն թիվը 60 հազարի կհասնի միայն և ոչ թե 120 հազարի, ինչ որ կկարծեն ռմանքս:

Ընդհակառակն, Լիբանանի հայկական նոր գաղթօջախը, իր կազմավորման առաջին օրից գտնվելով անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում, քան թե սիրիահայ գաղթօջախը, իր հաճախ կարևոր խոսքն է ասել Լիբանանյան նոր մշակույթի ժաղկման ասպարեզում:

Լիբանանցի լրագրող Ժան Շամին, պատասխանելով «հայ հասարակությունը իրապես մասնակցո՞ւմ է արդյոք Լիբանանյան կյանքին» հարցը տվող սկեպտիկներին և մանավանդ Լիբանանահայերի՝ ազգային ու մշակութային հողի վրա վայելած ազատությունները շահագանց համարող հետադեմներին, իրավամբ ընդգծել է. — առաջին հայ գաղթականները, ամեն ինչից զրկված, երկրի լեզվին ու սովորություններին անհաղորդ, միայն ու միայն իրենց հանապազօրյա հացին էին հետամուտ: Նրանց որդիները, սակայն, վերագտնելով ապահովությունն ու ազատությունը, սկսեցին սովորել արաբերեն լեզուն, սերտորեն շփվել տեղաբնակ իրենց եղբայրների հետ, մասնակցել նրանց կյանքին: Անխուսափելի էր այդօրինակ մի հեղաշրջում, որը աստիճանաբար շեշտվելու է անկասկած: «Այս ըսել չէ՝ թե հայ հասարակությունը պիտի կորսնցնե իր սեփական դիմագիծը», — շեշտել է արաբ լրագրողը և եզրակացրել. «Կա միակ ստույգ բան մը. Լիբանանահայերը սրտանց կսիրեն Լիբանանը, և անոր կապված են, մանավանդ որովհետև կվայելեն հոն ազատությունը՝ պահելու իրենց լեզուն, ավանդությունները և կազմակերպությունները»¹⁴:

2

Անվանի գրող Սաիդ Աքլը մի առիթով գրել է. «Մինչև երեկ, Լիբանանյան երաժշտության լավագույն տարրերը կկազմվեին անոնցմե, որոնց աչքերը կուզային Արարատ լեռեն և որոնք ունեին Վանա ծովուն գեղեցկությունը: Երկու տարի առաջ, երբ երաժիշտներուն երաժիշտը՝ Արամ հաչատրյան այցելեց մեր երկիրը, իրեն հայտնեցինք, թե իր հայրենակիցները երկրորդական տարր մը չեն Լիբանանի վերածնունդին մեջ: Լիբանանի ձիրքերն ու տաղանդը մաս կկազմեն հայերու սրտին, ու Լիբանանի սիրտը մեկ մասն է հայերու սրտին»¹⁵:

Արար գրողի պնդման իրավացիությունը ակնհայտ կդառնա Լիբանանի երաժշտական կյանքի վրա նետված թուուցիկ հայացքով

¹⁴ Ժան Շամին, Հայ հասարակությունը Լիբանանի մեջ, «Արևիկ», 2.1.1960:

¹⁵ «Սփյուռք», 18.1.1964:

անգամ, քանի որ հայկական տաղանդը անխզելիորեն կապված է այդ կյանքի հետպատերազմյան ամեն մի ուշագրավ դրսևորման հետ:

Անհրաժեշտ է այստեղ առաջին հերթին ուրվագծել այն մթնոլորտը, որի մեջ կնքվեցին հայ-արարական երաժշտական նախնական աղերսները:

Քառասնական տասնամյակի կեսերին, Մերձավոր Արևելքի ամենից հուշակավոր համույթը՝ Պաղեստինի սիմֆոնիկ նվագախումբը լեռ Գիդենբերգի ղեկավարությամբ շրջագայում էր Անդր-հորդանանի, Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի գլխավոր քաղաքներում, հաճախ մի ամբողջ հայտագիր կազմելով հայ դասական երաժշտությունից (ընդգրկելով հատկապես Արամ խաչատրյանի ստեղծագործությունները և իր լույս ընծայած գրքույկ-հայտագրերում լայնորեն պրոպագանդելով հայ երաժշտի արվեստը¹⁶): Հյուրախաղերով Բեյրութ այցելող օտար անվանի մենակատարներն էլ (Բեռնշտայնը, Բառնեսը, Սալզմանը, Տրիլլան, Պալենիշեկը և մյուսները) իրենց ելույթներում կարևոր տեղ էին հատկացնում Ա. խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի, Հ. Ստեփանյանի, Ս. Բարխուդարյանի և այլոց գործերին:

Բեյրութը, սակայն, երաժշտական վայելքի իր ակնկալությունները լուրջ պատահական այցելությունների հետ չէր կապում, մանավանդ, որ դասական նվագը ճշատ սիրողներ ունեւր» և «հասարակությունը գեղարվեստական բարձրարժեք իրագործումների նկատմամբ կատարելապես ընկալունակ» էր դարձել¹⁷:

Երաժշտական միջոցառումների ասպարեզում հանգուցային նավահանգիստ-քաղաք Բեյրութին «առանձնաշնորհյալ» պայմաններ էին ստեղծում առաջին հերթին իր սեփական «օջախները»՝ 1925 թ. Ուադիհ Սաբրայի և Միշել Չեսկինովի ջանքերով հիմնադրված ազգային երաժշտանոցը (որը Ալեկսիս Բուտրոսի ղեկավարությամբ, հատկապես իր երգչախումբ-նվագախմբով, կազմակերպում էր դասական նվագի բարձրարվեստ փառատոներ) և Ամերիկյան համալսարանի երաժշտական ինստիտուտը (որը կոմպոզիտոր Արկադի Կուզելի նախաձեռնությամբ պահում էր իր հայտնի սիմֆոնիկ նվագախումբը):

¹⁶ «Ժողովուրդի ձայն», 6.2.1945, «Զարթոնք», 4.2.1945, «Առավոտ», 10.2.1945:

¹⁷ «Les Cahiers de l'Est» 1945, № 1, p. 1951.

Պետք է ընդգծել, որ հայ գաղթօջախը լիբանանյան իրականության մեջ ըստ ինքյան հանդիսանում էր երաժշտական ուրույն մի օջախ, որի կրակը վառ էին պահում այնպիսի հեղինակավոր դեմքեր, ինչպիսիք Հ. Պերպերյանն ու Բ. Կանաչյանն էին¹⁸։ Երևույթապես հայ համայնքի շրջագծում պարփակված, զույգ վարպետներին՝ առաջինի նվագախմբային և երկրորդի երգչախմբային բարձրարվեստ գործունեությունը հուժկու ալիքներով անդրադառնում էր համալիբանանյան կյանքի վրա։ Բավարարվենք նշելով, որ Բ. Կանաչյանն է առաջինը նախաձեռնել արաբական ժողովրդական երգերը մշակելու, դաշնավորելու և քառաձայնի վերածելու գործը, որ տեղական մամուլը առանձին ջերմությամբ է արտահայտվել նրա կողմից «վարժորեն և փայլուն դաշնավորված» լիբանանյան երգերի մասին և որ իր վաստակով նա արժանացել է պետական բարձրագույն շքանշանի։

Հետպատերազմյան տարիներին, սակայն, լիբանանահայությունը երկրի երաժշտական կյանքում իր տեղն ընդգծում և հետըզհետե պատկառելի էր դարձնում ոչ միայն զույգ վարպետների և առանձին անվանի մենակատարների (Շատարեյան, Արթինյան և այլք) գործունեությամբ¹⁹, այլև մանավանդ Բեյրութի երկու հիմնական «օջախների» հետ սերտ համագործակցությամբ։

Անհրաժեշտ է նշել, որ իրենց երկրորդ հայրենիքի մշակութային եռուղեգծին հայերի ինքնաբերական մասնակցությունը հատուկ հոգատարությամբ խթանվում էր լիբանանյան երաժշտությանն ավիշ և ուղղություն տվող մարդկանց կողմից։ Ազգային երաժշտանոցում ավելի քան քառասնամյա վաստակ ներդրած արվեստագետներից Միշել Զեսկինովը (որի սաներն են եղել, ի շարս շատ ուրիշների, լիբանանի հպարտանքներից Գոճյան եղբայրները, էմմիյանը, Փեհլիվանյանն ու Գույումջյանը) ամենագործուն կերպով օժանդակել է հայ երաժիշտների շնորհները երկրի մշակութային վերելքին ծառայեցնելու գործին²⁰։ Լիբանանյան գեղարվեստի երախտավորներից էլի Բենժամենը և Ռուդոլֆ ու Արկադի Կուզելները իրենց հեր-

¹⁸ Հ. Պերպերյանի և Բ. Կանաչյանի մասին լիբանանյան երաժշտական ակադեմիոր քննադատների և հատկապես Ա. Կարպասիտի բարձր գնահատանքը տե՛ս «Les Cahiers de l'Est» 1945 No. 1, p. 152: «L'Orient», 12.12.1946 et 17.5.1957 «Le Jour», 18.5.1957:

¹⁹ «Սուրիա», 3.2.1949: Նաև՝ «Les Cahiers de l'est», 1946, № 4, p. 197 et № 6, p. 211.

²⁰ «Սփյուռք», 28.1.1961:

թին տեւապես ու սերտորեն գործակցել են հայ արվեստագետների հետ։ Բենժամենը իր նվագահանդեսներում հաճախ է հանդես եկել Ա. Խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի, Տ. Ալեքսանյանի և ուրիշ հայ կոմպոզիտորների գործերի կատարմամբ, իսկ Կուգելը իր նվագախմբում ընդգրկել է բացառապես հայ կին երաժիշտներին՝ Գարագաշյանին, Վարդապետյանին, Քասունուն, Սալիլյանին, Սեմերջյանին և Հայաթյանին։ Բենժամենն ու Կուգելը միաժամանակ շանք չեն խնայել օգնելու տաղանդավոր հայորդիների կատարելագործմանը, հատկապես դաշնակահարուհի Մ. Քասունիի և երգչուհի Շ. Վարդենիսյանի առաջընթացին։

Լիբանանի երաժշտական կյանքում շրջադարձային պահը արձանագրվել էր դեռ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, շնորհիվ «նվագաժողովների օջախի» («Երաժիշտների տան») հիմնադրման։ Ազգային անկախության հռչակման խանդավառ մթնոլորտում և նորակազմ ազգային կառավարության անմիջական քաջալերանքով, ազգությամբ արաբ և 1939 թ. առաջ Լիբանան հաստատված ալազգի երաժիշտները, թվով 75 հոգի, ընդհանուր ժողով գումարելով ստեղծել էին մի ընկերություն, որի նպատակն էր «բարձրացնել երաժշտության մակարդակը և պաշտպանել այս գեղարվեստին ծառայողներու անձնական և հավաքական շահերը»։

«նվագաժողովների օջախի» ստեղծման փաստը նշանակալից էր այն իմաստով, որ առաջին անգամ լիեւելով արաբ, հայ, ռուս, իտալացի, հունգար և այլ ազգությունների պատկանող արվեստագետներ ձերբազատվում էին համայնքային սահմանագծումներից ու գիտակցում, որ իրենց համատեղ ու համերաշխ գործունեությունը նախապայմանն է լիբանանյան երաժշտության զարգացման։ Հասկանալի է, որ հայ արվեստագետները խանդավառ մասնակիցները պիտի դառնային «նվագաժողովների օջախին», որի ղեկավար օրգաններում պատասխանատու աշխատանք էին տանում Իսահակ Ավետիսյանն ու Օննիկ Սյուրմելյանը²¹։

«նվագաժողովների օջախով» արձանագրված բեկումը, սակայն, կարիք ուներ հետագա խորացման, մանավանդ, որ Ազգային երաժշտանոցը «ի վիճակի չէր անցյալին և ի վիճակի չէ ներկայիս («օջախի» ստեղծումից մի տասնամյակ անց) գլուխ հանելու մշակութային հառաջադիմության առաքելությունը»²²։ Եվ ահա 1953 թ.,

²¹ «Ժողովուրդի ձայն», 15.12.1943 և 3.2.1944։

²² «Զարթոնք», 22.8.1953։

հիմնականում նպատակադրելով «Բեյրութը օժտել ազգային երաժրշտանոցով մը և սիմֆոնիկ նվագախմբով մը», ծնունդ առավ «Երաժշտության բարեկամների ընկերակցությունը», որի ղեկավար մարմիններում Դ. Կետտանեի, Հ. Բակիի, Ժ. Ֆատտալի, Ի. Խուրշիդի, Կ. Արիդայի, Պ. էդդեի, Կ. Տապետի և այլոց հետ եռանդուն գործունեություն ծավալեցին Վ. Բակալյանը և Ա. Ապրոյանը²³։

«Երաժշտության բարեկամների ընկերակցության» ջանքերի շնորհիվ էր, որ նոր կերպարանք ստացավ «Լիբանանի Ազգային երաժշտանոցը», որը և վերակազմակերպվելով ու ծավալվելով դարձավ 1937 թ. հիմնադրված «Լիբանանյան Գեղարվեստից ակադեմիայի» հիմնական կորիզը²⁴։

Ազգային նոր երաժշտանոցում դասախոսական աշխատանքի գլխավոր ծանրությունը ընկավ հայ մանկավարժների, առաջին հերթին Օ. Սյուրմելյանի, Մ. Ավետյանի և Ա. Կերկբյանի ուսերին։ Նրանք էին, որ մեկը մյուսի ետևից երկրին տվեցին հիմնականում հայ, մասամբ և արաբ շնորհալի երգիչ-երգչուհիների, ջութակահարների, դաշնակահարների խմբեր։ Միայն Ա. Կերկբյանի արաբ սաներից կարելի է հիշատակել երաժիշտներ Գ. Ազարին, Ս. Բալուդիին, Ն. Բասալին, Մ. Հադդադին, Ս. Թայանին, Ռընե և Ռեյմոն Թիաններին²⁵։ Երաժշտանոցի հայ մանկավարժների սաները, հատկապես հայ հետնորդներն էին, որ ոչ միայն նոր որակ հաղորդեցին Ակադեմիայի գործունեությանը, ուրեմն և լիբանանյան երաժշտական կյանքին, այլև Լիբանանի անունը հռչակեցին որպես տաղանդավոր երաժիշտների հայրենիք։

Վոկալիստներ²⁶ Ժ. Գուլումջյուն (պետական կրթաթոշակով Հռոմի Սանտա Ջեչիլիա և Ջիենայի Կիչինանա երաժշտանոցների, ապա և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի սան), Ս. Պետրոսյան («Նայիրի» երգչախմբի մենակատար), Ա. Կիրակոսյան, Ա. Պետոյան (Միլանի երաժշտանոցի սան, «Լիբանանի դեղձանիկ» անվանյալ), Տ. Ժամկոչյան (Ժնևի միջազգային մրցանակաբաշխության դափնեկիր) և Ա. Փեհլիվանյան (Ս. Աքլի անվան

²³ Նույն տեղում։

²⁴ The Middle East and North Africa, 1966—1967, London, 1966 p. 425.

²⁵ «Այգ», 17.6.1956։

²⁶ Երաժշտանոցում մասնագիտացած հայ անվանի երգիչների մասին տե՛ս «Ժողովուրդի ձայն», 22.2.1945։ «Սփյուռք», 4.4.1959, 11.6.1960, 3.6.1961, 6.2.1963, 22.6.1963, 8 և 22.2.1964։ «Մեր նշանաբանն է հառաչ», 11.11.1962։ «Արարատ», 11.7.1969։

մրցանակակիր), դաշնակահարներ²⁷ Ռաֆֆի Ուոկանջյան (Փարիզի երաժշտանոցի առաջին մրցանակակիր) և Գևորգ էմմիյան (Փարիզի երաժշտանոցից զգեցրազանց մենակատարող), ջութակահարներ²⁸ Ժիրայր Գանթարջյան (պրոֆ. Վազա Պրիհոդայի սան), Սարգիս Խարդալյան (Դանիայում Թելմանի և Նյու-Յորքում Կալամյանի սան), Վարուժան Գոճյան (Փարիզի երաժշտանոցում Բենեդեկտտիի և Թալվեյի սան, ջութակահարների փարիզյան միջազգային մրցույթի դափնեկիր, Նյու-Յորքի «Կլերտիս» երաժշտանոցում Իվան Կալամյանի սան) և Միհրան Գոճյան (Փարիզի երաժշտանոցի միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր), Թավ-ջութակահար²⁹ Վտհե Պերպերյան (Վենետիկի միջազգային փառատոնի դափնեկիր)։ ահա մի մասը Բելյուսի Ազգային երաժշտանոցի հայ շրջանավարտների, որոնց գործունեությունը, լիբանանահայ երաժիշտների առաջին սերնդի աշխատանքին զուգորդվելով, ոչ միայն նպաստեց հայ գաղթօջախի բարոյական վարկի բարձրացմանը, այլև հանդիսացավ հայ-արաբական մշակութային մերօրյա առնչությունների հետագա զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկը։

Հայ և արաբ երաժշտական գործիչների կապերի սերտացմանը շատ լուրջ ծառայություն մատուցեց Ազգային երաժշտանոցի՝ 1956 թ. հիմնադրված սիմֆոնիկ նվագախումբը։ Խմբի առաջին ղեկավար Օ. Սյուրմեյանը հասկանալիորեն տևապես ձգտել է ձգնդհանրապես հայկական և մասնավորապես սովետահայ երաժշտական իրագործումները արաբ հասարակության ծանոթացնել, վստահ, որ ռայսպիսով կսատարե հայ և արաբ մշակութային հարաբերության սերտացման երախտաշատ գործին³⁰, 1963 թ. Սյուրմեյանին փոխարինած Ռ. Արիլլաման ևս, լիբանանյան կյանքում հայ գաղթօջախի տեղի ու դերի խանդավառ այդ ջատագովը, որ միշտ բարձր կարծիք է հայտնել հայկական երաժշտության մասին, ջանացել է անմիջական ու սերտ շփում հաստատել

²⁷ Երաժշտանոցի շրջանավարտ հայ անվանի դաշնակահարների մասին տես՝ «Այգ», 30.7.1954, «Սփյուռք», 4.4.1964։

²⁸ Երաժշտանոցի հայ մեծահռչակ ջութակահարների մասին տես՝ «Ազդակ», 2 և 31.7.1949, 14.9.1949, 19.6.1956, «Այգ», 12.2.1954, 27.3.1957, «Սփյուռք», 15.8.1964։

²⁹ Վ. Պերպերյանի մասին տես՝ «Եփրատ», 12.8.1947, «Այգ», 17.4.1954, «Սփյուռք», 2.5.1959, «Լ'Օրիան», 11.6.1947։

³⁰ «Մեր նշանաբանն է հառաչ», 14.1.1962։

մանավանդ սովետահայ երաժիշտների հետ և իր նվագահանդեսներում արևմտյան դասականների կողքին պատվո տեղ է տվել շարունակ Ա. Տիգրանյանին, Ա. Խաչատրյանին, Գ. Ալեմշահին, Ալ. Հարությունյանին և ուրիշ հայ երգահաններին³¹։ Ավելացնենք, որ եթե խմբավար Սյուրմելյանի ծրագրերի իրագործմանը շատ բանով են օգնել արար նվագաժողովների և հատկապես մենակատար ժիդել Սաբայի եռանդն ու խանդավառությունը³², ապա խմբավար Աբիլլամայի գործունեությանը տեղապես սատարել են կոմպոզիտոր Պ. Զելալյանը և երգիչներ Ա. Փեհլիվանյանն ու Գ. Կակոսյանը³³։

Ազգային երաժշտանոցի շրջանակներում հունավորված հայարարական երաժշտական կապերի հետագա ամրապնդման համար նպաստավոր հող ընձեռեցին Բաալբեկի միջազգային տոնահանդեսները։

Բահալի տաճարի աշխարհահռչակ փլատակները որպես երաժշտական միջազգային միջոցառումների բեմ օգտագործելու գաղափարն, անշուշտ, առաջին հերթին երկրում տուրիզմի զարգացման պետական մտահոգությունից էր սկիզբ առնում։ Մշակութային գործիչների համար, սակայն, հիմնական մտահոգությունը համաշխարհային երաժշտական նվաճումները լիբանանցիներին մատուցելու հետ միաժամանակ՝ ազգային գեղարվեստի զարգացման մի նոր մեկնալստ ապահովելն էր։

Արտաքին հարաբերությունների պատասխանատու Ժ. Սքաֆի հավաստման համաձայն, փառատոնի կազմակերպիչները առաջին իսկ օրից համոզված էին, որ Լիբանանի համար աննախադեպ միջոցառման հաջողությունը կախված էր երկրի ազգաբնակչությունը կազմող բոլոր համայնքների և առաջին հերթին հայ ժողովրդի համագործակցությունից։ Այդ համոզմունքից էին թելադրված նախապատրաստական հանձնաժողովի կազմում տիկին Ճիտեճյանի ընդգրկումը և դասական ու լիբանանյան երաժշտության կողքին հայտադրում անպայման հայկական երաժշտությանը տեղ տալու մտադրությունը, որը և իրագործվեց հենց առաջին փառատոնին (1956), ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի «Բառին բովանդակ առումով Արևելքի դրոշմը կրող», «Հայկական ռապսոդիա» և «Գոհար» ստեղծագործությունների կատարումով³⁴։

³¹ «Սփյուռք», 13.12.1964։

³² «Սփյուռք», 25.1.1964 և 1.2.1964։

³³ «Արարատ», 10.12.1964 և 6.3.1966։ «La Revue du Liban» 16.5.1963։

³⁴ «Այգ», 19.7.1956։

Երկրորդ փառատոնի (1957) նախապատրաստման օրերին, ֆեստիվալի կոմիտեի նախագահ է. Կետտանեն, ընդգծելով, որ լիբանանահայությունը երկրի մշակույթը «անսահմանորեն հարստացնելու» տեսակետից մեծ ծառայություն է մատուցել, հայ-արաբական փոխհարաբերությունների ամրապնդման համար առաջնային անհրաժեշտություն էր համարում հայերի և արաբների համագործակցությունը գեղարվեստի բնագավառում և ուրեմն նաև Բաալբեկի միջոցառման շրջանակներում: Հենց այդ նկատառումով էլ կոմիտեն Բաալբեկ էր հրավիրում անվանի ջութակահարներ Մանուկ Բարիբյանին և Վարուժան Գոճյանին, որոնք ինչպես նշում էր Ժ. Սքաֆը, «հայ են ու միաժամանակ մեծ նվագածուներ են և հայ հանճարին լույսը սփռած են մեծ ոստաններն մինչև խոնարհ անկյունները»³⁵:

Մի փառատոնից մյուսը ավելի ու ավելի նշանակալից էր դառնում հայ արվեստագետների մասնակցությունը Բաալբեկյան միջոցառմանը: 1961 թ., օրինակ, երբ Միլանի օպերայի խումբը բեմ էր բարձրացնում Մոնտեվերդիի «Պոպի թագադրումը», իտալացի հռչակավոր արվեստագետների կողքին երևում էին նաև «Լիբանանահայ վերածնունդ» միության երգչախմբի մենակատարներ Ն. էլմաշյանը, Ս. Հակոբյանը, Ժ. Գուլումջյանը և ուրիշներ³⁶:

Հետաքրքրական է, որ տոնահանդեսների շրջանագծում որպես հայ և արաբ երաժիշտների սերտացած շփումների արդյունք հայկական մամուլը բացահայտում էր, որ Արաբական Արևելքի անվանի երգչուհիներից Ֆեյրուզը մոր կողմից «ծագումով հայ է» ու նույնիսկ նրան, իր իսկ հավանությանը, անվանում էր «հայազգի Ֆեյրուզ»³⁷:

Բաալբեկի փառատոները եթե մի կողմից խորացրեցին հայ-արաբական երաժշտական կապերը, ապա մյուս կողմից խթանեցին լիբանանահայության մշակութային աստիճանաչափի հետագա վերելքը: Իրոք, մասամբ հայրենական անսամբլների առաջացրած ոգևորության ներգործությամբ և մասամբ տեղական փառատոնների հայտագրին հայկական երգն ու պարը պարտազրեելու մտադրությամբ, 1961 թ. կազմակերպվեց «Հայ երիտասարդաց ընկե-

³⁵ «Այգ», 16.8.1957:

³⁶ «Միլուք», 12.8.1961: «Մեր նշանաբանն է հառաչ», 13.8.1961: Բարիբյանի և Գոճյանի ելույթների մասին տե՛ս «Էր Սուար», «Լ'Օրիան» և «Էր Ժուռ» թերթերի 25 և 26.8.1957 համարները:

³⁷ «Այգ», 25.8.1957 և 4.9.1957:

րակցութեան» (ՀԵԸ) երգի ու պարի անսամբլը (որի օրինակին հետեւեց շուտով Համազգայինի «Քնար» խումբը), որ արաբական «Զաարուրա» երգն ու «Դեբեկ» լիբանանյան ժողովրդական պարը, «որպէս գնահատանք ու երախտագիտութեան խոսք մը արաբ հյուրասեր ժողովրդին», ընդգրկեց իր հայտագրումը³⁸։ Անսամբլի գեղարվեստական ղեկավար Ս. Բասգալյանը (որ իր արվեստը կատարելագործելու համար գործուղվել է Սովետական Հայաստան) իր խմբի հաջողութեան իսկ շնորհիվ նշանակվեց Բաալբեկի փառատոնի համար կազմակերպված լիբանանյան ազգային պարախումբի պաշտոնական պարուսույց և 1967 թ. ղեկավարեց «Լիբանանյան գիշերներ» բալետը, արժանանալով արաբական մամուլի դրվատանքին³⁹։

Հաշվի առնելով, որ 1965 թ. տասնամյա հոբելյանական ֆետիվալի հայտագրում լիբանանահայութեանը հնարավորութիւն տրվեց առանձին ծրագրով ներկայացնել հայկական ժողովրդական երգն ու պարը, ՀԵԸ-ի և Համազգային անսամբլները տիկին Ծիտեհճյանի ջանքերով միավորվեցին և ստեղծվեց 125 արվեստագետներ ընդգրկող պատկառելի մի համույթ, որի գեղարվեստական ղեկավարումն ստանձնեցին Պ. Ծելալյանը, Ս. Բասգալյանը, է. էլմաճյանը, Օ. Սյուրմեյանը, Վ. Աբրահամյանը, Ս. Իլանճյանը և Ս. Պերպերյանը⁴⁰։

Բաալբեկի միջազգային տոնահանդեսները միաժամանակ առիթ հանդիսացան, որ լիբանանյան երաժշտական շրջանակները սկսեն մտահոգվել երկրում բալետի աննախանձելի վիճակով։ Եվ իրոք, թեև Անգլիայում և Հարավսլավիայում մասնագիտացած Անի Վարդապետյանի կողմից 1954 թ. հիմնադրված «Պարարվեստի Անի Տապատ ուսումնարանն»⁴¹ ու էլենա Իմազի դպրոցը իրենց սաների մասնակցությամբ երբեմն կազմակերպել են բալետի երեկոներ և մի շարք շնորհալի պարուհիներ (այդ թվում և Սոնա Փուլադյանը) պետական կրթաթոշակով գործուղվել են Փարիզ⁴², հիսունական թվականների վերջերից միայն պարարվեստը հատուկ ուշադրութեան առարկա է դարձել և գործող ուսումնարաններն էլ կանոնավոր քաջալերանքի են արժանացել։

³⁸ «Մեր նշանաբանն է հառաջ», 26.3.1961։

³⁹ «Սփյուռք», 16.5.1954; «Magazine», 1967 № 555։

⁴⁰ «Բազին», 1965, № 3, էջ 78—79; «Սփյուռք», 3.2.1965։

⁴¹ «Զարթոնք», 1.5.1954 և 1.10.1955; «Սփյուռք», 19.12.1959, 30.5.1964, և 28.1.1965։

⁴² «Սփյուռք», 28.5.1960։

Պարարվեստի նման, իրաճանաչում նախանձելի վիճակում չէ նաև օպերային արվեստը, սակայն այս ասպարեզում ևս ցարդ ի գործ դրված անհատական ճիգերի մեջ զգալի է հայերի բաժինը:

Դեռևս 1950 թ., Ամերիկյան համալսարանի երաժշտական ինստիտուտի ուսանողների ջանքերով բեմադրվել է Շտրաուսի «Վալսի երազ» օպերետան, որի մեջ պատասխանատու դերերով հանդես են եկել Պ. Թորոսյանը և Ա. Գրվերյանը⁴³: 1956 թ. նույն ինստիտուտում բեմ է հանվել Ջիան-Կարլո Մենոտտիի «Ամառ և երեք գիշերային այցելուներ» օպերան, պրոֆ. Ս. Առնիտայի ղեկավարությամբ: Մամուլը վեց զլխավոր դերակատարների շարքում արձանագրել է Անայիս Եղիայանի և Զիրակ Թորոսյանի անունները, ընդգծելով նաև երկրորդական դերերում բազմաթիվ հայերի մասնակցության փաստը⁴⁴:

1963 թ. ավելի լուրջ քայլ է եղել «Տելե-Օրիան» հեռուստատեսությամբ Ջ. Վերդիի «Լուչիա դի Լամերմուր» օպերայի բեմադրությունը՝ սոպրանո Սամիա Սանդրիի և տենոր Խաչիկ Փիլիկյանի զլխավոր դերակատարմամբ: «Հեքիաթանման անակնկալ մը դասական երաժշտության իսկական արվեստի բոլոր սիրահարներուն համար, երկրի մը մեջ՝ ուր չկա ո՛չ սիմֆոնիկ նվագախումբ, ո՛չ թատրոն, ո՛չ օպերա, ուր մարդիկ միլիոններ կհատկացնեն բախտախաղի կեդրոն մը կառուցելու համար», — դառնությամբ դրել է իրաճանաչայ դեմոկրատական մամուլը, ընդգծելով, որ Սանդրիի և Փիլիկյանի նախաձեռնությունը ոչ միայն օպերային առաջին լուրջ փորձն է եղել իրաճանայան տարեգրության մեջ, այլև «որակավոր նախաքայլ մը, որ լիովի արժանի է այն դրվատալից արձագանքին, որ գտավ տեղական մամուլին մեջ և երաժշտասեր շրջանակներուն մոտ»⁴⁵: Հատուկ նշման է արժանացել այն հանգամանքը, որ Փիլիկյանը զլխավոր դերում հանդես գալուց բացի, ձևավորել է բեմադարդերն ու հանդերձանքը⁴⁶:

Ինչպես Ամերիկյան երաժշտական ինստիտուտի, այնպես էլ «Տելե-Օրիանի» նախաձեռնությանը հայերի մասնակցությունը հասկանալի կլինի եթե ասենք, որ հայկական բեմերում օպերաներ ներկայացնելու փորձեր են եղել տարբեր ժամանակներում:

⁴³ «Ազգարար», 27.5.1950:

⁴⁴ «Ազգակ», 16.12.1956:

⁴⁵ «Հառաջ դրական», 1963 թ., փետրվարի 8, էջ 9:

⁴⁶ Նույն տեղում:

Հիշատակության արժանի է հատկապես եռանդուն գործունեությունը Ն. Պերպերյանի, որ 1946 թ. բեմականացրել է Ա. Տիգրանյանի «Անուշը», իսկ իր հեղինակություններից՝ «Թիթեո» (1940) և «Արեգնաղան» (1948) օպերաները⁴⁷։ Աննախընթաց հաջողություն է արձանագրել մանավանդ 1962 թ. Տ. Չուխաշյանի «Լեբլեբիշի Հորհոր աղա» օպերայի բեմականացումը «Վերածնունդ» միության խմբի կողմից⁴⁸։

Այս բոլորով չեն սահմանափակվում անշուշտ լիբանանում հայ-արաբական երաժշտական կապերի, հատկապես լիբանանյան երաժշտական կյանքի վերելքին հայ գաղթօջախի մասնակցության շրջանակները։ Առանձին շնորհաշատ հայեր իրենց անունը անբաժնի լիբանանում են նաև հորինողական արվեստի, արևելյան ժողովրդական նվագի և այլ բնագավառների եռուղեգնին։

Ա. Այնթապլյանը, որ լիբանանյան պետական կրթաթոշակով սովորել է Փարիզի երաժշտանոցի կոմպոզիտորական կուրսերում և առաջին մրցանակով վերադարձել է Բեյրութ, ինչպես իր անձնական ուսումնարանում, այնպես էլ Սենտ Ան դե Բեզանսոն կոլեջում վարել է հորինողական դասընթացներ։ Նրա սաներն են եղել Վ. Աբի Զաուդեն, Ա. Հադադը, Ա. Ադեմը, Մ. Բեյդունը, Ա. Մասուդը և լիբանանյան երաժշտության ուրիշ մշակներ⁴⁹։

Հատուկ հիշատակության արժանի է կոմպոզիտոր Պողոս Ծելալյանը, որ անակնկալ մի հայտնություն է եղել լիբանանի երաժշտական կյանքում։ Դրանում համոզվելու համար բավական է լիբանանյան մամուլից կատարել հեղինակավոր մի մեջբերում. «1952 թ., անժանոթ երիտասարդ մի երաժիշտ՝ Պողոս Ծելալյանը, երգեհոնի համար հորինեց մի տոկատտա, ստեղծագործություն՝ որը իր զվարթախոհությամբ և ոգեղենությամբ գլուխ-գործոցների շարքը կարող է դասվել։ Եվ իրոք, եզակի մի գլուխգործոց էր այդ՝ լիբանանյան երաժշտության և նույնիսկ ամբողջությամբ միջերկրականյան ուղղություն ունեցող երաժշտական մի նոր հոսանքի մեջ»⁵⁰։

1964 թ. մասնակցելով լիբանանյան «Երաժշտասեր երիտասարդություն» ընկերության հորինողական առաջին մրցանքին,

⁴⁷ «Զարթոնք», 29.4.1948 և 4.4.1954։

⁴⁸ «Միջուկ», 19.4.1962։

⁴⁹ «Այդ», 19.6.1954, «Միջուկ», 2.7.1960։

⁵⁰ «Les Cahiers de l'Est», 1965, № 4—5.

22 հավակնորդների մեջ իր գործերով նվաճել է առաջին, երկրորդ և չորրորդ մրցանակները, միաժամանակ հայտնվելով «որպես հիմնադիրներեն մեկը Լիբանանի ազգային երաժշտության՝ Թուֆիք Սուքքարի, Մանսուր Ռահբանի, Ֆուլեյհանի, Ժորժ Պաղի, Թուֆիք Պաշայի, Զեքի Նեսիֆի և ուրիշներու շարքին»⁵¹։ Նրա գործերն, իրոք, համարվում են կարևոր ներդրում լիբանանյան երաժշտության զարգացման գործում։ Պ. Ճելալյանը լիբանանյան ժողովրդական երաժշտության հաճախ միօրինակ ռիթմերը (օրինակի համար Ռահբանի եղբայրների հորինումները) հաջողությամբ ենթարկել է նվագախմբի պահանջներին։ 1964 թ. «Ֆենիսիա» թատրոնում ներկայացված «Սաուալի» բեմական երաժշտությունը իր գործն է եղել։

Ճելալյանի գործերը, դուրս գալով միջազգային ասպարեզ, պատիվ են բերել իր երկրորդ հայրենիքին։ Նրա սոնատը նվագվել է Իտալիայում, Հարավսլավիայում, Գերմանիայում և Անգլիայում։ Փարիզի կենտրոնական ռադիոկայանն ու հեռուստատեսությունը ամբողջ մի ժամ են հատկացրել նրա ելույթին։ Դաշնակահարուհի Դիանա Թակիեդդինը նրա գործերը իր հայտագրում է ունեցել եվրոպական շրջապատույթի ժամանակ։ Լիբանանի հանրապետության նախագահ Շարլ Հելուֆի Փարիզ այցելության առիթով, զենքերալ դը Դուրը նրան հրավիրել է նվագելու Նիսիյան պալատում։

Ճելալյանը, գրում է լիբանանահայ առաջադեմ մամուլը, «իր իսկ խոստովանությամբ, թե՛ իր ստեղծագործական աշխարհով և թե իր ապրումներով կմնա հայկական և առ այդ իր ստեղծագործությունները կկազմեն մեր համայնքին դրական նպաստը՝ լիբանանյան հայրենիքին»⁵²։

Քամանչան և ուղը, արևելյան ժողովրդական այդ գործիքները, ի վաղուց անտի արաբների սիրելի նվագարաններից են եղել, իսկ 19-րդ դարի պալատական և ժողովրդական նվագահանդեսներում հանդիսացել են որպես հիմնական գործիքներ⁵³։ Թե ուղի, թե քամանչայի հանրահռչակ երկու վարպետներն էլ հետպատերազմյան ժամանակաշրջանում եղել են հայեր և իրենց արվեստով ոչ միայն լայն ժողովրդականություն են վայելել արաբների ու հայերի շրջ-

⁵¹ Պ. Հակոբյան, Տաղանդավոր քոմպոզիտոր մը՝ Պողոս Ճելալյան, «Հառաջ», 26.12.1965։

⁵² Նույն տեղում։

⁵³ M. Michaud et M. Poujoulat, Correspondance d'Orient, 1830—1831, t. VI, Paris, 1835, p. 95.

ջանում, այլև իրենց համեստ բաժինն են բերել հայ-արաբական
երաժշտական կապերի սերտացման գործին:

Առաջինը ուղի Հրանդն է, Պոլսի ռադիոյի երբեմնի հայտնի
մենակատարը, որ ջութակահար էմիլ Նունեի, դաշնակահար Պ. Շե-
լալյանի և թավջութակահար Վ. Պերպերյանի մասնակցությամբ
նվագախումբ կազմելով, հաճախ հայկական և արաբական ժողո-
վրդական շրջաններում համերգներ է տվել: Նրա հայտագրերում
տեղ են գտել ինչպես հայկական, այնպես էլ արաբական և պարս-
կական դասական ու ժողովրդական եղանակներ: Հատկապես արա-
բական հնամյա եղանակների նորացման և մշակման ասպարեզում
Հրանդը վայելել է հմուտ վարպետի համբավ⁵⁴:

Մյուսը՝ հռչակավոր քամանչիստ Ռուբենը, դարաբաղցի Սա-
նամ Նավասու տոհմից սերված իսկական աշուղը, իր արվեստով
շրջել է աշխարհով մեկ, հայ ժողովրդական նվագը հասցնելով մին-
չև Հեռավոր Արևելք: Որպես երկրորդ հայրենիք նա ընտրել է Սի-
րիան և Լիբանանը ու հանդես եկել բոլոր մեծ ու փոքր քաղաքնե-
րում: Հայ և արաբ աշխատավորական խավերի սիրված նվագածու,
նրա բոլոր համերգները վայելել են երկու երկրների պետական
մարդկանց հովանավորությունը, առ ի գնահատություն այն բանի,
որ նրա գործերի «շունչն է Արևելքը»⁵⁵: Նա մեծ վաստակ ունի հայ-
արաբական երաժշտական կապերի ամրապնդման ասպարեզում:
Նրա ստեղծագործություններից «Լիբանանյան հայրենիքը» և հատ-
կապես «Արաբիայի ձկնորսները» բարձր գնահատականի են ար-
ժանացել «ուժեղ կառույցով և կշռույթի ալյազանությամբ»⁵⁶:

Լիբանանի մշակութային վերելքի գործին նրա ակտիվ մաս-
նակցությունն ու հայ-արաբական բարեկամության ամրապնդման
ի խնդիր նրա աշխատանքը արժանացել են արդար վարձատրու-
թյան՝ 1955 թ. Լիբանանի Արժանյաց ոսկե մեդալի, իսկ 1957 թ.
Լիբանանի Մայրիների բարձրագույն շքանշանի⁵⁷: 1962 թ. հյու-
սիսային Սիրիայի ազգային կրթության տնօրենության հրավերով
Հալեպի արաբական շրջաններում տված համերգներն ու «Ողջուն
Հալեպին» ձոներգը առիթ են հանդիսացել, որ նրա ծառայությունը
«հայ և արաբ եղբայրությունը» ամրապնդելու գործին՝ արժանանա
նահանգապետության հատուկ պատվոգրին⁵⁸:

⁵⁴ «Ազգակ», 2. և 17.6.1951:

⁵⁵ «Սփյուռք», 8.8.1959:

⁵⁶ «Այգ», 11.5.1955:

⁵⁷ «Սփյուռք», 8.8.1959, «Այգ», 31.12.1955:

⁵⁸ «Սփյուռք», 20.3.1963:

Սիրիայում և Լիբանանում կիթառը անծանոթ մի նվագարան է մնացել մինչև Վրույր Մազմանյանի ասպարեզ զալը: Արդարև, եվրոպական մի շարք ֆիլհարմոնիկ ընկերությունների անդամ հայ կիթառիստն է, որ «շնորհիվ իր խոր հմտության և իր անկեղծ սիրուն ու նվիրման», մասսայականացրել է կիթառը նախ Լիբանանում և ապա Սիրիայում, հաճախ հանդես գալով համերգներով և դասախոսություններով, միաժամանակ և պատրաստելով հայ և արաբ կիթառիոտների (Ֆարրուխ, Ապատի, Իշխանյան եղբայրներ և այլն) մի հույլ⁵⁰:

Լիբանանահայերը, իրենց երկրորդ հայրենիքի երաժշտության վերելքին կարևոր մասնակցություն բերելուց բացի, մեծ նպաստ են հասցրել մշակութային ավելի ցածր աստիճանի վրա կանգնած արաբական մյուս երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Քուվեյթում, Լիբիայում և այլուր, երաժշտությունը տարածելու դործին:

* * *

Երաժշտության ասպարեզում հայ-սիրիական կապերը անհամեմատ ցածր աստիճանի վրա են մնացել: Ծվ գա ոչ միայն այն պատճառով, որ երաժշտության (հատկապես դասական) զարգացման ճանապարհին Սիրիան չի ապրել Լիբանանի նման վերընթաց ուղի և որ երկրի քաղաքական ու մշակութային կենտրոն Դամասկոսում հայ գաղթօջախը միշտ էլ սակավաթիվ է եղել և կուլտուրական սահմանափակ կյանք է ունեցել: Քսանական թվականների կեսերից քաղաքական վերիվայրումներն ու դրանց հետևանքով ինչպես երեց, այնպես էլ նորահաս հայ մտավորականների և մշակութային գործիչների անընդմեջ արտահոսքը Հալեպից հիմնականում դեպի Բեյրութ, Հյուսիսային Սիրիայի ստվարաթիվ հայության շրջանում ևս սահմանափակել են գեղարվեստական զարգացման և ուրեմն նվաճված դիրքերից սիրիական ազգային մշակույթի վերելքին հիշարժան մասնակցություն բերելու հնարավորությունները:

Տակավին քսանական թվականների սկզբին Հալեպի հայերի և արաբների շրջանում երաժշտությունը զարգացնելու և տաղանդավորներին հայտնաբերելու նպատակով եռանդուն գործունեու-

⁵⁰ «Այգ», 16.2.1954 և 8.11.1955: «Սփյուռք», 27.4.1958 և 14.5.1960: «Է՝ Օրիան» և «Էր Սուար» թերթերի երաժշտական ֆնադատները շատ բարձր են գնահատել Վ. Մազմանյանի աշխատանքը:

թյուն էր ծավալել երաժշտագետ Գ. Ծ. Նալբանդյանը: Նրան զորավիգ էին լինում տեղի արաբ, հայ և օտար ռեժիսորները, որոնց գործակցությամբ էլ ստեղծվում է «Գողթան» երգչախումբ-նվագախումբը (1923 թ.): «Գողթանի» ձեռնարկները ոչ միայն Գ. Նալբանդյանին ապահովեցին ֆրանսիական «Ակադեմիայի սպայի» շքանշան, այլև առիթ տվեցին տեղի երաժշտասերներին՝ «Հա Սիրի» թերթի խմբագրի գրչով նշելու. «Եթե Արևելքում կա մի ժողովուրդ, որ ինչպես գործնական, այնպես էլ գեղարվեստական տեսակետից գերազանց արժանիքներ ունի, ապա դա հայ ժողովուրդն է»⁶⁰: 1924 թ., երբ սիրիական ժողովրդի ազգային-ազատագրական պոռթկման հավանականությունը դեմ հանդիման՝ ֆրանսիական զաղութարարները աջ ու ձախ կասկածելիներ էին որոնում, դաշնակների կողմից որպես կոմունիստ ամբաստանվելով Գ. Նալբանդյանը արքայական Սիրիայից և նրա շարժումն էլ խափանվեց⁶¹:

Երեսնական թվականների սկզբին Հալեպում, որտեղ, ինչպես վկայում է ժամանակի մամուլը, «երգ և երաժշտություն բացարձակապես կփայլին իրենց բացակայությամբ»⁶², եվրոպական ու հայկական դասական երաժշտությունը և արաբական ժողովրդական երգերը մասսայականացնելու ուղղությամբ հիշարժան գործունեություն ծավալեց Հ. Նալբանդյանի նվագախումբը: Հայազգի երաժիշտը, որ սիրիացի երգահան Ահմեդ Իբարիի, երգիչ Ազիզ Ղանեմի և հայ ու արաբ 15 նվագածուների հետ համագործակցաբար հայ-արաբական երաժշտական շփումների նախաքայլերին էր ձեռնարկում⁶³, քաջալերություն չգտնելով, թողեց Սիրիան և Եթովպիայի կայսեր հրավերով տեղափոխվեց Ադիս Աբեբա: 1950 թ., որոշելով վերադառնալ Սիրիա, Հ. Նալբանդյանը հրաժարվեց Հաբեշական արքայական գնդի երաժշտապետի պաշտոնից, սակայն Դամասկոսում հաստատված ռազմական դիկտատուրայից խրտնեւում՝ նախընտրեց բնակություն հաստատել Լիբանանում⁶⁴:

Դարձյալ երեսնական թվականներին, Հալեպի «Հայ մշակութային միությունը», որը ղեկավարում էր Աբուհայաթյանը, տեղի երաժշտական կյանքում և հատկապես հայ-արաբական երաժշտա-

⁶⁰ «La Syrie», 16.3.1924.

⁶¹ Տե՛ս «Սիրիական մամուլ», 11.2.1923, 15.3.1923, 13.4.1924, 10 և 20.7.1924:

⁶² «Եփրատ», 10.2.1933:

⁶³ «Եփրատ», 14.4.1933:

⁶⁴ «Ազդակ», 5.3.1950:

կան շփումների ասպարեզում փորձեց տեղաշարժ կատարել՝ երա-
ժիշտներ Միշելի, Թոմասի և Մարիսամի օգնականութեամբ, սակայն
նույնպես ընկրկեց իր առաջ հարուցված դժվարությունների առաջ⁶⁵։

Հիսունական տասնամյակի երկրորդ կեսին միայն, հանրապե-
տական կարգերի վերահաստատումից հետո, հայ-արաբական
երաժշտական կապերը, թեկուզ վտիտ, հանգուցվեցին Հալեպ քա-
ղաքում, հիմնականում «Ասլամազյան» քառյակի և «Կոմիտաս» ու
«Սպենդիարյան» երգչախմբերի ջանքերով։

«Ասլամազյան» քառյակի հիմնական առաջադրանքն է եղել ոչ
միայն պայքարել դասական երաժշտության նկատմամբ հալեպա-
հայերի մոտ տիրող անտարբերության դեմ, այլև արաբ և հայ ժո-
ղովուրդների «հոգեկան ապրումներու և հույզերու ընդհանումը»
հեշտացնելու նպատակով՝ հայերի շրջանում խորացնել սերն ու
հետաքրքրությունը արաբական երաժշտության նկատմամբ, մշա-
կելով արաբական ժողովրդական երգերը⁶⁶։ Շատարեյան վարդա-
պետի ղեկավարությամբ գործող «Կոմիտաս» երգչախումբը իր հա-
մերդների հայտագրում կանոնավորաբար ընդգրկել է արաբական
ժողովրդական երգեր, հնարավորություն ստեղծելով, որ արաբ
երաժիշտների շրջանում սաղմնավորվի հայ-արաբական երաժշտա-
կան համագործակցության գաղափարը⁶⁷։ Հայ երիտասարդաց ըն-
կերակցության 1953 թ. գործող «Սպենդիարյան» երգչախումբն էլ,
Ժ. Իսկենյանի ղեկավարությամբ, մեծ մասամբ Հալեպի երաժշ-
տանոցի տնօրեն Հաշեմ Ֆանսայի կողմից դաշնավորված արաբե-
րեն բազմաձայն երգերը («Ալ-Քամհ», «Մաութինի» և այլն) իր
հայտագրում ընդգրկող առաջին խմբերից է եղել, դառնալով սի-
րիական պետական տոների առթիվ Հալեպում արաբների կողմից
կազմակերպվող հավաքույթների ծրագրի զարդը։ Հայ-արաբական
խառը երգացանկով, —ասել է խմբավարը,—նա եռլ միայն երախ-
տագիտական արժանավոր տուրք մը կուտա արաբ ազնիվ ժողո-
վրբին, այլև կժառայե ամրապնդելու հայ և արաբ ժողովուրդներու
սրտակցության ամուր հիմքերը⁶⁸։ Նշենք, որ երգչախմբի ամբողջ
ծրագիրը հաճախ է հաղորդվել Դամասկոսի ռադիոյով և հեռուս-
տատեսությամբ⁶⁹։

⁶⁵ «Եփրատ», 13.4.1934։

⁶⁶ «Երկիր», 1958, Բ. հտ., էջ 66—67։

⁶⁷ «Արևելք», 4.4.1958։

⁶⁸ «Հայրենիքի ձայն», 17.12.1966։

⁶⁹ «Հայրենիքի ձայն», 15.12.1971։

Ուշագրավ է արար գրող Խալիլ Հինդաուի կողմից ընդգծված այն փաստը, որ Դիա և Նըջմե Սուկկարի ջութակահար եղբայրների տաղանդը մանուկ հասակից հայտնաբերվել է Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հալեպի ընտանեկան ակումբի վարչության կողմից, որը և կազմակերպել է նրանց առաջին համերգը՝ սիրիական կառավարության ուշադրությունը հրավիրելով նրանց ապագայով զբաղվելու անհրաժեշտության վրա⁷⁰։ Ն. Սուկկարին, 1958 թ. Փարիզի ազգային երաժշտանոցի ջութակի առաջին մրցանակը նվաճելով վերադարձել է իր ծննդավայրը և ի նշան հայերի նկատմամբ երախտագիտության, առաջին իսկ համերգում նվագել Արամ Խաչատրյանի գործերից⁷¹։

* * *

Տակավին երկրորդ աշխարհամարտի օրերին, Բեյրութի «Ռադիո Լրվան» ռադիոկայանին կից գործել է «Հայկական բաժանմունք», որի հաղորդումները 1942 թ. ապրիլից սկսած ընդարձակվել են⁷², իսկ հիսունական թվականների սկզբին «Բեյրութի ռադիոկայանի հայկական ժամի հանձնախումբի» կազմակերպումով էլ ավելի են ծավալվել⁷³։ Ռադիոն իր հայկական հաղորդումները դարձրել է հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը և հատկապես երաժշտությունը արաբ ունկնդիրներին ծանոթացնելու ներգործուն միջոց։ Այսպես, հատուկ հաղորդումներ են նվիրվել հայ երաժշտության պատմությանը, Սայաթ-Նովայի կյանքին ու գործին, Կոմիտասի ծննդյան 75-ամյակին, Ալ. Սպենդիարյանի և սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործություններին⁷⁴։

Փոխադարձաբար, քառասնական տասնամյակի վերջերից Բեյրութի ռադիոն սկսել է հայերեն լեզվով հատուկ հայտագրեր հաղորդել, հայերին ծանոթացնելու համար լիբանանյան մշակույթը

⁷⁰ «Սուրիա», 21.3.1950։

⁷¹ «Արևելք», 14.12.1958։

⁷² Ամենօրյա քաղաքական լրատվության վրա երկուշաբթի օրերին մանկական, շոբեքշաբթի օրերին ընտանեկան և հինգշաբթի օրերին գրական-գեղարվեստական հայտագրեր են ավելացվել (տե՛ս «Ժողովրդի ձայն», 1.5.1942)։ 1943 թ. հունվարից ավելացվել է ևս մեկ հայտագիր. յուրաքանչյուր երկուշաբթի հատուկ ժամ է տրամադրվել միջազգային քաղաքական տեսության և ռազմաճակատների դրության լուսաբանմանը (տե՛ս «Ժողովրդի ձայն», 10.1.1943)։

⁷³ «Զարթոնք», 18.9.1950, 21.8.1952, 5 և 12.2.1953, 5.3.1953։

⁷⁴ «Ժողովրդի ձայն», 7.7.1942, 1.8.1942, 22.3.1943, 19.6.1944։ «Առավոտ», 10.10.1945 և 30.11.1945։ «Զարթոնք», 7.5.1947։

և հատկապես արաբական գրականությունը: Այս (ինչպես և հայ-արաբական մշակութային կապերի ծավալման հետ առնչվող մի շարք ուրիշ) միջոցառումները, հիմնականում վարել է ազգային կրթության նախարարության պատասխանատու աշխատող Մ. Իսկենդերյանը: Նա ելույթներ է ունեցել լիբանանի պատմական հուշարձանների, ազգային կրթության դրվածքի, լիբանանցի գրող Բուտրոս Բուստանիի, Աբու Ալա ալ-Մաարիի կյանքի ու ստեղծագործության և այլ հարցերի շուրջ: Մ. Իսկենդերյանի բազմամյա (1943—1966) աշխատանքը բարձր է գնահատվել լիբանանյան և արաբական ուրիշ երկրների կառավարությունների կողմից, որոնք նրան պարգևատրել են շքանշաններով⁷⁶:

Հիսունական տասնամյակում շարունակվել և ավելի լայն ծավալ է ստացել ծանոթացումը հայկական երաժշտությանը Բեյրութի ռադիոկայանից և միաժամանակ այդ ուղղությամբ սկսել է գործել նաև Դամասկոսի տիրիական ռադիոկայանը: Հայ երգն ու երաժշտությունը առանձնապես կարևոր տեղ են գրավել Հալեպի ռադիոկայանից կատարվող հաղորդումների հայտագրերում⁷⁶:

Լիբանանյան հեռուստատեսության հաղորդումների սկսման օրից (1959) հայկական երգն ու նվագը նրա հայտագրերում գրավել են արժանի տեղ: Մնայուն «հայկական ժամից» անկախաբար, Բեյրութի կապույտ էկրանների վրա հաճախ են երևացել քամանչիստ Ռուբենը, երգիչ Խ. Փիլիկյանը և ուրիշներ⁷⁷:

Հայկական հատուկ հայտագրերի հաղորդման գծով ակտիվ գործունեություն է ծավալել համերգավար Վիգի Կարապետյանը, օգտագործելով հայկական երգի ու պարի «Քնար» անսամբլը, Օ. Սյուրմելյանի Կոմիտասի անվան քառյակը և լիբանանահայ մի շարք ծանոթ արվեստագետների: Հայկական այդ հայտագրերի հաջողությանը մեծապես օգնել է Վ. Կարապետյանի գործակից՝ արաբ բեմադրիչ Իսամ Համաուին⁷⁸:

3

Քառասնական թվականներին, հակառակ Գեղարվեստի Ակադեմիայում նկարչության ֆակուլտետի գործունեության և նկա-

⁷⁶ Տե՛ս «Այդ», 2.7.1955 և «Ազդակ», 13.7.1949, 2.2.1950:

⁷⁷ «Աուրիա», 6.5.1950 և 17.9.1950:

⁷⁷ «Սփյուռք», 8.8.1959: «Մեր նշանարանն է հառաչ», 13 և 20.1.1963:

⁷⁸ «Սփյուռք», 15.12.1964:

րիչների միության գոյության, նկարչական կյանքը լիրանանում անկազմակերպ և անկերպարան բնույթ է կրել: Պետական հովանավորությունից և ներքին կազմակերպությունից զուրկ ինչպես արաբ, այնպես էլ հայ նկարիչների ուղին անտանելիորեն դժվար է եղել, արվեստագետներին նյութական ու բարոյական ոչ մի քաջալերություն չի ցուցաբերվել: Հայկական մամուլը իրավացիորեն ամենախիստ բառերով դատապարտել է նկարչության ասպարեզում հատկապես «պեյրուֆահայության քարացած ճաշակը», դառնությանը ընդգծելով, որ լիրանանի հայությունը միայն «շարժանկարներ կուլ տալ գիտե»⁷⁹:

Սակայն հայ տաղանդավոր նկարիչները վրձինը ցած չեն դրել, լիրանանի ավազագույն նկարիչ Ժորժ Սիրը, իր հիշողություններում արդարը հատուցելով լիրանանյան նկարչական արվեստի առաջ նոր ուղիներ բացող Հարություն Կալենցին, ընդգծել է, որ նա վայելել է լիրանանյան պետական գործիչ Ֆարիդ Թրադի հովանավորությունը⁸⁰: Այդ հովանավորությունը կիսել է և լիրանանի «ամենաօժտված արվեստագետներից» Արմինե Կալենցը, որի լիրանանյան բնանկարների «զարմանալի արտահայտչականությունը» քիչ երկրպագուներ չի ունեցել տեղական շրջաններում⁸¹: Հովհաննես Զոմյանի շնորհալի նախաքայլերը քաջալերվել են արար արվեստասեր Սաադիի կողմից, որը մամուլի վկայությամբ շատ ջանք է գործադրել «հայտնագործելու հայ արվեստագետներու արժանիքները»⁸²: Նկարիչ Տ. Տատրյանը Բեյրութում իր համար ճանապարհ է հարթել հիմնականում արաբ բարերարների քաջալերանքով և օգնությամբ⁸³:

Հայրենադարձությունը Կալենցներին, Զոմյանին, Ասատուրյանին և լիրանանահայ ու սիրիահայ ուրիշ շատ արվեստագետների փրկեց սփյուռքի անորոշ և դժվարին պայմաններից, հնարավորություն ստեղծելով, որ նրանց տաղանդը իր ամբողջ փայլը դրսևորի հայրենի օջախում: Ինչ վերաբերում է լիրանանում և Սիրիայում մնացած նրանց արվեստակիցներին, ապա նրանք, արաբ արվեստասերների քաջալերությամբ հանդերձ, անասելի դժվարություններով միայն իրենց ձեռքում են պահել վրձինն ու երանգա-

⁷⁹ «Զարթոնք», 5.12.1945:

⁸⁰ „L'Orient“, 27.2.1960.

⁸¹ „Les Cahiers de l'Est“, 1946, № 4, p. 197.

⁸² «Ժողովուրդի ձայն», 19.7.1943:

⁸³ «Զարթոնք», 18.5.1953:

պնակը: Լիբանանցի արվեստաբանների բարձր գնահատանքին արժանացած Սոնիա Աղճյանը (Ս. Սյունի, Ս. Հարիս), օրինակ, մամուլի վկայությամբ հաղթահարել է «մեծ դժվարություններ» և ստեղծագործել «նյութական և հոգեկան ծանր պայմաններ» ապրելով: Լիբանանի առաջնակարգ նկարիչների կարգին դասվելու գործում նրան շատ է օգնել «իր ներշնչման աղբյուրը Լիբանանի բանաստեղծական բնությունը» դարձնելը: Իր երկրորդ հայրենիքի մշակույթը ներկայացնելու հանգամանքով էլ Աղճյանը հրավիրվել է Հռոմ և երկրի մշակույթի զարգացման գործին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել Լիբանանյան առաջին կարգի ոսկյա շքանշանով⁸⁴:

Հետպատերազմյան երկրորդ տասնամյակում միայն լուրջ բեկում առաջացավ Լիբանանի նկարչական կյանքում: Այդ գործում կարևոր բաժին ունեցան հայ նկարիչները⁸⁵, որոնք 1955 թ. հիմնեցին «Բեյրութահայ նկարիչների միությունը»⁸⁶:

1954 թ. սկսած երկրի նկարչական վերելքի հաշվեկշիռը կատարելու, անկախ ազգային պատկանելությունից Լիբանանյան բոլոր նկարիչների մերձեցումը հեշտացնելու և նրանց նվաճումները ցուցադրելու նպատակով, կրթական նախարարությունը նախաձեռնել է սեզոնային նկարահանումների կազմակերպում: Հենց առաջին «գարնանային» և «աշնանային» սալոններին իրենց գործերով մասնակցել են մոտ երկու տասնյակ հայ նկարիչներ, ոչ միայն իրենց ձեռք բերած արդյունքները և հեռանկարները ցուցադրելու, այլև երկրի բոլոր արվեստագետների հետ համագործակցաբար Լիբանանյան նկարչության վերելքի գործում իրենց բաժինը ներդնելու պատրաստակամությունը հայտնելու համար: Մամուլը հավաստում է, որ Լիբանանահայ երիտասարդ նկարիչները, հատկապես 1955 թ. «ամառային» սալոնից սկսած, ռեալիստական ար-

⁸⁴ «Այգ», 25.12.1956: Ս. Աղճյանի մասին արար և հայ քննադատների ելույթները տե՛ս «Զարթոնք», 26.5.1945: «Այգ», 1.1.1954, 18.6.1954 և 25.11.1956:

⁸⁵ 1948 թ. աշնանը Կիլիկիայի կաթողիկոսարանում բացված հայկական արվեստի ցուցահանդեսը եղել է առաջին առիթներից մեկը, որ արար մտավորականությանը հնարավորություն է տվել ծանոթանալու հայ բազմադարյան մշակույթի հետ: Լիբանանի պետական թանգարանի տնօրեն Նուրեդդին Բեյհումը հիացմունքով է խոսել «Հայ ստեղծագործ հանճարի» մասին, իսկ հայտնի մտավորական Սելիմ Եղեբին՝ «հայ արվեստի գանձերի» ճոխության մասին (տե՛ս «Սուրիա», 6.2.1949):

⁸⁶ «Այգ», 15.11.1955:

վկաստի բաժնում՝ լիբանանցի ականավոր նկարիչներ Ջեմայելի, Օնսիի ու Ֆաբրուիի հետ, իրենց կարևոր խոսքն են ասել⁸⁷։

Բոլոր դեպքերում, արվեստի տարբեր ուղղությունների բախումից անկախ, ավանդական դարձած այդ ստալոնները՝ կարևոր հանգրվան են հանդիսացել նկարչական արվեստի ասպարեզում երկրի վերելքին լիբանանահայ նկարիչների մասնակցության կարևորությունը դրսևորելու և մյուս կողմից հայերի և արաբների մշակութային հարաբերությունները սերտացնելու տեսակետից։ Իրոք, այդ նկարահանողների շնորհիվ է, որ բազմացել ու սիստեմատիկ են դարձել շփումները հայ և արաբ արվեստագետների՝ Խալիֆիի ու Կիրակոսյանի, Կանաանի և Թերճանի, Ջեմայելի և Ճիպոդլյանի, Աքլի և Դարբինյանի, Ֆաբրուիի, Զդեյբի, Ալ-Ռայեսի, Իրանիի և նրանց հայ արվեստակիցների միջև⁸⁸։ Այդ նկարահանողների շնորհիվ է դարձյալ, որ արաբական մամուլը հնարավորություն է ստացել արաբ ժողովրդական լայն շրջաններին ներկայացնել հայ գեղանկարչության նվաճումները⁸⁹, նույնիսկ կազմակերպելու կամ հովանավորելու առանձին հայ նկարիչների գործերի ցուցահանգեսները⁹⁰։

Լիբանանի նկարչական կյանքի վերելքը ավելի կազմակերպված իրականացնելու տեսակետից մեծ օգնություն է եղել 1961 թ. գեղարվեստի «Սուրսոկ» թանգարանի բացումը և կերպարվեստի ավելի մեծ ցուցահանգեսների կազմակերպումը, որոնցում հանդես են եկել նորանոր հայ տաղանդներ⁹¹։ Արժե նշել, որ նրանցից շատերը իրենց աշխատանքներում ներշնչվել են լիբանանյան բնությունից, լիբանանցիների կյանքից ու կենցաղից և ուշագրավ արվեստով իրենց կտավներում վերարտադրել էապես ճտեղական մթնոլորտ, ինչպես Սոֆիա Երամյանը, որի յուղանկարների հիմնական թեման կյանքն է, երջանկությունը, մարդկայնությունը։ Կենսուրախությամբ ողողված նրա նկարներում լիբանանյան գյուղն է և գյուղական «դարկեն», Բեյթեդդինի պալատն է և հողի աշխատավորների խրախճանքը ավազանի շուրջ⁹²։

⁸⁷ «Այգ», 17.12.1954 և 14.8.1955։

⁸⁸ «Մեր նշանարանն է հառաչ», 6.1.1957։

⁸⁹ 1960/7/17 և 1969/5/12 «النداء»

⁹⁰ 1971/10/23 «الاخبار»

⁹¹ Մամուլը հավաստում է, որ 1964 թ. ցուցահանգեսներից մեկին մասնակցություն են բերել 64 հայ նկարիչներ (տե՛ս «Հառաչ գրական», 12.6.1964։ «Նախիր», 3.12.1961։ «Սփյուռք», 16.1.1963 և 16.5.1964։

⁹² A. d'Andréu, Sophie Yeramtian sans méfiance, «Magazine», No. 538, 13.4.1967, p. 63.

Ինչ խոսք, սակայն, որ լիբանանահայերի նպաստը երկրի մշակութային կարևոր բնագավառներից մեկին ոչ այնքան քանակական, որքան որակական է եղել: Բավական է ասել, որ միջազգային կարևոր ցուցահանդեսներում լիբանանի պատիվը բարձր պահելու գործում հայ երիտասարդ նկարիչները կանգնել են առաջին գծի վրա: Ժ. Կյովերչիյանը Հռոմի իտալա-լիբանանյան ցուցահանդեսում զբաղեցրել է ակնառու տեղ⁸³: Ժ. Դարբինյանի գործերը Նյու-Յորքում գտած հաջողության համար վերցվել են լիբանանյան ազգային պատկերասրահի կողմից⁸⁴: Վ. Կյոքկոզյանը ուսանողական միջազգային մրցույթում շահել է առաջին մրցանակը⁸⁵:

Երկրում ազգային կերպարվեստի զարգացման աստիճանաչափի բարձրացման թելադրանքով, 1963 թ. լիբանանյան կառավարությունը որոշում է կայացրել պետական և հանրային հիմնարկների ներքին ձևավորման համար արտասահմանյան արվեստագետներին դիմելու պրակտիկայից հրաժարվել: Այդ որոշումը կենսագործելով, հանրագույն շինությունների նախարարությունը, նախագահական և արդարադատական պալատների համար որմնակարների և զարդագորգերի համալիրանանյան մրցույթ հայտարարեց: Ժյուրիի կազմում ընդգրկվել էին փարիզյան երեք մեծ մասնագետներ (Օբյուսոն, Տարլիերի և Վոթենսկի) և լիբանանյան յոթ հայտնի մտավորականներ (Ա. Տապետ, Պ. Ալ-Խուրի, Հ. էդդե, Օ. Օնսի, Ռ. Ղանեմ, Ժ. Աբու Ռեզկ և Մ. Նամատ): Ընդունվեցին «տեղական գույն և դրոշմ» կրող այն բոլոր գործերը, որոնք կարող էին «լիբանանը և իր ճարտարվեստը ներկայացնել արտասահմանում»: Լիբանանյան բազմահարյուր արվեստագետների հետ մասնակցելով մրցույթին, երեք առաջին մրցանակներն էլ նվաճեցին հայ նկարիչներ՝ Ժ. Գազանճյանը և Ժ. Կյովերչիյանը զարդագորգերի, իսկ Հ. Դիարբերյանը՝ որմնակարների գծով⁸⁶:

Այս բոլորը ինքնըստինքյան պերճախոս կերպով վկայում են այն լուրջ դերի մասին, որ լիբանանահայ արվեստագետները խաղում են երկրի մշակութային վերելքի ասպարեզում: Սակայն հայերի տեղն ու դերը ավելի ցայտուն դարձնելու համար անհրաժեշտ է առանձին խոսել մի քանի երեւելի դեմքերի մասին:

⁸³ «Սփյուռք», 22.11.1962:

⁸⁴ «Այգ», 15.5.1965:

⁸⁵ «Սփյուռք», 20.6.1959:

⁸⁶ ١٩٦٤ / ١١ / ٢١ «السياسة»:

«Լիբանանյան հայրենիքին հայ ժողովուրդին տրված լավագույն պարգևը» այսպես է գրել մամուլը Մերձավոր Արևելքի լավագույն ծաղրանկարիչներից մեկի՝ Տիրան Աճեմյանի մասին⁹⁷, որ լիբանանյան մամուլի էջերում ծաղրանկարներով հանդես եկող առաջին արվեստագետներից մեկն է եղել:

Հանրահայտ իրողությունն է, որ արաբական երկրներից միայն Եգիպտոսի և Լիբանանի մամուլն է, որ ծաղրանկարչության ասպարեզում շուրջ հիսնամյա ավանդույթներ ունի: Այդ ավանդույթների ստեղծման ու զարգացման գործում, համաձայն լիբանանյան արվեստաբան Արգել Քերիմ Աբու ան-Նասրի վկայության, առաջնային ներդրումը պատկանում է Եգիպտոսում Ալ. Սարուխանին, իսկ Լիբանանում Տ. Աճեմյանին⁹⁸:

Իրոք, դեռ քսանական թվականներից լիբանանյան ծաղրանկարչության վաստակավորների՝ Իզզետ Խուրշիդի, Ռեդուան Շահալի և Խալիլ ալ-Աշկարի հետ միաժամանակ, Տ. Աճեմյանը իր խոսքն է ասել Լիբանանի արաբալեզու և ֆրանսիական թերթերի էջերից: «Ադ-Դաբբուր» հանրահռչակ երգիծաթերթի հիմնադիրներից Ի. Խուրշիդը, սակայն, շուտով լքել է հրապարակախոսությունը և անցել դիվանագիտական աշխատանքի, Ռ. Շահալը աստիճանաբար նվիրվել է գրականությանը և գեղանկարչությանը, ալ-Աշկարը ևս հետևել է նրանց: Եվ միայն Տիրանն է, —ինչպես լիբանանյան ծաղրանկարչության պատմությունն ուրվագծելիս նշում է արվեստաբան Աբու ան-Նասրը,—որ 1926 թ. մինչև այսօր, անխոնջ նվիրումով ծառայում է Լիբանանում ծաղրանկարչական արվեստի վերելքին և այդ ասպարեզում իր երկրորդ հայրենիքը հռչակում ոչ միայն ամբողջ Արաբական Արևելքում, այլև արևմտյան Եվրոպայում:

Տ. Աճեմյանի ծաղրանկարները կանոնավորաբար հյուրընկալվել են արաբական «Ադ-Դաբբուր», «Ատ-Սայյազ», «Ալ-Ամալ», «Ան-Նահար», «Կոհա», «Ալ-ջումհուր ալ-ջադիդ», «Առ-Ռաուադ» և «Ալ-ջարիդա», ֆրանսիական «Լ'Օրիան», «Լը Սուար», «Անուտ», «Լա ռեվյու գյու Լիբան», հայկական «Նայիրի», «Այգ» և շատ այլ թերթերում:

Լիբանանի արաբական մամուլը նրան է պարտական հատկապես Ղանտուսի՝ ժողովրդական առողջ հումորով բուրժուական

⁹⁷ «Այգ», 13.10.1956:

⁹⁸ «الاسبوع العربي» - العدد ١٣٩٠ ص ٤٨ - ٥٣

բարքերն ու սահմանափակությունները քննադատող լիբանանցի դեղջուկի կերպարը⁹⁹։

Նույնքան վաստակավոր և նույնպես հանրահռչակ է գեղանկարիչ Պոլ Կիրակոսյանը։ Նրա նկարները, բացի Բեյրութից, ցուցադրվել են նաև Ֆլորենցիայում, Տոսկանայում, Փարիզում, Միլանում, Ֆրանկֆուրտում, Մարլբուրգում, Հռոմում և այլն։ 14 անգամ նա իր ներկայությունը արձանագրել է Ալեքսանդրիայի և Սան-Պաուլոյի համաշխարհային բիեննալներում։ Ֆլորենցիայի և Փարիզի միջազգային նկարահանողներում մեն-մենակ ներկայացրել է լիբանանը։ 1957 թ. Բեյրութի միջազգային նկարահանողներում՝ ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի և Արաբական Արևելքի 150 արվեստագետների մեջ լավագույնը հռչակվելով, նա արժանացել է ոչ միայն լիբանանյան ժյուրիի, այլև Իտալիայի Գեղարվեստից ակադեմիայի հատուկ ժյուրիի առաջին մրցանակներին։ Առաջին կարգի մրցանակ է ստացել նաև Ֆլորենցիայում, Տոսկանայից վերադարձել է ոսկյա մեդալով, իսկ Փարիզի բիեննալում ժան Մուլենի կողմից դասվել է ժամանակակից համաշխարհային երիտասարդական նկարչության չորս ամենավաճառական դեմքերի շարքին¹⁰⁰։

Քանդակագործության գծով լիբանանի ամենահայտնի արվեստագետը համարվում է Բեյրութի Գեղարվեստից Ակադեմիայի շրջանավարտ, աշխարհահռչակ վարպետներ Յոսսենի, Ժիմոնի և Կանիոյի աշակերտ Զավեն Խըդշյանը, որ լիբանանյան մամուլի արվեստի քննադատների դրվատանքին է արժանացել¹⁰¹։ Զարդարվեստի ասպարեզում լիբանանի առաջին կին մասնագետն է հռչակվել էլո Տեր-Մելքոնյանը¹⁰²։ Մանրանկար արձանագործության գծով ամբողջ Արաբական Արևելքում համբավվել են էլմասյան քույրերը, որոնք արաբ ժողովուրդների ազգագրությունը, կյանքն

⁹⁹ Ծաղրանկարչության ասպարեզում Աճեմյանի հետնորդ Մ. Արարատյանը միաժամանակ արաբական գրքերի նկարազարդման ուղղությամբ լուրջ աշխատանքներ է տարել և բարձր գնահատականի արժանացել (տե՛ս «Նայիրի», 5.2.1961)։

¹⁰⁰ M. Rebetz, Paul Guiragossian à cœur ouvert, „Magazine“ 1967 p. 79—81։ Կիրակոսյանի մասին լիբանանյան արվեստաբաններ Ֆարուգ ալ-Բադիլիի, Ռ. Շահալի, Ժ. Հազարի, Ք. Ղազիի և այլոց հոդվածները տե՛ս «Ալ-Ուսբու ալ-արաբի», 1967 մայիսի 22, էջ 54—61։ «Աթ-թարիկ», 1966, № 3—4, էջ 145—147 և այլուր։

¹⁰¹ „L'Orient Littéraire“, 4.6.1961.

¹⁰² «Ազդակ», 8.7.1956։

ու կենցաղը պատկերող բարձրարժեքի տիկնիկներով մասնակցել են Փարիզի, Բարիի, Բեռլինի և Դամասկոսի միջազգային ցուցահանդեսներին, արժանանալով լիբանանյան շքանշանի և սիրիական պատվոգրի¹⁰³։ Լիբանանի պետական պաշտոնական նկարիչ է կարգվել Մանուկ Ալեմյանը, որի նկարներով են զարդարվել պետական դրամատոմսերը, մի շարք դրոշմաթղթեր և պաշտոնական հրատարակություններ¹⁰⁴։

* * *

Ինչպես երաժշտության, այնպես էլ նկարչության զարգացման բնագավառում համեմատաբար համեստ է եղել հայերի դերը Սիրիայում։

Հիմնական զանգվածով երկրի հյուսիսային գավառական կենտրոններում համախումբ, սիրիահայերը ավելի շատ են հըռ-չակվել ժողովրդական «արվեստների» ասպարեզում՝ պղնձագործական, գորգագործական և այլ աշխատանքներով, քան թե կերպարվեստով։ Այսպես, օրինակ, հալեպահայ Վ. Մալճյանի հայկական գորգերը սիրիական ցուցահանդեսներում արժանացել են առաջին մրցանակների, իսկ պղնձագործ Գալեմբարյան եղբայրների աշխատանքները մեծ պահանջարկ են ունեցել արտասահմանում¹⁰⁵։

1955 թ. է. միայն, որ բժիշկ Ռ. Ճեպեճյանը և Հալեպի ճարտարապետական ինստիտուտի դասախոս պրոֆ. Զ. Գաբլանը, 1954 թ. աշնանը Սիրիայի Հայ բարեգործական ընդհանուր միության տեղական մասնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպված նկարչության և գծագրության դասընթացների (ղեկավար Զ. Գաբլան) հաջողությունից քաջալերված¹⁰⁶, ստեղծեցին ամբողջ «Սիրիայի գեղարվեստական կյանքում ուշագրավ երևույթ հանդիսացող ու երկրում նկարչության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունեցող» Մարտիրոս Սարյանի անվան ակադեմիան¹⁰⁷։ Լինելով հայ-արաբական մշակութային կապերի զար-

¹⁰³ Կ. Գեօրգյան, Ամենուն տարեգիրքը, 1955, էջ 233—235, նաև՝ «Այգ», 6.10.1954։

¹⁰⁴ «Այգ», 1.8.1956, 1957 թ. Տոկիոյի միջազգային ցուցահանդեսին ուղարկված լիբանանյան 6 գործերից 3-ը պատկանել են հայ լուսանկարիչների (տե՛ս «الأسبوع العربي», العدد ٢٢٨, ١٩٦٧, ص ٢٨)։

¹⁰⁵ «Արևելք», 7 և 19.3.1957։

¹⁰⁶ «Սուրիա», 25.10.1954։

¹⁰⁷ ١٩٥٨/٧/٨ «النور» 'ممشق'։

դացման համառ ջատագով՝ ակադեմիայի հիմնադիրները նպատակադրել են նպաստել ոչ միայն ընդհանրապես սիրիական և մասնավորաբար սիրիահայ նկարչության զարգացմանը, այլև հայ և արաբ ժողովուրդների բարեկամական և մշակութային կապերի ամրապնդմանը¹⁰⁸։

Ակադեմիան պատվով է կատարել այդ առաջադրանքը, կարևոր դեր խաղալով Սիրիայի հյուսիսային շրջանի հայ և արաբ երիտասարդ նկարիչների արվեստը հղկելու և նրանց համագործակցությունը իրականացնելու ուղղությամբ։ Մինչև ակադեմիայի հիմնադրումը, հալեպահայ փոքրաթիվ նկարիչները գործել են տեղական նկարչական կյանքից կատարելապես կտրված, մինչդեռ 1959 թ. կազմակերպված առաջին ցուցահանդեսին Ջ. Գաբլանի, Ռ. Ճեպեճյանի, Ա. Շահինյանի և Ժ. Ցավերյանի գործերի կողքին ցուցադրվել են Լ. Ճանճիի, Սամի Պուրհանի և Իսմայիլ Մուսթաֆայի աշխատանքները¹⁰⁹։ Ակադեմիայի իր հայ ընկերների օգնությամբ է իր արվեստը զարգացրել սիրիացի հայտնի նկարիչ Ս. Պուրհանը, իսկ հալեպահայ նկարիչների հասունացման գործում կարևոր ծառայություն է մատուցել Հռոմի Գեղարվեստից ակադեմիայի շրջանավարտ Թալեր Յադըճին¹¹⁰։ Ակադեմիայի սաներից քանդակագործ Թ. Ռաստկելենյանի առաջին աշխատանքներից են Հալեպի «Թեքեյան-Մարի» մշակութային միության սրահը զարդարող և երկու ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող՝ Վ. Թեքեյանի և Աբու Ալա ալ-Մարիի կիսանդրիները։

Սիրիական կառավարությունը բարձր է գնահատել սիրիական արվեստին և սիրիացի արվեստագետներին մատուցած ակադեմիայի ծառայությունը, Ջ. Գաբլանին պարգևատրելով ոսկյա մեդալով, իսկ մշակույթի նախարարը ակադեմիայի տասնամյակի առթիվ ընդգծել է հայ և արաբ ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ հայկական հաստատության խաղացած ուշագրավ դերը¹¹¹։

Սարյանի անվան ակադեմիայից դուրս հիշատակության արժանի է սոսկ Հալեպի պետական ակադեմիայի դասախոս, համ-

¹⁰⁸ «Երկիր», 1958 թ. հատոր, էջ 43—45։ «Սովետական Հայաստան», 1965, № 4, էջ 36։

¹⁰⁹ «Նայիրի», 31.3.1959։

¹¹⁰ «Մեր նշանաբանն է հառաչ», 27.4.1958։ «Սովետական Հայաստան», 1965, № 9, էջ 8։

¹¹¹ «Հայրենիքի ձայն», 25.9.1966։

բավականին հայ բնականորեն նույնպես Սարգսյանը, որ 1959 և 1961 թվերին Դամասկոսի, իսկ 1963 թ. Սան-Պաուլոյի ցուցահանդեսներում մրցանակների է արժանացել¹¹²:

* * *

Հայերը կարևոր մասնակցություն են ունեցել նաև Սիրիայի և Լիբանանի կառուցապատման գործին:

«Մերձավոր Արևելքի մեծագույն ճարտարապետներն մինչև՝ լիբանանահայ Պասկալ Բապուշյանն է, որ երկրի շորս կողմերում նախագծել և կառուցել է Լիբանանի հպարտանքը հանդիսացող հայկական թե օտար բաղմատասնյակ եկեղեցական կոթողներ, «հայկական պատմական եկեղեցիներու մեծ ու սլացիկ արվեստին ներշնչված, անոնց հմայքն ու հատկագիծն ազդված»¹¹³: 1920 թ. հաստատվելով Բեյրութում և 1935 թ. ավարտելով Ֆրանսիական համալսարանը, նա այնուհետև աշակերտել է Փարիզի գեղարվեստի բարձրագույն դպրոցի անվանի պրոֆեսոր Անտրեյ Քոնդին, որի հետ և հետագայում նախագծել ու կառուցել է Բեյրութի օդանավակայանի, Լազարիստների կոլեջի և Ռիզկի հիվանդանոցի շենքերը: 1954 թ. ստեղծելով իր նախագծային արվեստանոցը, հայ ճարտարապետը Լիբանանում, Սիրիայում և Եգիպտոսում կառուցել է անհամար հիվանդանոցներ, եկեղեցիներ, մզկիթներ ու վիլլաներ¹¹⁴:

Քառասուն տարի շարունակ «լիբանանյան կառավարության սիրված ու հարգված ճարտարապետն ու շինությանց վերաբերյալ հարցերու խորհրդատուն» է եղել Մարտիրոս Ալթունյանը, որի բաղմաթիվ կառույցներից (Անթիլիասի տաճարը, Ս. Նշան և այլն) մեկն էլ՝ Լիբանանի խորհրդարանի շենքը էտոլալի հրապարակի վրա, բավական է նրա անունը պահելու համար երկրի երախտավորների ոսկեմատյանում:

Լիբանանի զարգացման համար էական նշանակություն ունեցող և Մերձավոր Արևելքում ճանապարհաշինության բնագավառում իսկական հեղաշրջում հանդիսացող Բեյրութ-Մաամըլտեյն ավտոուղին և այն հատող կամուրջները նախագծվել են հանրագուշակ շինությունների մինիստրության բաժանմունքի վարիչ Զավեն Դավթյանի կողմից¹¹⁵:

¹¹² «Զարթոնք», 1.3.1964:

¹¹³ «Սփյուռք», 6.3.1963:

¹¹⁴ «Հայրենիքի ձայն», 3.2.1971:

¹¹⁵ «Այգ», 19.11.1954 և 31.3.1956:

Անհնարին է սոսկ թվարկել այն աշխատանքները, որ դամասկահայ Ն. Յագուպյանն ու որդիները կատարել են Սիրիայի կառուցապատման ասպարեզում: Բավական է ասել, որ նրանք են դեկավարել սիրիական խորհրդարանի նոր շենքի, Դամասկոսի համալսարանի, երկրագործական մինիստրության, Արդարադատական պալատի, «Սեմիրամիս» հյուրանոցի, բազմաթիվ դպրոցների, հիվանդանոցների, եկեղեցիների և մզկիթների շինարարությունը, պատմական հուշարձանների վերանորոգությունը (այդ թվում և Պալմիրայի մզկիթի վերակառուցումը 1928 թ.), որ նրանք են կառուցել երկրի ճանապարհների մոտ 25 տոկոսը (այդ թվում հուշակվոր «Բաղդադի մայրուղին» և Լաթաքիայից մինչև Կունեյտրա ու Բանիաս ավտոճանապարհը) և զորանոցների ու մաքսատների մեծ մասը¹¹⁶:

Քաղաքաշինության ասպարեզում Սիրիային կարևոր ծառայություններ է մատուցել նաև պրոֆ. Զարեհ Գաբլանը, որ Հալեպի մերձակա Շահբա բարեկարգ ավանի և Դամասկոսի հուշակվոր Ուդարիտ շենքի գլխավոր ճարտարապետն է եղել¹¹⁷: Հալեպահայ Ճ. Միքայելյանի անվան հետ է կապված Եփրատ գետի շրերը Հալեպ բերելու ծրագրի իրագործման աշխատանքների հիմնական մասը¹¹⁸:

Բեյրութի բազմաթիվ հուշակված զբոսավայրերի նախագծման, կառուցման և հարդարման գործում փայլել է ճարտարապետ Սուրեն Սասունին, որի նախագծած «քավ գյուլ Ռուա» զվարճավայրի համանմանակը ամերիկացիները ուզեցել են ամեն գնով ունենալ Հոլլիվուդի շրջանում¹¹⁹: Ծարտարապետներ Վ. Աշճյանի և Ղ. Ամասյանի նախագծերը մերձավորարևելյան մրցույթներում առաջնության են արժանացել¹²⁰: Դամասկոսում գեղազարդել է Դավիթ Հովհաննիսյանը սուլթան Սելիմի և Բեյրութում Դաբբազա մզկիթները¹²¹:

Հայերը կարևոր մասնակցություն են ունեցել Լիբանանի և Սիրիայի ոչ միայն կառուցապատման, այլև պատմական հնությունների պահպանման գործին:

¹¹⁶ Ն. Յագուպյան, Հանուն երջանկության, Կահիրե, 1960, էջ 119:

¹¹⁷ «Բազին», 1964, № 4, էջ 80:

¹¹⁸ «Սուրիա», 20.5.1953:

¹¹⁹ «Ազդակ», 30.7.1957:

¹²⁰ «Ազդարար», 5.1.1946:

¹²¹ «Զարթոնք», 3.2.1954:

Հաշվի առնելով Լիբանանում և հատկապես մայրաքաղաք Բեյրութում հիսունական թվականների վերջերից քաղաքաշինության աննախընթաց թափը և այդ առիթով հնարժեք ու պատմական շինություններին սպառնացող վտանգը, 1960 թ. Իվոն Սուրսոկ-Կոկրանի նախագահությամբ կազմվել է պատմական հուշարձանների պահպանման ընկերություն, որի վարչության մեջ իր հռանդուն աշխատանքով փայլել է Տիգրան Սարաֆյանը¹²², կարծես փոխարինելով ճարտարապետ Մ. Ալթունյանին, որ մինչև իր մահը պատմական յուրաքանչյուր շենք կորստից փրկելու համար անդուլ պայքար է մղել:

Բեյրութի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Հ. Գալյանը երկար տարիներ Լիբանանի ազգային թանգարանի և հնությունների պահպանման բաժանմունքի գլխավոր ճարտարապետն է եղել և կարևոր ծառայություններ է մատուցել ոչ միայն հին և միջնադարյան պատմական կոթողների պահպանման և ուսումնասիրման ասպարեզում, այլև իր հոգվածներով պրոպագանդել է դրանք¹²³: Իր հերթին պատմաբան Ն. Ջիգեջյանը Փյունիկիայի պատմության ու հնագրությանը նվիրել է «Ճյուղոսը դարերի ընդմեջեն» և «Ջիրեյլը դարերի ընդմեջեն» անգլերեն մենագրությունները¹²⁴:

Հյուսիսային Սիրիայում նախապատերազմյան ժամանակաշրջանում Հ. Վ. Մսրյանը կատարել է հնագիտական կարևոր պեղումներ, հատկապես ս. Թովմասի և ս. Սիմոնի վանքերում¹²⁵: Գրեթե նույն ժամանակներից սկսած երկրի հնագույն պատմական հուշարձանների հետազոտման ասպարեզում իրենց լույսն են ներդրել նաև Ժ. Գալեմբաբյանը, Հ. Քիրիշյանը, և Ա. Զետերյանը¹²⁶: Փարիզի համալսարանից վկայված հնագետ-ճարտարագետ Գալեմբաբյանն է, որ պետական հանձնարարությամբ 1942 թ. սկսած գլխավորում է հինգերորդ դարի կոթողներից Սյունակյացի եկեղեցու վերակառուցման աշխատանքները¹²⁷:

4

Ինչպես օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում, այնպես էլ ֆրանսիական մանդատի տարիներին թե՛ Սիրիայում և

¹²² «Սփյուռք», 28.5.1960:

¹²³ «Սփյուռք», 3.10.1959:

¹²⁴ ١٨ ص ١٩٦٩ / ١٢ / ٨ «الاسبوع العربي»:

¹²⁵ «Զարթոնք», 10.5.1953:

¹²⁶ G. Tchalenko, Villages Antiques de la Syrie du Nord, t. I, Paris, 1953, p. XV.

¹²⁷ «Հայրենիքի ձայն», 10.10.1969:

թե՛ լիբանանում ազգային արաբական թատրոն գոյություն չի ունեցել:

Փաստորեն մինչև վաթսուներկան թվականները սիրիական ու մանավանդ լիբանանյան հասարակայնությունը իր բավականությունը որոնել է կինոդահլիճներում, քանի որ նույնիսկ մշակութային կյանքի իր եռուզեռով համբավված Բեյրութը չի ունեցել ազգային մնայուն որևէ թատրոն ու թատերախումբ:

Ճիշտ է, Դամասկոսում ու Բեյրութում հաճախագեպ, իսկ գավառական քաղաքներում երբեմնակի, մերթ մասնավոր սրահներում ու մերթ գիշերային զբոսարաններում գործել են «Ժողովրդական» առանձին խմբեր, սակայն նրանք հիմնականում բեմ են հանել անարվեստ զավեշտներ կամ էժանագին մեղոդրամաներ և առնվազն թատերասեր հասարակության ճաշակը բթացնելու ճանապարհով՝ ազգային թատրոնի ծնունդը ավելի շուտ արգելակել են ու հապաղեցրել:

Ազգային թատրոնի բազմադարյան ավանդույթներ ունեցող, օսմանյան կայսրությունում թատրոնի նախաձեռնող և արաբական թատերական շարժման վրա անառարկելի ներգործություն թողած հայ ժողովրդի սիրիական ու լիբանանյան հատվածները, ընդհակառակն, իրենց ներգիակ կյանքում անընդմեջ հարատևած թատերական միջոցառումներին հետպատերազմյան տարիներին նոր թափ և աշխուժություն են հաղորդել¹²⁸:

Թատերական կյանքի բնագավառում, հատկապես լիբանանում, հայ գաղթօջախը ամենից ներկայացուցչական համայնքն է մնացել մինչև վաթսուներկան թվականների սկիզբը: Համազգայինի «Գասպար Իփեկյան», Գրական շրջանակի «Նոր բեմ», Հայ երիտասարդաց ընկերակցության «Վահրամ Փափազյան» և այլ կիսապրոֆեսիոնալ մնայուն խմբերի ներկայացումները, ինչպես նաև

¹²⁸ Տակավին քսանական տասնամյակի սկզբին լիբանանում և Սիրիայում կազմակերպվել են մի շարք թատերախմբեր («Մելոմեա», «Վերածնունդ» և այլն), որոնք բեմ են հանել Մ. Պեշիկթաշլյանի, Հ. Պարոնյանի, Ա. Շիրվանզադեի, Տ. Զուխաշյանի, Մուխեթի և Շեքսպիրի գործերը (տե՛ս «Կիլիկիա», 26.12.1918 և 14.3.1919: «Սուրիական մամուլ», 4 և 22.3.1923, 10 և 20.5.1923, 13.9.1923: «Արև», 14 և 19.3.1923): «Ուրախալի պարազա մըն ալ սա է, թե հայ ժողովուրդը իր բոլոր զրկումներեն ու տառապանքներեն վերջ չէ դադարած իր միտքն ու հոգին հավասարապես զարգացնող գեղեցիկը երազել»,— իրավամբ գրել է լիբանանահայ մի լրագրող. Բեյրութում «Օթելլոյի» բեմականացման առթիվ (տե՛ս «Արև», 14.3.1923):

սփյուռքի տարբեր անկյուններից հյուրախաղերով Լեանտ ժամանող շնորհալի դերասանների ելույթները տոն են տվել լիբանանյան (ու մասամբ նույնիսկ սիրիական) թատերական կյանքին:

Ոչ միայն հայկական մամուլը, այլև տեղական թերթերի արվեստի խրոնիկագիրները, ինչպես օրինակ Ալրեո խայյաթը փարիզյան «Թեաթր» հանդեսում (1963 թ. № 7) իրավամբ ընդգծել են, որ լիբանանահայ թատրոնի ներկայացումները երկրում «ամենից հատկանշականները» և գեղարվեստական մակարդակով «բարձրագույնն» են եղել, համեմատած հատկապես Սեսիլ Ժանիսի և Իվ Թյուրքիեի՝ ֆրանսախոս արաբներից կազմված խմբերի ելույթների հետ: Սակավ պերճախոս չէ և այն փաստը, որ լիբանանյան պետական բարձրագույն շքանշանի արժանացած լիբանանցի առաջին թատերական գործիչներից մեկը եղել է Համազգայինի խմբի ղեկավար Ժ. Սարգսյանը, որպես վարձատրություն երկրում թատերական արվեստի զարգացման գործին ավելի քան քսանամյա իր ծառայությունների¹²⁹:

Հայկական լուրջ թատերախմբերի հետ միասին պարբերաբար ելույթներ են ունեցել նաև հայկական «ժողովրդական» խմբեր, երբեմն նույնիսկ կրկնելով իրենց արաբ արվեստակիցների խաղացանկը: Վերջիններից է եղել, օրինակ Դ. Էվերեկլյանի «Լիբանանահայ թատերասերների խումբը», որ Բեյրութի արաբական ռամկական բեմերից փոխ է առել «Սթեզ Ճահշեն» և «Հըմոս» զավեշտները¹³⁰: Բ. Հատիտյանը նման խմբերի համար հատկապես հեղինակել է «Քաաթ թազա» («Թարմ կարկանդակ») երգախառն զավեշտը, որ հետպատերազմյան առաջին տարիներին մեծ ժողովրդականություն էր վայելում¹³¹:

Եթե, սակայն, «ժողովրդական» թատրոնի բնագավառում հայ սիրողներն են դիմել իրենց արաբ աստիճանակիցների օրինակին, ապա լրջարվեստ թատրոնի հողի վրա հայկական համայնքը ինքն է բարերար ազդեցություն գործել լիբանանյան-արաբական ազգային թատրոնի ծննդյան և զարգացման վրա:

Մի կողմից հայկական կիսապրոֆեսիոնալ թատրոնի և հատկապես «Վահրամ Փափազյան» խմբի բարձրորակ ներկայացումները, մյուս կողմից բեմադրիչ Պերճ Ֆազլյանի և թատրոնի ուրիշ

¹²⁹ «Սփյուռք», 30.6.1965:

¹³⁰ «Ազդակ», 6.9.1950:

¹³¹ «Ազդարար», 15.12.1945:

հայ գործիչների անձնական շփումները լիբանանյան թատերական շրջանների հետ¹³², խթան են հանդիսացել արաբական թատրոնի ստեղծման հարցը իր ամբողջ սրությամբ վեր հանելուն:

Եվ ահա 1964 թ., բեմադրիչներ Պերճ Ֆազլյանի, Զեյալ Խուրիի, Անտուան Մուլտակայի և Միշել Ղորայբբի համագործակցությամբ հիմնադրվեց «Լիբանանյան արդի թատրոնը», որը գրեթե մեկ ամսում բեմ հանեց Սթրինտբեռգի «Հայրը» և Բրեխտի «Միմոն Մաշարի տեսիլքները»: Խումբը ոչ միայն հիմնականում հենվել է Պ. Ֆազլյանի փորձի ու հմտության վրա, որպես թատրոն օգտագործել հայկական «Կյուլբենկյան» սրահը, այլև ունեցել է մի շարք հայ դերակատարներ և ներկայացումները տարել է լիբանանահայ տաղանդավոր նկարիչ Պոլ Կիրակոսյանի բեմադարգեցրով¹³³, Բայց քանի որ երկու ներկայացումներն էլ տրվել են ֆրանսերեն լեզվով, «Լիբանանյան արդի թատրոնն» էլ, ինչպես իր նախորդները, միայն անունով է լիբանանյան եղել և երկրում ազգային թատրոնի ստեղծման հարցը մնացել է անուշ¹³⁴:

Լիբանանի ազգային-արաբական մշակույթի զարգացման համար խիստ կենսական այդ հարցի լուծման հետ կապված խնդիրները ճշտորոշելու նպատակով, խաղաղության պաշտպանության լիբանանյան կոմիտեի օրգան «Աթ-թարիկ» հանդեսը 1964 թ. կազմակերպել է կլոր սեղանի մի խորհրդակցություն: Լիբանանյան ազգային թատրոնի շուրջ այդ մեծ խոսակցությանը հրավիրվել են թատերագիր Ժորժ Շեհադեն, երգահան և օպերետների հեղինակ Ասի և Մանսուր Ռահբանի եղբայրները, թատերական նկարիչ Պոլ Կիրակոսյանը, բեմադրիչ-դերասաններ Մունիր Աբու Դուբսը, Միշել Ղորայբբը, Զեյալ Խուրին և դերասանուհի Մարի-Կլոդ Հեդդեն¹³⁵: Մասնակիցները տարակարծիք չեն եղել այն հարցում, որ ազգային թատրոնի ստեղծումն ու գոյատևումը հնարավոր կլինի, եթե հաշվի առնվեն լիբանանյան ժողովրդի հոգեկան պահանջմունքները¹³⁶:

¹³² Հատկանշական է, որ լիբանանցի աշխարհահռչակ բանաստեղծ-թատերագիր Ժորժ Շեհադեի «Վասզոյի հեքիաթը» պիեսը իր հայրենիքում առաջին անգամ բեմականացվել է Պ. Ֆազլյանի խմբի կողմից, Ա. Դարյանի թարգմանությամբ:

¹³³ «Բազին», 1964, № 3, էջ 73:

¹³⁴ «Հառաջ գրական», 1964 թ. ապրիլի 30, էջ 16:

¹³⁵ ١٥ — ٤ ص ١٩٢٤ '٣ العدد "الطريق":

¹³⁶ «Հառաջ գրական», 1964 թ., ապրիլի 30:

Մամուլի հաղորդումները թույլ են տալիս կռահել, որ «Լիբանանյան արդի թատրոնի» շուրջը համախմբված գործիչները, հենց այդ պահանջմունքների որոշման հողի վրա, բաժանվել են տարրեր խմբավորումների, և 1965 թ. Բեյրութի «Շեհարազադ», «Հիլթոն» և «Աշրաֆիե» կինոթատրոնները գրեթե միաժամանակ վերածվել են թատրոնի՝ հյուրընկալելու համար կազմակերպված երեք թատերախմբերին՝ «Ազգային թատրոն», «Բեյրութի թատրոն» և «Ազատ թատրոն»:

Այդ խմբերից ամենաառաջավորը «Ինքնաֆինանսավորման» հիմունքով գործող «Ազատ թատրոն» էր, որի առաջադրանքն է եղել դառնալ լիբանանյան ազգային թատրոնի կորիզը: «Ազատ թատրոնը» որդեգրել է ժողովրդական թատրոնի սկզբունքը, «որ շեշտը կդնե հանդիսատեսին վրա, և հետևաբար, թատրոն բերելու համար ժողովրդի հոծ բազմությունները, թատրոնը կտանի ժողովրդին՝ շրջուն թատերախմբերու և ի հարկին բացօդյա բեմադրություններս միջոցով»¹³⁷:

«Ազատ թատրոն» իր գործունեությունն սկսել է 1965 թ. դեկտեմբերին, բեմադրելով էլիզաբետյան շրջանի անգլիական թատրոնից Բեն Ջոնսոնի «Վոլբոնեն»: Բեմադրիչ Պերլ Ֆազլյանը, որ նախկինում հայկական երկու թատերախմբերի խաղացանկում իրագործել էր այդ պիեսի բեմհանումը, այս անգամ ներկայացրել էր «ազգայնացված» (արաբականացած) մի Վոլբոնե: Նրա հանձնարարությամբ, լիբանանցի երիտասարդ թատերագիր էդուառ Բուստանին ոչ թե թարգմանել, այլ պիեսը դարձրել էր լիբանանյան՝ «Մերունու աղվեսությունները», ստեղծելով լիբանանյան շրջապատ, լիբանանյան կերպարներ և օգտագործելով լիբանանյան խոսակցական արաբերենը: Այդ բոլորը, լինելով ավելի մոտ ու հարազատ լիբանանցիների սրտին ու հոգուն, գրավական են հանդիսացել պիեսի և ամբողջ թատրոնի ժողովրդականացման¹³⁸: Արժի նշել, որ հաշվի առնելով արաբական նորագույն գրականություն՝ թատերագրության տեսակետից աննախանձելի վիճակը, լիբանանյան թատերական գործիչները հետագայում որդեգրել են Ֆազլյանի «ոճը»:

«Ազատ թատրոնի» գործունեությանը Պ. Ֆազլյանից բացի մասնակցել են դիմահարդար Կայծակ Գնդունին, սրահի և լույսի

¹³⁷ «Հառաջ», 19.12.1965:

¹³⁸ Գ. Տերտերյան, Ո՞ր է լիբանանյան ազգային թատրոնը, «Հառաջ», 19.12.1965:

պատատխանատու Անտոն Ժիրակոն, հանդերձանքների հեղինակ Սիրո Ֆազլյանը և ուրիշ հայեր: Լիբանանյան ազգային թատրոնի նախաքայլերը արվել են Պ. Կիրակոսյանի բեմադարողների ստվերում և երկրի լավագույն կոմպոզիտորների շարքում դասվող Պողոս Ճելալյանի նվագի հնչյունների ներքո:

Ոչ միայն «Ազատ թատրոնի», այլև լիբանանյան մյուս թատրոնների գործունեությանը ևս հայերը կարևոր մասնակցություն են բերել: «Բեյրութի թատրոնում», օրինակ, Մ. Միթուայի «Կրոկ-մյոսյո» պիեսի գլխավոր հերոսուհու դերը վարպետությամբ կատարել է Լիզետ Ծնոքյանը, իսկ ընդհանուր առմամբ թատրոնի գործունեությունը հովանավորվել է Հայ կաթողիկե ընկերության վարչության կողմից¹³⁹:

Հատկանշական է, որ դեմոկրատական «Աթ-թարիկ» հանդեսի կողմից լիբանանյան ազգային թատրոնի հարցերին նվիրված երկրորդ մեծ ասուլիսում, արար տասնյակ անվանի մտավորականների հետ (Ժորժ Շեհաբ, Ասի Ռահբանի, Բիլենդ ալ-Հայդարի, Մոհամմեդ Ալթանի, Ժելալ Խուրի և այլք) իրենց հեղինակավոր խոսքն են ասել նաև Պերճ Ֆազլյանն ու Պոլ Կիրակոսյանը¹⁴⁰:

Լիբանանահայ դեմոկրատական մամուլը իրավամբ ընդգծել է, որ Լիբանանի արաբական-ազգային թատրոնի ստեղծման գործին հայերի ակտիվ մասնակցությամբ «կնվիրագործվի Լիբանանի ազգային մշակույթի զարգացման ու Լիբանանահայության մշակութային ազատ զարգացման ներդաշնակությունը» և «կկատարվի նաև երկու մշակույթներու մերձեցումը՝ փոխադարձ հարստացման հիման վրա»¹⁴¹:

Դժբախտաբար նույնը չի կարելի ասել Սիրիայի մասին, քանի որ քառասնական տասնամյակի վերջերից հայ համայնքի ազգային-մշակութային ազատ գործունեության առաջ հարուցված խոչընդոտները ոչ միայն խափանել են սիրիահայ թատրոնի ստեղծումը, այլև անհնարին դարձրել թատերական արվեստի ասպարեզում սիրիա-հայկական ամեն մի համագործակցություն¹⁴²:

¹³⁹ «Magazine», No. 538, 13.4.1967, p. 19.

¹⁴⁰ «الطريق» العدد ١٩٦٦، ١٤ - ١٣.

¹⁴¹ «Հառաչ», 12.12.1965:

¹⁴² Քսանական թվականների սկզբին Հալեպում ձևավորվող թատերախմբերը աստիճանաբար կազմալուծվել են և այնուհետև սիրիահայ գաղութը փաստորեն չի ունեցել ոչ մի քիչ թե շատ մնայուն որևէ խումբ: «Հալեպի հայությունը զրկված է քեզարվեստական վայելքեն, թատերական ներկայացումները գրեթե ան-

Արաբական կինոարվեստը սկզբնավորվել է 1925—1926 թթ., Նյուֆական միջոցներից և տեխնիկական հնարավորություններից զուրկ լինելով, արաբական մյուս երկրների և գլխավորապես իրանյանի արվեստագետները ասպարեզ են որոնել Կահիրեում: Հիշատակության արժանի է իրանահայ Նասիբյանը, որ Նյուֆատում իր անունը կրող կինոստուդիան հիմնելով՝ երեսնական թվականներից սկսած քիչ ժառանգություն չի մատուցել արաբական կինոյի զարգացմանը¹⁴³:

Կինոն, որպես կապիտալի օգտագործման շահավետ ասպարեզ, բավականին ուշ է գրավել իրանական բուրժուազիային: Հայտնի ձեռնարկատերեր Կատտանը և Հադդադը 1937—1938 թթ. փորձել են սկզբնավորել իրանական ազգային կինեմատոգրաֆիան, «Բաալբեկի ավերակների մեջ» ֆիլմի նկարահանումներին ձեռնարկելով, սակայն տեխնիկական անձնակազմի պակասի հետևանքով գործը տապալվել է¹⁴⁴:

Ավելի քան մեկ տասնամյակ այլևս իրանականում ոչ մի փորձ չի արվել արաբական ֆիլմեր նկարահանելու: 1950 թ. միայն, իրանահայ ձեռնարկատեր Հարություն Թուրապյանը, հիմնելով իրանական առաջին կինոստուդիան («Թուրա-ֆիլմ»), նկարահանել է երկրի առաջին լիամետրաժ ֆիլմը՝ «Արուս Լուբան» («Լիբանանի հարսը»), որը ներկայացվել է Բեյրութում 1951 թ. մարտին¹⁴⁵:

Լիբանանյան կառավարությունը և անձամբ հանրապետության նախագահն ու վարչապետը քաջալերություն և աջակցություն չեն խնայել ձեռնարկատեր Թուրապյանի, եգիպտացի բեմադրիչ Հուսեյն Ֆաուզիի, գլխավոր դերակատարներ Մոհամմեդ Սալմանի և Հոնեյնի գործի հաջողության համար¹⁴⁶: Այդ ֆիլմը, — գրել է հայկական մամուլը, — «արաբ և օտար արվեստագետներու վկայությամբ հաջող գործ մըն է և պատիվ կբերե ոչ միայն Թուրա-ֆիլմին, այլև Լիբանանին»¹⁴⁷:

Ժանոթ են իրեն, ու այդ անունով հրամցվածներն ալ հաճախ ափ հափո պատրաստված ու լույս աշխարհ ընթացած ձեռնարկներ են, գեղարվեստի պետքն մը ավելի ապրեցնելու համար աս ու ան, — գրել է «Եփրատ» թերթը 1933 փետրվարի 10-ի համարում:

¹⁴³ «Cinema et Culture Arabes», Beyrouth, Octobre 1962, p. 29.

¹⁴⁴ «Les Cahiers de l'Est», 1945 № 1. pp. 141—142.

¹⁴⁵ «Սուրիա», 28.9.1950:

¹⁴⁶ «Զարթոնք», 15.10.1950 և 15.11.1950:

¹⁴⁷ «Զարթոնք», 1.1.1951:

Պետք է խոստովանել, սակայն, որ այդ կինոնկարը հետաքրքրական էր այնքանով միայն, ինչքանով հայ ձեռնարկատերի և կինեմատոգրաֆիայի հայ մասնագետի՝ օպերատոր Օհան Կոստանյանի անունները կապում էր Լիբանանի հողում նկարահանված առաջին ֆիլմի հետ¹⁴⁸։ Որովհետև կինոնկարը սովորական մի մեջլոդրամա է եղել և որպես «լիբանանյան»՝ բնական տեսարաններն է ունեցել միայն։ Այդ իսկ պատճառով հաջողություն չի գտել և անարձագանք է մնացել։

«Արուս Լուրնանին» հաջորդող փորձերն էլ եղել են միևնույն մակարդակի և ունեցել են միևնույն ճակատագիրը։ «Օտար ֆիլմերուն նմանելու բացահայտ ճիգը, վաճառականական բոլոր պահանջներուն գոհացում տալու պատրաստակամությունը, ինչպես նաև մելոդրամին տրված ավելորդ տուրքը արդեն դատակնիքը հանդիսացան ծնող նոր արվեստին»,— իրավամբ գրել է առաջադեմ հայ կինոքննադատը¹⁴⁹։

Լիբանանում կինոարվեստի լճացման հետևանքով, լիբանանահայ գաղթօջախի ծնունդ մի շարք շնորհալի աստղեր, հետագայում ասպարեզ են որոնել արաբական կինոյի օջախ եգիպտական կինոստուդիաներում։ Առաջին հերթին հարկ է հիշատակել դեռատի Փերուզ Գալֆայանին, որ եգիպտական մի շարք կինոնկարների գլխավոր դերակատարուհին է եղել և իր ետեից տարել է նաև քույրերին՝ Սիրվարդին և Նելլին¹⁵⁰։ Մադլեն Մակսուդյանը ևս «Կուտալ-Կուլուբ» անվան ներքո որպես գլխավոր դերակատարուհի հանդես է եկել եգիպտական ստուդիաներում, որտեղ երբեմն իր տաղանդն է ի գործ դրել նաև Պերճ Ֆադլյանը, հատկապես «Սեֆերբերիկ» հանրահայտ կինոնկարում¹⁵¹։

Ինչպես տեսնում ենք, լիբանանահայերը, թեև աննշան չափով, մասնակցություն բերել են արաբական կինոարվեստին։ Դժբախտաբար ոչ մի տվյալ թույլ չի տալիս նույն բանն ասելու նաև սիրիահայերի մասին։

Մյուս կողմից Լիբանանի և Սիրիայի հայկական մամուլն էլ արաբական կինոյի նկատմամբ ցուցաբերել է անտարբեր վերաբերմունք։ Բավական է ասել, որ քառասնական թվականների վեր-

¹⁴⁸ «Ազդակ», 31.12.1951։

¹⁴⁹ «Մեր նշանաբանն է հառաչ», 2.2.1953։

¹⁵⁰ «Այգ», 11.3.1954 և 11.11.1955։

¹⁵¹ «Այգ», 8.5.1965։

շերից «Զարթոնքը» և այնուհետև մյուս օրաթերթերը (Հատկապես «Այգը») սկսել են իրենց ընթերցողներին ներկայացնել Բեյրութի և Հալեպի կինոթատրոնների պաստառների վրա ցուցադրվող ֆիլմերը, սակայն իրենց ուշադրության առանցքում պահել են միայն ու միայն ամերիկյան և մասամբ էլ արևմտաեվրոպական ֆիլմերը:

Արաբական կինոարվեստի նկատմամբ հայկական մամուլի վերաբերմունքի ասպարեզում իսկական հեղաշրջում է առաջ բերել «Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթը: Նրա աշխատակիցներ Ս. Վահագնը, Լ. Թորոսյանը և ուրիշներ սիստեմատիկ կերպով իրենց ուշադրության կենտրոնում պահելով արաբական կինոն և վեր հանելով արաբական երկրներում կինոարվեստի նվաճումները, մեծապես օգնել են հայ կինոհանդիսատեսների շրջանում առաջացած կանխակալ կարծիքի ցրմանը¹⁵²: Առաջագիծ հայ կինոքննադատների ուշադրությունից չի վրիպել մանավանդ նորածին լիբանանյան ազգային կինոարվեստը, որի առաջին հաջողությունը՝ Ժորժ Նասերի «Դեպի ո՛ւրը», և՛ իր հղացումով, և՛ իր բեմադրությամբ, ու մանավանդ Լիբանանի համար ամենից ցավոտ մի հարցի՝ ազգաբնակչության արտագաղթի վրա սեեոված իր հայացքով, արժանացել է պատշաճ վերլուծության¹⁵³: Հաջողություն էր նաև, անկասկած, Ֆիլիպ Ակիկայի «Աղքատների թագավորությունը» կինոնկարը, մայրաքաղաք Բեյրութի թարախոտ վերջին՝ հյուղական-հետնախորշերին նվիրված: Հայ և արաբ աշխատավորների կյանքի դժժան «բնաշխարհը» պատկերող այդ ֆիլմի գլխավոր դերակատարուհին է եղել հայկական թատրոնի շնորհալի աստղերից Լիզ Սարգսյանը, որին մամուլը «լիբանանյան Բրիջիտ Բարդո» մականուն է տվել¹⁵⁴:

5

Հայերին և արաբներին մշակութային փոխհարաբերությունների մեջ դնելու տեսակետից ուրույն դեր են խաղացել Բեյրութի ֆրանսիական և ամերիկյան համալսարանները: Նրանք ոչ միայն Լիբանանին ու Սիրիային ապահովել են բարձրագույն կրթությամբ զինված մասնագետներով, հատկապես բժիշկներով, ճարտարա-

¹⁵² Նրանք մի ժամանակ հրատարակել են նաև շաբաթաթերթի լուրջ հավելվածներ՝ կինոարվեստին նվիրված:

¹⁵³ Լ. Թորոսյան, Վերջապես լիբանանյան ազգային սինեմա մը, «Մեր նշանաբանն է հառաջ», 2.2.1958:

¹⁵⁴ «الاسبوع العربي» العدد ١٩٧٠، ص ١٢:

պետներով, ինժեներներով և իրավաբաններով, այլև հանդիսացել են հայ և արաբ մտավորականության շիման ու ծանոթացման ժամադրավայր, միաժամանակ հայկական գաղթօջախներին հնարավորություն տալով կազմակերպելու և գործունեության լայն ասպարեզ նետելու գիտության տարբեր բնագավառներում նշանակալից խոսք ասող հարյուրավոր հայորդիների:

Այս տեսակետից հատուկ ծառայություն ունի Բեյրութի հիսուսյանների՝ 1881 թ. հիմնադրված «Սեն Ժոզեֆ» ֆրանսիական համալսարանը, որ դեռ դարավերջից օսմանյան կայսրության տարբեր մասերից իրեն է ձգել բարձրագույն ուսման հետամտող հարյուրավոր հայ երիտասարդներին¹⁵⁵:

Հաշվի առնելով Սիրիայում և Լիբանանում հայերի ստվարաթվությունն ու նրանց պատմական անցյալի և դարավոր մշակույթի նկատմամբ հարաճող հետաքրքրությունը, առաջին աշխարհամարտի հետևանքով փակված արևելագիտական ֆակուլտետի վերաբացման առթիվ 1933 թ. Հովհաննես Մսրյանի ջանքերով հիմնադրվել է հատուկ հայագիտական ամբիոն, ոչ միայն ուսումնասիր հայ երիտասարդներին հայագիտության ասպարեզում խորանալու հնարավորություն տալու, այլև օտարներին՝ հայ ժողովրդի բազմադարյան անցյալի մշակութային նվաճումները ծանոթացնելու նպատակով: Առաջին տարիներին ծրագրում եղել է միայն օտար ուսանողների համար հայոց լեզվի դասընթաց՝ ֆրանսերեն լեզվով: Աստիճանաբար ընդգրկվել են հայագիտական այլ առարկաներ և դասավանդությունն էլ, 1941 թ. սկսած, կատարվել է հայերենով¹⁵⁶:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում, համալսարանում հայերի տեղն ու դերը նկատելի վերելք են արձանագրել, համապատասխանաբար շեշտակի դարձնելով նաև հայ և արաբ կրթական մշակների ու գիտնականների, ինչպես նաև հայ և արաբ ապագա երիտասարդ մասնագետների շփումներն ու փոխադարձ ծանոթությունը: Արդարև, հետպատերազմյան տարիներին է, որ համալսարանում նշանակալի գործունեություն են ծավալել դասախոս Մ. Բաղդասարյանը, բժշկական պոլիկլինիկայի ամբիոնի վարիչ

¹⁵⁵ Համալսարանի արխիվների տվյալներով, միայն 1899—1913 թթ. վկայվել են հայ 59 բժիշկներ և 10 դեղագործներ, իսկ հայ կաթողիկե 20 հոգևորականներ էլ չբնակավորտ են եղել աստվածաբանական բաժնից (տե՛ս Ս. Վառժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, Բեյրութ, 1951, էջ 463—465):

¹⁵⁶ «Զարթոնք», 2.10.1954:

Ժ. Արսլանյանը, քիմիայի լաբորատորիայի վարիչ Գ. Պուճիգանյանը, անվանի բժիշկներ Վ. Սեֆերյանը, Ս. Կերկերյանը և տասնյակ ուրիշներ¹⁵⁷։ Աստիճանաբար մեծացել է և տարբեր ֆակուլտետներում սովորող հայ երիտասարդների թիվը։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում է դարձյալ, որ արեւելեագիտական ֆակուլտետն ու հատկապես հայագիտական ամբիոնը լուրջ վերելք են ապրել և ուշագրավ ծառայություն մատուցել հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը օտարներին և հատկապես արաբներին ծանոթացնելու ուղղությամբ։ 1952 թ. սկսած հայագիտական ամբիոնում դասավանդվել են հայ ժողովրդի և հայ գրականության պատմություն, հայկական բանասիրություն, գրաբար և աշխարհաբար լեզուներ։ «Հայագիտական թեքումով արեւելագիտական բարձրագույն վկայական» ստանալու համար ուսանողը հայագիտական առարկաներից բացի պետք է յուրացնէր նաև Ասորիքի և Փյունիկիայի պատմություն և հնագրություն, արաբական երկրների պատմություն և սոցիոլոգիա¹⁵⁸։ Մյուս կողմից արեւելագիտական ֆակուլտետն իր մատենաշարով լույս է ընծայել մի շարք հայագիտական գործեր և համալսարանի հանդեսի հայագիտական հավելվածները։ Միաժամանակ կազմակերպելով բազմաթիվ հրապարակային դասախոսություններ՝ լիբանանյան մտավորականությանը հաղորդակից է դարձրել հայկական հերոսական էպոսի, հայ հին գրականության, ճարտարապետության, մանրանկարչության, դրամատիկության հետ՝ ընդգծելով հայ-արաբական հնադարյան առնչությունները¹⁵⁹։

«Սեն ժոզեֆ» համալսարանի ամբիոնից հայ և արաբ ժողովուրդների բազմադարյան կապերը բանասիրորեն հիմնավորելու և լիբանանյան մտավորականության լայն շրջաններում ջանասիրորեն պրոպագանդելու ուղղությամբ անգնահատելի ծառայություն է մատուցել Հովհաննես Վ. Մսրյանը¹⁶⁰։ Նրա դասախոսություններից

¹⁵⁷ Տե՛ս «Ժողովրդի ձայն», 20.11.1944 և 6.4.1947; «Այգ», 7.4.1955; «L'Orient Littéraire», 10.3.1962

¹⁵⁸ «Զարթոնք», 2.10.1954;

¹⁵⁹ «Այգ», 1.1.1955;

¹⁶⁰ Հ. Մսրյանը (1883—1965), տասը տարի հիսուսյանների աստվածաբանական ուսմանց հետեւից հետո, 1929—1932 Փարիզում աշակերտել է Մեյեին, Մարիեսին, Տիլին, Ժենեստալին և Բուայեին, Սորբոնում եղել է Մեյեի ասիստենտը (տե՛ս «Սփյուռք», 25.8.1965)։

առանձին հիշատակության են արժանի հատկապես «Հայկական և արաբական գեղարվեստի առնչությունները», «Հայաստանի քարավանային քաղաքներն ու ճանապարհները արաբական շրջանում», «Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքի ընդհանուր գծերը» և ուրիշներ¹⁶¹։ Նրա դասախոսություններն ու ուսումնասիրությունները, հատկապես հայ և արաբ ժողովուրդների կապերին անդրադարձող էջերը, հյուրընկալվել են լիբանանյան հեղինակավոր հրատարակություններում¹⁶²։

Հայ և արաբ ժողովուրդների բարեկամական կապերի սերտացման համար Հովհ. Մսրյանի ծառայությունները արժանացել են լիբանանի կառավարության գնահատանքին։ 1962 թ., կրթության մինիստրության միջնորդությամբ, նա պարգևատրվել է Մայրիների Ա. կարգի ասպետի շքանշանով։ Այդ առթիվ կառավարության ներկայացուցիչ էմիր Մորիս Շեհաբը չի մոռացել իր ելույթում շեշտելու Հ. Մսրյանի կարևոր վաստակը «արտասահմանում լիբանանի անվան պանծացման» ուղղությամբ¹⁶³։

Բեյրութի Ամերիկյան համալսարանի անվան հետ են կապված շատ ու շատ հայ գիտնականների անունները։ Դեռ այն ժամանակ, երբ համալսարանը նոր էր իր դռները բացել որպես «Սիրիական բողոքական կոլեջ» (1866 թ.), նրա հիմնադիր պրոֆեսորների շարքում մեծ երախտիք է ունեցել կարգաթող Հակոբ եպիսկոպոս Պոլուցիի որդին՝ բժիշկ Հովհաննես վարդապետը, Շոտլանդիայում բարձրագույն կրթություն ստացած մի գիտնական, որ 17 տարվա իր մանկավարժական գործունեության ընթացքում արաբ ուսանողների համար գրել է բնախոսության, մարդակազմության, դիալեկտիկայի, առողջապահության և աստվածաբանության մասին բազմաթիվ գրքեր¹⁶⁴։

Ինչպես ֆրանսիական, այնպես էլ ամերիկյան համալսարանը մինչև առաջին աշխարհամարտը եղել է օսմանյան կայսրության տարբեր շրջաններից ուսումնատենչ հայ երիտասարդներին ձգող

¹⁶¹ «Արարատ», 20.11.1945։ «Ազդակ», 10.1.1946։ «Les Cahiers de l'Est» 1946, № 4, p. 194 և 1946, № 6, p. 54։

¹⁶² Տե՛ս հատկապես Ֆուադ Բուստանիի «Արաբական հանրագիտարանի» հատորները, հրատարակված Բեյրութում, 1956 թ. սկսած։

¹⁶³ «Սփյուռք», 7.6.1962։

¹⁶⁴ А. Кримский, История новой арабской литературы, Москва, 1971. стр. 392.

մի կենտրոն¹⁶⁵, և այն այդպիսին էլ մնացել է հետագայում ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի հայ ուսումնասիրների համար¹⁶⁶:

Չունենալով հումանիտար գիտությունների նկատմամբ միևնույն հակումը, ինչ ֆրանսիական համալսարանին էր, ամերիկյան համալսարանը զուրկ է եղել հայ-արաբական առնչությունների զարգացման գործում իր նույնատիպ նպաստը բերելու հնարավորությունից: Սակայն գերագնահատած շնք լինի նրա դերը, եթե ասենք, որ Բեյրութի ամերիկյան համալսարանը, հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում, հայ գաղթօջախներին ավելի լայն հնարավորություններ է ընձեռել Սիրիային և Լիբանանին պարզեցնելու համաշխարհային հռչակ ձեռք բերած գիտնականներ: Արդարև, ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում լինելով ճշգրիտ գիտությունների և հատկապես բժշկագիտության գծով ամենից հեղինակավոր կենտրոնը և իր հիվանդանոցում ունենալով պրակտիկ գործունեության ամենալավ կազմակերպված բազան, ամերիկյան համալսարանը եղել է մի օջախ, որտեղ հայ գիտնականները հնարավորություն են ունեցել բացահայտելու իրենց ընդունակությունները, և որպես դասախոս կամ գիտության մշակ՝ իրենց նպաստը բերելու հատկապես լիբանանյան բժշկագիտության վերելքին: Բավական է ասել, որ միայն բժշկական ֆակուլտետում գործունեություն են ծավալել այնպիսի հեղինակություններ, ինչպես բժշկապետներ Հ. Ծնիգոմշյանը, Ե. Ջիդեջյանը, մաշկա-վեներական ամբիոնի վարիչ Հ. Չաղլասյանը և տասնյակ ուրիշներ¹⁶⁷:

Հետպատերազմյան շրջանում տարբեր ֆակուլտետներում սովորող հայ երիտասարդների քանակական մեծության մասին է վկայում այն փաստը, որ 1946 թ. համալսարանից վկայվել

¹⁶⁵ Համալսարանի արխիվների տվյալներով 1885—1915 թթ. վկայվել են հայ 127 բժիշկներ, 51 դեղագործներ, 3 ատամնարույժ, 9 հիվանդապահուհի, 6 առևտրի և 11 արվեստի պսակավորներ (տե՛ս Լ. Վարժապետյան, նշվ. աշխ., էջ 459—463): Համալսարանի Ուեստ Հոլի հուշատախտակը, որտեղ թվարկված են առաջին աշխարհամարտին զոհ գնացած շրջանավարտները, ցույց է տալիս, որ վերջիններիս գերակշռող մասը եղել են հայեր (տե՛ս A. K. Sanjian, The Armenian Communities in Syria under Ottoman Domination, Harvard, 1965, p. 341).

¹⁶⁶ 1924 թ. համալսարանի 70 շրջանավարտներից 10-ը հայեր էին (տե՛ս «Արև», 15.8.1924): Նույն թվին դասախոսական պաշտոն ունեին 5 հայեր՝ գլխավոր ախտաբան Հ. Ծնիգոմշյանը, մանրեաբան է. Ջանյանը, ատամնարուժության կլինիկայի վարիչ օգնականներ՝ Ռ. Մխիթարյանն ու Լ. Ալյանաքը և լեզվաբան Վ. Արծրունին (տե՛ս «Սուրիահայ տարեցույց», 1925, էջ 33—36):

¹⁶⁷ «Ազգակ», 13.10.1949 և 7.6.1956: «Այգ», 26.1.1954:

են 36, 1950 թ.՝ 30, 1951 թ.՝ 33, իսկ 1962 թ.՝ 57 հայ շրջանավարտներ¹⁶⁸։ Հայերի ոչ միայն քանակական, այլև որակական նշանակության մասին է խոսում այն, որ հնարավոր է եղել, օրինակ, ճարտարագիտական բաժնի «հայկական պատվաբեր դիմագծի» մասին խոսել։ Իրոք, 1956 թ. տվյալներով, այդ ֆակուլտետի 256 ուսանողներից 96-ը եղել են հայեր, Վրոնցի ալ հաջողակ ու առաջադեմ»։ Ֆակուլտետում դասախոսել են 5 հայ պրոֆեսորներ, վարչական գործերը ղեկավարել է հայուհի, իսկ տասնյակ ուրիշ հայեր էլ աշխատել են մասնագիտական սպասարկություններում և լաբորատորիաներում։ Ամբիոնի վարիչ պրոֆ. Խ. Երամյանը վայելել է այնպիսի հեղինակություն, որ համալսարանի ուսումնական նոր կառույցների նախագծումը հանձնարարվել է նրան¹⁶⁹։

Բեյրութի ամերիկյան համալսարանում հայերի նշանակալից դերը և լիբանանյան գիտության զարգացման գործում նրանց նվիրյալ աշխատանքը բարձր գնահատանքի են արժանացել միշտ։ Համալսարանի նախագահը, այցելելով Անթիլիասի հայկական կաթողիկոսարանը, հայ ժողովրդի իմացական կարողությունների ներքողն է հյուսել և գրվատել իրեն գործակցող հայ պրոֆեսորների աշխատանքը։ Այդ բարձր գնահատանքի գործնականացումն էր անշուշտ այն, որ 1965 թ. համալսարանը պատմության ֆակուլտետին կից ստեղծեց հայ ժողովրդի պատմության և մշակույթի ամբիոն¹⁷⁰։

* * *

Լիբանանի բուհերում հայերի տեղի ու դերի և ընդհանրապես լիբանանյան գիտության առաջընթացի գործին հայերի մասնակցության մասին խոսելիս, չպետք է շոտանալ նաև մի քանի այլ հայկական անուններ։

Նրանցից առաջինը՝ Բեյրութի Հայկազյան կոլեջի գիտության դասախոս Մանուկ Մանուկյանն է։ Նրա ղեկավարությամբ ստեղծ-

¹⁶⁸ «Ժողովրդի ձայն», 27.1.1946, 7.2.1946 և 28.6.1946; «Զարթոնք», 27.1.1946; «Ազդակ», 29.6.1950 և 29.6.1951; «Սփյուռք», 12.7.1962։

¹⁶⁹ «Ազդակ», 4.2.1951; «Այգ», 8.5.1956։

¹⁷⁰ «Բաղին», 1965, № 3, էջ 80։ 1952 թ. «անհատական նախաձեռնությամբ» ստեղծված հայագիտական ամբիոնը իրականում եղել է «հայագիտական իսկական ուսումնական միավորի» հայ մշակույթի ընդհանուր պատմության շուրջ կատարված դասախոսությանց շարք մը, առանց մասնագիտական մերձեցման» և ունեցել է խիստ կարճատև գոյություն (տե՛ս «Զարթոնք», 12.10.1954)։

վել է ուսանողական «հրթիռների ակումբ»՝ մասնակցությամբ Յ հայ և մի արաբ պատանիների։ Իրենց դասախոսի հսկողությամբ, պատանիներին հաջողվել է հրթիռաշինության ասպարեզում Միջին և Մերձավոր Արևելքում առաջին փորձը կատարել և առաջին հաջողությունն արձանագրել 1961 թ. փորձարկված առաջին հրթիռի հաջողությունից հետո, պատանիները նույն թվի մայիսի 6-ին արձակել են 13 կգ քաշով երկրորդ հրթիռը, որ ժամում 800 կմ արագությամբ բարձրացել է 2360 մ։ Մայիսի 15-ին փորձարկվել է ռադիոազդանշաններով կառավարվող երկաստիճան մի հրթիռ, որ լիբանանյան բանակի մասնագետների բարձր գնահատականին է արժանացել 1962 թ. դեկտեմբերին արձակված եռաստիճան հրթիռը 180 կմ բարձրանալով և 425 կմ տարածություն կտրելով ընկել է Միջերկրական ծով¹⁷¹։

Քննությունում տնտեսագիտական ինքնուրույն ֆակուլտետ է հիմնել Ա. Սիմոնյանը և հայերի շրջանում արաբագետ տնտեսագետներ պատրաստելու գծով կարևոր ծառայություն մատուցել լիբանանահայությանը¹⁷²։ Տնտեսագիտության երիտասարդ դոկտոր սիրիահայ Ռ. Պողոսյանը Փարիզի համալսարանին ներկայացրել է «Վերին Ջեզիրե» աշխատությունը, որ պրոֆ. Համիդ Անթաքիի գնահատությամբ լավագույնն է իր տեսակի մեջ։ Պողոսյանը առաջինն է, որ ըստ արժանվույն ընդգծել է հայերի դերը Սիրիայի հյուսիսային գոտու զարգացման գործում¹⁷³։

Լիբանանահայ լրագրող և պատմաբան Վահե Դավիթյանը, որ իր «Վոսփոր և Դարդանեյ» ուսումնասիրությամբ Կահիրեի «Ժողովուրդ»-ում հիմնադրվել է 1945 թ. կազմակերպած արևելագիտական մրցույթում առաջին մրցանակին է արժանացել, ՄԱԿ-ի կողմից 1954 թ. «Կրթություն և միջազգային փոխըմբռնում» թեմայով հետազոտությունների մրցանքում ևս 50 երկրների գիտնականներից առաջ է անցել։ ՄԱԿ-ի դափնեկիրը Նյու-Յորք է հրավիրվել Լիբանանի մասին դասախոսություններ կարդալու։ Իր երկրորդ հայրենիքի միջազգային վարկը բարձրացնելու ուղղությամբ հայ գիտ-

¹⁷¹ Տե՛ս «Известия», 2.6.1962 և 24.11.1962։

¹⁷² «Նայիրի», 5.5.1957։

¹⁷³ R. Boghossian, La Haute Djézireh, Alep, 1952. Աշխատության առաջաբանը գրել է Ֆրանսիայի իրավաբանական համալսարանի և Փարիզի երկրաբանական ուսումնարանի պրոֆեսորներից, երկրաբանության ֆրանսիական ակադեմիայի անդամ Պիեր Ֆրոմոնը։

նականի ելույթների դերը ըստ արժանվույն դնահատվել է տեղի «Ալ-Հոդա» արաբական թերթում¹⁷⁴։

Վ. Դավիթյանի ուշագրավ միջոցառումներից է «Պատմական հետազոտությունների լիբանանյան կենտրոնը», որ հիմնադրվեց 1952 թ.։ Կենտրոնի գործունեությանը եռանդուն մասնակցություն են բերել արաբ, հայ և եվրոպացի պատմաբաններ, իրավաբաններ և տնտեսագետներ։ Բավական է ասել, որ միայն 1952 թ. լիբանանյան հայտնի մտավորականներ Միշել ալ-Խուրին, Ջորջ Ազգին, էդուառ Հոնեյնը, Ֆուադ Հադդադը, էդմոնդ Ռաբբադը, էլի Բուս-դանին, Մանսուր Շալլիդան, Ջաբբար Աբդել Նուրը և ուրիշներ, կենտրոնում կարդացել են տասնյակ դասախոսություններ իրանական 1861 թ. օրգանական ստատուսի, գնդապետ Լոուրենսի, Լոգանի դաշնագրի, նեղուցների իրավական դրության, անկախ իրանականի միջազգային պայմանագրերի, քրդերի, լիբանանյան գաղթօջախների և այլ նյութերի շուրջ¹⁷⁵։

Վ. Դավիթյանը աշխատել է ոչ միայն ամրապնդել հայերի և արաբների մշակութային համագործակցությունը, այլև ջանք չի խնայել արաբներին ծանոթացնելու Սովետական Հայաստանի նվաճումներին։ Այսպես, Բեյրութի «Կոմբա» ֆրանսերեն շաբաթաթերթում Ս. Միշել-Դյուլոնի ստորագրած «Հայկական կնճիռը» հոդվածի¹⁷⁶ հակասովետական պնդումներին, նա կորուվի հակահարված է տվել նույն հանդեսում, ընդգծելով, որ հայ ժողովուրդը երախտապարտ է սովետական վարչակարգին, չորուն շնորհիվ Հայաստան կյանքի կոչվեցավ և 30 տարվան աշխատանքով մը հրաշքներ իրականացուց երկրին մեջ»¹⁷⁷։

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա մայրաքաղաքում գործող սիրիական բարձրագույն կրթության հաստատություններում և ընդհանրապես երկրում գիտության զարգացման ասպարեզում հայերի տեղն ու դերը խիստ աննշան են։ Բարեբաստիկ բացառություն է Փարիզի գեղարվեստից վարժարանի և քաղաքաշինության ինստիտուտի շրջանավարտ պրոֆ. Զարեհ Գաբլանը, որ 1948 թ. սիրիական համալսարանի ղեկավարության հրավերով հաստատվել է Հալեպում և տեղում կազմակերպել ճարտարապետության և քաղա-

¹⁷⁴ Տե՛ս «Զարթոնք», 22.10.1952, «Այգ», 11.9.1954։

¹⁷⁶ «Զարթոնք», 4.5.1952։

¹⁷⁸ Հայերեն թարգմանությունը տե՛ս «Ազգաբար», 2 և 9.9.1950։

¹⁷⁷ «Combat», 1950, № 34։

քաշինության բարձրագույն դպրոց¹⁷⁸, 14 տարի շարունակ կատարելով դասախոսական աշխատանք: 1962 թ. պրոֆ. Գաբլանը տեղափոխվել է Բեյրութ՝ դասախոսելու համար տեղի Գեղարվեստի ակադեմիայում և երկրաչափական ինստիտուտում:

Պետք է ընդգծել, սակայն, այն կարևոր դերը, որ Հալեպում կատարել ու կատարում է «Հալեպի կոլեջը» (Aleppo College) ոչ միայն հայ և արաբ մտավորական կադրեր պատրաստելու, այլև նրանց շփումները սերտացնելու տեսակետից: Մինչև 1920 թ., դրեթե կես դար Այնթաբում գործելուց հետո, «Կենտրոնական Թուրքիայի կոլեջը» տեղափոխվել է Հալեպ, որպես տասնյակ հազարավոր հայ գաղթականների «թանկագին նվերը» ասպնջական արաբներին: Կոլեջի ղեկավարներից բժիշկ Ա. Զեբեջյանը իր հուշերում ընդգծում է, որ «գաղթականաց այս դպրոցը» մինչև 1936 թ. ինքնուրույն և այնուհետև Հալեպի «Պրեսպիտերիըն հայ սկուլ աֆ բոյզի» հետ միավորված՝ արժանացել է արաբական պետական և ժողովրդական շրջանների գնահատանքին, մանավանդ օգնելով, որ հայ և արաբ ժողովուրդները «ինչպես որ դարերու ընթացքին բարեկամներ եղած են, նույն ուղղությամբ շարունակեն այս մտերմությունը մինչև վերջ»¹⁷⁹:

* * *

Հայ նոր գաղթախոսների կազմավորման օրերին Սիրիայում և Լիբանանում գործում էին այնպիսի անվանի բժիշկներ, ինչպիսիք էին Ա. Ալթունյանը, Ա. Զեբեջյանը, է. Ալթունյանը, Ֆ. Հովնանյանը, Զ. Արսլանը, Ժ. Պապիկյանը, Հ. Գանթաղյանը, Խ. Պողոսյանը, Օ. Լոռենցը, Հ. Տեր-Ղևոնդյանը, Գ. Ասլանյանը, Ս. Հինդլյանը և ուրիշներ, որոնց հետ միասին բազմատասնյակ դեղագործներ և ատամնաբույժներ հատկապես Հալեպում ու նաև Դամասկոսում, Բեյրութում, Լաթաքիայում, Դեյր էզ-Զորում, Զերլեում, Անտիոքում և այլուր հավասարապես տպասարկում էին ինչպես հայ, այնպես էլ արաբ և այլազգի հիվանդներին¹⁸⁰: Առողջապահության ասպարեզում հայ նորարանականների կատարած դերի

¹⁷⁸ «Սուրիա», 24.2.1949:

¹⁷⁹ Ա. Ճեպեցյան, Հալեպի ամերիկյան գոլեֆին տխուր բայց քաջալերիչ պատմականը, «Սուրիա», 19.3.1950:

¹⁸⁰ Վ. Սեմերեթյալյան, Վկայություն անդարձ մեկնած հալեպահայ ազգային-հերոս մասին, «Զարթոնք», 6.7.1968, նաև «Annuaire Oriental», Constantinople, 1923, pp. 1536—1554.

առնվազն քանակական կողմի մասին պատկերացում տալու համար բավական է արձանագրել, որ 1925 թ. միայն Հալեպում գործում էին հայ 32 բժիշկներ, 85 ատամնաբույժներ և 15 դեղագործներ¹⁸¹։ Ինչ վերաբերում է որակական կողմին, ապա լրագրող Ժորժ Շամիի վկայությամբ առողջապահության և բժշկագիտության զարգացման գործում Սիրիայում և Լիբանանում հայերի ներդրումը «տպավորիչ է»¹⁸²։

Հնարավորություն չունենալով մի առ մի պատկերել հայերի անվան հետ առնչվող բոլոր բուժական հիմնարկների եռուն գործունեությունը, աշխատենք այստեղ գեթ թուուցիկ հայացքով ուրվանկարել դրանցից հիմնականները։

1923 թ. հիմնադրված և մի քանի հարյուր մահճակալ ունեցող Ազունիի բուժարանը իր տեսակի մեջ եզակի է ոչ միայն Լիբանանում, այլև ամբողջ Արևելքում։ Բեյրութի ամերիկյան համալսարանի հիվանդանոցի վարիչ պրոֆ. Զ. Դեբսի վկայությամբ, բուժարանը «իր կազմակերպվածությամբ, իր ձեռներեցությամբ, իր հոգածությամբ և իր հրաշալի ոգիով» բացառիկ տեղ է գրավում և Լիբանանը «կրնա պարծենալ նման առաջնակարգ հաստատությունով մը»¹⁸³։

Հալեպի հնագույն և Արաբական Արևելքի ամենից հուշակավոր հիվանդանոցներից մեկը 1891 թ. հիմնադրված և մինչև հիսունական թվականների վերջերը գործած «Ալթունյան» հիվանդանոցն էր, որ արդիական սարքավորումներով և որակյալ մասնագետներով իր ժամանակին անմրցակից ապավենն էր Հյուսիսային Սիրիայի բազմազգի հիվանդներին¹⁸⁴։

Բժշկապետ Ասատուր Ալթունյանը (1857—1950), որ իր բուժական գործունեությունը սկսել էր 1881 թ. Այնթաբում, ԱՄՆ-ում կատարելագործվելուց հետո 1889 թ. հաստատվել էր Հալեպում և կարևոր ծառայություն մատուցել Սիրիայում բժշկագիտության և առողջապահության զարգացմանը։ 1896 թ. Ռենտգենի ճառագայթային սարքը գյուտից հաղիվ մի տարի անց, Միջին Արևելք մուծած հայ բժշկապետը 1908 թ. հիմնադրել է իր արդիական հիվանդանոցը, որտեղ 1919 թ. իրեն համագործակցող բժիշկ որդու՝

¹⁸¹ Ճ. Պապիկյան, Սուրիա և հայությունը, «Արև», 26.8.1925։

¹⁸² «Արևելք», 2.1.1960։

¹⁸³ «Վերածնունդ», 23.10.1938։ «Զարթոնք», 8.5.1946 և 18.2.1951։

¹⁸⁴ Ա. Սյուսմեյան, Պատմություն Հալեպի հայոց, հ. Բ, էջ 829—832։ Նաև՝ «Հայաստանի կոչնակ», 1950, էջ 156—157 և 179—182։

էրնեստի հետ կատարել է ավելի քան 20 հազար վիրաբուժական գործողութիւն¹⁸⁵։ Հիվանդանոցին կից՝ 1927 թ., հիմնադրվել է Սիրիայում առաջին բուժքույրերի դպրոցը և դեղագործական հետազոտական կենտրոնը։

Ինչպես հիվանդանոցի, այնպես էլ բուժքույրերի դպրոցի և դեղագործական կենտրոնի անձնակազմը հիմնականում բաղկացած է եղել հայերից, որոնց, վերջին երկու տասնամյակներում, համագործակցել են նաև արաբ և օտարազգի բուժաշխատողներ։ «Ալթունյան» հիվանդանոցի անձնակազմը գրեթե ամբողջութամբ հայկական էր և այդպես էլ մնաց մինչև վերջը,—վկայել է բժիշկ Ռ. Ջեբելյանը, ավելացնելով, որ «կարևոր այս բժշկական հաստատութեան մատուցած խոշոր ծառայութիւնները անխտիր կրաշխվին տեղացի դանգվածներուն, ըլլային անոնք քրիստոնյա կամ մուսուլման, արաբ կամ հայ, հրեա, քուրդ կամ թուրք»¹⁸⁶։

Սիրիայում ժամանակակից բժշկագիտութեան հիմնադրի և զարգացնողի ծառայութիւնները երկրի գիտական և պետական շրջաններում բարձր գնահատականի են արժանացել։ Հայ բժշկապետի անունով է կոչվել (սկսած իր կենդանութեան օրերից) Հալեպի Ազիզիեի շրջանի մայրուղիներից մեկը։ Ա. Ալթունյանը 1933 թ. ընտրվել է Հալեպի բժիշկների միութեան նախագահ, իսկ 1946 թ., երբ միութիւնը վերակազմակերպման է ենթարկվել, այդ պաշտոնը նրան շնորհվել է ցմահ։ 1939 թ. «պատվավոր անդամ» է ընտրվել վիրաբույժների միջազգային խորհրդի, որը նրան շնորհել է նաև գիտական կոչում և ոսկե մեդալ։ Սիրիական կառավարութիւնը իր հերթին Ալթունյանին պարգևատրել է «Սիրիական Արժանիաց» 3 շքանշաններով (1931, 1939 և 1950 թթ.), որոնցից վերջինը՝ «բացառութեան կարգով» տրվող «գերազույն շքանշան»։

Դարձյալ Հալեպում է, որ 1906 թ. սկսած եռանդուն գործունեութիւն է ծավալել Բեյրութի ամերիկյան համալսարանի շրջանավարտ (1902 թ.) և Գերմանիայում կատարելագործված բժիշկ Ա. Ջեբելյանը (վախճանված 1952 թ.)։ 1919 թ. բժիշկ Ֆ. Հովնանյանի հետ (վախճ. 1936 թ.) նա հիմնել է սեփական հիվանդանոց, որ ամբողջ Հյուսիսային Սիրիայում հայ և արաբ աղքատ ու միջակորյար հասարակութեան համար նախախնամական դեր»

¹⁸⁵ «Ջարթոնք», 10 և 19.1.1950։

¹⁸⁶ Ռ. Ջեբելյան, Հալեպի մեծանուն բժշկապետը՝ Ա. Ա. Ալթունյան և իր գործը, Հալեպ, 1969, էջ 7։

է կատարել և որ 1942 թ. որդու՝ բժիշկ Ռ. Զեքեջյանի ջանքերով բացված ակնաբուժական բաժնի շնորհիվ, ձեռք է բերել էլ ավելի մեծ հռչակ¹⁸⁷։

Զեքեջյանի հայրենասեր Ա. Զեքեջյանը գործուն մասնակցություն է բերել հալեպահայ հասարակական կյանքին, ջատագովելով հայարաբական բարեկամական հարաբերությունների ամրապնդումը, 1926—1927 թթ., երբ Սիրիայի ներքաղաքական բարդ իրադրության հետևանքով հայ նորաբնակների շրջանում խուճապահար արտագաղթի մի շարժում էր սկսվել, նա «Ռահնամայում» ստորագրեց «Զայն մը Սուրիային» հռչակավոր կոչը, որտեղ ջանում էր իր հայրենակիցներին ետ կանգնեցնել անխորհուրդ քայլերից¹⁸⁸։

Ա. Զեքեջյանի որդին՝ Բեյրութի ամերիկյան համալսարանի շրջանավարտ հռչակավոր ակնաբույժ Ռ. Զեքեջյանը, Սիրիայում տրախոմայի դեմ մեծ պայքարի կազմակերպիչն ու կուրության կանխարգելման սիրիական ընկերության (1948 թ.) նախաձեռնողն է եղել¹⁸⁹։ Արաբական Արևելքում առաջինը նա է օգտագործել (1947 թ.) պրոֆ. Ֆիլատովի հյուսվածաբուժության մեթոդը և նրա ջանքերով է, որ մահմեդական աշխարհում առաջին անգամ ընդունվել է օրենք (1952 թ.) մեռյալների եղջերենին օգտագործելով կուրերին տեսողություն պարզեղող գործողությունների թուլյատրելիության մասին¹⁹⁰։ Ռ. Զեքեջյանը միաժամանակ մեծ աշխատանք է կատարել կուրերի սիրիական առաջին դպրոցի հիմնադրման համար (1955 թ.), դպրոց, որի բոլոր ուսուցիչներն էլ հայեր են եղել։

Լիբանանում և Սիրիայում հայ բժիշկների ղեկավարությամբ գործում են նաև հայկական տասնյակ փոքր հիվանդանոցներ, բազմաթիվ հասարակական դարմանատներ, ծերանոց-անկեղանոց, ծննդատուն և այլն։ Առանձին նշենք հայազգի Զ. Թահանի միջոցներով Հալեպի արաբ հասարակայնության համար կառուցված «Ալ-Քալիմե» հիվանդանոցը, որ 1954 թ. գործում է հայ բժիշկների ղեկավարությամբ¹⁹¹։

Հասկանալի է, որ հայ բժիշկների գործունեությունը չէր կարող սահմանադրվել հայկական բուժական մի քանի հիմնարկների

¹⁸⁷ «Սուրիա», 31.5.1952։

¹⁸⁸ «Սուրիա», 31.5.1952 և 1.6.1952։

¹⁸⁹ «Առողջապահություն», 1967 № 3, էջ 40։ «Հայրենիքի ձայն», 20.5.1970։

¹⁹⁰ «Այգ», 26.6.1956։

¹⁹¹ «Սուրիա», 7 և 10.7.1954։

³⁴ Նույն տեղում։

³⁵ Էդ. Թոփյանի այցելության մասին տե՛ս «L'Orient», 24.2.1962; «Le Jour», 24.2.1962; 1962/2/20 «الاخبار» 1962/2/24 «الجمهورية»

³⁶ 1962/2/4 «الاخبار»

³⁷ «Արարատ», 1.3.1962։

բան Աբգալլա Ալեյլիի, գրողներ Հ. Մրուեի, Մ. Սլեյմանի, Մ. Դակ-
րուբի, Ա. Ռաֆիի և այլոց հետ³⁸։

Հայաստանի գրողների միության քարտուղարի այցելությունը,
ինչպես դիպուկ կերպով ասել է գրող և գրականագետ Հ. Մրուեն,
լիբանանցիներին օգնել է ավելի ևս հաստատակամորեն հավա-
տալու բոլոր ժողովուրդների և հատկապես աշատ սիրելի Սովետա-
կան Հայաստանի և Լիբանանի ժողովուրդների բարեկամությա-
նը³⁹։

1962 թ. վերջերին, լիբանանահայ «Թեքեյան» մշակութային
միության հրավերով, մեսրոպյան փառատոնին մասնակցելու հա-
մար Լիբանան և Սիրիա մեկնեց սովետահայ բանաստեղծուհի Սիլ-
վա Կապուտիկյանը։

Ի տարբերություն Հր. Քոչարի և էդ. Թոփչյանի ուղևորություն-
ների, Կապուտիկյանի առաքելությունը բացառապես Սիրիայի և
Լիբանանի հայ գաղթօջախների և Սովետական Հայաստանի մշա-
կութային կապերի ամրապնդման նպատակն ուներ։ Եվ սակայն
կարող էր հայ բանաստեղծուհու այցը խթան չհանդիսանալ հայ-
արաբական մշակութային հարաբերությունների առավել սերտաց-
մանը, երբ մի կողմից, որպես իր ժողովրդի կյանքով ու ճակատա-
գրով եռենփող արվեստագետ, նա չէր կարող չորոնել արաբ առ-
պընջական ժողովրդին երախտագիտական խոսք ասելու առիթներ,
և մյուս կողմից՝ տեղում հայ-արաբական բարեկամական կապերի
զարգացման նոր հանգրվանում, արաբ մտավորականությունն էլ
չէր կարող չհետամտել հայ նոր գրականության պատվիրակի հետ
հաղորդվելու հնարավորությունների, մանավանդ որ Ս. Կապուտիկ-
յանը հանդիսանում էր արաբական երկրների հետ բարեկամու-
թյան և մշակութային կապի սովետական ընկերության հայկական
բաժանմունքի փոխ-նախագահը։

Բեյրութ ժամանման օրն իսկ, մասնակցելով մեսրոպյան փա-
ռատոնի եզրափակիչ հանդիսությանը, Կապուտիկյանը իր ելույ-
թում շեշտել է այն հանգամանքը, որ ամեն երկրում չէ, որ այնպի-
սի նպաստավոր պայմաններ են ստեղծված հայ ժողովրդի գոյու-
թյունը աշխույժ և կենդանի պահելու համար, ինչպես Լիբանա-
նում։ Այդ պատճառով էլ, որպես մայր հայրենիքի մշակույթի ներ-

³⁸ Տե՛ս «Մեր նշանաբանն է հառաչ», 25.2. և 11.3.1962; «۱۹۶۲ / ۳ / ۷» ۱۱.۳.۱۹۶۲
«الاخبار» ۱۹۶۲ / ۳ / ۴

³⁹ «Մեր նշանաբանն է հառաչ», 11.3.1962։

կայացուցիչ, նա խորին շնորհակալության խոսք է ասել լիբանանի ժողովրդին ու պետական գործիչներին, որոնք հայ ժողովրդի համար ճակատագրականորեն ծանր օրերին իրենց եղբայրական գիրկը բացեցին հայ տարագրյալների առաջ և շարունակում են իրենց բարի վարմունքով ու սրտաբաց կամեցողությամբ ողորդել հայրենիքից հեռու ընկած հայերի կարոտն ու տազնապնեւը⁴⁰։ Այդ միտքը վերաբերվում է նաև Սիրիային, որովհետև, ինչպես նշել է նա, «Սիրիայի արաբ հյուրընկալ ժողովրդի մոտ ես գտա շատ ջերմ վերաբերմունք»⁴¹։

Կապուտիկյանը բազմաթիվ առիթներ է ունեցել շփվելու սիրիական և լիբանանյան մտավորականության հետ։ Այդ առիթները շատ հաճախ ստեղծել են իրենք՝ արաբները, ինքնաբերաբար ներկա լինելով նրա պատվին կազմակերպված բոլոր հավաքույթներին։ «Հառաջ գրականի» բարեկամների հավաքույթում, արաբ հյուրերի անունից խոսք առնելով, գրող և քննադատ Հուսեյն Մրուեն շեշտել է, որ արաբ և հայ ժողովուրդների եղբայրացույթյունը և սովետա-արաբական բարեկամույթյունը հիմնված են պատմության փորձի վրա և ոչ ոքի չի հաջողվի խախտել դրանք։ Կապուտիկյանը իր պատասխանում չի մոռացել ընդգծել, որ իր այցելությամբ չանք չի խնայի նպաստել հայ-արաբական և արաբ-սովետական բարեկամության էլ ավելի ամրապնդմանը⁴²։ Հայ բանաստեղծուհու հետ սերտորեն շփված արաբ մշակույթի ներկայացուցիչների՝ երգչուհի Ֆեյրուզի, երգահան Ռահբանի եղբայրների, գրողներ Նայիմեի, Մրուեի, Սլեյմանի, Թ. Իբրահիմի, Ա. Հաշեյմի, Հ. Ֆախրի և մյուսների տրամադրությունն է բացահայտել Ժ. Հաննան իր ելույթներից մեկում ընդգծելով, որ «օդանավերից, երկաթուղիներից, նավերից ավելի ժողովուրդներին կապում են գրականությունն ու արվեստը, կապում է մշակույթը։ Ուրախ ենք մեր երկրում, որտեղ այնքան շատ են հանգրվանում նավերն ու ինքնաթիռները, ողջունելու մի բանաստեղծուհու, որը բանաստեղծության քնքուշ տողերով մի օղակ է ամրացնում լիբանան-Սովետական Միություն բարեկամության շղթայում»⁴³։

Կապուտիկյանը ջերմ հանդիպումներ է ունեցել նաև սիրիացի

⁴⁰ «Մեր նշանաբանն է հառաջ», 30.12.1962։

⁴¹ Նույն տեղում, 3.2.1963։

⁴² Նույն տեղում, 13.1.1963։

⁴³ Ս. Կապուտիկյան. Փարավանները դեռ քայլում են, Երևան, 1964, էջ 352։

գրողների և արվեստագետների հետ ու զրուցել մշակութային տար-
բեր հարցերի շուրջ: Հալեպի «Թեքեյան-Մաարի» ընկերության
կազմակերպած ընդունելության ժամանակ, հայ ժողովրդին նվիր-
ված քերթված է ընթերցել բանաստեղծ Ալի Զեյթեկը, իսկ բանա-
սեր Սելիմ Յահյա Հաշիմին խոսել է հայ մշակույթի և հատկապես
Մաշտոցի մեծության մասին: Մի ուրիշ ընդունելության ժամանակ,
հայ մշակույթի և բանաստեղծուհու հասցեին շերմ խոսք է ասել
բանաստեղծ և թարգմանիչ հայրենդին ալ-Ասադին, Կապուտիկ-
յանին նվիրված իր քերթվածն է ընթերցել գրող և թարգմանիչ Նի-
զար հալիլին⁴⁴:

Սիրվա Կապուտիկյանի այցելությունը արաբ գրական գործիչ-
ների համար առիթ է հանդիսացել արաբական մամուլում պատ-
շաճորեն անդրադառնալու հայ գրականությանը: Այսպես «Աթ
թարիկ» հանդեսը ոչ միայն հարցազրույց է անցկացրել բանաստեղ-
ծուհու հետ՝ սովետական բազմազգ ժողովուրդների գրականության
անդաստանում հայկական բանաստեղծության տեղի, հայկական
հին դրականության մարդկայնական ավանդությունները սովետա-
հայ գրականության կողմից զարգացնելու, հայ և արաբ ժողովուրդ-
ների մշակութային բազմադարյան հարաբերությունների և այլ
հարցերի շուրջ, այլև բանաստեղծ Միշել Սլեյմանի թարգմանու-
թյամբ լույս ընծայել Ս. Կապուտիկյանի «Գարուն» քերթվածը⁴⁵:

Վերջին տարիներին Սիրիա և Լիբանան են այցելել նաև բա-
նաստեղծներ Գեղամ Սարյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Վ. Նո-
րենցը, Սարմենը, Լ. Միրիջանյանը, արձակագիրներ Մ. Սարգսյա-
նը, Ա. Սահինյանը, Ստ. Ալաջաջյանը, Շ. Վարսյանը, Վ. Պետրոս-
յանը և ուրիշներ⁴⁶:

Սովետահայ գրողների այս այցելությունները սովետահայ
դրականությունը հարստացրեցին մի շարք արժեքավոր ուղեգրու-
թյուններով, ինչպիսիք են Հր. Քոչարի «Հայրենիք կուզեմ», Ս. Կա-
պուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են», Վ. Պետրոսյանի
«Տուն մեր շփված զավակների համար», Հր. Հովհաննիսյանի
«Անուշ հայրենիք» շարքը և այլն:

Սիրիայում և Լիբանանում են եղել նաև սովետահայ պատմա-
բանասիրության մի շարք ներկայացուցիչներ:

⁴⁴ Նույն տեղում, էջ 353:

⁴⁵ الطربى. العدد ١، ١٩٦٣، ص ٣١:

⁴⁶ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 22.1.1967 և 21.6.1967:

Բեյրութի «Հայկազյան» կոլեջի և «Երվանդ Հյուսիսյան» հայագիտական հիմնարկության խնդրանքով, սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն տեական ժամանակով Բեյրութ է գործուղել պրոֆեսոր Մ. Հասրաթյանին, հայագիտական առարկաների գծով դասախոսություններ կարդալու⁴⁷։ Մ. Հասրաթյանը Բեյրութում միաժամանակ կարևոր ծառայություն է մատուցել հայ մշակույթը և առանձնապես մեծ տաղերգու Սայաթ-Նովայի երգերը արաբներին ծանոթացնելու տեսակետից։ Սայաթ-Նովայի մասին նրա ուսումնասիրությունները լույս են տեսել «Աթ-թարիկ» հանդեսում⁴⁸ և հայ գուսանի արաբական հատընտիրում։

1963 թ. մայիսին, Լիբանանի և ՍՍՀՄ-ի միջև կնքված մշակութային հարաբերությունների համաձայնագրի հիմամբ, Բեյրութ մեկնեց ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանը, հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին արար հասարակայնությանը դասախոսություններ կարդալու համար։ Իր դասախոսությունների ընթացքում ակադեմիկոս Հովհաննիսյանը շեշտել է խորհրդային կարգերի հաստատումով հայ ժողովրդի վերածնունդը և ապա կանգ առել պատմաբանասիրության, այդ թվում՝ հատկապես արեւելագիտության բնագավառում հայ գիտական մտքի նվաճումների վրա⁴⁹։ Այդ այցելության ժամանակ կրթական մինիստրության բաժնի վարիչ Ֆ. Սաուայայի, Գեղարվեստի ակադեմիայի տնօրեն Ա. Բուտրոսի, համալսարանի ռեկտոր Ֆ. Բուստանիի, թանգարանի տնօրեն Մ. Շեհարի, գրողներ Հ. Մրուեի, Ե. Ղուսուբի և այլոց հետ Ա. Հովհաննիսյանը քննարկել է Սովետական Հայաստանի և Լիբանանի միջև մշակութային կապերը սերտացնելու հարցերը⁵⁰։

Վերջին տարիներին Սիրիա և Լիբանան են այցելել նաև ակադեմիկոս Մ. Աղայանը, արևելագիտության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Հ. Խնճիկյանը, ինստիտուտի արաբական երկրների բաժնի վարիչ Ն. Հովհաննիսյանը և ուրիշներ, որոնք մշակույթի և գիտության ասպարեզում հայ-արաբական համագործակցությունը զարգացնելու հնարավորությունների շուրջ գործարար շփումներ են ունեցել սիրիացի գիտնականներ և մշակութային գործիչներ Սալահ Օմար Բաշայի, պրոֆ. Ադել Աուայի, Ասադ Դատկաուիի, Նու-

⁴⁷ «Սովետական Հայաստան», 1965, № 8, էջ 12։

⁴⁸ «الطريق» - العدد 9 - 1963, ص 39 - 49 و العدد 11 - ص 71 - 73

⁴⁹ «Մեր նշանաբանն է հառաչ», 26.5.1963։

⁵⁰ «الطريق» - العدد 6 - 1963, ص 70 - 84

րեդդին Խաթումի, Զալալ Մլլահի և Խ. Հինդաուի, Լիբանանի ազգային համալսարանի դասախոս պրոֆ. Մրուեի և ալոց հետ⁵¹։

4

Ավելի քան մի տասնամյակի կյանք ունեն Սովետական Հայաստանի գեղարվեստական անսամբլների կապերը Սիրիայի և Լիբանանի հետ։

1956 թ. սեպտեմբերին, Դամասկոսի Միջազգային տոնավաճառին Սովետական Միության մասնակցության փայլը ավելացնելու և սովետա-արաբական մշակութային հարաբերությունները սերտացնելու նպատակով Սիրիա և այնուհետև Լիբանան ուղևորվեց ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանի գլխավորած սովետական արվեստագետների խումբը, որին Հայաստանից մաս էին կաղմում ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Տաթևիկ Սազանդարյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Նար Հովհաննիսյանը և ուրիշներ։

Հայ արտիստների ելույթները Դամասկոսում և Հալեպում առանձին ջերմությամբ են ընդունվել։ Սակայն արաբ աշխատավորների, մտավորականության և քաղաքական գործիչների համար այդ ելույթները ունեցել են և ուրիշ իմաստ՝ եղել են Սովետական Միության և Սիրիայի ամրապնդվող բարեկամության դրսևորում։ «Մենք ձեր այցը չենք դիտում միայն որպես լուկ կուլտուրական միջոցառում,—ասել է Սիրիայի վարչապետը,—Վերջին տարիներըս մեր և Սովետական Միության բարեկամությունը գնալով ամփանում է։ Ընդլայնվում են մեր տնտեսական, առևտրական, կուլտուրական կապերը և ահա ձեր խմբի այցը մեր երկիրը մենք դիտում ենք հենց այդ տեսանկյունից, մեր երկու երկրների համագործակցությունն էլ ավելի ընդլայնելու ցանկությունից»⁵²։

Սովետա-արաբական բարեկամությունն է ընդգծվել Սիրիայում մեր արվեստագետների յուրաքանչյուր ելույթի ժամանակ։ Ե՛վ Դամասկոսում՝ որտեղ Տ. Սազանդարյանը ամբողջ դահլիճի ընկերակցությամբ երգել է արաբական «Սելլիմ, սելլիմ» և «Ալ-լումա» քաղցրահունչ երգերը, և՛ սահմանապահ զորամասերի հետ հանդիպման ընթացքում, և՛ Հալեպում, որտեղ արաբական տասնըյակ պատվիրակություններ ծաղկեփնջերով են դիմավորել հայ

⁵¹ Տե՛ս հատկապես՝ «Հայրենիքի ձայն», 5.3.1967։

⁵² Ա. Շահինյան, 30 օր Սիրիայում և Լիբանանում, Երևան, 1957, էջ 20։

երգիչներին, և՛ պետական մարդկանց հետ շփումների ժամանակ, և՛ արաբական գյուղում, ամեն տեղ մարդիկ չեն թերացել շեշտելու. «Արաբ և Սովետական ժողովուրդները եղբայրներ են»⁵³,

Միևնույն բարեկամական-տոնական մթնոլորտն է ընկերակցել հայ արվեստագետների ելույթներին նաև Բեյրութում:

1959 թ. նոյեմբերին, Սիրիայում և Լիբանանում ելույթներով հանդես եկավ հայկական երգի և պարի անսամբլը: Ուշադրության արժանի հանգամանք է, որ անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թ. Ալթունյանը արաբական շրջապատույտի առիթով վերամշակման է ենթարկել երկու լիբանանյան ժողովրդական երգեր՝ «Դախլ ալունակ հակինա» և «Յա Ղըզալա», որոնց կատարումը անօրինակ խանդավառություն է առաջացրել արաբ ժողովրդի մոտ: Ծգիպտական «Ալ-Մուսաուր» թերթի երաժշտական տեսաբանի կարծիքով, Թ. Ալթունյանի փորձից արաբ երաժշտասերները ստացել են «կարևոր դաս մը», որից պետք է օգտվեն՝ հրաժարվելով արաբական երգերի «ձանձրացուցիչ կըրկընթյուններից»: Բայց ոչ միայն այդ: Արաբական ժողովրդական երգերի մշակումն ու գործադրումը հայ արվեստագետների կողմից, հողվածագրի գնահատմամբ, հայ ժողովրդից արաբ ժողովրդի հանդեպ մի «ազնիվ ժեստ է», որն արժանի է փոխհատուցման⁵⁴:

Այդ միտքը ավելի ցայտուն է արտահայտված լիբանանյան մամուլի կողմից: Լիբանանցի գրող Մուհամմեդ Դակրուբը «Ալ-Ախբար» շաբաթաթերթում շատ բարձր գնահատական տալով անսամբլի ելույթին, գրել է, որ արաբական երգերի մշակումն ու կատարումը «ոչ միայն մի լավ նախաձեռնություն է, սիրո և համակրանքի հրաշալի մի արտահայտություն», այլև «արվեստի մի գործ, որ հավատարիմ մնալով հանդերձ արաբական բնագրին, հանդիսանում է իսկական նորություն»: Մ. Դակրուբի կարծիքով, հայ արվեստագետները արաբ ժողովրդի նկատմամբ իրենց զգացմունքները դրսևորել են լավագույն կերպով, միաժամանակ ցուցաբերելով արաբական արվեստի նկատմամբ բարձր գնահատանք և նրա զարգացման գործին իրենց ստեղծագործական ճիգը բերելու եռանդ: «Հենց դրա մեջ է կայանում բարեկամության բաբախուն և իրական իմաստը,—շեշտել է Դակրուբը,—բարեկամություն, որ հարևանացնում է ժողովուրդների ճոխ գանձերը, նրանց նոր փայլ

⁵³ Նույն տեղում, էջ 27:

⁵⁴ «Մեր նշանաբանն է հառաչ», 23.11.1959:

տալով և գարգացման նոր աստիճանի բարձրացնելով, շրավարարվելով շոր ու ցամաք սոսկական փոխանակությամբ: Լիբանանցի դրոդր երախտագիտությամբ արձանագրել է այն օգուտը, որ երկրի արվեստագետներն ստանալու են Հայաստանի երգի ու պարի անսամբլից, հղկելու համար արաբական ժողովրդական արվեստը, որ հետզհետե դուրս է գալիս համաշխարհային բեմ⁵⁵: «Լ' Օրիան» թերթի երաժշտական քննադատ Սալահ Սթեթին ևս իր ուշագրավ հոդվածը եզրափակել է այսպես. «Պետք է շնորհակալ լինել հայկական ժողովրդական խմբին այն փափկանկատ ուշադրության համար, որ մեր նկատմամբ ցուցաբերեց: Մեզ վերապահել էր մի իսկական անակնկալ՝ հայտագրում ընդգրկելով լիբանանյան երկու երգեր, որոնք հուզիչ հավատարմությամբ վերամշակման էին ենթարկվել»⁵⁶: Հայաստանից արաբներին փոխանցված լավագույն ողջույնն էին այդ երգերը, — գրել է իր հերթին «Ան-Նիդա» թերթը: — Դրանք սիրո արտահայտություն էին ոչ միայն լիբանանյան ժողովրդի, այլև արաբական արվեստի նկատմամբ⁵⁷:

Պետք է ասել, որ արաբ ժողովուրդը լիովին փոխհատուցել է իր նկատմամբ սովետահայ արվեստագետների բարեկամական ժեստը: Լիբանանի վարչապետը ամենաշքեմ ընդունելությունն է ցույց տվել Թ. Ալթունյանին և նրա արվեստակիցներին⁵⁸: «Նոր սերունդ մշակութային միության» կողմից կազմակերպված ընդունելության ժամանակ հայ արվեստագետների պատվին ելույթ են ունեցել լիբանանյան ֆուլկլորի խմբի պարողները, իսկ «Դրական շրջանակի» հավաքում, որտեղ «ՍՍՀՄ-Լիբանան բարեկամության ընկերություն» քարտուղար Նահլե Մութրանը շեշտել է անսամբլի դերը երկու երկրների բարեկամական կապերի ամրապնդման գործում, անսամբլի ղեկավարներին նվիրել են արաբական «ակալ և կաֆիա»⁵⁹: Հայ արվեստագետները այցելել են հայտնի երգչուհի Ֆեյրուզին և երգահան Ռահբանին, որոնք հիացմունքով են արտահայտվել Թ. Ալթունյանի մշակած արաբական երգերի մասին և կարծիքներ փոխանակել հայ և արաբական երգերի առանձնահատկությունների շուրջ⁶⁰:

⁵⁵ 1959 / 11 / 20 «الاخبار»

⁵⁶ «L'Orient», 25.11.1959.

⁵⁷ 1959 / 11 / 2 «النداء»

⁵⁸ «Մեր նշանաբանն է հառաջ», 13.12.1959:

⁵⁹ Նույն տեղում, 6.12.1959:

⁶⁰ Նույն տեղում, 14.2.1960:

Հայկական երգի ու պարի անսամբլը Լիբանան և Սիրիա է այցելել նաև 1964 թ. նոյեմբերին և դարձյալ նրա ելույթները վեր են ածվել հայ-արաբական բարեկամության տոներին:

1961 թ. սեպտեմբերին Սիրիա այցելեց Հայաստանի պարի պետական անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ էդ. Մանուկյան, բալետմեյստեր՝ Վ. Ռաշիդյան, գործիքային մասի վարիչ՝ ի. Ավետիսյան), որն այնուհետև հանդես եկավ Լիբանանում: Լիբանանյան մամուլի վկայությամբ, խումբը ոչ միայն հայկական լեռնաշխարհի նվազն ու պարերն է բերել իր հետ, այլև արվեստի ծաղկեփնջով արար և հայ ժողովուրդների բարեկամությունն է ամրապնդել⁶¹: Հալեպի, Դամասկոսի և Բեյրութի իր տասնյակ համերգների ընթացքում, անսամբլը և նրա մենակատարներ Հովհաննես Բադալյանը, Օֆելյա Համբարձումյանը, Իլիա Մինասյանը և ուրիշներ շատ մեծ հաջողություն են գտել⁶²: «Ամբողջ Հայաստանը անսամբլի պարերի մեջ» պերճախոս խորագրի ներքո արվեստի տեսաբան Սալահ Սթեթին հատկապես շեշտել է հայկական և արաբական ժողովրդական պարարվեստի համանմանությունը⁶³: Առանձին շերմությամբ է ընդունվել արաբական ժողովրդական մեղեդին և արաբ ու հայ ժողովուրդների բարեկամության նվիրված երգը⁶⁴:

Պարի պետական անսամբլը արաբ ժողովրդին հայկական պարարվեստը ներկայացնելու առիթ է ունեցել նաև 1965 թ.:

Սովետական Հայաստանի և արաբական երկրների երաժշտական կապերի ամրապնդման համար հսկայական նշանակություն է ունեցել կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան մրցանակի դափնեկիր Արամ Խաչատրյանի այցը Եգիպտոս և Լիբանան: 1961 թ. մայիսի սկզբներին ժամանելով Բեյրութ, մեծ երաժիշտը Կահիրեի սիմֆոնիկ նվագախմբի հետ մի շարք համերգներ է տվել:

Ա. Խաչատրյանի դիմավորումը հալգեի միջազգային օդանավակայանում և Բեյրութում նրա անցկացրած օրերը՝ թրաբ և հայ ժողովրդական զանգվածների ու մտավորականության համար վերածվել են տոնահանդեսների, հայ և արաբ ժողովուրդների և ընդհանրապես սովետա-արաբական բարեկամությունը զրսևորելու առիթների⁶⁵:

⁶¹ ٥٩ — ٥٨ هـ ١٩٦١ — ١٢ شعبان، "الجمهورية" ٥٩

⁶² «Մեր նշանաբանն է հառաչ», 17.9.1961:

⁶³ "L'Orient", 15.10.1961.

⁶⁴ ١٩٦١/١٠/١٦، "الجمهورية" ٥٩

⁶⁵ ١٩٦١/٥/٩، "الجمهورية" ٥٩

Լիբանանի կրթության մինիստր Ք. Զոմբլաթը ազգային երաժրշտանոցում մեծ երաժիշտի պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ հայտարարել է. «Խաչատրյանը երաժշտության դեպպանն է Լիբանանի մեջ: Թող իր հետ սովետական ժողովուրդներին տանի ողջույնները լիբանանցիների, որոնք բարձր են գնահատում Սովետական Միության բարեկամությունը»⁶⁶: Լիբանան-ՍՍՀՄ բարեկամության ընկերության նախագահ Ժ. Հաննան ընդգրծել է, որ լիբանանցիները հպարտ են Խաչատրյանի այցով, որովհետև նա Սովետական Միության «մշակույթի առաքյալն է»⁶⁷:

1964 թ. մայիսին, կարճատև այցելությամբ Եգիպտոսից հետո Լիբանանում է եղել ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը: Հայ երգչուհու համերգը լիբանանյան մամուլի կողմից շատ բարձր գնահատականի է արժանացել⁶⁸: Բեյրութի ազգային երաժշտանոցի վարիչ Տալի հետևյալ հակիրճ խոսքերը շատ պերճախոս են լիբանանյան երաժշտասերների տպավորությունը բացահայտելու տեսակետից. «Հռչակապ է պարզապես, սքանչելի, կատարյալ է ամեն ինչ»⁶⁹: Բեյրութում միայն մի օր մնալով, Գասպարյանը հանդիպումներ է ունեցել Լիբանանի գեղարվեստական կյանքի ականավոր դեմքերի՝ պրոֆ. Տալի, պրոֆ. Իսահայի, Ռութֆ Աբիլամայի, երգչուհի Սամիա Սանդրիի և ուրիշների հետ:

1960 թ. ապրիլին մի քանի օրով Լիբանանի և Սիրիայի հյուրն է եղել կոմպոզիտոր Ալ. Հարությունյանը, ծանոթացել պատմական հուշարձաններին, շփվել լիբանանահայության հետ⁷⁰: Նա իր հայտնի «Հայ ժողովրդի լեգենդը» գործի երրորդ մասի՝ «ուխտավորի երգի» ներշնչանքը, ինչպես նշել է ինքը, բերել է իր արաբական շրջապատույթից: Նրա վրա խոր տպավորություն են թողել արաբական երկրներն ընդհանրապես և մասնավորաբար «արաբներուն ու հայերուն միջև գոյություն ունեցող սիրալիր կապերը»⁷¹:

Կարճատև այցելությամբ Սիրիայում և Լիբանանում են եղել նաև սովետահայ ուրիշ արվեստագետներ, իրենց համեստ բաժինը ներդնելով արաբական երկրների հետ Սովետական Հայաստանի մշակութային հարաբերությունների սերտացման գործում:

⁶⁶ 1971/0/2. «الغد»

⁶⁷ «Մեր նշանաբանն է հառաչ», 21.5.1961:

⁶⁸ «Le Soleil», 18.5.1962.

⁶⁹ «Մեր նշանաբանն է հառաչ», 27.5.1962:

⁷⁰ Նույն տեղում, 10.4.1962:

⁷¹ Նույն տեղում, 22.4.1962:

1965 թ. Բեյրութ այցելեց ասամունքի վարպետ Սուրեն Քոչարյանը: «Գրական շրջանակի» և «Նոր սերունդ մշակութային միության» կողմից կազմակերպված ընդունելության ժամանակ, հանուն արար մտավորականության ողջունի ջերմ խոսքով հանդես է եկել գրող Սաիդ Աքլը և ընդգծել. «Այստեղ, լիբանանի հողի վրա, սիրելի արվեստագետ, կգտնվիք ձեր տանը մեջ և մարդ երբ իր տունը կմտնե, պետք չունի շնորհակալություն հայտնելու: Հայերը մեր եղբայրներն են և դուք մեր եղբայրը, իմ եղբայրն եք»⁷²:

1960 թ. Բեյրութ են այցելել սովետահայ նկարիչները Տ. Թոքմաջյանը և Հր. Ռուսկյանը: Վերջինս Եգիպտոսում, Իրաքում և հատկապես լիբանանում հղացած դիմանկարների, բնանկարների և կենցաղային պատկերների շարքով Երևանում բացել է «Երկու շաբաթ Մերձավոր Արևելքում» ցուցահանդեսը⁷³:

1965 թ. Սիրիա այցելեց նկարչուհի Ա. Կալենցը, որին ջերմորեն է ընդունել Սիրիայի մշակույթի մինիստրը: Նրա նկարների ցուցահանդեսը բացվեց Հալեպի «Արաբական մշակութային կենտրոնում», նահանգապետ հայր Մահրուսի հովանավորությամբ⁷⁴:

Սիրիայի և լիբանանի հետ Սովետական Հայաստանի մշակութային կապերի զարգացման գործում կարևոր ներդրում հանդիսացան Սունգուկյանի անվան ակադեմիական թատրոնի հյուրախաղերը 1966 թ. աշնանը: ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր. Հ. Բաղդասարյանի գլխավորած խմբին մաս էին կազմում ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ՝ թատրոնի գլխավոր ռեժիսոր Վ. Աճեմյանը, Վ. Փափազյանը, Ա. Ավետյանը և Գ. Զանիբեկյանը, ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ Մ. Սիմոնյանը, Թ. Դիլլաքյանը, Մ. Մկրտչյանը և ուրիշներ:

Նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 18-ը թատրոնը 25 ներկայացում տվեց Բեյրութում, իսկ դեկտեմբերի 20—30-ը 12 ներկայացում՝ Հալեպում և մեկ ներկայացում՝ Դամասկոսում, բնի հանելով Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար», Վ. Փափազյանի «Ժայռ», Ա. Շիրվանզադեի «Նամուս», Վ. Սաբոյանի «Իմ սիրտը լիռներում է» և Ն. Զարյանի «Արա գեղեցիկ» պիեսները:

Տեղական մամուլի թատերական քննադատները և արվեստի գործիչները չափազանց բարձր գնահատական են տվել թատրոնի

⁷² «Էջեր գրականության և արվեստի», Բեյրութ, 1965 դեկտեմբեր, էջ 96:

⁷³ «Մեր նշանաբանն է հառաչ», 17.4.1960:

⁷⁴ Ա. Կալենց, Չորս ամիս Սիրիայում, «Հայրենիքի ձայն», 16.1.1966:

ղեկավարաների գեղարվեստական վարպետությանը և դերասանների տաղանդին⁷⁵։ «Երևանի թատրոնի հյուրախաղերի հանդիսավոր բացումը հիրավի հաղթական էր,—գրել է «Լը Սուար» թերթը։ — Հասարակությունը միանգամայն դուրսված է ինչպես դերասանների խաղով, այնպես էլ հոյակապ բեմադրությամբ։ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի խումբը իրեն դրսևորեց որպես երկհաղարամյա թատերական ավանդույթների շատ արժանավոր ժառանգորդ»։ «Լ'. Օրիան» թերթը հայ արտիստների ելույթը անվանել է «հոյակապ»⁷⁶։

Հյուրախաղերից բացի, թատրոնի արվեստագետները բարեկամական հանդիպումներ են ունեցել Սիրիայի և Լիբանանի արվեստի գործիչների, մշակութային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ամրապնդելով արաբ և հայ ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը։

Լիբանանի լուսավորության մինիստր Սլեյման Զեյնը, ընդունելով ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Հ. Բաղդասարյանին, իր ժողովրդի և կառավարության անունից մեծ գոհունակություն հայտնելով Սովետական Հայաստանի մշակութային գործիչների այցի առիթով, հայտարարել է. «Հայաստանի Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի հյուրախաղերը խոշոր իրադարձություն են Լիբանանի մշակութային կյանքում։ Մենք բարձր ենք գնահատում աշխարհի հնագույն թատրոններից մեկի ելույթներ մեր երկրում»։ Նա որպես եզրակացություն վստահություն է հայտնել, որ Երևանի թատրոնի հյուրախաղերը կծառայեն Լիբանանի և բարեկամ Սովետական Միության մշակութային կապերի հետագա ամրապնդմանը»⁷⁷։

Լիբանանում հրաժեշտի հանդիսության ժամանակ հայ արվեստագետների ներկայացուցիչը հայտարարել է. «Մեր ժողովուրդը բազմադարյան բարեկամությամբ կապված է արաբական ժողովրդի հետ։ Սովետական Հայաստանի աշխատավորները ցանկանում են, որ էլ ավելի ամրապնդվեն Սովետական Միության ու Լիբանանի բարեկամությունն ու մշակութային կապերը»⁷⁸։

⁷⁵ «Սովետական Հայաստան», 21.12.1966։

⁷⁶ Նույն տեղում, 3.12.1966։

⁷⁷ Նույն տեղում, 18.12.1966։

⁷⁸ Նույն տեղում, 21.12.1966։ Սիրիայում և Լիբանանում մի շարք ընկերական խաղերով հանդես են եկել նաև Սովետական Հայաստանի մարզական խմբերը, առաջին հերթին «Սպարտակ» («Արարատ») և «Շիրակ» ֆուտբոլային թի-

Սիրիայի ու Լիբանանի հետ Սովետական Հայաստանի բարեկամական և մշակութային հարաբերությունները խթանող շատ կարևոր ազդակ հանդիսացավ արաբ պետական մի շարք գործիչների և գիտական ու մշակութային պատվիրակությունների Սովետական Հայաստան այցելությունը:

Վերջին տասնամյակում Երևանում հյուրընկալվել են սիրիական խորհրդարանական պատվիրակության անդամներ Շուկրի Ռահմեն և Աբդելհամիդ Դուելդահին, արաբ կանանց պատվիրակության անդամ՝ լիբանանցի հայտնի բժշկուհի Անտուանետ Մալուֆը, Աֆրիկայի և Ասիայի երկրների հետ միասնության լիբանանյան կոմիտեի պատվիրակությունը, որին մաս էին կազմում Առաջադիմական սոցիալիստական կուսակցության նախագահ Քամալ Ճումբլաթը, երեսփոխան Ֆարիդ Ջիբրանը, իրավաբան Շեքիբ Ջարերը, Մոհամմեդ Աբբաս Յազին, Ֆադլո Արի Հայդարը, Աբբաս Խալաֆը, Մոհամմեդ Իբրահիմը և Նահլե Մութրանը, գրող և ազգային գործիչ Ժորժ Հաննան, Հաննա Մինան, թարգմանիչներ Նիզար Խալիլին, Նիկոլա Թաուփլը ու տասնյակ ուրիշներ:

Սովետական Հայաստանում, այցելելով գործարաններն ու նորակառույցները, կոլտնտեսություններն ու մշակույթի օջախները, շփվելով աշխատավորների, պետական գործիչների, գիտնականների ու գրողների հետ, Սիրիայից ու Լիբանանից եկած հյուրերը մի անգամ չէ, որ հաստատել են սոցիալիզմի նվաճումների վիթխարիությունը և հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած փոփոխությունները:

«Մենք մեր աչքերով տեսանք հայ ժողովրդի իրագործումները, որոնք մի անգամ ևս կապացուցանեն, թե հարաբերաբար փոքրաթիվ այս ժողովուրդը հեղափոխութենեն ետք նման նվաճումներ արձանագրած է շնորհիվ սոցիալիստական վարչաձևին», — ասել է սիրիացի երեսփոխան Ռահմեն, Սեանի ստորերկրյա հիդրոէլեկտրոկայանը, Երևանի մետաքսի գործարանը և մի շարք կոլտնտեսություններ այցելելուց հետո⁷⁰։ «1920-են առաջ երկրագործական

մերը: Նրանք իրենց հաջորդական հաղթանակներով ոչ միայն բարձր են պահել սովետական սպորտի դրոշը, այլև հիմքը դրել Սովետական Հայաստանի՝ Սիրիայի ու Լիբանանի հետ մարզական կապերին և մի քար ավելացրել հայ արաբական ամրապնդվող բարեկամության շենքում (տե՛ս «Մեր նշանաբանն է հառաջ», 8 և 15.10.1959, 13.11.1960):

⁷⁰ «Մեր նշանաբանն է հառաջ», 25.8.1957:

երկիր Հանաչված Հայաստանը այսօր, սոցիալիստական իրավա-
կարգի տակ դարձած է արդյունաբերական երկիր»,—Բեյրութում
մամուլի ասուլիսի ընթացքում այսպես է արտահայտվել Ասիայի
և Աֆրիկայի համերաշխության լիբանանյան կոմիտեի ընդհանուր
քարտուղար Շ. Ջարերը⁸⁰, Սովետական Հայաստանից իր արտա-
կարգորեն դրական տպավորությունները հուզմունքով է արտա-
հայտել Ժ. Հաննան, նշելով, որ աայն երեք օրերուն, զորս Սովե-
տական Հայաստանի մեջ անցուցի, ես տեսա, թե հայ ժողովուրդը
ինչպես կկերտե իր լուսավոր կյանքը⁸¹:

Արաբ քաղաքական և մտավորական գործիչները Սովետական
Հայաստան այցելությանը հնարավորություն են ստացել անձամբ
համոզվելու, որ հայ ժողովուրդը անկեղծ բարեկամություն է տա-
ծում արաբների նկատմամբ և մեծ հետաքրքրությամբ է հետևում
արաբական երկրների, առանձնապես Սիրիայի և Լիբանանի ազ-
գային պայքարին: «Ես մեկ վայրկյան իսկ ինքզինքս օտար չզգա-
ցի հոն»,—գրել է Ժ. Հաննան⁸²: Ք. Ճումբլաթը Երևանից բաժանվե-
լիս ընդգծել է. «Մեր կարճատև այցը մեզ համոզեց այն մասին,
որ Խորհրդային Հայաստանի ժողովուրդը անկեղծ բարեկամությու-
նը ունի լիբանանցիներուն նկատմամբ»⁸³: Շ. Ջարերի համոզմուն-
քով «Լիբանանը մեծ տեղ ունի հայաստանցիներու և Խորհրդային-
ներու սրտերուն մեջ: Հայերը մոտեն կհետևին Լիբանանի վերա-
բերյալ լուրերուն և այնպես կզգան, թե Լիբանանը՝ Հայաստանի
մեկ մասն է, որովհետև ան իր հովանիին տակ առած է հայերու
հույլ մը»⁸⁴:

Հայաստան այցելությունը արաբներին համոզել է այն բա-
նում ևս, որ հակառակ արևմտյան հետադիմության և նրա կամա-
կատար դաշնակների աղմկարարության, սովետական իշխանու-
թյունը ի վիճակի է բարվոք կյանք ապահովելու արաբական և
մյուս երկրներից հայրենադարձող հայերին: Բժշկուհի Ա. Մաա-
լուֆը զարմացել էր ի տես Լիբանանից հայրենադարձված հայերի
բարգավաճ կյանքին, հատկապես երիտասարդների՝ ուսման և աշ-
խատանքի գծով առաջընթացի հոյակապ հնարավորություններին⁸⁵,

⁸⁰ «Արարատ», 10.12.1964: «Երեկոյան Երևան», 15.11.1965:

⁸¹ «Մեր նշանաբանն է հառաչ», 13.12.1960:

⁸² Նույն տեղում, 29.12.1964:

⁸³ «Արարատ», 18.11.1964:

⁸⁴ Նույն տեղում, 11.11.1964:

⁸⁵ 1970 / V / 2 «الشرق»

իսկ Բ. Ճումբլաթը հայտարարել է. «Խորհրդային Հայաստանի կառավարության ջանքերուն շնորհիվ կարելի պիտի ըլլա մայր հայրենիքի մեջ համախմբել արտասահմանի ցիրուցան հայերը»⁸⁶,

* * *

Արաբական երկրների դեմ իսրայելյան ռազմամուկների կողմից 1967 թ. հունիսին սանձազերծված պատերազմն ու Մերձավոր Արեւելքում ստեղծված լարված մթնոլորտը չկարողացան արգելակել Սիրիայի ու Լիբանանի հետ Սովետական Հայաստանի մշակութային կապերի աստիճանական ամրապնդումը:

Թշնամու ոտնձգությունների դեմ լարված միջոցառումներ անցկացնող Դամասկոսում, միջազգային 14-րդ տոնավաճառի շրջանակներում, 1967 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին առանձին հետաքրքրության արժանացավ սովետական տաղավարի հայկական բաժինը, որտեղ ազգային ճաշակով ձևավորված ցուցանմուշները այցելուներին հնարավորություն տվեցին համոզվելու, որ սոցիալիզմի շնորհիվ Հայաստանը Ռուսաստանի հետամնաց ծայրամասից վեր է ածվել բարձր զարգացած արդյունաբերության ու գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի առաջատար հանրապետության⁸⁷: Հայրենի քաղաքի պաշտպանության հոգսերով տարված դամասկոսցիները ժամանակ գտան հետաքրքրվելու հայ գրքի պատմությանը և Հայաստանում գիտության, ժողովրդական կրթության և առողջապահության զարգացման հարցերով, դիտելու Հայկական կինոֆիլմեր և ունկնդրելու հայ արվեստագետներին:

Միևնույնը պետք է ասել նաև Բեյրութի մասին, որտեղ շարունակում էր գործել դեռ տարեսկզբում բացված ցուցահանգեսը՝ նվիրված Հայաստանում ժողովրդական կրթության նվաճումներին և արաբների շրջանում լայն տարածում էր գտնում «Խորություններ» մամուլի գործակալության կողմից պատրաստված և Հայաստանի անցյալը, ներկան ու գալիքը ուրվագծող նկարազարդ գրքույկը⁸⁸:

Արաբական Արևելքի համար դժվարին փորձությունների ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի աշխատավորության

⁸⁶ «Արարատ», 18.11.1964:

⁸⁷ «Սովետական Հայաստան», 31.8.1967:

⁸⁸ «Հայրենիքի ձայն», 22.1.1967:

վերաբերմունքին հաղորդվելու հրաշալի առիթ ընձեռնվեց արաբ երիտասարդությանը, որի բազմամարդ մի պատվիրակություն, հիմնականում Սիրիայից, Լիբանանից և Հորդանանից, Լիբանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցության ղեկավարներից Նադիհ Յամինի գլխավորությամբ, 1968 թ. այցելեց Երևան։ Այցելությունը առիթ դարձավ, որ պատվիրակությունը անդրադառնա հայերի և արաբների անցյալ բախտակցությանն ու Հայաստանի պայծառ ներկային և խորը շնորհակալություն հայտնի սովետական ժողովուրդներին՝ արաբական ազգային արդարացի պայքարին ցույց տրվող օժանդակության համար։ Արաբ երիտասարդության պատվիրակները ընդգծեցին, որ հիացած են «արաբական երկիրներու մեջ ասպնջականություն գտած ու մեծ վարկ վայելող աշխատասեր ու շինարար հայ ժողովրդի մայր հայրենիքով», մանավանդ որ «արևավառ Երևանի մեջ, Բելյուսի նման, կարծեք հարադատներու հետ էինք»⁸⁹։

Հայ-արաբական բարեկամական ու մշակութային կապերի ամրապնդման ճանապարհին նոր հանգրվան հանդիսացավ 1969 թ. հուլիսին սիրիական մշակույթի օրերի անցկացումը Հայաստանում։ Երևան ժամանեցին սիրիական քաղաքական գործիչներ Համադ Քուտանը, Նեդիմ Ջաբրը, Դուրեյդ Լեհամը, Յասին Շուքրը և Արդալլա ալ-Հաուրանին, բժիշկ Նազմի Ֆալլուհը, ճարտարապետ Սուլեյման Մուկտատը, դերասաններ Սելիմ Սաբրին, Մահմուդ Համմադը և Մոմթազ ալ-Բահրան, գրողներ Հաննա Մինան և Ալի Կանաանը։

Պատվիրակությունը այցելեց Մատենադարան, էրեբունի ամրոցը և պատմության թանգարան, ծանոթացավ ժողովրդային տնտեսության նվաճումների ցուցահանդեսի ցուցանմուշների հետ, դիտեց եղեռնի զոհերի հուշարձանը և Սարդարապատի հուշակոթողը, եղավ Սեանա լճում, Դիլիջանում, Կիրովականում և Ապարանում։ Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում և «Արագած» կինոթատրոնում, ինչպես նաև Կիրովականում, Դիլիջանում, Ապարանում և Հոկտեմբերյանում կազմակերպվեցին հայ-սիրիական բարեկամության երեկոներ, որոնց ընթացքում հայ և արաբ արվեստագետների համատեղ ուժերով համերգներ տրվեցին⁹⁰։

Բարեկամության երեկոների ժամանակ հայ ժողովրդի ներկայացուցիչները ընդգծեցին, որ Հայաստանի աշխատավորները

⁸⁹ «Արարատ», 12 և 13.9.1968։

⁹⁰ «Սովետական Հայաստան», 20, 22. և 24.7.1969։

ինչպիսի խոր համակրանքով են հետևում իմպերիալիզմի դեմ արարական ժողովուրդների պայքարին, ինչպես են ուրախանում տնտեսական ու մշակութային շինարարության բնագավառում Սիրիայի ձեռք բերած հաջողությունների համար: Սիրիայի պատվիրակները, կանգ առնելով այն մեծ օգնության վրա, որ Սովետական Միությունը ցույց է տալիս իրենց՝ տնտեսական զարգացման ասպարեզում, խոսեցին նաև այն մասին, որ Սիրիայում ապրող հայերը արաբների հետ ուս-ուսի անցյալում պայքարել են երկրի շահատույժի ու անկախության համար և այսօր էլ գործուն մասնակցություն են բերում հակաիմպերիալիստական մարտերին⁸¹:

Սիրիական մշակույթի օրերից պատվիրակության տպավորությունը ամփոփելով, Սիրիայի ռադիո-հեռուստատեսության կոմիտեի ղեկավարներից Աբդալլա ալ-Հաուրանին ասել է. «Մեր տեսածը գերազանցեց մեր բոլոր պատկերացումները: Մենք շոշափելով համոզվեցինք, թե սովետական իշխանությունն ինչպես է կարողացել հրաշքեր գործել՝ փրկելու համար բազմաշարժար հայ ժողովրդին, որը դարերի ընթացքում շատ բռնություններ և անարդարություններ է տեսել: Սովետական իշխանությունն է բերել խաղաղություն և ապահովություն շինարար ու գործույա այդ ժողովրդին, որը տիտանական ջանքերով օգտագործել է իր լեռնային հողի ամեն մի թիզը և ամեն մի կաթիլը իր ջրերի: Մշակույթի ասպարեզում ևս մենք տեսանք այն բոլոր նվաճումները, որոնց հասել է իր պատմությամբ, թատրոնով, ֆուկլորով, ժողովրդային ժառանգությամբ և ճարտարապետությամբ իրավամբ հպարտացող հայ ժողովուրդը»⁸²:

«Երբ ես ինքնաթիռից իջա և տեսա մեզ դիմավորող պաշտոնական մարդկանց և բազմությունը,—Երևանից մեկնելուց հետո պատմել է թատերագետ Մարաին,—զգացի, որ ես Երևան եմ ժամանել ոչ թե բարեկամություն ստեղծելու կամ ստեղծված բարեկամությունը խորացնելու, այլ այցի եմ եկել իմ եղբայրներին և բարեկամներին: Հայ-արաբական բարեկամությունը պատմական խոր արմատներ ունի և ստեղծվել է համատեղ կյանքի ու պայքարի ճանապարհին»⁸³:

⁸¹ «Սովետական Հայաստան», 19 և 22.7.1969: «Հայրենիքի ձայն», 23.7.1969:

⁸² «انباء موسكو» العدد ١٩, ١٩٦٩:

⁸³ Նույն տեղում:

Ինչ որ ավելի կարևոր է, սիրիական մշակույթի գործիչները Երևանից մեկնել են Սիրիայի և Սովետական Հայաստանի կուլտուրական կապերի հետագա ամրապնդման անհրաժեշտության համոզմունքով:

1969 թ. է, դարձյալ, որ Երևանում հյուրընկալվեցին լիբանանցի բազմաթիվ քաղաքական ու հասարակական գործիչներ, լրագրողներ, բժիշկներ: Լիբանանի ազգային ինֆորմացիոն գործակալության տնօրեն Ռադուան Մաուլաուին իրավամբ է ընդգծել, որ տարեցտարի զարգանում և ամրապնդվում են արաբական երկրների, առաջին հերթին Լիբանանի ու Սովետական Հայաստանի բարեկամական կապերը և որ լիբանանյան ժողովուրդը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի հայոց հայրենիքը, «որի հնադարյան մշակույթը և ժամանակակից բարձր քաղաքակրթությունը հանրահայտ են»⁹⁴:

1969 թ. աշնանը Հայաստանում Հ. Թումանյանի ծննդյան հարյուրամյակի նշումը հայ և արաբ ժողովուրդների ամրապնդված բարեկամության փայլուն մի դրսևորումը հանդիսացավ: Հոբելյանական հանդիսությունների հյուրերի թվում էին Բեյրութի համալսարանի արաբական լեզվի ու գրականության ամբիոնի վարիչ, «Աթ-Յարիկ» ամսագրի գլխավոր խմբագիր, գրող Հ. Մրուեն, Բեյրութի արաբական մշակույթի կենտրոնի նախագահ և «Աս-Սակաֆա ալ-Ութթանիյա» հանդեսի խմբագիր Ժոզեֆ Մուկայզելը, լիբանանյան «Ալ-Ուլում» հանդեսի խմբագիր Մունիր Բաալբակին, «Աթ-Յարիկի» խմբագրության անդամ գրող Մ. Դակրուբը, եգիպտացի գրականագետ, Կահիրեի համալսարանի պրոֆեսոր Լաթիֆա ազ-Զայաթը, սիրիացի գրող և թարգմանիչ Ն. Խալիլին, լիբանանցի գրող Մոհամմեզ Յուսեֆ Նաջմը և ուրիշներ:

Հ. Թումանյանի տուն-թանգարանում ելույթ ունենալով և հայ ժողովրդի աշխատասիրության ու հոգևոր հարստության մասին խոսելով, Հ. Մրուեն ասաց. «Հինավուրց այս հողը, ուր մենք սիրով եկանք, ծնել է մի ժողովուրդ, որը ստեղծագործում, բարեքնեք է կերտում ոչ միայն հարազատ հարկի տակ, այլև արտասահմանում, ամբողջ աշխարհում: Հայերը ակտիվ մասնակցում են մեր ժողովրդի պայքարին ու նրա երջանիկ ապագայի կառուցմանը»⁹⁵:

⁹⁴ «Հայրենիքի ձայն», 27.8.1969:

⁹⁵ «Սովետական Հայաստան», 23.9.1969:

* * *

Հայ-արաբական մշակութային կապերի զույգ անդաստանները՝ արաբահայ գաղթողականների առնչությունները բնիկ ժողովրդի հետ և Սովետական Հայաստանի փոխարաբերությունները արաբական երկրների (սովյալ դեպքում Սիրիայի ու Լիբանանի) հետ, լրացնում են մեկը մյուսին և որպես մի ամբողջություն՝ մեծապես նպաստում հայ և արաբ ժողովուրդների, հետևաբար նաև սովետա-արաբական բարեկամության ամրապնդմանը:

Е. О. НАДЖАРЯН

**АРМЯНО-АРАБСКИЕ КУЛЬТУРНЫЕ СВЯЗИ
(СИРИЯ И ЛИВАН) 1945—1970 гг.**

Р е з ю м е

Настоящая работа является первой попыткой освещения истории культурных связей армян и арабов в Сирии и Ливане, а также культурных связей между этими странами и Советской Арменией.

В предисловии обосновываются научное значение и политическая актуальность рассматриваемого вопроса, дан также обзор литературы.

В первой главе—«Предпосылки развития армяно-арабских культурных связей» подвергается всестороннему анализу обстановка в 20—30-х годах, царившая в Сирии и Ливане, что позволило раскрыть и разъяснить те национальные и культурные факторы, которые препятствовали развитию армяно-арабских связей.

Со второй половины тридцатых годов, когда выявилось сочувственное отношение армянских трудящихся к стремлению сирийского и ливанского народов приобрести независимость и были созданы условия для образования единого фронта против активизировавшихся фашистских элементов, в армяно-арабских взаимоотношениях произошел определенный перелом. Значительный вклад в это внесли «народные фронты» сирийских и ливанских армян.

Армяно-арабские взаимоотношения стали еще более тес-

ными в годы второй мировой войны. когда по инициативе демократических организаций стало частым сотрудничество арабских и армянских трудящихся и интеллигентов в рамках Антифашистской лиги, обществ друзей Советского Союза, лиг защиты Советской Армении и других прогрессивных организаций, где особенно крупную роль сыграли известные арабские культурные и политические деятели О. Фахури, А. Табет, Ж. Ханна, Ф. Хелу, Х. Бекдаш, Н. Шауи, Р. Хури и другие.

Во второй главе работы—«Армяно-арабские литературные связи» одно из центральных мест занимает отражение антиимпериалистической борьбы арабских народов Сирии и Ливана в литературных произведениях армянских писателей. Разработка этой темы и выступление армянских писателей и всей демократической интеллигенции в защиту национальных интересов арабов свидетельствовали о новой ступени дружбы между армянами и арабами. Помимо этого, в работе подробно освещается деятельность армянских писателей, которые посредством переводов и специальных исследований популяризировали арабскую литературу в армянских колониях. Большое место уделено истории переводов на арабский язык произведений армянской литературы. При рассмотрении арабских переводов обстоятельно освещаются связи известных арабских писателей О. Фахури, М. Аббуда, М. Наиме, О. Абу Риша, С. Акля, А. Аль-Сагира, Р. Хури и других с армянскими писателями, приводятся их высказывания об армянской литературе, анализируются статьи в арабской периодической печати, посвященные истории армянской культуры.

Сирия и Ливан сумели совершить серьезные шаги по пути культурного развития только после завоевания национальной независимости. В культурный прогресс обеих стран внесли свой вклад и ряд национальных меньшинств, которые по воле исторической судьбы нашли в Леванте свою вторую родину; в первом ряду их находятся армяне Сирии и Ливана.

В третьей главе—«Армяно-арабские связи в области искусства и науки» отдельные разделы посвящены участию армян в здравоохранении и медицине, высшем образовании и печати, музыке и живописи, театре и кино, технических науках, строительстве и т. д. в обеих странах.

За последнее десятилетие приобрели новый размах культурные связи Советского Союза со странами Азии и Африки. Заметное участие в развитии культурных связей с указанными странами принимает Армянская ССР, которая поддерживает оживленные отношения с арабскими странами, в частности с Сирией и Ливаном. В четвертой главе работы—«Культурные связи Советской Армении с Сирией и Ливаном» обстоятельно освещается деятельность армянского отделения общества дружбы и культурных связей с арабскими странами, а также та роль, которую сыграли в деле укрепления и развития этих связей с арабскими странами Институт востоковедения АН Арм. ССР, факультет востоковедения Ереванского государственного университета и т. д.

В монографии обстоятельно освещаются также те непосредственные контакты, которые установились между советскими армянскими и арабскими государственными и политическими деятелями, писателями и учеными, рассматриваются связи художественных групп, творческих коллективов и отдельных художников Советской Армении с Сирией и Ливаном

يغيا هـ. نجاريان

الروابط الثقافية بين الأرمن والعرب في سوريا
و لبنان خلال سنوات ١٩٤٥ - ١٩٧٠

(ملخص)

تعتبر هذه الدراسة محاولة أولية في بابها: هدفها الفاء الضوء على الروابط الثقافية بين الأرمن والعرب في سوريا و لبنان. و اضافة علاقات ارمنية السوفيتية الثقافية مع ذات البلدين. لقد قوت مقدمة الدراسة اهمية المواضيع و الابحاث من الناحية العلمية، و اظهرت سياسة العصر الراهن، و استعرضت المراجع التي طرقها المؤلف في عمله.

يعمل الفصل الاول ("مقدمات تطور الروابط الثقافية - العربية.") الوضع القائم في سوريا و لبنان خلال العشرينيات و الثلاثينيات تحليلا مفصلا، و تكشف النقاب عن المؤثرات القومية و الثقافية التي اعادت تطور الروابط الثقافية بين الأرمن والعرب.

في منتصف الثاني من ثلاثينيات هذا القرن، تجتجت المشاعر العارية والصادقة في صدور العمال الأرمن تجاه حركة تحرير الشعبين السوري واللبناني، وظهرت الحاجة الملحة لتأسيس جبهة وطنية موحدة ضد العناصر النامية من الفاشية. في هذه الحقبة التاريخية بالذات، وقع التحول التمييز في مجرى العلاقات الأرمنية - العربية، حيث لعبت "الجبهة الشعبية" لأرمن سوريا ولبنان دوراً بارزاً ومصرياً في ذلك الاتجاه.

وجاءت الحرب العالمية الثانية وزادت العلاقات الأرمنية - العربية قوة ومثانة. وشرعت المنظمات الدخيلة فرائطها، النامية كما والخدمة تنظيمياً، بأعداد اللقاءات المتكررة بين العمال والمثقفين الأرمن والعرب في أوساط "عصبة مكافحة الفاشية"، "جمعية اصدقاء الاتحاد السوفييتي"، و"منظمة الدفاع عن أرمينيا السوفييتية"، وغيرها من المنظمات والجمعيات التقدمية، التي برز في صفوفها العديد من المفكرين والناسات العرب من أمثال: عمر فاخوري وأنطون ثابت وجورج حنا وفرج الله الحلو وخالد بكداش ونقولا شاوي ورثيف خوري وغيرهم كثيرين.

في الفصل الثاني للدراسة ("الروابط الأدبية بين الأرمن والعرب") يعالج الكاتب أحد أهم مواضيع مؤلفه وهو موضوع انعكاس الفضال المعادي للاستعمار في أدب الكتاب الأرمن بسوريا ولبنان. إن انعكاس هذا الكفاح ومواقف الممكرين الأرمن المشرفة في الدفاع عن قضايا العرب العظيمة، يشهدان بسطوع على الأخوة الأرمنية - العربية. ولقد بحث الكاتب كذلك، نشاط الكتاب الأرمن لرفع شعبية الأدب العربي في أوساط الجالية الأرمنية لسوريا ولبنان من طريق الترجمات والتأليف العديدة. كما وأنه أعد باباً خاصاً لتاريخ الترجمات العربية من الأدب الأرمني بأقلام أبناء الضاد أنفسهم. وأبان المؤلف في موضعه الرابطة الصميمية بين كتاب الأرمن وبعض اقراءهم العرب من أمثال: عمر فاخوري ومارون سمون وميخائيل نعيمة وعمر أبو ريشة وسعيد عقل والأخطل الصغير وغيرهم، شارحاً مواقفهم المشرفة وأرائهم الصادقة عن الأدب الأرمني، ومجلاً مقالاتهم ودراساتهم الخاصة بالثقافة الأرمنية.

لقد تمكنت سوريا ولبنان من إحراز تقدم ثقافي عظيم بعد نيلهما للاستقلال الوطني فقط. وقد ساهم في ذلك التقدم الحضاري العديد من الأقليات القومية التي اتخذت من البلدين موطناً ثانياً لها. نتيجة لما حل بها من الأقدار التاريخية الفاجعة. وقد خصص الكاتب في الفصل الثالث ("الروابط الأرمنية - العربية في ميادين الفنون والعلوم") فقرات خاصة للمشاركة الأرمنية في تطوير الفن التشكيلي والموسيقى والمسرح والسينما والطب والصحة العامة، وفي العمارة والتكنيك في كل من سوريا ولبنان.

في العقد الأخير نالت روابط الاتحاد السوفييتي الثقافية مع بلدان آسيا وأفريقيا أهمية جديدة. وقد ساهمت أرمينيا السوفييتية

مساهمة نشيطة وفعالة في تطوير تلك الروابط الثقافية مع البلدان العربية عامة، و مع سوريا و لبنان خاصة . و في الفصل الرابع (" الروابط الثقافية بين ارمينيا السوفيتية و سوريا و لبنان ") يششرح المؤلف بالتفصيل دور جمعية الصداقة و العلاقات الثقافية مع البلدان العربية ، و الدور الذي يضطلع به كل من معهد الاستشراق لدى أكاديمية العلوم في ارمينيا السوفيتية ، و كلية الاداب الشرقية بجامعة يريفان الحكومية لتطوير الروابط الثقافية مع تلك البلدان . و قد اشار الكاتب ايضا الى الصلات القائمة بين رجال الدولة و السياسة ، و الكتاب و العلماء الارمن السوفييت مع اخوانهم العرب ، و اوضح الروابط و الصلات الفنية التي تجمع بين فرق ارمينيا الفنية و العديد من كبار الفنانين اذ من مع سوريا و لبنان .